ԺՔԿ/ՄԻԿ հատոր III

Ռոլֆ Գոլլոբ և Պիտեր Կրապֆ (խմբագիրներ)

Ապրել ժողովրդավարության ներքո

ԺՔԿ/ՄԻԿ դասապլաններ
Նախատեսված է միջնակարգ դպրոցի համար

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ապրել ժողովրդավարության ներքո

ԺՔԿ/ՄԻԿ դասապլաններ
Նախատեսված է միջնակարգ դպրոցի համար

Խմբագրությամբ՝ Ռոլֆ Գոլլոբի և Պիտեր Կրապֆի
Հեղինակներ՝ Ռոլֆ Գոլլոբ, Թեդ Հադլսթոն, Պիտեր Կրապֆ, Դոն Ռոուե, Ուիմ Թաելման

Հատոր III
ԺՔԿ/ՄԻԿ
I-VI հատորներից

Ժողովրդավարական քաղաքացիության
և մարդու իրավունքների կրթությունը դպրոցական պրակտիկայում
դասավանդման հաջորդական քայլեր, հասկացություններ, մեթոդներ և մոդելներ

Եվրոպայի խորհրդի հրատարակչություն

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակին (հեղինակներին) և պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպայի խորհրդի եւ Եվրամիության պաշտոնական քաղաքականության տեսակետը :

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս հրատարակության ոչ մի մաս չի կարող թարգմանվել, վերարտադրվել, կամ տարածվել որևէ ձևով կամ էլեկտրոնային (լազերային կրիչներ, համացանց և այլն), կամ մեխանիկական, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով, առանց Եվրոպայի խորհուրդի Հաղորդակցման տնօրինության հանրային տեղեկատվության և հրատարակությունների բաժնի նախնական գրավոր թույլտվության (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն հատորի հրատարակման, ձևավորման և խմբագրման համակարգումը կատարված է Ուսուցիչների կրթության Ցյուրիխի համալսարանի տրանսֆերային կենտրոնի (PHZH) ՄԾԿՈ-ի (Միջազգային ծրագրեր կրթության ոլորտում) կողմից, www.phzh.ch/ipe) :

Համաֆինանսավորումը՝ Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալության (ԶՀՇԳ) կողմից:

pädagogische hochschule zürich

International Projects in Education
Transferzentrum für internationale Bildungsprojekte

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

Partnership for Good Governance

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Այս հրատարակության հայերեն թարգմանությունը եւ տպագրությունը ֆինանսավորվել է Եվրամիության հետ համատեղ «Արեւելյան գործընկերության երկրներում մարդու իրավունքների կրթության եւ ժողովրդավարական քաղաքացիության խթանում» ծրագրի միջոցով:

Տեքստի սրբագրումը՝ Փաստաթղթերի և հրատարակությունների պատրաստման վարչության (ՓՀՊՎ) կողմից, Եվրոպայի խորհուրդ

Նկարազարդումը՝ Պետի Ուիսկեմաննի
Շապիկը՝ Գրաֆիկական դիզայնի արվեստանոց, Եվրոպայի խորհուրդ
Մանրակերտը՝ Օղամի/Մուրոյի

Եվրոպայի խորհրդի հրատարակչություն
F-67075 Strasbourg Cedex
http://book.coe.int
ISBN: 978-92-871-8526-6
© Եվրոպայի խորհուրդ, 2008 անգլերեն հրատարակություն
© Եվրոպայի խորհուրդ, 2017 Հայերեն թարգմանություն

Բովանդակություն

Ներածություն 5

Ձեռնարկի հասկացութային շրջանակը՝ հիմնական հասկացությունները 11

Բաժին 1. Անհատը և հասարակությունը 21

Գլուխ 1. Կարծրատիպեր և նախապաշարմունքներ: Ի՞նչ է ինքնությունը:
Ինչպե՞ս եմ ընկալում դիմացինին, ինչպես է դիմացինն ընկալում ինձ: 23

Գլուխ 2. Հավասարություն: Մենք հավասա՞ր ենք, թե՞ ոչ: 45

Գլուխ 3. Բազմազանություն և բազմակարծություն: Ինչպե՞ս կարող են մարդիկ
պահպանել խաղաղ համակեցություն: 67

Գլուխ 4. Բախումնային իրավիճակներ: Ի՞նչ անել տարաձայնությունների դեպքում: 93

Բաժին 2. Պատասխանատվություն ստանձնելը 117

Գլուխ 5. Իրավունքներ, ազատություններ և պարտականություններ:
Որո՞նք են մեր իրավունքները և ինչպե՞ս են դրանք պաշտպանված: 119

Գլուխ 6. Պարտականություն: Ի՞նչ պարտականություններ են կրում մարդիկ: 153

Մաս 3. Մասնակցություն 171

Գլուխ 7. Թերթ դասարանի համար: Լրատվության ընմբռնումը լրատվություն
ստեղծելու միջոցով: 173

Բաժին 4. Լիազորություն և իրավասություն 189

Գլուխ 8. Կանոններ և օրենք: Ինչպիսի՞ կանոններ են անհրաժեշտ հասարակությանը: 191

Գլուխ 9. Կառավարություն և քաղաքականություն: Ինչպե՞ս պետք է կառավարվի
հասարակությունը: 211

Ներածություն

Ի՞նչ է առաջարկում այս գիրքը:

Սույն ձեռնարկն ուղղված Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ուսուցիչներին, ուսուցիչների վերապատրաստումներով զբաղվող մասնագետներին, ուսումնական ծրագրերի մշակմամբ զբաղվող մասնագետներին, դասագրքերի խմբագիրներին և թարգմանիչներին: Այս ձեռնարկը կարող է թարգմանվել և հարմարեցվել անդամ պետությունների կրթական համակարգերի հատուկ պահանջները բավարարելու համար:

Ձեռնարկը բաղկացած է ինը գլուխներից, որոնք վերաբերվում են Ժողովրդավարական քաղաքացիության կրթության (ԺՔԿ) և Մարդու իրավունքների կրթության (ՄԻԿ) ոլորտներին: Յուրաքանչյուր գլուխ ներառում է չորս դաս: Դասերը նախատեսված են միջնակարգ դպրոցի աշակերտների համար (8-րդ և 9-րդ դասարաններ): Յուրաքանչյուր գլուխ կենտրոնանում է ԺՔԿ-ի կամ ՄԻԿ-ի հետ կապված հիմնական հասկացությունների վրա՝ ինքնություն - ազատություն - պարտականություն - բախում - հաղորդակցություն - բազմակարծություն – կանոններ և օրենք - հավասարություն – կառավարություն:

Դասերում մանրամասն նկարագրված է դասավանդման ժամանակ առաջարկվող քայլերի հաջորդականությունը: Յուրաքանչյուր գլխում հավելվածների տեսքով կցված են աշակերտների համար նախատեսված նյութերը , որպեսզի ձեռնարկն առավելագույնս օգտակար լինի ուսուցչի համար:

Ուսուցիչների վերապատրաստման մեր փորձը ցույց է տվել, որ դասավանդման մասնագիտության մեջ սկսնակները կարևորում են դասերի մանրակրկիտ նկարագրությունը, սակայն հնարավոր է, որ փորձառու ուսուցիչները նույնպես կարողանան գտնել իրենց դասերի համար օգտակար որոշ գաղափարներ և նյութեր: Ուսուցիչների վերապատրաստմամբ զբաղվող մասնագետները կարող են օգտագործել այս ձեռնարկը ԺՔԿ-ի բնագավառի և մարդու իրավունքների բաղադրիչը դասավանդող ուսուցիչների վերապատրաստման մոդուլներում:

Սա ձեռնարկի վերանայված տարբերակն է: Առաջին հրատարակությունը մշակվել է Բոսնիա և Հերցեգովինայում՝ ի նպաստ դպրոցական նոր՝«Ժողովրդավարություն և մարդու իրավունքներ» առարկայի, որը ներմուծվել է 2002 թվականին: 1996 թվականից ի վեր Եվրոպայի խորհուրդը զբաղվում է ԺՔԿ-ի և ՄԻԿ-ի՝ ուսուցիչների վերապատրաստմամբ զբաղվող մասնագետների և ուսուցիչների վերապատրաստմամբ, որպեսզի հետպատերազմյան շրջանում նպաստի խաղաղության հաստատմանն ուղղված գործընթացին: Առաջին հրատարակության խմբագիրները և հեղինակները հանդիսանում էին վերապատրաստողների միջազգային խմբի անդամներ, ովքեր մասնակցում էին այս ծրագրին: Մեր կողմից իրականացվել է առանց աշխատանքի ընդհատման ուսուցիչների վերապատրաստում՝ ուսուցիչների և ուսուցիչների վերապատրաստմամբ զբաղվող մասնագետների համար և մշակվել են նյութեր, այդ թվում նաև սույն ձեռնարկի առաջին ձեռագիր տարբերակը, թե ուսուցիչների վերապատրաստման համար և թե դասարանում[1] օգտագործելու նպատակով:

Ո՞րն է ԺՔԿ/ՄԻԿ-ի մոտեցումը

ԺՔԿ-ի հիմնական սկզբունքները կարելի է լավագույնս ներկայացնել օրինակով: Կարծիքն ազատ արտահայտելը և խոսքի[2] ազատությունը ժողովրդավարական մասնակցության հիմնական իրավունքներից է: ԺՔԿ/ՄԻԿ-ում աշակերտները պետք է իմանան, հասկանան և գնահատեն կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատության իրավունքը՝ տեղյակ

1. Սույն նախագծի առավել մանրակրկիտ նկարագրին ծանոթանալու համար տե՛ս այս շարքից հատոր I-ը:
2. Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) 19-րդ հոդվածը, 1948 թվականի դեկտեմբերի 10, և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ)10-րդ հոդվածը, 1950 թվականի նոյեմբերի 4:

լինելով նաև երկրի Սահմանադրությամբ վերջինիս պաշտպանության նորմերին (գիտելիքի և ըմբռնման ուսումնառության հայեցակետը): Հատկապես պայմանավորված այն հանգամանքով, որ այս իրավունքի ակտիվ իրագործումը կարևոր է ժողովրդավարական հասարակության մեջ մասնակցություն ունենալու հարցում, աշակերտները պետք է սովորեն և զարգացնեն հրապարակավ բանավիճելու հմտությունը (հմտությունների կատարելագործման և կոմպետենցիաների զարգացման ուսումնառության հայեցակետ): Եվ վերջապես՝ կարծիքն ազատ արտահայտելը և խոսքի ազատությունը հիմք են ստեղծում բաց, բազմակարծիք հասարակության համար: Շահերի և կարծիքների վիճելիությունն ու մրցակցությունը բացառություն չեն կազմում. դրանք օրինաչափ են: Կծագեն բախումներ, որոնք անհրաժեշտ կլինի լուծել ոչ բռնի միջոցներով, այն է՝ բանավոր խոսքի միջոցով (բանավիճելու, հակադրվելու, բանակցելու միջոցով՝ թե՛ հրապարակավ, թե՛ փակ դռների ետևում): Բաց, բազմակարծիք հասարակությունը հիմնվում է մի շարք պարտադիր կանոնների և այս կանոնները կիրարկող հզոր կառույցների վրա, սակայն միգուցե առավել շատ հիմնվում է քաղաքացիների շրջանում ընդհանուր մի շարք արժեքների վրա: Այդ արժեքներում ներառված են հանդուրժողականությունը, փոխադարձ հարգանքը, արդար փոխզիջումներն արժևորելը, բռնի մեթոդների կիրառումից հրաժարվելը, ինչպես նաև տարաձայնությունների ու վեճերի այնպիսի բացահայտ իրավիճակների քննարկումը, որոնցում խնդիրների լուծումը դեռևս տրված չի լինում: Եթե քաղաքական որոշումների կայացումը հիմնավորվում և ձևավորվում է իրավակարգի և ժողովրդավարական արժեքների ամուր համաձայնությամբ, ապա հասարակությունն ի զորու է հաղթահարել կոնկրետ հարցերի շուրջ ծագող խոշոր տարաձայնությունները: Կարծիքն ազատ արտահայտելն այս դեպքում հեռու է արդյունավետ կառավարությանը սպառնացող վտանգ լինելուց, ընդհակառակը, այն օժանդակ միջոց է այդպիսի կառավարության համար հիմնախնդիրների և բախումների արդար և արդյունավետ լուծում գտնելու ճանապարհին:

Ժողովրդավարությունն ունի մշակութային կարևորություն և պետության տեսության մեջ ժողովրդավարությունը հասկացվում է որպես յուրաքանչյուր քաղաքացու կողմից կնքված չգրված սոցիալական պայմանագիր: Ուստի, յուրաքանչյուր նոր սերունդ պետք է հասկանա այս չգրված սոցիալական պայմանագրի էությունը (արժեքների ձեռքբերումը) և պաշտպանի այն:

Այս օրինակը ցույց է տալիս, որ ԺՔԿ/ՄԻԿ-ը որդեգրել է մեկ միասնական մոտեցում՝ միավորելով ուսուցման գործընթացները հետևյալ երեք ուղղություններում.

- գիտելիք և ըմբռնում (կոգնիտիվ (իմացական) արժեք),
- հմտությունների ուսուցում և կոմպետենցիաների զարգացում,
- արժեքների և վերաբերմունքի ձեռքբերում:

Ուսուցման հայեցակետերի այս մոդելը կիրառվում է կրթության նկատմամբ: Հետևաբար, այն ծանոթ կլինի բազմաթիվ ընթերցողների: Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, թե որքան խիստ է կողմնակալությունը կոգնիտիվ ուսուցման նկատմամբ, հատկապես՝ առավել բարձր դասարաններում: Ուստի, ինչպե՞ս է ԺՔԿ/ՄԻԿ-ը արձագանքում ուսուցման այս միասնական մոդելով պայմանավորված մարտահրավերին: Այլ կերպ ասած՝ եթե սա այն է, ինչ պետք է սովորեն աշակերտները, այդ դեպքում ի՞նչ պետք է անեն ուսուցիչները:

Որո՞նք են ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական սկզբունքները

Ընդհանուր առմամբ ԺՔԿ/ՄԻԿ-ը միավորում է ուսուցման այս հայեցակետերը այնպիսի հարթակ ստեղծելու միջոցով, որտեղ միահյուսվում են դասարանում սովորելը և իրական կյանքի փորձից սովորելը: ԺՔԿ-ի և ՄԻԿ-ի հիմքում ընկած է դիդակտիկ երեք մոտեցումների հետևյալ համալիրը.

- ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «մասին»,
- ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «միջոցով»,
- ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «համար»:

ԺՔԿ/ՄԻԿ-ի ուղղությամբ այս երեք դիդակտիկ մոտեցումները մեկ ամբողջություն են կազմում: Այս երեք դիդակտիկ մոտեցումներն ընդգրկված են ուսուցիչների կողմից կատարվող բոլոր

աշխատանքներում՝ ծառայելով ուսուցման բոլոր երեք հայեցակետերին: Հավասարակշռությունը հատուկ մտածված շեշտադրումների միջև պետք է լինի տարբեր: Մեր կողմից առավել մանրակրկիտ անդրադարձ կկատարվի այս մոտեցումներից յուրաքանչյուրին:

Ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «մասին»

Սա ներառում է քաղաքացիական կրթությունը որպես դպրոցական շարքային առարկա: «Մասին»-ը մատնանշում է ուսուցման կոգնիտիվ արժեքը: ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսումնական կոգնիտիվ ծրագրի ստանդարտներում ընդգրկված է հետևյալը. աշակերտները կարող են բացատրել, թե ինչպես է գործում ժողովրդավարությունը ՝ ի տարբերություն պետության այլ ձևերի (դիկտատուրա, օլիգարխիա), աշակերտները կարող են նկարագրել մարդու իրավունքների ավանդույթն ու պատմությունը և կարող են ցույց տալ, թե ինչպես են մարդու իրավունքներից մի քանիսն ընդգրկվել իրենց ազգային սահմանադրության մեջ՝ այդպիսով ստանալով քաղաքացիական իրավունքների կարգավիճակ, որոնց պաշտպանությունն առավել ուժեղ է: Ուստի ուսումնական ծրագրում պետք է ներառվեն ԺՔԿ/ՄԻԿ դասընթացներ և վերջինիս սերտորեն առնչվող առարկաներ, ինչպիսիք են պատմությունը, հասարակագիտությունը և տնտեսագիտությունը:

Ուսուցումը՝ «միջոցով»

Աշակերտները պետք է ոչ միայն տեղյակ լինեն մասնակցությանն առնչվող իրենց իրավունքներից, այլև պետք է կարողանան օգտագործել այդ իրավունքները: Ուստի աշակերտներին անհրաժեշտ է գործնական փորձ և ուսուցման հնարավորություններ դպրոցական կյանքի շրջանակում, որը կլինի որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորության:

Օրինակ, ուսուցիչները պետք է աշակերտներին հնարավորություն ընձեռեն իրենց կարծիքը նշել թե՛ դասարանում քննարկվող թեմաների, թե՛ դասավանդման և դպրոցի կառավարմանն առնչվող հարցերի շուրջ: Սա ընկալելու դեպքում ԺՔԿ-ն և ՄԻԿ-ը, ուսումնական ծրագիրը ներկայացնելուց զատ, մանկավարժական ուղենիշ են ապահովում և ընդգրկում են ոչ միայն ԺՔԿ/ՄԻԿ ուղղությամբ հատուկ նախապատրաստված ուսուցիչներին, այլև ողջ դպրոցը: Այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը և պատասխանատվությունը սովորում են կյանքի փորձով և շատ բան կարող է կախված լինել ուսուցչից ՝ բոլոր ուսուցիչները բոլոր առարկաների գծով պետք է համոզիչ օրինակ ծառայեն: Մյուս կողմից, ժողովրդավարական արժեքները որպես վարքագծի ոչ բանավոր դրսևորում, նույնպես բավարար չեն լինի: Դպրոցական կյանքի փորձը պետք է կապակցվի ըմբռնման տեսակներին և պարբերական ձևերին՝ գտնելով իր արտացոլումը վերջիններիս շրջանում («մասին»-ով կազմված ուսուցումը): ԺՔԿ/ՄԻԿ-ը ուսուցման երկու հայեցակետերով էլ պայմանավորված է և մոլորեցնող է բանավեճն այն մասին, թե ուսումնական ծրագրում հնարավոր է ԺՔԿ/ՄԻԿ-ը կամ քաղաքացիական կրթությունը որպես առարկա փոխարինել ԺՔԿ/ՄԻԿ-ով (որպես ընդհանրացված մանկավարժական սկզբունք):

Ուսուցումը՝ «համար»

Այս դիդակտիկ մոտեցումը վերաբերում է դպրոցական կյանքի փորձի և հետագա կյանքի միջև կապին: ԺՔԿ/ՄԻԿ-ն այն կարծիքին է, որ դպրոցական կյանքի փորձը կարևոր է ընդհանուր և քաղաքական սոցիալիզացման տեսանկյունից: Ճշմարիտ է, որ կրթությունը, այդ թվում նաև կյանքը դպրոցում, իրենից ներկայացնում է մի ենթահամակարգ, որը կառավարվում է հատուկ կարիքներով և կանոններով, և այս ենթահամակարգի փորձը ենթակա չէ ուղղակի կերպով փոխանցման: Սակայն մյուս կողմից՝ կյանքը դպրոցում, ըստ էության, իրական կյանքի մի մասն է կազմում: Բազմաթիվ դժվարություններ, որոնց հանդիպում են աշակերտները դպրոցում, կարող են կրկնվել չափահասության տարիքում, օրինակ՝ սեռերի իրավահավասարության խնդիրը, էթնիկական կամ սոցիալական տարբեր ծագում ունեցող համայնքի անդամների ինտեգրման (միասնացման) հարցը, բռնությունը հաղթահարելը, պատասխանատվություն ստանձնելը, ուժերի անհավասար բաշխումը և կենսական ռեսուրսների (ինչպիսիք են փողն ու ժամանակը) սուղ լինելը, կանոններին և օրենքներին ենթարկվելը և փոխզիջումների

գնալը: «Ուսուցում համար» արտահայտությունը մատնանշում է այն կարևորությունը, որ ունի կրթությունը հետագա կյանքի համար: Բոլոր առարկաների գծով ուսուցիչները պետք է սովորեցնեն աշակերտներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու հմտությունները, օրինակ՝ հասարակության մեջ սեփական տեսակետը հակիրճ և հստակ արտահայտելու հմտությունը:

ԺՔԿ-ն դիտարկում է դպրոցը որպես մի վայր, որտեղ աշակերտները կարող են դասեր քաղել իրական կյանքի փորձից: Դպրոցը կյանք է, այլ ոչ հետագա կյանքի համար ուսումնառության կոզիացած մի վայր: Դպրոցը միկրո-հասարակություն է, որը ծառայում է որպես մեկ ամբողջություն[3]կազմող հասարակության մոդել: Որոշ չափով դպրոցը կարող է նույնիսկ դառնալ առավել լավ կամ առավել ժողովրդավարական հասարակության մոդել, քանի որ դպրոցական համայնքի անդամները ավելի մեծ մասնակցություն կարող են ունենալ որոշումների կայացմանը դպրոցական միջավայրի ներսում, քան վերջինիս սահմաններից դուրս: Ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «համար» նշանակում է սովորել, թե ինչպես մասնակցություն ունենալ համայնքային կյանքին, մինչդեռ ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «միջոցով» նշանակում է, որ այս հասարակությունը կառավարվում է ժողովրդավարական սկզբունքներով, որի պարագայում մարդու իրավունքները և երեխաների իրավունքները դիտվում են որպես մանկավարժական ուղենիշներ: Ժողովրդավարության հիմքում ընկած է քաղաքական/պետական այն մշակույթը, համաձայն որի աշակերտները դպրոցում պետք է սովորեն սեփական փորձի և այս փորձի վերաբերյալ անդրադարձ կատարելու միջոցով («մասին»-ով կազմված ուսուցման բաղադրիչը):

ԺՔԿ/ՄԻԿ-ը նախադրյալներ է պարունակում կրթական բարեփոխումների համար, որոնք ուղղված են ողջ դպրոցին՝ ներառյալ բոլոր ուսուցիչները և տնօրենները, ուսմասվարները և տեսուչները: Մյուս կողմից այս ձեռնարկը, կենտրոնանում է ժողովրդավարական քաղաքացիության կրթության և իրավունքների կրթության վրա՝ որպես դպրոցական առարկա: Բարեփոխումը բաղկացած է բազմաթիվ փոքր քայլերից, և գործընթացն ու արդյունքները, ըստ երկրի և համատեքստի, տարբեր են: Ձեռնարկվող առաջին քայլերը դասարանում պետք է լինեն, որտեղ ուսուցիչը կարող է որոշել, թե ինչ փոփոխություն է կամենում կատարել: Այս տեսանկյունից կարևոր է դառնում մեթոդի և բովանդակության հարցը:

Ինչպե՞ս է բովանդակությունը միահյուսվում մեթոդին ԺՔԿ/ՄԻԿ-ի պարագայում

Ընդհանուր առմամբ, ուսուցումը գործունեություն է, որն իրականացվում է սովորողի կողմից: Ուսուցումն ակտիվ գործընթաց է, որը տարբեր բնույթ է կրում առանձին սովորողների դեպքում (կառուցողական մոտեցման կողմակից անձի ուսուցման հայեցակարգը): Շարունակելով վերոնշյալ օրինակը՝ պետք է նշել, որ աշակերտները կարող են սովորել ինչպես օգտվել ազատ արտահայտվելու իրավունքից միայն հաճախ կիրառվող գործնական աշխատանքների միջոցով: Ոչ միայն ԺՔԿ/ՄԻԿ դասավանդող ուսուցիչների, այլև մյուս առարկաների ուսուցիչների պարտականությունն է ապահովել իրենց աշակերտների ուսուցման հնարավորությունները և առաջադրանքները, որոնք խթանում են ուսուցման գործընթացը, օիրնակ՝ պրեզենտացիաների, քննարկումների, բանավեճերի, գրավոր աշխատանքների (էսսեների), ազդագրերի (պաստառների), արվեստի ստեղծագործությունների կամ տեսահոլովակների միջոցով:

Հետևաբար, ԺՔԿ/ՄԻԿ-ը շեշտադրում է այն մեթոդները, որոնք խթանում են խնդիրների վրա հիմնված, փոխներգործուն և համագործակցային ուսուցումը: Ինքնուրույն ճանապարհով կոնկրետ առաջադրանքի հետ կապված խնդիրները բացահայտելու և լուծումները գտնելու միջոցով աշակերտները սովորում են ավելին, քան կկարողանային սովորել բացառապես ուսուցչակենտրոն ուսուցման պարագայում: Այս դեպքում ուսուցման սեփական կարիքները հաշվի առնելու ճկունությունն առավել բարձր մակարդակի վրա է լինում: Այս ձեռնարկի գլուխները ցույց են տալիս, թե ինչպես կարելի է կապ ստեղծել խնդիրների վրա հիմնված ուսուցման և կոնկրետ թեմաների ու քննարկվող թեմաների միջև՝ ներառյալ ուսուցումը

3. Այս հասկացությունը կիրառվել է՝ ներշնչվելով այնպիսի մտածողներից, ինչպիսիք են Դեվեյը (դպրոցը որպես «սաղմնային հասարակություն») և վոն Հենթինգը («դպրոցը որպես քաղաք-պետություն»):

ծրագրերի, քննադատական մտածողության, բանավիճելու և քննարկումների, անդրադարձման և հետադարձ կապի միջոցով: Մյուս կողմից, ուսուցչակենտրոն ուսուցումը փոխներգործուն ուսուցմանը հակադրելը սխալ է: Լավ ուսուցումը, ինչպես ակնհայտ կդառնա այս ձեռնարկի դասերի նկարագրություններից, միշտ ենթադրում է այս երկու ձևերի համակցում:

ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական նպատակը. Մասնակցություն ժողովրդավարությանը			
Ուսուցում	**Դասավանդում**	**Մեթոդներ**	**Դպրոց**
Գիտելիք և ըմբռնում Հմտություններ Վերաբերմունք և արժեքներ	Ուսուցում – մասին – միջոցով – համար ժողովրդավարություն և մարդու իրավունքներ	– խնդիրների վրա հիմնված, – փոխներգործուն, – համագործակցային ուսուցում – -համակցված – դասավանդման – ուղղորդման – վերապատրաստման – ցուցադրության՝ ուսուցչի կողմից	«Դպրոցը որպես միկրո հասարակություն» Կյանքի իրական փորձը դպրոցում

Ժամանակի առումով խնդիրների վրա հիմնված ուսուցումը դասարանում մտածելու տեղիք է տալիս: Ընդհանուր առմամբ, եթե ուսուցիչները ցանկանում են, որ աշակերտներն անեն ավելին, նրանք պետք է դասաժամին ավելի քիչ խոսեն: Միևնույն ժամանակ, նրանք պետք է առավել ճկուն լինեն իրենց աշակերտների ուսուցման կարիքներին արձագանքելիս: Խնդիրների վրա հիմնված և փոխներգործուն (ինտերակտիվ) ուսուցումը պահանջում է մանրակրկիտ պլանավորում և նախապատրաստություն: Ուսուցչակենտրոն ուսուցման հետ համեմատած այն ընդհանուր առմամբ առավել ժամանակատար է: Սա է հավանաբար պատճառը, որ վերջինս առավել տարածված է, չնայած ներկայումս լայնորեն ընդունված է, որ փոխներգործուն ուսուցմանն անցնելն անհրաժեշտություն է:

Ուստի կարող է տարօրինակ թվալ ուսուցիչների և ոչ թե աշակերտների համար ձեռնարկ կազմելը: Այդուհանդերձ, փոխներգործուն և խնդիրների վրա հիմնված ուսուցումն առավել բարդ խնդիր է առաջադրում ուսուցիչներին, քանի որ այդ պարագայում նրանցից պահանջվում է ավելի լայն դերակատարում ունենալ և հարմարվել աշակերտների ուսուցման կարիքներին: Հատկապես հաշվի առնելով նշվածը, այս ձեռնարկը կոչված է օժանդակել ուսուցիչներին՝ որպես առանցքային գործիչների, քանի որ ուսուցիչն է, ով ապահովում է աշակերտներին հնարավորությամբ, առաջադրանքներով և միջոցներով՝ առավել ակտիվ լինելու համար:

Ո՞րն է ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական նպատակը

Ժողովրդավարական համակարգերը պայմանավորված են ակտիվ ժողովրդավարներով: Կարելի է և անհրաժեշտ է սովորել, թե ինչպես մասնակցել ժողովրդավարությանը: Սահմանակարգային շրջանակի և քննարկման ենթակա հարցերի բարդությունը պահանջում է գիտելիքների և ըմբռնման նվազագույն մակարդակ: Հանրային բանավեճին՝ գաղափարների և կոնկրետ շահերի մրցակցությանը մասնակցելը պահանջում է այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հրապարակային խոսելու և բանակցելու ունակությունը: Ժողովրդավարական համայնքների քաղաքական մշակույթի հիմքում ընկած չգրված սոցիալական պայմանագիրը հասկանալը և գնահատելը պայմանավորված է այն արժեքներով և վերաբերմունքով, որոնց հավատարիմ են եղել երիտասարդները: ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական նպատակը ժողովրդավարությունը գործուն վիճակում պահելն է՝ երիտասարդ սերնդի՝ ակտիվ քաղաքացի դառնալուն օժանդակելու միջոցով: Ժողովրդավարությունը չի կարող գործել առանց սահմանակարգային (ինստիտուցիոնալ) շրջանակի, որը պետք է պաշտպանված լինի սահմանադրությամբ: Սակայն սա բավարար չէ: Այն պետք է արմատավորվի հասարակության մեջ: Ժողովրդավարության ահա այս մշակութային հայեցակետն է, որ ԺՔԿ/ՄԻԿ-ը ձգտում է ամրացնել և պաշտպանել: Սա է հատկապես այն հանգամանքը, որի պատճառով Եվրոպայի խորհուրդը կենտրոնացել է ուսուցիչների՝ առանց

աշխատանքի ընդհատման վերապատրաստմանը ԺՔԿ/ՄԻԿ ուղղությամբ, որպեսզի օժանդակի խաղաղության գործընթացին Բոսնիա և Հերցեգովինայում:

Այս ձեռնարկն ուղղված է 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտների ուսուցիչներին: Ուսուցումն ակնհայտորեն պայմանավորված է աշակերտի կողմից արդեն գիտեցածով և կյանքի ընթացքում ձեռք բերված փորձով: Ուստի, այս ձեռնարկի գլուխները շեշտում են ժողովրդավարության մշակութային հայեցակետը, մինչդեռ միջնակարգ մակարդակի համար նախատեսված ձեռնարկում (ԺՔԿ/ՄԻԿ, հատոր IV) ուշադրության կենտրոնում է հայտնվում ժողովրդավարության քաղաքական և սահմանակարգային հայեցակետը հասարակության մեջ և քաղաքական որոշումների կայացման գործընթացում:[4]

«Եվրոպական մոտեցում»-ը ԺՔԿ/ՄԻԿ-ին

Սույն ձեռնարկն արտացոլում է ընդհանուր եվրոպական մոտեցում ԺՔԿ/ՄԻԿ-ին՝ բազմաբնույթ ռեսուրսների լայն բազմազանությունից ստացվող աջակցությունից օգտվելու միջոցով: Այս ձեռնարկի գաղափարը հղացել և սկզբնական տարբերակը մշակել ենք Բոսնիա և Հերցեգովինայում: Վերանայմանն ու քննարկումներին մասնակցել են բազմաթիվ մանկավարժներ և ուսուցիչներ: Այս ձեռնարկի հեղինակները և խմբագիրները ներկայացնում են դասավանդման մոտեցումներ և ավանդույթներ ՄԹ-ում, Բելգիայում, Շվեյցարիայում և Գերմանիայում: Վերանայված տարբերակը պատրաստելիս՝ մեզ օժանդակել են տիկին Օլոֆ Օլաֆսդոթթեղը և տիկին Սառա Քիթինգ-Չեթվինդը Եվրոպայի խորհրդից, ինչպես նաև տիկին Սաբրինա Մառունչեդուն և պարոն Ուիլթրուդ Ուայդինգերը (Միջազգային ծրագրեր կրթության ոլորտում (ՄԾԿՈ), Ցյուրիխ): Տիկին Անգելա Դոուլը՝ Եվրոպայի խորհրդից, կարդացել է մեր վերջնական սևագիր օրինակները: Պարոն Պետի Ուիսկեմաննի նկարազարդումներն այնպիսի իմաստ են հաղորդում տեքստին, որը հնարավոր չէր լինի արտահայտել բառերով: Մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել հեղինակներին, նկարչին, գրախոսներին և սրբագրիչներին իրենց ներդրման և աջակցության համար: Մեր հատուկ երախտագիտությունն ենք հայտնում Սարայեվո քաղաքում Եվրոպայի խորհրդի համակարգող պարոն Էմիր Աղձովիցին, ով հոգ է տարել մեր մասին ԺՔԿ/ՄԻԿ ծրագրերի ողջ ընթացքում: Ձեռնարկը երբեք չէր գրվի, եթե այն սկզբից ևեթ չներգրավվեր ծրագրում: Մենք շնորհակալություն են հայտնում նաև տիկին Հիթեր Կուրանտին մեր ուղևորությունները կազմակերպելու, վիզաները ձեռք բերելու կամ հանդիպումները նախապատրաստելու ժամանակ դրսևորած համբերության համար: Մենք երախտապարտ ենք եվրոպական շունչ ունեցող այս ծրագրի մեր բոլոր գործընկերներին:

Ստրասբուրգ, 2008 թվականի ապրիլ

Ռոլֆ Գոլլոբ (Ցյուրիխ, Շվեյցարիա)

Պետեր Կրապֆ (Վայնգարթեն, Գերմանիա)

4. ԺՔԿ/ՄԻԿ-ի դասավանդումը կարող է իրականացվել տարիքային ցանկացած խմբում՝ պայմանով, որ հաշվի առնվի սովորողների փորձի և գիտակության մակարդակը: «Երեխաների իրավունքների կրթություն» ձեռնարկում (ԺՔԿ/ՄԻԿ, հատոր V) ցույց է տրված դիդակտիկ մոտեցումների ծավալվածությունը՝ մանկապարտեզից մինչև 8-րդ դասարան:

Ձեռնարկի հիմնական հասկացությունները

ԺՔԿ/ՄԻԿ հիմնական հասկացություններ՝ գործիքներ ակտիվ քաղաքացիների համար

Կենտրոնանալով հասկացությունների վրա՝ այս գրքի մեթոդիկայի համար հիմք է հանդիսանում դասական դիդակտիկ մոտեցումը քաղաքացիական կրթության և կրթության այլ բնագավառների նկատմամբ: Հասկացությունները ձևավորվում են տեսության հիման վրա, սակայն ուսումնական գործընթացում հասկացությունները սիստեմատիկ տեսական համակարգ չեն ստեղծում: Հակառակը՝ վերջիններիս ընտրությունը պայմանավորված է նրանով, որ սովորողների համար դրանք օգտակար գործիքներ են:

Հասկացություններն ապահովում են կոգնիտիվ կառույցներ, որոնց շնորհիվ սովորողները կարողանում են ընդգրկել նոր տեղեկատվությունը իմաստալից համատեքստում և առավել հեշտ հիշել այն (կառուցողական մոտեցման կողմակից անձի ուսուցում): Սա կիրառվում է հատկապես այն փաստերի և տվյալների նկատմամբ, որոնք սովորողները ստիպված չեն լինի անգիր անել: Հասկացությունները կարող են օգտակար լինել նաև թերթ կարդալիս կամ լրատվություն լսելիս, քանի որ հարցը սկսում է կարևորվել հասկացության հետ կապվելու ժամանակ, ինչպես օրինակ ժողովրդավարություն, իշխանություն, հակամարտություն կամ պատասխանատվություն: Հասկացությունները, հետևաբար, էական դեր են խաղում իրազեկ քաղաքացու կրթության հարցում: Սակայն դրանք կոգնիտիվ ուսուցումը ձևայնացնելուց զատ, պարունակում են նախադրյալներ արժեքների զարգացման և հմտությունների կատարելագործման համար: Այս կապը, ինչին առավել մանրամասն անդրադարձ կկատարվի՝ ստորև ցույց է տրված ձեռնարկի բոլոր գլուխներում:

Աշակերտները, ովքեր սովորել են հարցեր տալիս ուղղորդվել ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացություններով, առավել լավ են պատրաստված նոր տեղեկատվության հետ աշխատելու, իսկ հետագայում (մշտական կրթություն) նոր խնդիրներ լուծելու ուղղությամբ: Հասկացութային հենքով ուսուցումը նույնպես նախապատրաստում է սովորողներին ուսումնական մակարդակի առավել բարդ դասընթացների համար, որոնց պարագայում սովորողները կարող են արձանագրել հասկացություններ ձևավորող տեսություններ:

Ինչպե՞ս են սովորողները հասկանում և օգտագործում հիմնական հասկացությունները

Մտածելու և սովորելու գործընթացները մեծապես պայմանավորված են մասնավորը վերացականի հետ կապելու հանգամանքով: Հասկացությունները հանդիսանում են վերլուծության և մտահանգման վերացական, ընդհանրացված արդյունք: Սովորողները կարող են ըմբռնել հասկացությունները երկու մոտեցումների՝ մակածման (ինդուկցիա) կամ արտածման (դեդուկցիա) միջոցով: Դեդուկտիվ մոտեցման պարագայում քննարկվում է դասախոսության կամ տեքստի շրջանակում ներկայացված հասկացությունը՝ այնուհետև կիրառելով այդ հասկացությունը մասնավոր, օրինակ՝ որևէ հիմնախնդրի կամ դեպքի նկատմամբ: Ինդուկտիվ մոտեցումը հակառակն է՝ սկսում է մասնավորից և անցում կատարում վերացականին: Ընթերցողը կարող է հասկանալ, որ այս ձեռնարկում գլուխներն ընդհանուր առմամբ կառուցված են ինդուկտիվ մոտեցմամբ:

Ուստի հիմնական հասկացությունները ձևավորվել են կոնկրետ օրինակներից, որոնք հաճախ պատմություններ են կամ դեպքերի նկարագրություններ: Երբ աշակերտները քննարկում են, թե ընդհանուր առմամբ ինչի համար է տրված տվյալ օրինակը, նրանց անհրաժեշտ է լինում մի այնպիսի հասկացություն, որը կարող է հանրագումարի բերել այս ընդհանրացված ասպեկտները: Ուսուցիչը որոշում է, թե երբ և ինչպես ներկայացնի հասկացությունը:

Հասկացությունները ըմբռնման գործիքներ են, որոնք սովորողները կարող են օգտագործել նոր թեմաներում: Որքան հաճախ են նրանք օգտագործում որևէ հասկացություն, այնքան լավ են

նրանք հասկանում այն, ըստ այդմ, առավել սերտ դարձնելով կապը և խաչվող զուգահեռները (կոգնիտիվ կառույցներ): Առանձին փաստերն անգիր սերտելու փոխարեն սովորողները կարող են նոր տեղեկությունը կապել իրենց կողմից արդեն մշակված ըմբռնման մտավոր շրջանակին:

Ինչպե՞ս հարմարեցնել այս ձեռնարկը

Գլուխներում տրվում է ուսուցման երկու կարևոր փուլերից առաջինի՝ մասնավորից դեպի վերացականին անցնելու նկարագրությունը: Նրանք տրամադրում են գործիքները և դրանց օգտագործման եղանակը թողնում ուսուցիչների և աշակերտների որոշմանը: Սա վերացականի տիրույթից դեպի մասնավորի տիրույթ տանող երկրորդ քայլն է: Տարբեր են ոչ միայն սովորողների կարիքները և շահերը, այլև խնդիրները, նյութերը, սահմանակարգային շրջանակը և կրթական ավանդույթները, որոնք տարբեր երկրների պարագայում նույնպես փոփոխվում են: Սա է այն կետը, որից սկսվում է սույն ձեռնարկի հարմարեցման գործընթացը:

Այս ձեռնարկի նյութերը տրամադրում են քաղաքական գրագիտությանը, հմտությունների բարելավմանը և վերաբերմունքի ձևավորմանն օժանդակող գործիքներ: Ձռնարկի գլուխներում հղում չի արվում որևէ կոնկրետ երկրի խնդիրներին որևէ կոնկրետ ժամանակահատվածում, սակայն ընթերցողը հաճախ կտեսնի առաջարկություններ՝ տրված ուսուցչի կամ աշակերտների համար, որպեսզի նրանք ի մի բերեն նյութեր, որոնք կարող են կապ ստեղծել դասերի և իրենց երկրի իրավիճակի միջև: Խմբագիրները և թարգմանիչները, ինչպես նաև ուսուցիչները պետք է իրազեկ լինեն այս բացթողնմանը, որը գիտակցաբար է թույլ տրված: Յուրաքանչյուր երկիր ինչպես զարգացնում է ժողովրդավարության սեփական ավանդույթը, որն արմատավորված է մշակութային ավանդույթի և սոցիալական զարգացման մեջ, այնպես էլ պետք է մշակի ԺՔԿ/ՄԻԿ-ին համարժեք սեփական տարբերակը՝ ավելացնելով հանձնարարականներ իր կրթական համակարգում, քաղաքական համակարգի սահմանակարգային շրջանակում, քաղաքական հարցերում և որոշումների կայացման գործընթացներում:

Որո՞նք են այս ձեռնարկում ընդգրկված հիմնական հասկացությունները

Ստորև ներկայացված հասկացութային քարտեզը, որը մշակված է համակենտրոն շրջանների տեսքով, ցույց է տալիս, թե որ հիմնական հասկացություններն են ներառվել այս ձեռնարկի գլուխներում:

Քարտեզի կենտրոնում ժողովրդավարություն հասկացությունն է՝ նշելու, որ այն առկա է ԺՔԿ/ՄԻԿ-ի ցանկացած համատեքստում: Ակտիվ քաղաքացիների կողմից մասնակցությունը ժողովրդավարական հասարակությանը ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական նպատակն է, և այս հանգամանքն արտացոլվում է նշված հասկացությունը կենտրոնում տեղակայելու միջոցով:

Հաջորդ շրջանի մեջ ներկայացված են ժողովրդավարության երեք հիմնական տարրերը՝ իրավունքներ, պարտականություններ և արդարություն: Սրանք առնչվում են երեք փոխկապակցված և կարևոր պայմանների, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարության կայացման համար:

Քաղաքացիներին պետք է ընձեռնել հնարավորություններ և նրանք պետք է ակտիվ կերպով օգտագործեն մարդու հիմնական

ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացությունների քարտեզ



այն իրավունքները, որոնք հնարավորություն են տալիս մասնակցել որոշումների կայացման գործընթացին, օրինակ՝ քվեարկելու իրավունքը, ազատ արտահայտվելու իրավունքը, մամուլի ազատությունը, օրենքի առաջ հավասարությունը և ձայների մեծամասնությամբ որոշում ընդունելու իրավունքը: Ժողովրդավարությունը մրցակցային բնույթ է կրում՝ մրցակցություն շահերի, գաղափարների և արժեքների միջև, իսկ արժեքավոր ապրանքը միշտ էլ հազվադեպ է ճարվում: Այնուամենայնիվ, որոշումների կայացման վրա ազդեցություն գործելու հնարավորությունները, հատկապես մրցակցային շուկայական տնտեսություններում, հավասար չեն բաշխված, և, ըստ այդմ, հասարակության մեջ բարեկեցությունն ու հնարավորություններն անհավասար են բաշխված: Քաղաքական հիմնախնդիրն այն է, թե ինչ չափով և արդյոք պետք է շտկել տնտեսական և սոցիալական բաշխվածության արդյունքները (սոցիալական արդարություն): Քաղաքացիները կարող են և պետք է օգտագործեն իրենց իրավունքները, որպեսզի պաշտպանեն իրենց շահերը, սակայն ոչ մի հասարակություն չի կարող գոյատևել, եթե հասարակության անդամները պատրաստակամ չեն հոգ տանել մեկը մյուսի կամ ընդհանուր շահերի համար (պատասխանատվություն): Այս կարճ ուրվանկարը ցույց է տալիս, որ հասկացություններն իրարից անջատ չեն, այլ կապված են իրար հետ լարումով, որը պետք է հավասարակշռել, ուստի և հասկանալ:

Մյուս հասկացությունները, որոնք դասավորված են դրսի շրջանի մեջ, միահյուսված են այս առանցքային հասկացություններին և միմյանց բազմաթիվ կապերով:

Դեպի դուրս ուղղված սլաքները ցույց են տալիս, որ այս բոլոր հասկացությունները կարող են օգտագործվել տարատեսակ հարցերի պարագայում՝ բարոյական, սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական կամ բնապահպանական:

ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացությունները և ուսուցման հայեցակետերը

ՔԿ/ՄԻԿ-ում հիմնական հասկացությունները կապված են թե՛ գլուխների քննարկման առարկաների, թե՛ ուսուցման երեք հայեցակետերի հետ, որոնց մասին արդեն համառոտ նշել ենք ներածական մասում: Հաջորդ աղյուսակը ցույց է տալիս, թե ինչպես են գլուխները նպաստում հետևյալ կետին՝ ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «մասին, միջոցով և համար»: Աղյուսակում նաև ցույց է տրված, թե ինչպես և ինչու են գլուխները խմբավորված չորս վերնագրի ներքո, որոնք առնչվում են ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացություններին:

1. Անհատ և հասարակություն,
2. Պատասխանատվություն,
3. Մասնակցություն,
4. Լիազորություն և իշխանություն:

Խմբավորված այս չորս վերնագրի ներքո՝ գլուխները կազմում են դասընթաց: 1-ին բաժինը սկսվում է անհատի մասին քննարկումով և դրանից հետո կենտրոնանում է հասարակության վրա՝ սոցիալական փոխներգործություն, կարծրատիպերի ձևավորում, բազմազանություն և բազմակարծություն, բազմակարծություն և բախում: 2-րդ բաժինը բարձրացնում է այն հարցը, թե ով պետք է պատասխանատվություն ստանձնի հասարակության մեջ: 3-րդ բաժինը՝ 5-րդ գլուխ (Թերթի պատրաստում), որևէ թեմայի շուրջ չի կենտրոնանում, քանի որ այս գլուխը սերտորեն առնչվում է հասարակության մեջ, տվյալ դեպքում՝ դպրոցական համայնքում գործողություններ ձեռնարկելուն: Եվ վերջապես 4-րդ բաժինը քննարկում է իրավունքի թեման, օրենսդրությունը և քաղաքականությունը ընդհանուր առմամբ և դպրոցական կառավարման համատեքստում:

Գլխի համարը	Վերնագիրը	ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացությունը	Ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «մասին, միջոցով, համար»		
			«մասին»	*«միջոցով»*	*«համար»*
Բաժին 1: Անհատը և հասարակությունը					
1	Կարծրատիպեր և նախապաշարմունքներ Ի՞նչ է նշանակում ինքնություն: Ինչպե՞ս եմ ես ընկալում դիմացինին, ինչպես է դիմացինն ընկալում ինձ:	Ինքնություն Անհատը և համայնքը	Փոխադարձ ընկալումներ Կարծրատիպեր Նախապաշարմունք Անհատը և խմբի ինքնությունը	Տեսակետի փոփոխություն	Կարծրատիպերը և նախապաշարմունքները ճանաչելը և կասկածի ենթարկելը
2	Հավասարություն: Մենք հավասա՞ր ենք, թե՞ ոչ:	Հավասարություն Խտրականություն Սոցիալական արդարություն	Խտրականությունը հասարակության մեջ Հավասարությունը որպես մարդու հիմնարար իրավունք	Տարբերությունների և նմանությունների գնահատում Խտրականությունը զոհերի տեսանկյունից դիտարկելը	Խտրական իրավիճակների դեմ պայքար Բարոյական դատողություն
3	Բազմազանություն և բազմակարծություն: Ինչպե՞ս կարող են մարդիկ պահպանել խաղաղ համակեցություն:	Բազմազանություն Բազմակարծություն Ժողովրդավարություն	Բազմակարծությունը և բազմակարծության սահմանները Հավասար իրավունքներ և կրթություն Խոցելի անձանց կամ խմբերի պաշտպանությունը մարդու իրավունքների պայմանագրերով	Հանդուրժողականություն Կենտրոնացումն առավելապես մարդկանց, և ոչ խնդիրների վրա	Ժողովրդավարական քննարկում Հետազոտական բանավեճ Բանակցություն
4	Բախումնային իրավիճակներ: Ի՞նչ անել տարաձայնությունների դեպքում:	Բախում Խաղաղություն	Իրավիճակ՝ հաղթել-հաղթել Ցանկություններ, կարիքներ, փոխզիջում	Ոչ բռնի կերպով	Բախումների կարգավորման վեց փուլից բաղկացած մոդել
Բաժին 2: Պատասխանատվություն ստանձնելը					
5	Իրավունքներ, ազատություններ և պարտականություններ: Որո՞նք են մեր իրավունքները և ինչպե՞ս են դրանք պաշտպանված:	Իրավունքներ Ազատություններ Պատասխանատվություն	Հիմնական կարիքներ Ցանկություններ Մարդկային արժանապատվություն Պարտականություններ և մարդու իրավունքների պաշտպանություն	Իրազեկվածությունը անձնական պատասխանատվությանը	Մարդու իրավունքների խախտումներ բացահայտելը և դրանք վիճարկելը

Գլխի համարը	Վերնագիրը	ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացությունը	Ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների «մասին, միջոցով, համար»		
			«մասին»	*«միջոցով»*	*«համար»*
6	Պարտականություն: Ինչպիսի՞ պարտականություններ են կրում մարդիկ:	Պատասխանատվություն	Իրավական, սոցիալական, բարոյական պարտականություններ ՀԿ-ների դերը քաղաքացիական հասարակության մեջ	Բարոյական դատողություն Երկընտրանքներ (պատասխանատվության բախումնային իրավիճակները)	Անձնական պատասխանատվություն ստանձնելը
Բաժին 3. Մասնակցություն					
7	Թերթ դասարանի համար: Լրատվության ըմբռնումը լրատվություն ստեղծելու միջոցով	Ժողովրդավարություն Հասարակական կարծիքը	Տպագիր լրատվամիջոցների տեսակները Նորությունների նկատմամբ պատժամիջոցների նպատակը	Տեղեկատվության և արտահայտվելու ազատությունը Որոշումների համատեղ կայացման ծրագրում	Նախագծի մասով անձնական պատասխանատվություն ստանձնելը
Բաժին 4. Լիազորություն և իրավասություն					
8	Կանոններ և օրենք: Ինչպիսի՞ կանոններ են անհրաժեշտ հասարակությանը:	Կանոններ և իրավունք Իրավունքի գերակայություն	Իրավունքի նպատակը Քաղաքացիական իրավունք, քրեական իրավունք Երիտասարդների համար նախատեսված օրենքներ Լավ օրենքի չափանիշները	Արդար օրենքների բացահայտում	Օրենքների պահպանում
9	Կառավարություն և քաղաքականություն: Ինչպե՞ս պետք է կառավարվի հասարակությունը:	Լիազորություն և իրավասություն Ժողովրդավարություն Քաղաքականություն	Կառավարման ձևեր (ժողովրդավարություն, միապետություն, դիկտատուրա, թեոկրատիա, անիշխանություն): Կառավարության պարտականությունները	Մտքի և արտահայտվելու ազատություն Քննադատական մտածողություն	Բանավեճ

Գլուխները հիմնական հայեցակետերի ներքո խմբավորելը ընդլայնում է ուսուցչի ճկունության շրջանակը դասի պլանավորման ընթացքում: Որևէ գլխի քննարկման ընթացքում աշակերտների կողմից բարձրացված հարցերը ենթադրում են, որ տեսակետը փոփոխվում է հաջորդող գլխի ընթացքում, որը թույլ է տալիս ուսուցչին առավել լավ արձագանքել սովորողների կարիքներին:

Ինչպես նկարագրվել է վերևում, այս ձեռնարկի թեմաներում որդեգրված է ինդուկտիվ մոտեցումը: Աղյուսակը ցույց է տալիս այն կարգերը, որոնք կապված են գլուխներում հանդիպող հիմնական հասկացությունների հետ (ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին): ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսուցման երկրորդ՝ «Ժողովրդավարական վերաբերմունք և արժեքներ» հայեցակետը քննարկվում է բաժին 2-ում՝ «Պատասխանատվություն ստանձնելը» թեմայում: Այդուհանդերձ, յուրաքանչյուր գլուխ ներառում է արժեքների հայեցակետ, ինչպես ցույց է տրված «Ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների միջոցով» սյունակում: ԺՔԿ/ՄԻԿ-ի ուսուցման երրորդ հայեցակետը այն է՝ սովորել, թե ինչպես մասնակցություն ունենալ համայնքային կյանքին (ուսուցում ժողովրդավարության և մարդու իրավունքների համար), նույնպես քննարկվում է յուրաքանչյուր գլխում, միաժամանակ գլուխ 5-ը առանձնակիորեն կենտրոնանում է այս հայեցակետի վրա:

Դասապլաններն ընդգրկում են հասկացութային ուսուցման հատվածներ: Այստեղ բացատրված են ոչ միայն հիմնական հասկացությունները, այլև ներկայացված են նաև այլ հասկացություններ, որոնք կարևոր են դասի համատեքստում:

Գլուխկոտրուկ հասկացությունը՝ որպես կառուցողական ուսուցման մոդել

Հասկացութային գլուխկոտրուկը որպես հիմնական դրույթ ներկա է ձեռնարկի յուրաքանչյուր հատվածում: Այն կրկնվում է յուրաքանչյուր գլխի տիտղոսաթերթի վրա՝ ներառելով այն հատվածը, որն առնչվում է տվյալ գլխի՝ առաջին պլանում ցուցադրված հիմնական հասկացություններին: Այստեղ ինը պատկեր միացվել են իրար ամբողջական գլուխկոտրուկը կազմելու համար: Այս պատկերը կարող է զանազան մեկնաբանություն ունենալ:

Առաջին հերթին, յուրաքանչյուր նկարի տեքստից պարզ է դառնում, թե ԺՔԿ/ՄԻԿ-ի որ հասկացությունն է եղել նկարիչ Պետի Ուիսկեմաննի մտքում: Այնուհետև, ինը նկար միացնելու միջոցով գլուխկոտրուկը ցույց է տալիս, որ թվով ինը հասկացությունները կապակցված են տարբեր առումներով և իմաստալից մեկ ամբողջություն են կազմում:

Այնուամենայնիվ, գլուխկոտրուկը այն տպավորությունն է ստեղծում, թե այս գրքի հիմնական հասկացությունների շարքն ինքնին ամբողջական է, և որ ոչ մի տարր չպետք է բաց թողնվի կամ ավելացվի: Այս տեսանկյունից դիտարկելու դեպքում կարող է թվալ, թե գլուխկոտրուկը մոլորեցնող հաղորդագրություն է փոխանցում՝ առաջարկելով, որ այս ձեռնարկի հասկացութային շրջանակը բացառի դիդակտիկ որևէ մոտեցում:

Այս ինը հասկացություններն իհարկե, տեսության կամ ըմբռնման փակ համակարգ չեն կազմում: Դրանք առավելապես ընտրվել են այն պատճառով, որ մեր կողմից համարվել են հատկապես կարևոր կամ օգտակար: Այլ հասկացություններ նույնպես կարող են հետաքրքրական լինել, օրինակ՝ փող, իշխանություն կամ գաղափարախոսություն: Ձեռնարկը տրամադրում է առավելապես գործիքների հավաքակազմ, այլ ոչ տեսություն և բաց է հարմարեցումների և լրացումների համար:

Մյուս կողմից հասկանալու փորձը նշանակության փնտրտուք է և կառուցողական մոտեցումը դիտում է ուսուցման գործընթացը որպես նշանակություն ստեղծելուն ուղղված նախաձեռնություն: Աշակերտները կապում են նոր տեղեկատվությունը արդեն գիտեցածին և հասկացածին: Աշակերտները կփորձեն միահյուսել ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացությունները մեկը մյուսին: Վարվելով այս կերպ՝ նրանք իրենց մտքում կստեղծեն սեփական գլուխկոտրուկը տարբեր միահյուսումներով և տարրերի սեփական դասավորությամբ: Միգուցե նրանք գտնեն բացերը կամ բացակայող կապը և հարցեր տան, որոնք այս ձեռնարկի փոքրաթիվ հիմնական հասկացությունների շրջանակից դուրս են: Նրանց արդյունքները տարբեր կլինեն և գլուխկոտրուկը կարտացոլի այս տարբերությունը հասկացությունները տրամագրերի և վերոնշյալ աղյուսակից շեղվող հաջորդականությամբ ներկայացնելու միջոցով: Սեփական գլուխկոտրուկները կազմելիս աշակերտները կարող են սխալներ թույլ տալ, նրանք պետք է ներկայացնեն իրենց արդյունքները դասարանում: Անհրաժեշտության դեպքում աշակերտը կամ ուսուցիչը պետք է շտկի դրանք (տարանջատում):

Երբ ուսուցիչն օգտագործում է այս ձեռնարկը և պատրաստում դասանյութը, նա մտքում գաղափար պետք է ունենա, թե ինչպես են միահյուսվում այս հասկացությունները և թե ինչպես պետք է կամ կարող են աշակերտները հասկանալ դրանք:

Ինչպես ասվում է ասացվածքում՝ նկարը կարող է ավելին պատմել, քան հազարավոր բառերը: Այսպիսով, այս գլուխկոտրուկը կարող է ընթերցողին շատ բան հաղորդել հիմնական հասկացությունների, դիտակտիկ մոտեցում ընտրելու իմաստի և կառուցողական մոտեցման կողմակից անձի ուսուցման մասին:

Նկարները կոչված են ակտիվ ընթերցողին օժանդակելուն(մետաանդրադարձում)

Այս գլուխը քննարկել է վերացական մտքի՝ հասկացությունների գաղափարը: Հեղինակի առջև դրված է դժվար խնդիր իր հաղորդագրությունը հստակեցնելու առումով և ընթերցողն էլ բախվում է դժվար խնդրի այդ հաղորդագրությունը հասկանալու առումով: Հեղինակի և ընթերցողի այս ընդհանուր փորձը ընդհանուր շատ կողմեր ունի ուսուցիչների և աշակերտների միջև համագործակցության հետ: Ուստի, այս գլխում կարևոր է անդրադարձ կատարվել հեղինակի և ընթերցողի միջև հաղորդակցությանը: Այս կերպ մենք ևս մեկ անգամ կիրառում ենք ինդուկտիվ մոտեցումը՝ հղում անելով առավել մասնավոր, համատեղ փորձի, որպեսզի ստանանք ընդհանուր պատկերացում, որը կարելի կլինի կիրառել այլ ոլորտներում, մասնավորապես՝ դասավանդման և ուսուցման դաշտում:

Հետազոտությունը ցույց է տվել, որ գրքերից օգտվող բազմաթիվ մարդիկ նախքան տեքստի ուսումնասիրությանն անցնելը առաջին հերթին նայում են նկարներին և տրամագրերին (դիագրամներ): Նկարների ուժեղ կողմը կայանում է նրանում, որ մեր երևակայության համար դրանք ունեն գեղագիտական գրավչություն և իրենցից ներկայացնում են տեղեկատվական խտանյութ: Նրանց թույլ կողմը կայանում է նրանում, որ այս տեղեկատվությունը չի փոխանցվում բանավոր կերպով: Դիտողը կարող է իր մտքում ձևավորել մի գաղափար, որը չի համապատասխանում հեղինակի մտադրությանը:

Հեղինակը, ընթերցողը և հաղորդագրությունը եռանկյունաձև փոխհարաբերության մեջ են գտնվում: Այս կառուցվածքում մեկ տարր մշտապես բացակայում է մյուս երկուսի հարաբերության շրջանակից: Սա նշանակում է, որ հեղինակը չունի լիարժեք վերահսկողություն այն հաղորդագրության նկատմամբ, որը ձևավորվում է ընթերցողի մտքում, այն նույն համանմանությամբ, ինչպես ուսուցիչը չի կարող որոշել՝ ինչն է աշակերտը ի վերջո հիշում, և ինչը՝ մոռանում: Այդուհանդերձ, եթե ընթերցողը հետաքրքրված է և պատրաստակամ է պարզել, թե արդյոք ճիշտ է պատկերի վերաբերյալ իր ըմբռնումը, թե արդյոք այն համապատասխանում է հեղինակի կողմից ծրագրված հաղորդագրությանը, ապա հեղինակը պետք է ներկայացնի պատկերը մեկնաբանող կամ բացատրող տեքստ:



Հետաքրքիր է համեմատել հեղինակի և ընթերցողի միջև հաղորդակցության կառուցվածքը ուսուցչի և աշակերտների միջև հաղորդակցության կառուցվածքի հետ՝ կիրառելով դիդակտիկ եռանկյունու մոդելը: Առկա են կառուցվածքային նմանատիպություններ (անալոգիաներ) և էական տարբերություններ:

Երկու դեպքում էլ առկա է եռանկյունաձև կառուցվածք, որը նշանակում է, որ ոչ մի տարր կամ մասնակից չի գերիշխում ամբողջի նկատմամբ: Հեղինակները հաղորդակցվում են իրենց ընթերցողների հետ այնպիսի միջոցներով, ինչպիսին այս ձեռնարկն է: Սովորաբար սա միակողմանի հաղորդակցություն է: Հեղինակը և ընթերցողը հազվադեպ են հանդիպում իրար անձամբ, և, ըստ այդմ, հեղինակը կանոնավոր հետադարձ կապ չի ունենում: Հեղինակը չունի լիարժեք վերահսկողություն ընթերցողի մտքում ի հայտ եկող հաղորդագրության նկատմամբ:

Դասարանում ուսուցիչը չունի լիարժեք վերահսկողություն աշակերտի ուսուցման գործընթացների նկատմամբ: Այդուհանդերձ, աշակերտների և ուսուցչի անձնական փոխհարաբերությունները մշտական հետադարձ կապ են ապահովում, և ուսուցչի անձը ամենահզոր միջոցն է դասավանդման գործընթացում:

Որևէ պատկերի նայելիս՝ ընթերցողն իր մտքում հաղորդագրություն է կազմում և կանխատեսում է, թե ինչ ակնկալի հեղինակի կողմից գրված տեքստն ընթերցելիս: Միգուցե ընթերցողը կարծի, թե պատկերի մասին իր ըմբռնումը հաստատված է, կամ միգուցե որոշ տարրերի տարանջատում տեսնի: Պատկերները օգնում են երկխոսություն ստեղծել հեղինակի և ընթերցողի միջև, որը տեղի է ունենում ընթերցողի մտքում: Պատկերի և տեքստի համադրությունը գալիս է օժանդակելու ակտիվ ընթերցողին և մտածողին:

Պատկերները կարդալը առանցքային հմտություն է այսպես կոչված տեղեկատվական հասարակության պայմաններում և աշակերտներին պետք է սովորեցնել այս հմտությունը: Ուստի մենք առաջարկում ենք, ուսուցիչը բաժանի այս գուիկոտրուկն աշակերտներին: Նկարը

բացատրելու պարտականությունը ստանձնում են ուսուցիչը կամ աշակերտները: Ուսուցիչը այն կարող է օգտագործել՝ աշակերտներին այս ձեռնարկի առաջարկվող ուսումնական ծրագիրը ծանոթացնելու համար, կամ որպես ամփոփում դպրոցական տարվա ավարտին: Աշակերտները կարող են ինը կտորի բաժանել գլուխկոտրուկը և կրկին հավաքել իրենց մտքում ծագած ուսումնական ծրագրին համապատասխան: Աշակերտները, երբ ներկայացնում են գլուխկոտրուկի մասերը, բացահայտում են իրենց սեփական ուսուցումն ընկալելու եղանակները, իրենց կողմից կազմված համակցումները և ցույց են տալիս այդ մասերի միջև գոյություն ունեցող կապը, ինչպես նաև այդ մասերի ներքո քողարկված հասկացությունները: Հասկացութային ուսուցման մակարդակում այս փորձառության շուրջ խորհրդածելու արդյունքում նրանք կարող են հասկանալ, որ մտքի և արտահայտվելու ազատությունը ոչ միայն ժողովրդավարական որոշումների կայացման, այլև ընթերցանության և ուսուցման պայմաններ են:

Բաժին 1

Անհատը և հասարակությունը

Գլուխ 1

Կարծրատիպեր և նախապաշարմունքներ:
Ի՞նչ է նշանակում ինքնություն:
Ինչպե՞ս եմ ընկալում դիմացինին, ինչպես է դիմացինն ընկալում ինձ:

Գլուխ 2

Հավասարություն: Մենք հավասա՞ր ենք, թե՞ ոչ:

Գլուխ 3

Բազմազանություն և բազմակարծություն:
Ինչպե՞ս կարող են մարդիկ պահպանել խաղաղ համակեցություն:

Գլուխ 4

Բախումնային իրավիճակներ:
Ի՞նչ անել տարաձայնությունների դեպքում:

ԳԼՈՒԽ 1
Կարծրատիպեր և նախապաշարմունքներ

Ի՞նչ է ինքնությունը
Ինչպե՞ս եմ ես ընկալում դիմացինին, ինչպես է դիմացինն ընկալում ինձ

1.1. Ինչպե՞ս է անձը նկատվում մարդկանց կողմից
Անձի գործոնը շատ ավելի է կարևորվում, քան կարելի է ենթադրել

1.2. Տարբեր տեսանկյուններից ինչպես կարող է անձը նկարագրվել Ինչպե՞ս առավել լավ ճանաչել անձին

1.3. Կարծրատիպեր և նախապաշարմունքներ
Մեր գաղափարները այլ մարդկանց, խմբերի կամ երկրների մասին

1.4. Իմ մասին գոյություն ունեցող կարծրատիպերը
Ինչպե՞ս եմ ես տեսնում ինձ, ինչպե՞ս են տեսնում ինձ ուրիշները

ԳԼՈՒԽ 1. Կարծրատիպեր և նախապաշարմունքներ Ի՞նչ է ինքնությունը Ինչպե՞ս եմ ես ընկալում դիմացինին, ինչպես է դիմացինն ընկալում ինձ

Ո՞վ եմ ես իրականում:

Աշակերտներն ամեն օր տեսնում են բազմատեսակ արժեքներ և համակեցության տարբեր ձևեր: Սեփական դիրքորոշումը գտնելու համար նրանց անհրաժեշտ է զարգացնել ընտրություն կատարելու հմտությունը:

Ի՞նչ կարող եմ անել և ինչ չպետք է անեմ: Ի՞նչն է ճիշտ և ինչն է սխալ:

Երեխաները և դեռահասները շուտով գիտակցում են, որ այս հարցերին պատասխանելը հեշտ չէ: Այն, ինչը կարող է ճիշտ լինել մի դեպքում, կարող է սխալ դառնալ մեկ այլ պարագայում:

Ինչպե՞ս կարող եմ կողմնորոշվել: Ի՞նչ ուղենիշներ ունեմ ես:

Երկրի սահմանադրությունը և երկրի մոտեցումը մարդու իրավունքներին ծառայում են որպես երկու կարևոր գործիք անձնական ուղղորդման համար: Սրանք այն երկու ելակետային պայմաններն են, որոնք ցույց են տալիս հասարակության մեջ արժեքների բազմակիությունը: Ամենակարևորը անձնական ազատության սկզբունքն է, որը թույլ է տալիս յուրաքանչյուրին զարգացնել իր անձը՝ ելնելով փոխադարձ հանդուրժողականության և պատասխանատվության գործոններից, շահեկան լինելով այն հասարակության համար, որտեղ ապրում է տվյալ անձը: Մենք կարող են մեծապես տարբեր լինել մեր տեսակետների և շահերի տեսանկյունից, պայմանով որ մեր կողմից համաձայնեցված լինեն այն կանոնները, թե ինչպես լուծել մեր տարաձայնությունները խաղաղ ճանապարհով:

Երեխաները և դեռահասները պետք է տեղյակ լինեն, որ չափահասները նույնպես պայքարում են իրենց հանդիպող մարտահրավերների դեմ: Նրանք պետք է նաև գիտակցեն, որ ուսուցիչները չունեն բացարձակ ճշմարտության բանալին, նրանք նույնպես սխալներ են գործում և փորձում են սովորել այդ սխալներից:

Դասավանդման այս գլխում քննարկվում են անձի ինքնության զարգացման հարցերից մի քանիսը և թե ինչպես են մարդիկ և խմբերը ընկալում իրենց և դիմացինի անձը: Աշակերտները պետք է հասկանան, որ իրենք են սահմանում իրենց ինքնությունը: Ինքնությունը սահմանվում է՝ հաշվի առնելով անհատների միջև գոյություն ունեցող տարբերությունները և ընտանիքին, խմբին պատկանելու կամ այս երկուսի կողմից պաշտպանված լինելու կարիքը: Երիտասարդներն առավել լավ կհասկանան սեփական անձը, եթե ուսումնասիրության ենթարկեն իրենց անձնական զգացումները և կարիքները, անձնական զարգացումը և իրենց ցանկություններն ապագայից: Նրանց անհրաժեշտ է փորձել վարքագծի տարբեր դրսևորումներ՝ այդպիսով ընդլայնելով մյուսների հետ հաղորդակցվելու իրենց շրջանակը: Նրանք կսովորեն, եթե կառուցողական կերպով օժանդակություն ցուցաբերեն սոցիալական փոխներգործության իրավիճակներում:

Մեր երկրի սոցիալական և քաղաքական պատմությունը ներկայումս ուժեղ ազդեցություն ունի մեր կյանքի վրա: Աշակերտները պետք է տեղյակ լինեն այս ազդեցության մասին՝ արդի հիմնախնդիրների մասին կանոնավոր կերպով տեղեկություններ հավաքելու և դրանք քննարկելու միջոցով՝ ձևավորելով իրենց անձնական կարծիքը և լսելով դիմացինի կարծիքը: Նրանք պետք է մանրակրկիտ ուշադրություն դարձնեն հասարակական կարծիքի մաս կազմող տեսակետներին, նախապաշարմունքներին և կարծրատիպերին: Տեղյակ լինեն ազդեցության այս աննկատ ձևերին, որպեսզի հակադրվեն դրանց և քննադատորեն մոտենան սեփական ընտրությանը՝ անհրաժեշտության դեպքում փոփոխելով այն:

ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթություն

Այս դասերի արդյունքում աշակերտները.

- կծանոթանան կարծրատիպերի հասկացություններին և թե ինչպես են ստեղծվում նախապաշարմունքները,
- կգիտակցեն, որ մենք շարունակաբար որոշ որակներ են վերագրում անհատներին և խմբերին,
- կհասկանան, որ նման վերագրման արդյունքում մենք կարողանում ենք հաղթահարել առօրյա կյանքի բարդությունը,
- կգիտակցեն, որ վերագրումը կարող է վտանգավոր և անարդար լինել,
- կսովորեն, որ վերագրումը օժանդակում է անհատի և խմբային ինքնությունների ձևավորմանը,
- կսովորեն, որ ինքնությունը համալիր հասկացություն է և նշանակում է, որ յուրաքանչյուր անձ կարողէ ու պետք է ընկալվի ու նկարագրվի տարբեր կերպ:

ԳԼՈՒԽ 1. Կարծրատիպեր և նախապաշարմունքներ Ի՞նչ է ինքնությունը: Ինչպե՞ս եմ ընկալում դիմացինին, ինչպես է դիմացինն ընկալում ինձ:

Դասի վերնագիրը	Ուսուցման նպատակներ	Աշակերտական առաջադրանքներ	Ռեսուրսներ	Մեթոդ
Դաս 1. Ինչպե՞ս է անհատը/անձը ընկալվում մարդկանց կողմից	Աշակերտները զգում են, թե որքան բարդ կարող են լինել տեսակետները և կատարում են իրենց ընտրությունը:	Աշակերտներին տրվում են կոնկրետ դերեր և նրանք իրենց տեսակետներն են ձևավորում: Նրանք սովորում են, թե ինչպես փոխել տեսակետը:	Դերերի նկարագրություններ 1.1 աշակերտների համար նախատեսված նյութեր (1-3 խմբեր), մեծ թղթեր, գծանշիչներ (մարկերներ):	Խմբային աշխատանք
Դաս 2. Որքա՞ն տարբեր կարող է անձնավորությունը ներկայացվել:	Աշակերտները գիտակցում են, որ միևնույն անձին տարբեր նկարագրություններ կարող են վերաբերել:	Աշակերտները փորձ են անում և հանդես են գալիս տեսարանների բեմադրությամբ և ներկայացնում են իրենց գրավոր աշխատանքը: Նրանք քննարկում են այն տեսարանները, որոնց ականատես են եղել:	Առաջին դասի արդյունքները ծառայում են որպես երկրորդ դասի հիմնական նյութ: Աշակերտները գիտակցում են, որ այս գլուխը հնարավոր չի լինի շարունակել առանց իրենց մասնակցության և ներդրման:	Դերային խաղ, պրեզենտացիաներ և ուղղորդված պլենար քննարկում
Դաս 3. Կարծրատիպեր և նախապաշարմունքներ	Աշակերտները հասկանում են, թե ինչպես են փոխկապակցված կարծրատիպերը և նախապաշարմունքները, և թե ինչպես կարող են հանգեցնել պարզ, սակայն միևնույն ժամանակ կողմնակալ տեսակետների ձևավորմանը անհատների, մարդկանց խմբերի և ողջ երկրի մակարդակով:	Աշակերտները խորհրդածում են դիմացինի մասին իրենց տեսակետի շուրջ և քննարկում այն խմբերով:	Մաքուր թղթեր և գծանշիչներ:	Խմբային աշխատանք, պլենար քննարկում
Դաս 4. Իմ մասին գոյություն ունեցող կարծրատիպերը	Աշակերտները տեղեկանում են, թե ինչպես է իրենց ընկալում դիմացինը և սովորում են ընդունել այս փաստը: Նրանք առավել լավ են հասկանում, թե ինչպես է ընկալվում իրենց անձը դիմացինի կողմից և արձագանքում են դրան:	Աշակերտները նկարագրում են սեփական անձը մեկը մյուսին և համեմատում արդյունքները:	Աշակերտական ձեռնարկ 1.2.	Աշխատանք զույգերով, պլենար քննարկում

Դաս 1.
Ինչպե՞ս է անհատը/անձը դիտվում մարդկանց կողմից
Անձի գործոնը շատ ավելի է կարևորվում, քան կարելի է ենթադրել

Ուսուցման նպատակը	Աշակերտները զգում են, թե որքան բարդ կարող են լինել տեսակտները և կատարում են իրենց ընտրությունը:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտներին տրվում են կոնկրետ դերեր և նրանք իրենց տեսակետներն են ձևավորում: Նրանք սովորում են, թե ինչպես փոխել տեսակետը:
Ռեսուրսներ	Դերերի նկարագրություններ, աշակերտների համար նախատեսված նյութեր 1.1 (1-3 խմբեր), մեծ թղթեր, գծանշիչներ (մարկերներ):
Մեթոդ	Խմբային աշխատանք:

Դասի ընթացքը

Աշակերտները երեք խումբ են ձևավորում և նրանց տրվում է 1.1 բաշխման նյութը (երեք տարբեր օրինակներով տարբեր խմբերի համար), մի մեծ թուղթ և գծանշիչ: (Մեծ դասարաններում կարելի է ստեղծել ավելի շատ թվով խմբեր, ուսուցիչն այնուհետև տրամադրում է ավելի շատ իրավիճակների օրինակներ բեմադրման նպատակով, կամ միևնույն առաջադրանքը հանձնարարվում է տարբեր խմբերի: Վերջինս կարող է հետաքրքիր սցենար լինել, քանի որ ցույց է տալիս, թե որքան տարբեր կարող են լինել նկարագրությունները և ընկալումը:) Ուսուցիչն այնուհետև ներկայացնում է մի տղայի պատմությունը, ով տեղափոխվել է իր բնակավայրից և ուսումնասիրում է իր նոր միջավայրը: Նա պատմում է դասարանին տղայի օրագրի մասին, սակայն բարձրաձայն չի ընթերցում այն, քանի որ խմբերից յուրաքանչյուրին տեքստից տրվել է միայն մի հատված:

Լրացուցիչ տեղեկություններ ուսուցիչների համար

Ամբողջական տեքստը հետևյալն է.

«Այսօր իմ առաջին օրն է իմ նոր դասարանում: Իմ ընտանիքը տեղափոխվել է այստեղ մեկ այլ շրջանից և ես ինձ դեռ օտարի պես եմ զգում: Միրելի օրագիր, վերջին մի քանի օրերի ընթացքում ինձ հետո շատ բան է պատահել: Ես քեզ կպատմեմ դրանցից մի քանիսի մասին:

Մենք այժմ ապրում ենք գետի հարևանությամբ գտնվող մի բնակարանում: Մի քանի դուռ այն կողմ ապրում է իմ դասարանի տղաներից մեկը: Արդեն իսկ երրորդ օրը նա մոտեցավ ինձ, որպեսզի խնդրի միասին գնալ ձուկ որսալու: Ես ասացի ոչ, քանի որ իմ ձկնորսական կարթը դեռևս փաթեթավորված է իմ արկղերից մեկում:

Մեր դպրոցի շենքի դիմաց ֆուտբոլի մի մեծ դաշտ կա: Ես ուրախ էի այս առիթով, քանի որ սիրում եմ ֆուտբոլ խաղալ: Այնպես որ ես վերցրեցի իմ գնդակը և ցանկություն ունեի սկսել մարզումները: Ես հենց նոր էի սկսել մեկ-երկու գոլ խփել, երբ դպրոցի պահակը կանգնեցրեց ինձ: Նա բարկացած էր և հարցրեց ինձ՝ արդյոք կարդալ գիտեմ, թե՞ ոչ: Ես չէի տեսել այն ցուցանակը, որում ասվում էր, որ դաշտը փակել էին անձրև տեղալուց հետո: Ես այնքան ցնցված էի, որ տուն գնացի առանց մեկ բառ անգամ արտաբերելու:

Մի տարեց մարդ միայնակ ապրում է մեր վերևի բնակարանում: Երբ երեկ վերադարձա տուն, ես հանդիպեցի նրան իր գնումները ձեռքին՝ մուտքի դռան մոտ: Նրա ձեռքին ուտելիքով լի պայուսակ կար և նա ծանր էր շնչում: Ես խղճացի նրան: Հարցրեցի, թե արդյո՞ք կարող եմ իրեն օգնել և նրա պայուսակը հասցրեցի նրա դռան մոտ:

Խմբերի համար նախատեսված նյութերի երեք տարբերակներում տրված են տարբեր հատվածներ օրագրից: Խմբերի ընկալումները կտարբերվեն՝ պայմանավորված այն տեղեկատվությամբ, որը տրամադրվել է նրանց: Ուստի, յուրաքանչյուր խումբ տեսնում է տղայի ինքնության մի մասը միայն և այս տեսանկյունն է արտացոլում դերային խաղերի ժամանակ: Առաջադրանքների պահանջին համապատասխան խմբերն առաջին հերթին ներկայացնում են բնութագրիչների իրենց կողմից կազմված շարքը: Յուրաքանչյուր խմբի անդամներից մեկը մի մեծ թղթի վրա հավաքում է խմբային քննարկման արդյունքները հաջորդ դասին ներկայացնելու համար:

Այժմ յուրաքանչյուր խումբ մի կարճ դերային խաղ է որոշում և կներկայացնի իր մեկնաբանությունը: Անհրաժեշտ է առաջին հերթին բացատրել և դասարանում քննարկել այս դերային խաղերը և հետո փորձեր անել: Սա կարելի է կազմակերպել դասասենյակի տարբեր անկյուններում կամ, եթե եղանակային պայմանները թույլ են տալիս, խաղահրապարակում: Նույնիսկ եթե դերային խաղը սկզբում որոշ ժամանակ է խլում, ջանքերն արդարացված են լինում: Շատ աշակերտների համար այն, ինչը հաճախ դժվար է լինում արտահայտել բառերով, այս դեպքում կարող է պարզ և հստակ նշվել:

Այս դասի նպատակն այն է, որ աշակերտները բնութագրիչների ցանկը գրեն պաստառի վրա և տեսարանը փորձեն ներկայացնել:

Դասի ավարտին ուսուցիչը հավաքում է պաստառները (ուսուցիչը կվերաբաժանի դրանք հաջորդ դասի սկզբին) և հակիրճ ամփոփում է արդյունքները: Ուսուցիչը դրական կարծիք է արտահայտում և աչքի է անցկացնում հաջորդ դասի թեման:

Դաս 2.
Որքա՞ն տարբեր կարող է ներկայացվել անհատը:
Ինչպե՞ս առավել լավ ճանաչել անձին

Ուսուցման նպատակը	Աշակերտները կգիտակցեն, որ տարբեր նկարագրություններ կարող են վերաբերել միևնույն անձին:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները կփորձեն և հանդես կգան տեսարանների բեմադրությամբ և կներկայացնեն իրենց գրավոր աշխատանքը: Նրանք կքննարկեն այն տեսարանները, որոնց ականատես են եղել:
Ռեսուրսներ	Առաջին դասի արդյունքները (փորձած դերային խաղը և բնութագրիչների շարքը ազդագրերի վրա) ծառայում են որպես երկրորդ դասի հիմնական նյութ: Աշակերտները գիտակցում են, որ այս գլուխը հնարավոր չի լինի շարունակել առանց իրենց մասնակցության և աշխատանքի:
Մեթոդ	Դերային խաղ, պրեզենտացիաներ և ուղղորդված պլենար քննարկում:

Դասի ընթացքը

Բաժին 1.

Ուսուցիչը բացատրում է դասի ընթացակարգը: Իրենց տեսարանները փորձելու համար նա խմբերին տրամադրում է ևս հինգ րոպե: Այնուհետև ներկայացվում են տեսարանները:

Առաջին հերթին խմբի անդամներից մեկը դասարանի համար ընթերցում է հատված օրագրից՝ օգտագործելով առաջին դասի պաստառը: Դրանից հետո խումբը բեմադրում է տեսարանը: Խորհուրդ է տրվում բոլոր տեսարանները ներկայացնել առանց ընդհատման: Եթե ավելի քան մեկ խումբ ստացել է միևնույն հատվածն օրագրից, ապա նրանք պետք է բեմադրեն այս տեսարանները աննշան տարբերությամբ՝ մեկը մյուսին հաջորդելով:

Այն բանից հետո, երբ խմբերն ավարտում են բեմադրությունը, ուսուցիչը դրական է արձագանքում և կրկին ամփոփում է այս տեսարանների հաջորդականության հիմքում ընկած նպատակը: Եթե դասարանն ընտելացել է դասավանդման այս եղանակին աշակերտները կարող են անցնել հաջորդ քայլին, իսկ եթե ոչ, ապա ցանկալի կլինի աշակերտներին հնարավորություն ընձեռել վերանայել տեսարանների հաջորդականությունը՝ խորհրդածելով դրանց շուրջ և ուշադրություն դարձնելով բովանդակության և ձևի ասպեկտներին:

Ահա մի քանի օրինակ այն մասին, թե ինչպես ուսուցիչը կարող է նպաստել դերային խաղի շուրջ խորհրդածելուն.

– Ո՞րն էր մեր խմբի փորձը:
– Արդյոք ես բացահայտեցի՞ ինչ-որ նոր բան իմ մասին:
– Կարողացա՞նք արդյոք ներկայացնել կերպարներն այնպես, ինչպես որ կային:

Բաժին 2.

Դասի երկրորդ մասի ընթացքում աշակերտները մեկ կամ երկու կիսաշրջան են կազմում իրենց աթոռներով: Դրանից հետո ուսուցիչը գրատախտակի վրա կողք-կողքի ցուցադրում է պաստառները: Աշակերտները տեսնում են, թե ինչպես է պրեզենտացիան բացվում.

Ահա թե ինչպես են մյուսները տեսնում այն.

Դասընկերները	Ուսուցիչները	Հարևանները

Քննարկման ժամանակ աշակերտները պետք է հասկանան, որ միանգամայն բնական է, որ անձը կարող է տարբեր կերպ ընկալվել տարբեր մարդկանց կամ տարբեր խմբերի կողմից: Նրանք պետք է գիտակցեն, որ իրենց տեսակետներն արտահայտելու ժամանակ չեն կարող օգտագործել «ճիշտ է» կամ «սխալ է» բառերը:

Տղայի նկատմամբ արդարացի գտնվելու համար ճիշտ կլինի թույլ չտալ նկարագրել տղային միայն մեկ տեսանկյունից:

Հնարավոր հուշումներ ուսուցչի համար՝ դասարանում քննադատական մտածողությունը խթանելու ուղղությամբ.

– Երբ ես տեսնում եմ այս տարբեր նկարագրությունները, մի փոքր շփոթվում եմ:
– Այսպիսով, ի՞նչն է ճիշտ:
– Ո՞վ է Մաքսն իրականում:

Ուսուցիչը սպասում է, մինչև աշակերտներից մի քանիսը ձեռք բարձրացնեն և դրանից հետո թույլ է տալիս, որ նրանք տարբեր պատասխաններ տան: Ուսուցիչը գրատախտակին, կամ գերադասելի է, թղթե գրատախտակի վրա շարքով գրի է առնում այս պատասխանները.

Ի՞նչ կարող ենք ասել տղայի մասին:

Ինչպե՞ս կարող ենք նրան ներկայացնել:

– Պնդում 1
– Պնդում 2
– Պնդում 3
– Պնդում 4
– Պնդում 5

Դասի վերջում ուսուցիչը հանրագումարի է բերում աշակերտների՝ առաջին երկու դասերի ընթացքում ձևավորված կարծիքները: Թղթե գրատախտակի առկայությունը առավելություն ունի, որի վրա կարելի է գրի առնել կետերը և դրանք ներկայացնել հաջորդ դասերի ընթացքում:

Կարող են օգտակար լինել հետևյալ կետերը.

Ինքնություն

– Անձի ինքնությունը բազմաթիվ կողմեր ունի:
– Հաճախ այլ մարդիկ (հարևաններ, ընկերներ, ուսուցիչներ, անծանոթներ) ունենում են շատ տարբեր տեսակետներ միևնույն անձնավորության մասին:
– Մենք պետք է լսենք տարբեր տեսակետներ, եթե կամենում ենք ավելին իմանալ որևէ անձնավորության մասին:
– ...
– ...

Դասի ավարտին ուսուցիչը դիմում է աշակերտներին՝ հետադարձ կապի ակնկալիքով՝ աշխատելով մենկաբանություններ չանել աշակերտների դիտողությունների շուրջ:

Սա կարելի է իրականացնել տարբեր եղանակներով: Ամբողջ դասարանին դիմելը միշտ չէ, որ լավագույն լուծումն է, քանի որ շատ հաճախ միևնույն սակավաթիվ աշակերտներ պատասխաններ կտան և հետադարձ կապն, ըստ այդմ, անորոշ կլինի: Ուստի այս պարագայում խորհուրդ է տրվում օգտագործել նիզակի նետման մոդելը: Սա արագ կերպով հետադարձ կապ ստանալու մեթոդ է, որը թույլ է տալիս աշակերտներից յուրաքանչյուրին հստակեցնել իր պատասխանը: Հետադարձ կապի այս ձևը մանրակրկիտ կերպով նկարագրված է հավելվածում:

Ուսուցիչն այնուհետև նախնական կերպով ծանոթացնում է հաջորդ երկու դասերին, որոնց ընթացքում դասարանը չի քննարկելու առանձին մարդկանց, այլ դիտարկելու է խմբերին հասարակության մեջ և ողջ երկրի մասշտաբով:

Դաս 3.
Կարծրատիպեր և նախապաշարմունքներ
Մեր գաղափարները այլ անձանց, խմբերի կամ երկրների մասին

Ուսուցման նպատակը	Աշակերտները կհասկանան, թե ինչպես են փոխկապակցված կարծրատիպերը և նախապաշարմունքները, թե ինչպես կարող են հանգել պարզ, սակայն միևնույն ժամանակ կողմնակալ տեսակետների ձևավորմանը անհատների, մարդկանց խմբերի և ողջ երկրի մասով:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները կխորհրդածեն դիմացինի մասին իրենց տեսակետի շուրջ և կքննարկեն:
Ռեսուրսներ	Մաքուր թղթեր և գծանշիչներ:
Մեթոդ	Խմբային աշխատանք, պլենար քննարկում:

Հիմնական տերմիններ

Կարծրատիպեր: Կան կարծիքներ, որոնք խմբերն ունեն իրենց կամ այլ խմբերի մասին:

Նախապաշարմունքներ: Սրանք հուզառատ կարծիքներ են սոցիալական խմբերի (հաճախ՝ փոքրամասնությունների) կամ կոնկրետ մարդկանց (հաճախ փոքրամասնությունների) մասին:

Դասի ընթացքը

Այս դասի նպատակն է հնարավորություն տալ աշակերտներին արտահայտել իրենց մտքերն այն մասի, թե ինչպես են ընկալվում այլ մարդիկ անձնային մակարդակով և առավել ընդհանուր և թե ինչպես են գնահատվում առավել մեծ խմբերը, կրոնական համայնքները, էթնիկ խմբերը կամ երկրները:

Ուսուցիչը կազմում է համառոտ, հստակ կառուցված դասախոսություն կարծրատիպերի և նախապաշարմունքների միջև տարբերությունների մասին, որը պետք է ներկայացնի դասի սկզբում:

Ամփոփելով ուսուցման գործընթացները և վերջին երկու դասերի ընթացքում ձեռք բերված արդյունքները ուսուցիչն օգնում է աշակերտներին հասկանալ կարծրատիպերի և նախապաշարմունքների միջև եղած տարբերությունը: Ուսուցիչը ներկայացնում է այս երկու հասկացությունները՝ հղում անելով այն տարբեր տեսակետներին, որոնք հնչել էին նախորդ երկու դասերի քննարկումների ժամանակ: Ուսուցիչը փորձում է ներկայացնել այս տեսակետները որպես կարծրատիպեր և նախապաշարմունքներ (տե՛ս սույն գլխի վերջում ուսուցիչների համար նախատեսված օժանդակ նյութերը, որտեղ այդպիսի համառոտ դասախոսության մոդել է ներկայացված): Հաջորդ քայլին աշակերտները կազմում են փոքր խմբեր: Նրանք աշխատում են սոցիալական խմբերի նկարագրությունների շուրջ, ինչպես օրինակ.

- տղաներ և աղջիկներ,
- մասնագիտություններ,
- էթնիկ խմբեր,
- երկրներ,
- մայրցամաքներ:

Կարևոր է աշակերտներից չպահանջել, որ նրանք արտահայտեն մյուսների մասին իրենց անձնական տեսակետները: Ընդհակառակը՝ աշակերտները պետք է պատկերացնեն, թե հասարակությունը, հարևանները կամ լրատվամիջոցները ինչ կարող են ասել կամ մտածել այն խմբերի մասին, որոնց մասին հանձնարարվել է քննարկել այս առաջադրանքում:

Աշակերտները փորձում են տարբերել կարծրատիպերը և նախապաշարմունքները՝ օգտագործելով այն, ինչ լսել են ուսուցչից դասի սկզբին:

Ուսուցիչը գրատախտակին գրելով՝ կարող է խորհուրդներ տրամադրել և աշակերտները պետք է արդյունքները ներկայացնեն ինքնուրույն կազմած ցանկի տեսքով: Փորձը ցույց է տվել, որ նախապես կազմված ցանկը (տե՛ս օրինակը ստորև) կարող է օգնել աշակերտներին գրի առնել գաղափարներ հետագայում քննարկման ժամանակ կիրառելու համար:

Կարծրատիպերի և նախապաշարմունքների մասին ուսուցչի նախնական դասից հետո աշակերտներն աշխատում են երեք կամ չորս հոգուց կազմված խմբերով շուրջ 15 րոպե՝ խորհրդածելու համար վերոնշյալ առաջադրանքի շուրջ: Ուսուցիչը պետք է մանրակրկիտ կերպով ծանրութեթև անի, թե վերոնշյալ օրինակներից որն առաջարկի: Տվյալ երկրում քաղաքական իրավիճակով պայմանավորված՝ հնարավոր կլինի ընտրել աշակերտների կյանքի փորձին մոտ օրինակներ: Մյուս կողմից, ուսուցիչը պետք է նշի միայն տվյալ երկրում կամ հասարակության մեջ բնակվող էթնիկ խմբերի մասին, եթե սրանով վիրավորանք չի հասցվում որևէ մեկին և եթե չեն ծագի այնպիսի քննարկումներ և վեճեր, որոնք կարող են դուրս գալ վերահսկողության սահմաններից:

Խմբերի քննարկումները և արդյունքները պետք է ներկայացվեն պլենար նիստում: Յուրաքանչյուր խումբ ընտրում է մի խոսնակ, ով կներկայացնի խմբի արդյունքները՝ հաշվի առնելով չափանիշների ստորև ներկայացված կաղապարը.

- մեր երկիրը, մեր խումբը, մեր էթնիկ ինքնությունը, մեր մասնագիտությունը,
- կարծրատիպեր՝ արտահայտված խմբի կողմից,
- նախապաշարմունքներ՝ արտահայտված խմբի կողմից,
- մեր ենթադրություններն այն մասին, թե ինչու են խմբերն այդպիսի կարծիքի,
- մեր կարծիքները, այդ թվում նաև կարծիքների հնարավոր տարբերությունները:

Ուսուցիչը կօգնի գրառել յուրաքանչյուր խմբի արդյունքները (նշումների տեսքով) թղթե պաստառի կամ գրատախտակի վրա:

Օրինակներ, թե ինչպես գրառել արդյունքները՝ օժանդակելու համար աշակերտներին.

Խումբ	**Երկիր/ մասնագիտություն/ խումբ**	**Կարծրատիպեր**	**Նախապաշարմունքներ**	**Մեկնաբանություններ**
1				
2				
3				
4				
5				

Ի վերջո, ուսուցիչն ամփոփում է դասը՝ հղում անելով դասի ընթացակարգին և արդյունքներին, տեղեկացնում է դասարանին հաջորդ քայլերի մասին:

Դաս 4.
Ինքնություն: Իմ մասին գոյություն ունեցող կարծրատիպերը:
Ինչպե՞ս եմ ես տեսնում ինձ, ինչպե՞ս են տեսնում ինձ մյուսները

Ուսուցման նպատակներ	Աշակերտները տեղեկանում են, թե ինչպես է իրենց ընկալում դիմացինը և սովորում են ընդունել այս փաստը: Նրանք առավել լավ են հասկանում, թե ինչպես են ուրիշները տեսնում իրենց ինքնությունը և արձագանքում դրան: Նրանք ուսումնասիրում են, թե ինչ ազդեցություն ունի իրենց ինքնությունն այլոց վրա:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները նկարագրում են իրենք իրենց և մեկը մյուսին և համեմատում են արդյունքները:
Ռեսուրսներ	Աշակերտական ձեռնարկ 1.2.
Մեթոդ	Աշխատանք զույգերով: Պլենար քննարկում:

Դասի ընթացքը

Ուսուցիչը սկսում է դասը նախորդ երկու դասերի արդյունքների ամփոփումով և ներկայացնում օրվա դասի պլանը:

Այնուհետև հիշեցնում է դասարանին, որ իրենք դասը սկսել էին անհատի ուսումնասիրությամբ (տղայի անձնական իրադրությունը). Այնուհետև անցել այն քննարկմանը, թե ինչպես են դիտարկվում առավել մեծ խմբերը, ինչպես օրինակ մասնագիտությունների, էթնիկ խմբերի և երկրների պարագայում: Այժմ նրանք կրկին կկենտրոնանան անհատի վրա, սակայն այս անգամ դասարանում գտնվող բոլոր աշակերտներն իրենք են լինելու ուշադրության կենտրոնում: Նրանք կկենտրոնանան հետևյալ հարցի շուրջ.

Ո՞վ եմ ես:	
Ինչպե՞ս կնկարագրեի ինքս ինձ:	**Ինքնաընկալում**
Ինչպե՞ս կնկարագրի ինձ դասարանի աշակերտը:	**Ընկալումն այլոց կողմից**

Դասի ներածական մասին զուգահեռ ուսուցիչը գծում է այս օժանդակ աղյուսակը գրատախտակին կամ թղթե պառտառի վրա: Ուսուցիչը (կամ ուսուցչուհին) կարող է նաև պահանջել, որ աշակերտները կրկնեն այն, ինչ սովորել են վերջին երկու դասերին ինքնաընկալման և այլոց կողմից ընկալումների միջև եղած տարբերությունների մասին: Ի լրումն, կամ որպես այլընտրանք, ուսուցիչը կարող է մեկ անգամ ևս կրկնել կարծրատիպերի և նախապաշարմունքների հիմնական հասկացությունները:

Ուսուցիչն վերցնում է աշակերտական նյութերը, որտեղ տրված են աշակերտների նկարագրությունները Մաքսի մասին: Սրանք պետք է օգնեն աշակերտներին մտաբերել հնարավորինս շատ մարդկային որակներ և բնութագրեր: Աշակերտներին հանձնարարություն է տրվում թվարկել հնարավորիս շատ բնութագրիչներ, որոնք կարող են օգտագործվել անձի նկարագրության ժամանակ: Այս փուլում ուսուցիչն անշուշտ պետք է որոշ գաղափարներ տա և առաջարկություններ անի: Օրինակ՝ աշակերտները կարող են ուղղորդվել այն կարգերով, որոնք նկարագրական բնութագրիչներին նշանակություն և կոնկրետացում են հաղորդում: Նմանօրինակ կարգերը կարող են ընդգրկել հետևյալը.

– Ինչպես կնկարագրենք մարդկանց՝
– եթե նրանք լավ տրամադրություն ունեն
– եթե նրանք վատ տրամադրություն ունեն կամ << կատաղած են>>
– եթե լավ ընկերներ են
– եթե պարզապես աշակերտ են:

Այս անգամ պետք է ներգրավված լինի ողջ դասարանը: Կարելի է իրագործել հետևյալ վարժության[5] միջոցով, երբ արդեն աշակերտներն աշխատում են անհատական՝ մտահղացնելու համար մի շարք գաղափարներ: Դասասենյակի անկյուններում պետք է կախված կամ առանձին սեղանների վրա տարածված լինեն թղթի մեծ կտորներ: Այս թղթերի վրա վերնագրերի տեսքով տրված են տարբեր հիմնաբառեր (բանալի բառեր) կամ կարգեր: Աշակերտները լուռ անցնում են սենյակով և գրի են առնում իրենց գաղափարները պաստառների վրա (սկզբունքորեն յուրաքանչյուր պաստառի հետ տրված գծանշիչներով): Քանի որ նրանք կարող են կարդալ, թե ինչ են գրել մյուս աշակերտները, ըստ այդմ, պետք է խուսափեն մեկը մյուսի գաղափարը կրկնելուց, սակայն կարող են մեկնաբանություններ անել և նոր գաղափարներ առաջադրել:

5. Այստեղ առաջարկված վարժությունը «Լռության պատը» վարժության տարբերակներից է (տե՛ս ԺՔԿ/ՄԻԿ-ի Հատոր VI, *ԺՔԿ/ՄԻԿ-ում նոր գաղափարների մշակում*):

Այսպիսի վարժության արդյունքը կարող է լինել հետևյալը.

Ինչպիսի՞ն է լավ տրամադրության մեջ գտնվող անձը:
- ուրախ
- կատակասեր
- հանգիստ
- շփվող
- երգող
- հմայիչ
- …
- …

Պլենար քննարկման ժամանակ խնդրի իրականացման համար անհրաժեշտ գործողությունների համալիր չի պահանջվում, քանի որ այս վարժության նպատակն է տալ աշակերտներին գաղափարներ, որոնց շուրջ կաշխատեն հաջորդ քայլին: Ուսուցիչը պետք է նախապես մտածած լինի, թե այս փուլում աշակերտներից ովքեր կկարողանան աշխատել զույգերով: Սա կարևոր է, քանի որ այն թեման, որի շուրջ աշակերտները պետք է աշխատեն, նուրբ թեմա է: Ուստի ուսուցիչը պետք է խուսափի միմյանց հանդեպ հակակրանք տածող աշակերտներին համախմբելուց և պետք է այնպես անի, որ ոչ ոք չվիրավորվի:

Խմբերը ստանում են հետևյալ հանձնարարությունը.

Պետք է պարզեք, թե ինչպես եք ընկալում ինքներդ ձեզ և մեկդ մյուսին: Սա պետք է անել հետևյալ կերպ.
- Առաջին հերթին, աշխատում եք ինքնուրույն:
- Հայացք ձգեք դասասենյակի պաստառների վրայի բազմաթիվ նկարագրություններին և ընտրեք այն բառերը, որոնք, ըստ ձեզ, դիպուկ կերպով նկարագրում են ձեզ: Գրեք այդ բառերը աշակերտի համար նախատեսված բաշխման նյութերի վրա:
- Դրանց ավելացրեք կոնկրետ իրավիճակներում դրսևորվող ձեր այն որակները և ձեր մասին այն նկարագրությունները, որոնց չեք հանդիպել պաստառների վրա:
- Այնուհետև այս նույն եղանակով նկարագրեք ձեր զույգին:
- Երբ երկուսդ վերջացրած լինեք, փոխանակվեք արդյունքներով: Հետաքրքիր կլինի տեսնել, թե որ նկարագրություններն ու կարծիքներն են համընկնում և որոնք են տարբերվում կամ նույնիսկ հակադրվում իրար: Արտահայտեք ձեր մտքերն ու զգացումները.
- Ի՞նչն է ինձ անակնկալի բերում:
- Ի՞նչն է ինձ ուրախացնում:
- Ի՞նչն է ինձ նյարդայնացնում:
- Ի՞նչն է ինձ վիրավորում:
- Կարո՞ղ եք հիմնավորել ձեր կարծիքը մի քանի օրինակով:
- Ո՞ր նկարագրություններն են (դրական կամ բացասական) համարվում կարծրատիպային:

Ուսուցիչը պետք է որոշի՝ կազմակերպի՞ արդյոք վերջին հակիրճ, լիարժեք ամփոփումը այս դասի ավարտին (որով ավարտվում է նաև այս գլուխը, չնայած հնարվոր է շարունակություն լինի), թե՞ ամփոփի վերջին չորս դասերի ուսուցման գործընթացը: Մեթոդներից ցանկացած մեկն ընտրելու դեպքում ուսուցիչը կնկատի, որ աշխատանքային մթնոլորտը դասարանում բարելավվել է գրքի տվյալ գլխի ուսումնասիրության ընթացքում: Աշակերտները հաստատած կլինեն առավել սերտ հարաբերություններ մեկը մյուսի հետ և հետաքրքիր բացահայտումներ արած կլինեն՝ դրանց մասին միմյանց տեղյակ պահելով:

Նրանք այժմ կարողանում են տարբերել.
- կարծրատիպերը և նախապաշարմունքները,
- ինքնաընկալումը և ընկալումն այլոց կողմից:

Նրանք առաջընթաց են ունեցել սեփական սոցիալական կոմպետենցիան զարգացնելու ուղղությամբ, որը նպաստավոր կլինի նրանց առօրյա կյանքում՝ դասարանում, կյանքում և առհասարակ: Աշակերտները հաճախ կհանդիպեն թեմաների, որոնք բարձրացվում են այս չորս դասի շրջանակում, այդպիսով ի մի բերելով այն, ինչ սովորել են:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 1.1.
(Խումբ 1)
Դերային խաղ

Որոշեք, թե ով է լինելու ձեր խմբի ներկայացուցիչը, ով բարձրաձայն կընթերցի օրագրից մի կարճ հատված և ձեր խմբին տրված հանձնարարությունը:

Ընտրեք մեկին ձեր խմբից, ով գրի կառնի ձեր արդյունքները և կներկայացնի դրանք դասարանին:

Հատված Մաքսի օրագրից.

«Այսօր իմ առաջին օրն է իմ նոր դասարանում: Իմ ընտանիքը տեղափոխվել է մեկ այլ շրջանից և ես դեռ զգում եմ, որ օտար եմ այստեղ: Միրելի օրագիր, վերջին մի քանի օրերի ընթացքում ինձ հետ շատ բան է պատահել: Ես քեզ կպատմեմ դրանցից մի քանիսի մասին:

Մենք այժմ ապրում ենք գետի հարևանությամբ գտնվող մի բնակարանում: Մի քանի դուռ այն կողմ ապրում է իմ դասարանի տղաներից մեկը: Արդեն իսկ երրորդ օրը նա մոտեցավ ինձ, որպեսզի խնդրի միասին գնալ ձուկ որսալու: Ես ասացի ոչ, քանի որ իմ ձկնորսական կարթը դեռևս փաթեթավորված է իմ արկղերից մեկում:»

Առաջադրանք.

1. Կազմեք բնութագրիչների մի ցանկ, որը, ըստ ձեզ, Մաքսի դասընկերները կօգտագործեին Մաքսին նկարագրելու համար (մտքի գրոհ ձեր խմբում):
2. Ձեր կարծիքով Մաքսի դասարանից որևէ աշակերտ ի՞նչ կասի մյուսներին Մաքսի մասին: Մի կարճ տեսարանի փորձ կազմակերպեք, որը կկարողանաք բեմադրել դասարանում:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 1.1.
(Խումբ 2)
Դերային խաղ

Որոշեք, թե ով է լինելու ձեր խմբի ներկայացուցիչը, ով բարձրաձայն կընթերցի օրագրից մի կարճ հատված և ձեր խմբին տրված հանձնարարությունը:

Ընտրեք մեկին ձեր խմբից, ով գրի կառնի ձեր արդյունքները և կներկայացնի դրանք դասարանին:

Հատված Մաքսի օրագրից.

«Մեր դպրոցի շենքի դիմաց ֆուտբոլի մի մեծ դաշտ կա: Ես ուրախ էի այս առիթով, քանի որ սիրում եմ ֆուտբոլ խաղալ: Այնպես որ ես վերցրեցի իմ գնդակը և ցանկություն ունեի սկսել մարզումները: Ես հենց նոր էի սկսել մեկ-երկու գոլ խփել, երբ դպրոցի պահակը կանգնեցրեց ինձ: Նա բարկացած էր և հարցրեց ինձ՝ արդյոք կարդալ գիտեմ, թե՞ ոչ: Ես չէի տեսել այն ցուցանակը, որում ասվում էր, որ դաշտը փակել էին անձրև տեղալուց հետո: Ես այնքան ցնցված էի, որ տուն գնացի առանց մեկ բառ անգամ արտաբերելու:»

Առաջադրանք.

1. Կազմեք բնութագրիչների մի ցանկ, որը, ըստ ձեզ, Մաքսի դասընկերները կօգտագործեին Մաքսին նկարագրելու համար (մտքի գրոհ ձեր խմբում):
2. Ձեր կարծիքով Մաքսի դասարանից որևէ աշակերտ ի՞նչ կասի մյուսներին Մաքսի մասին: Մի կարճ տեսարանի փորձ կազմակերպեք, որը կկարողանաք բեմադրել դասարանում:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 1.1.
(Խումբ 3)
Դերային խաղ

Որոշեք, թե ով է լինելու ձեր խմբի ներկայացուցիչը, ով բարձրաձայն կընթերցի օրագրից մի կարճ հատված և ձեր խմբին տրված հանձնարարությունը:

Ընտրեք մեկին ձեր խմբից, ով գրի կառնի ձեր արդյունքները և կներկայացնի դրանք դասարանին:

Հատված Մաքսի օրագրից.

«Այսօր իմ առաջին օրն է իմ նոր դասարանում: Իմ ընտանիքը տեղափոխվել է մեկ այլ շրջանից և ես դեռ զգում եմ, որ օտար եմ այստեղ: Միրելի օրագիր, վերջին մի քանի օրերի ընթացքում ինձ հետ շատ բան է պատահել: Ես քեզ կպատմեմ դրանցից մի քանիսի մասին:

Մի տարեց մարդ միայնակ ապրում է մեր վերևի բնակարանում: Երբ երեկ վերադարձա տուն, հանդիպեցի նրան իր գնումները ձեռքին՝ մուտքի դռան մոտ: Նրա ձեռքին ուտելիքով լի պայուսակ կար և նա ծանր էր շնչում: Ես խղճացի նրան: Հարցրեցի, թե արդյոք կարող եմ իրեն օգնել և նրա պայուսակը հասցրեցի նրա դռան մոտ:

Առաջադրանք.

1. Կազմեք բնութագրիչների մի ցանկ, որը, ըստ ձեզ, Մաքսի դասընկերները կօգտագործեին Մաքսին նկարագրելու համար (մտքի գրոհ ձեր խմբում):
2. Ձեր կարծիքով Մաքսի դասարանից որևէ աշակերտ ի՞նչ կասի մյուսներին Մաքսի մասին: Մի կարճ տեսարանի փորձ կազմակերպեք, որը կկարողանաք բեմադրել դասարանում:

ժանդակ նյութեր ուսուցիչների համար
Կարծրատիպեր և նախապաշարմունքներ

Ի՞նչ է կարծրատիպը

Մարդիկ հաճախ բնորոշվում են որպես խմբի անդամներ՝ կախված իրենց մշակույթից, կրոնական համոզմունքներից, ծագումից կամ արտաքին բնութագրերից, ինչպիսիք են մաշկի գույնը, մարմնի չափսերը, սանրվածքը կամ հագուստը:

Խմբերի այսօրինակ սահմանմանը զուգահեռ հաճախ մարդկանց հատուկ որակներ են վերագրվում, որպեսզի կոնկրետ կերպար զուգորդվի կոնկրետ խմբերի հետ: Եթե այս կերպարներն այնպես են չափազանցվում, որ իրականությանն այլևս չեն համապատասխանում, ապա մենք այդ կերպարները կարող ենք կարծրատիպեր անվանել:

Կարծրատիպեր կարելի է գտնել նաև գրքերում (նույնիսկ դպրոցական դասագրքերում), պատկերապատումներում, գովազդներում կամ կինոնկարներում: Դուք ինքներդ էլ հաստատ հանդիպած կլինեք նմանօրինակ կարծատիպերի: Մտածեք, դիցուք, աֆրիկացի կանանց կերպարի շուրջ, ովքեր կրում են արմավենու տերևներից պատրաստված շրջազգեստներ, ունեն հաստ շուրթեր և իրենց քթի մեջ խրված փոքրիկ ոսկորներ:

Կարծրատիպից մինչև նախապաշարմունք

Եթե որևէ անձի կամ խմբի դատում են՝ հիմնվելով բացառապես կարծրատիպերի վրա, այլ ոչ որպես անհատ կամ անհատների խումբ, ապա այդ դեպքում գործ ունենք նախապաշարմունքի հետ: Անձի վերաբերյալ կամ խմբի մասին կարծիք է ձևավորվում իրականում առանց վերջիններիս ճանաչելու: Այսպիսի տեսակետները և գաղափարները շատ անգամ չեն հարում իրականությանը, հաճախ դրանք նաև անբարենպաստ կամ թշնամական բնույթ են կրում:

«Դրական» կարծրատիպեր

Այնուամենայնիվ, գոյություն ունեն նաև դրական կարծրատիպեր: Օրինակ՝ եթե մեկը ասում է, որ սևամորթները արագ վազորդներ են, մենք կարող ենք սա կոչել դրական կարծրատիպ: «Դե, ինչու՞մն է խնդիրը» կմտածեք դուք: Սակայն այս դեպքում մարդկանց նաև սխալ կերպով ընդհանրացնում են: Մի պահ մտածեք՝ արդյոք իսկապե՞ս ճիշտ է այն, որ բոլոր սևամորթները կարողանում են արագ վազել:

Ո՞ր դեպքում կարող են նպաստավոր լինել կարծրատիպերը

Նախապաշարմունքները կարծես աշխարհն ավելի պարզ են դարձնում և նվազ խճճված: Եթե մարդիկ հանդիպում են այնպիսի անձանց, ովքեր իրենց տարօրինակ են թվում, ապա հաճախ կաշկանդվածության զգացում են ունենում: Այսպիսի իրավիճակներում նախապաշարմունքները հնարավորություն են տալիս մարդկանց քողարկել իրենց կաշկանդվածությունը՝ ես կարող եմ ձևացնել, թե դիմացինի/մյուսների մասին գիտեմ ամեն բան և հարցեր տալու կարիք չունեմ: Սակայն արդյունքում իմաստալից հանդիպումը և իրական ըմբռնումը սկզբից ևեթ անհնարին են դառնում:

Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ նախապաշարմունքները

Նախապաշարմունքները վիրավորական են: Գլխավորապես դրանք գործի են դրվում անձի նկատմամբ անարդարացի վարվելու համար: Նախապաշարմունքների պատճառով մարդիկ զրկվում են հնարավորությունից ցույց տալու, թե ով են իրենք և ինչի են ունակ հասնել: Օրինակ՝ որևէ գործատու կարող է ազգությամբ թուրք դիմորդներին մերժել աշխատանքի հարցում, քանի որ լսել է, որ նրանք մշտապես ուշանում են աշխատանքից: Որոշ մարդիկ կառչում են նախապաշարմունքներից և ամբոխավարական (պոպուլիստական) գաղափարներից չնայած այն հանգամանքին, որ իրենք էլ գիտեն, որ այս բացասական տեսակետները ոչ ոքի կողմից հավանության չեն արժանանա:

Ի՞նչ կարող ենք անել նախապաշարմունքների դեմ

Նախապաշարմունքները դժվար են վերանում, ուստիև դժվար էլ հաղթահարվում են: Սակայն պետք է չէ հույսը կորցնել՝ ոչ ոք չի ծնվում նախապաշարմունքներով: Նախապաշարմունքները ձեռք են բերվում, ուստի և կարելի է դրանցից զերծ մնալ: Նախքան մեկին դատելը՝ հարցրեք նրան, թե ինչու է նա արել այդ ինչ բանը (ինչը քննարկման տեղիք է տվել հիշյալ պարագայում): Հիշեք, որ դուք ինքներդ էլ չէիք ցանկանա, եթե ձեզ դատեին՝ առանց ձեզ լսելու:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 1.2.
Ինքնաընկալում - ընկալումն այլոց կողմից

Աշխատանք զույգերով

Դիտողություններ քննարկումից հետո – Որտեղ են մեր տեսակետները համընկնում – Որտեղ են մեր տեսակետները բախվում – Դիտողություններ	Ինչպե՞ս եմ ես նկարագրում ինքս ինձ (իմ ինքնաընկալումը)	Ինչպե՞ս եմ ես նկարագրում իմ համադասարանցիներին (Մեկ ուրիշի վերաբերյալ իմ ընկալումը՝ գրված իմ կողմից)	Դիտողություններ քննարկումից հետո – Որտեղ են մեր տեսակետները համընկնում – Որտեղ են մեր տեսակետները բախվում – Դիտողություններ

ԳԼՈՒԽ 2.
Հավասարություն

Մենք հավասա՞ր ենք, թե՞ ոչ



2.1. Տարբերություններ և նմանություններ
Ես հավասա՞ր եմ: Ես տարբերվու՞մ եմ:

2.2. Վեսնայի պատմությունը:
Ինչպե՞ս կարձագանքեինք, եթե սա մեզ հետ պատահած լիներ:

2.3. Հավասարությունը տղամարդկանց և կանանց միջև:
Ինչպե՞ս պետք է վերաբերվենք տղամարդկանց և կանանց:

2.4. Սոցիալական արդարություն:
Ինչպե՞ս հաղթահարենք անհավասարությունը:

ԳԼՈՒԽ 2. Հավասարություն
Մենք հավասա՞ր ենք, թե՞ ոչ

Որպես հասկացություն՝ հավասարությունը ճանաչում է, որ յուրաքանչյուր ոք ունի նույն իրավունքները անկախ տարիքից, սեռից, գենդերային պատկանելությունից, դավանանքից, էթնիկ պատկանելությունից և այլ գործոններից:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանը սկսվում է հետևյալ բառերով՝ «մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է»: Քաղաքացիություն հասկացությունը չի կարող տարանջատվել հավասարության խնդրից: Հասարակությունների մեջ կամ դրանց միջև գոյություն ունեցող անհավասարությունները խոչընդոտում են արդյունավետ քաղաքացիությանը: Հավասարության գաղափարն, ուստի, առանցքային է ժողովրդավարական քաղաքացիության կրթության համար: Որպես այդպիսին՝ այն պետք է զբաղվի հավասարության խնդրով և պետք է իրավունք տա անհատներին պայքարելու խտրականության բոլոր դրսևորումների դեմ:[6]

Բազմազանությունը ենթադրում է անցում հանդուրժողականության գաղափարից անդին՝ դեպի տարբերությունների նկատմամբ դրսևորվող իրական հարգանք և գնահատում: Այն առանցքային է բազմակարծության գաղափարի և բազմամշակութային դաշտի համար, և, որպես այդպիսին, ՄԻԿ-ի անկյունաքարերից է: ՄԻԿ-ը ուստի պետք է հնարավորություն ընձեռի՝ ուսումնասիրելու ընկալումները և վիճարկելու կողմնակալությունը և կարծրատիպային մոտեցումը: Այն պետք նաև նպատակ ունենա ապահովելու, որ տարբերության գաղափարը ճանաչվի և ընդունվի տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային հասարակության կողմից:[7]

Համերաշխությունը շատ դեպքերում կարող է դիտվել որպես անհատների կարողությունը՝ դուրս գալու սեփական աշխարհից և ճանաչելու այլոց իրավունքները, ինչպես նաև այդ իրավունքները պաշտպանելու և դրանց աջակցելու պատրաստակամությունը: Այն նաև ԺՔԿ-ի հիմնական նպատակն է այն իմաստով, որ փորձում է ապահովել անհատներին գիտելիքներով, հմտություններով և արժեքներով, որոնք անհրաժեշտ են համայնքներում լիարժեք կերպով ապրելու համար: Ինչպես ավելի վաղ նշվել է, համերաշխության ակտերը սերտորեն կապված են գործողությունների գաղափարի հետ: Այդուհանդերձ, համերաշխությունը մտածելակերպի հարց է այնքանով, որքանով վարքագծի դրսևորումների համալիր է:[8]

Նախապաշարմունքը դատողություն է, որը մեր կողմից արվում է մեկ այլ անձի կամ անձանց մասին՝ առանց նրանց իրականում ճանաչելու: Նախապաշարմունքների բնույթը կարող է լինել բացասական կամ դրական: Դրանք ձեռք են բերվում որպես մեր սոցիալիզացման գործընթացի մի մաս և շատ դժվարությամբ են փոփոխվում կամ արմատախիլ արվում: Ուստի կարևոր է, որ մենք տեղյակ լինենք դրանց գոյության մասին:

Խտրականությունը կարող է դրսևորվել ուղղակի կամ անուղղակի ձևով: Ուղղակի գենդերային խտրականությունը բնորոշվում է անձի կամ խմբի նկատմամբ խտրական վերաբերունք դրսևորելու մտադրությամբ, ինչպես օրինակ աշխատանքային գրասենյակի կողմից, որը մերժում է աշխատանքի համար դիմած գնչու թեկնածուին կամ բնակարանային գործակալության կողմից, որը չի տրամադրում բնակարաններ ներգաղթյալներին: Անուղղակի խտրականությունը կենտրոնանում է քաղաքականության կամ որևէ միջոցի ազդեցության վրա: Այն դրսևորվում է, երբ ակնհայտորեն չեզոք բնույթի որևէ դրույթ, չափանիշ կամ գործելակերպ փաստացի անբարենպաստ պայմաններ է ստեղծում անձի կամ կոնկրետ փոքրամասնության համար մյուսների համեմատությամբ: Օրինակները տարբեր են՝ հրշեջների սեռին ներայացվող նվազագույն պահանջից (որի պարագայում բացառվում են իգական սեռի դիմորդները

6. Վերցված՝ «Ժողովրդավարական քաղաքացիության կրթության մասնագիտական տերմինների բառարան»-ից, Կարլն Օշի, Եվրոպայի խորհուրդ, DGIV/EDU/CIT (2003թ.) 29:
7. *Նույնը*
8. *Նույնը*

արական սեռի համեմատությամբ) մինչև հանրախանութ, որն աշխատանքի չի վերցնում երկար շրջազգեստով անձանց, կառավարական հիմնարկ կամ դպրոցի կանոնակարգ, որը արգելում է մուտքը կամ ներկայությունն այն անձանց, ովքեր գլխաշոր են կրում: Այս կանոնները, որոնք ակնհայտորեն չեզոք են էթնիկ պատկանելության կամ կրոնի առումով, կարող են անհամաչափորեն ոչ բարենպաստ պայմաններ ստեղծել կոնկրետ փոքրամասնության կամ կրոնական խմբերի անդամների համար, ովքեր երկար շրջազգեստ կամ գլխաշոր են կրում:[9]

«Գենդեր» (կանանց և տղամարդկանց իրավահավասարություն) տերմինը վերաբերվում է տղամարդկանց և կանանց սոցիալապես ամրագրված դերերին, որոնք վերագրվում են վերջիններիս ըստ իրենց սեռային պատկանելության: Գենդերային դերերն ուստի պայմանավորված են որոշակի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային համատեքստով: Գենեդերային դերերի վրա ազդեցություն ունեն նաև այլ գործոններ, ներառյալ ռասան, էթնիկ պատկանելությունը, դասակարգը, սեռական կողմնորոշումը և տարիքը: Մարդիկ սովորում են գենդերային դերերը և այս դերերը մեծապես տարբեր են մշակույթներում և մշակույթների միջև: Գենդերային դերերը, ի տարբերություն անձի կենսաբանական սեռի, կարող են փոփոխվել:[10]

Տնտեսական և սոցիալական իրավունքների պարագայում հիմնականում կարևորվում են այն պայմանները, որոնք անհրաժեշտ են անհատի լիարժեք զարգացման և բավարար կենսամակարդակի ապահովման համար: Հաճախ անվանվելով մարդու իրավունքների «երկրորդ սերունդ»՝ այս իրավունքներն ավելի դժվար են կիրառվում, քանի որ համարվում է, որ դրանք պայմանավորված են առկա ռեսուրսներով: Սրանցում ընդգրկված են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ աշխատանքի իրավունքը, կրթության իրավունքը, հանգստի իրավունքը և բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքը: Այս իրավունքները միջազգայնորեն ներկայացված են Տնտեսական և սոցիալական իրավունքների մասին դաշնագրում, որն ընդունվել է Միավորված Ազգերի Ասամբլեայի կողմից 1966 թվականին:[11]

Տարբեր մարդիկ տարբեր կարծիքներ և վերաբերմունք ունեն այն առնչությամբ, թե ինչպես պետք է մեր հասարակությունը վերաբերվի սոցիալական արդարության հետ կապված հարցերին: Այս կարծիքները և վերաբերմունքը կարելի է ընդհանուր առմամբ բաժանել երեք խմբի.

– Դարվինիստները, ովքեր կարծում են, որ անհատներն են ամբողջովին պատասխանատու իրենց խնդիրների համար և պետք է նրանց միայնակ թողնել իրենց խնդիրների լուծման մեջ: Նրանք հավատում են, որ մարդկանց հարկավոր է խթան, որպեսզի ավելի ջանասիրաբեր գործեն: Դարվինիստները հակված են դուրս մնալ սոցիալական քաղաքականության դաշտից:
– Համակիրները, ովքեր կարեկցանք են տածում տառապյալների նկատմամբ և ցանկանում են ինչ որ բան անել վերջիններիս ցավը մեղմելու նպատակով: Նրանք դիտում են սոցիալական և տնտեսական իրավունքները որպես ցանկալի քաղաքականության նպատակ, այլ ոչ որպես մարդու իրավունք: Սա հաճախ հանգեցնում է նրան, որ սոցիալական դժվար պայմաններում հայտնված մարդկանց նկատմամբ դրսևորվի խնամակալական մոտեցում:
– Արդարություն փնտրողները, ովքեր մտահոգված են այն հարցով, որ մարդկանց նկատմամբ կողմնակալ վերաբերմունք է դրսևորվում մեծապես կառավարության որոշումների արդյունքում: Նրանք հավատում են, որ իրենք պետք է փոխեն քաղաքական և տնտեսական համակարգերը,որպեսզի մարդիկ ստիպված չլինեն ապրել աղքատության ճիրաններում:[12]

9. *Նույնը*
10. *Նույնը*
11. Վերցված՝ «Ժողովրդավարական քաղաքացիության կրթության մասնագիտական տերմինների բառարանից», Կարրն Օշի, Եվրոպայի խորհուրդ, DGIV/EDU/CIT (2003թ.) 29»:
12. Վերցված՝ «Պարտականություններ առանց սահմանների: Մարդու իրավունքներ և համընդհանուր սոցիալական արդարություն» նյութից, Մարդու իրավունքների քաղաքականության հարցերով միջազգային խորհուրդ:

ԳԼՈՒԽ 2. Հավասարություն
Մենք հավասա՞ր ենք, թե՞ ոչ

Դասի վերնագիրը	Ուսուցման նպատակներ	Աշակերտական առաջադրանքներ	Ռեսուրսներ	Մեթոդ
Դաս 1. Տարբերություններ և նմանություններ	Աշակերտները կարողանում են բացատրել մարդկանց միջև գոյություն ունեցող հավասարությունները և տարբերությունները: Աշակերտները արժեվորում են թե՛ հավասարությունը, թե՛ տարբերությունը:	Աշակերտները բացահայտում են մարդկանց միջև գոյություն ունեցող տարբերությունները և նմանությունները: Աշակերտները քննարկում են տարբեր լինելու հետևանքներից մի քանիսը:	Տետրեր կամ թղթեր և գրիչներ ինքնուրույն աշխատանքի համար: Լրացուցիչ աշխատանքները կամընտրական բնույթի են, սակայն ուսուցչի կողմից կիրառվելու դեպքում խմբերին անհրաժեշտ կլինեն մեծ թղթեր և գծանշիչներ:	Ինքնուրույն աշխատանք և աշխատանք փոքր խմբով:
Դաս 2. Վենայի պատմությունը	Աշակերտները տեղեկանում են հասարակության մեջ գոյություն ունեցող նախապաշարմունքին և խտրականությանը: Աշակերտներն ունակ են հասկանալ խտրականության զոհերի տեսանկյունը:	Աշակերտները քննարկում են խտրականության մի դեպք և այն համեմատում իրենց երկրում տիրող իրավիճակի հետ:	Կամընտրական, աշակերտների համար նախատեսված 2.1 նյութ	Տեքստի վրա հիմնված խմբային աշխատանք:
Դաս 3. Հավասարությունը տղամարդկանց և կանանց միջև	Աշակերտները կարողանում են արձագանքել խտրականություն ներկայացնող իրավիճակներին:	Աշակերտները քննարկում են, թե ինչպիսի վերաբերմունք են դրսևորում իրենք և, ընդհանուր առմամբ, հասարակությունը կանանց նկատմամբ:	Աշակերտների համար նախատեսված 2.2 նյութերից որևէ պատմության մեկ օրինակ չորս կամ հինգ աշակերտից բաղկացած խմբերից յուրաքանչյուրի համար:	Աշխատանք փոքր խմբով:
Դաս 4. Սոցիալական արդարություն	Աշակերտները տեղեկանում են հասարակության մեջ գոյություն ունեցող գենդերային խտրականությանը:	Աշակերտները քննարկում են հասարակության անդամների միջև բարիքների հավասար բաշխման հարցերը: Աշակերտները վերանայում են գլուխն ամբողջությամբ:	Աշակերտների համար նախատեսված 2.3 նյութերի օրինակներ՝ բաժանված հատվածների աշակերտների յուրաքանչյուր զույգի համար (կամընտրական):	Աշխատանք զույգերով, քննադատական մտածողություն

Դաս 1.
Տարբերություններ և նմանություններ
Ես հավասա՞ր եմ: Ես տարբերվու՞մ եմ:

Ուսուցման նպատակներ	Աշակերտները կարողանում են բացատրել մարդկանց միջև գոյություն ունեցող հավասարությունները և տարբերությունները: Աշակերտները արժեվորում են թե՛ նմանությունը, թե՛ տարբերությունը:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները բացահայտում են մարդկանց միջև գոյություն ունեցող տարբերությունները և նմանությունները: Աշակերտները քննարկում են տարբեր լինելու հետևանքներից մի քանիսը:
Ռեսուրսներ	Տետրեր կամ թղթեր և գրիչ ինքնուրույն աշխատանքի համար: Լրացուցիչ աշխատանքները կամընտրական բնույթի են, սակայն ուսուցչի կողմից կիրառվելու դեպքում խմբերին անհրաժեշտ կլինեն մեծ թղթեր և գծանշիչներ:
Մեթոդներ	Ինքնուրույն աշխատանք և աշխատանք փոքր խմբով: Պլենար քննարկում

Դասի ընթացքը

Աշակերտները կազմում են չորս կամ հինգ հոգուց բաղկացած խումբ: Խմբերից յուրաքանչյուրին անհրաժեշտ է թուղթ և գրիչ:

Ուսուցիչը բացատրում է, որ պատրաստվում է տալ մի շարք հարցեր, որոնց աշակերտները պետք է պատասխանեն այո կամ ոչ տարբերակներով: Սրան պատրաստվելու նպատակով աշակերտները հորիզոնական ուղղությամբ գրում են Ա-ից Ղ տառերը այբբենական կարգով՝ դրանց ներքևում թողնելով տարածություն: Նույնը կարող է անել ուսուցիչը՝ գրելով գրատախտակին:

Օրինակ

Հարցեր՝ Ա Բ Գ Դ Ե Զ ……

Պատասխաններ՝ 1 0 1 0 1 ……..

Ուսուցիչն այնուհետև տալիս է մի շարք հարցեր (Ա-ից Ղ) Ա ցանկից, և աշակերտներն ինքնուրույն նշում են իրենց պատասխանները՝ դնելով 1 («այո») կամ 0 («ոչ»): Ուսուցիչը տեղյակ է պահում աշակերտներին այն մասին, որ եթե անգամ նրանք կասկածներ ունեն իրենց պատասխաններից որևիցե մեկի առումով, նրանք դեռևս կարող են գրել այն պատասխանը, որը առավելագույնս ճիշտ են համարում:

Ցանկ Ա	**Ցանկ Բ**
Ա. Դու կի՞ն ես:	Ա. Դու միշտ ուրա՞խ ես:
Բ. Այցելե՞լ ես երբևէ մեկից ավելի օտար երկիր:	Բ. Դու մատներիդ եղունգ ունե՞ս:
Գ. Դու սիրու՞մ ես սպորտով զբաղվել:	Գ. Դու ունա՞կ ես մի փոքր մտածել:
Դ. Դու նվագու՞մ ես որևէ երաժշտական գործիքի վրա:	Դ. Քեզ մա՞յր է լույս աշխարհ բերել:
Ե. Քո աչքերը շագանակագույն են:	Ե. Կարո՞ղ ես թռչել առանց որևէ սարք օգտագործելու (ինչպես թռչունը):
Զ. Քո երկու տատիկները դեռ ո՞ղջ են:	Զ. Կարո՞ղ ես ապրել առանց որևէ բան խմելու:
Է. Դու ակնոց կրու՞մ ես:	Է. Դու շնչու՞մ ես:
Ը. Դու սիրու՞մ ես քաղաքից դուրս մեկնել:	Ը. Դու շարունակ ջրի տա՞կ ես ապրում:
Թ. Դու առավելապես հանգի՞ստ անձնավորություն ես:	Թ. Դու որևէ զգացմունք ունե՞ս:
Ժ. Դու բարձրահասա՞կ ես (միջինից ավելի բարձրահասակ):	Ժ. Քո արյունը կանաչ գույն է:
Ի. Դու առավելապես տխու՞ր անձնավորություն ես (միջինից շատ):	Ի. Դու երբևէ վայր ընկե՞լ ես:
Լ. Դու շու՞տ ես մրսում:	Լ. Դու կարողանու՞մ ես տեսնել պատերի միջով:
Խ. Դու սիրու՞մ ես ճանապարհորդել:	Խ. Կարողանու՞մ ես հաղորդակցվել ուրիշների հետ:
Ծ. Դու սիրու՞մ ես վարսահարդարի մոտ հաճախել:	Ծ. Դու սիրու՞մ ես լավ եղանակ:
Կ. Դու սիրու՞մ ես համակարգչով աշխատել:	Կ. Դու կգերադասեի՞ր ստիպված չլինել մարդկանց հանդիպել:
Հ. Դու վախենու՞մ ես բարձրությունից:	Հ. Դու լեզու ունե՞ս:
Ձ. Ո՞րն ես նախընտրում՝ շագանակագույնը, թե՞ կապույտը:	Ձ. Կարո՞ղ ես քայլել ջրի վրայով (ինչպես որոշ միջատներ):
Ղ. Դու սիրու՞մ ես նկարել/ներկել:	Ղ. Դու երբեմն զգու՞մ ես հոգնածություն:

Ուսուցչի առաջադրանքով յուրաքանչյուր խմբից մեկական ներկայացուցիչ գրատախտակին գրում է իր խմբի՝ Ա ցանկին տրված պատասխանները: Ուսուցիչն այնուհետև հանձնարարում է աշակերտներին հայացք ձգել տրված պատասխաններին և արագ համեմատել դրանք իրենց սեփական պատասխանների հետ: Նրանք տեսնու՞մ են պատասխանների միջև գոյություն ունեցող

տարբերությունները: Կարո՞ղ են նրանք ի մի բերել իրենց միջև առկա տարբերություններից մի քանիսը:

Ուսուցչի առաջադրանքով աշակերտները պատասխանում են այս անգամ Բ ցանկից ընտրված հարցերի հաջորդ շարքին: Յուրաքանչյուր խմբից մեկական ներկայացուցիչ կրկին գրում է իր խմբի պատասխանները գրատախտակին՝ այբուբենի տառերի ընտրությամբ:

Ինչու՞ այս անգամ խմբերի միջև գրեթե չկան տարբերություններ: Ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե արդյոք նրանք կարող են ավելացումներ անել այն մասին, թե ինչն է ընդհանուր իրենցից շատերի համար:

Որպես լրացուցիչ աշխատանք՝ ուսուցիչը խմբերից յուրաքանչյուրին տալիս է մի մեծ թուղթ և գծանշիչ:

Առաջադրանք.

1. Գտնել երեքական օրինակ այնպիսի իրավիճակների, որոնց պարագայում հաճելի է մյուսներին նման լինելը: Հիմնավորել այն տեսակետը, որ նման լինելը հաճելի է:
2. Գտնել երեքական օրինակ այնպիսի իրավիճակների, որոնց պարագայում հաճելի է մյուսներից տարբերվելը: Հիմնավորել այն տեսակետը, որ տարբերվելը հաճելի է:

Իրավիճակներ, որոնց պարագայում նման լինելը հաճելի է	**Ինչու՞:**
ա) բ) գ)	ա) բ) գ)

Իրավիճակներ, որոնց պարագայում հաճելի է տարբերվել	**Ինչու՞:**
ա) բ) գ)	ա) բ) գ)

Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է խմբերին գտնել իրավիճակային երեք օրինակ, որոնցում մյուսներից տարբերվելը տհաճ է: Եվ կրկին նրանք պետք է հիմնավորեն այդ իրավիճակների ընտրությունը: Ինչպիսի՞ զգացումներ է այն առաջացնում:

Իրավիճակներ, որոնց պարագայում տարբերվելը տհաճ է	**Ինչու՞:**
ա) բ) գ)	ա) բ) գ)

Դրանից հետո ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե «տարբեր» որակումներ ունեցող մարդկանց որ խմբերի նկատմամբ է վատ վերաբերմունք դրսևորվում և ում կողմից:

Մարդկանց այն խմբերը, որոնց նկատմամբ երբեմն վատ են վարվում	**Ու՞մ կողմից:**
ա) բ) գ)	ա) բ) գ)

Ուսուցչի առաջադրանքով խմբերից յուրաքանչյուրը ներակայացնում է իր պատասխանները: Դասարանը ուսումնասիրելու է, թե ներկայացվող դեպքերում իրավունքներից որոնք են խախտվում: Այս նպատակով աշակերտներին տրվում է աշակերտների համար նախատեսված 5.2 նյութերից մեկ օրինակ: Մարդու իրավունքների ցանկ

Դաս 2.
Վենայի պատմությունը
Ինչպե՞ս կարձագանքեինք, եթե սա մեզ հետ պատահած լիներ:

Ուսուցման նպատակներ	Աշակերտները տեղեկանում են հասարակության մեջ գոյություն ունեցող նախապաշարմունքին և խտրականությանը: Աշակերտներն ունակ են հասկանալ խտրականության զոհերի տեսանկյունից: Աշակերտները կարողանում են արձագանքել խտրականություն ներկայացնող իրավիճակներին:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները քննարկում են խտրականության մի դեպք և այն համեմատում իրենց երկրում տիրող իրավիճակի հետ:
Ռեսուրսներ	Այս նպատակով աշակերտներին տրվում է աշակերտների համար նախատեսված 2.1 նյութերի բաշխման օրինակները (հարցերով հանդերձ):
Մեթոդ	Տեքստի վրա հիմնված խմբային աշխատանք:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Խտրականությունը հասարակության մեջ վարքագծի լայն տարածված ձև է: Խտրականությունը տարածված է ոչ միայն իշխանությունների, այլև բազմաթիվ այլ մարմինների և անհատների շրջանում: Սկսելով խտրականության մասին իրական պատմությամբ՝ դասը հնարավորություն է տալիս, որ աշակերտները խորհրդածեն սեփական վարքագծի շուրջ:

Դասի ընթացքը

Ուսուցիչը կարող է բարձրաձայն ընթերցել աշակերտների համար նախատեսված 2.1 բաշխման նյութը օրինակից կամ հանձնարարել ինքնուրույն ընթերցման:

Վեսնայի պատմությունը

Վեսնա անունով գնչու կինը պատմում է, թե ինչ է պատահել իր հետ.

«Հագուստեղենի խանութի ցուցափեղկին տեսա աշխատանքի հայտարարություն, որտեղ 18-23 տարեկան վաճառողի օգնական էր պահանջվում : Ես 19 տարեկան եմ, ուստի ներս մտա խանութ և դիմեցի կառավարչին (մենեջերին) այդ աշխատանքի հարցով: Նա ինձ ասաց, որ երկու օրից կրկին այցելեմ իրենց, որովհետև դիմորդների թիվը դեռ բավարար չէր:

Ես երկու անգամ վերադարձա խանութ, իսկ ինձ անընդհատ նույն բանն էին ասում: Գրեթե մեկ շաբաթ անց ես կրկին գնացի խանութ: Աշխատանքի մասին հայտարարությունը դեռևս ցուցափեղկին էր: Մենեջերը չափից դուրս զբաղված էր ինձ ընդունելու համար, սակայն ինձ ասացին, որ այդ թափուր աշխատատեղն արդեն զբաղեցված է:

Խանութից դուրս գալուց հետո ես այնքան վշտացած էի, որ խնդրեցի ծագումով ոչ գնչու ընկերոջս, որ գնա խանութ և հարցնի այդ աշխատանքի մասին: Երբ նա խանութից դուրս եկավ, ինձ ասաց, որ իրեն խնդրել են հարցազրույցի գալ երկուշաբթի օրը:»

Երբ բոլոր աշակերտներն արդեն լսել կամ ընթերցել են այս պատմությունը, ուսուցիչը աշակերտներին բաժանում է 4-5 խմբերի և հանձնարարում է նրանց քննարկել հետևյալ հարցերը (այս հարցերն ընդգրկված են աշակերտների համար նախատեսված բաշխման նյութերում, իսկ եթե ուսուցիչը բանավոր է ներկայացրել պատմությունը, ապա պետք է հարցերը գրի գրատախտակին կամ թղթե պաստառի վրա).

1. Ինչպե՞ս կզգայիր քեզ, եթե քեզ հետ պատահեր այն, ինչ պատահեց Վեսնայի հետ: Ինչպե՞ս կարձագանքեիր, եթե ընկերդ քեզ ասեր, որ իրեն հարցազրույցի են հրավիրել:
2. Ըստ քեզ՝ խանութի մենեջերն ինչու՞ այդպես վարվեց: Համարու՞մ ես արդյոք սա խտրականության դրսևորում: Ինչու՞ (եթե ոչ, ապա ինչու):
3. Ինչպե՞ս կարող է Վեսնան վարվել այս դեպքում: Կարծում ես՝ նա կարո՞ղ է փոխել իրավիճակը: Ի՞նչ կարող են անել այլ մարդիկ նրա անունից:
4. Կարծում ես՝ օրենքը որևէ բան կանի՞ այսպիսի իրավիճակի պարագայում: Ի՞նչ պետք է սահմանվի օրենքով:
5. Այսպիսի բան կարո՞ղ է պատահել քո երկրում: Եթե այո, ապա ո՞ր խմբերի վրա այն ազդեցություն կունենա:

Ուսուցչի հանձնարարությամբ խմբերը առաջադրված հարցերին տալիս են իրենց նախնական պատասխաններն: Սա կարելի է իրագործել խմբերից յուրաքանչյուրին տալով մեկական հարց կամ հանձնարարելով խմբերին հակիրճ պատասխաններ տալ ավելի, քան մեկ հարցի:

Դրանից հետո ուսուցիչն աշակերտներին տեղեկացնում է, որ Վեսնայի պատմությունն իրականում տեղի է ունեցել ավելի քան մեկ տասնամյակ առաջ, և հետագայում, երբ խանութի մենեջերին խնդրել են պատճառաբանել, թե ինչու է այդպես վարվել, նա ասել է.

Մենեջերի պատասխանը.

«Ես մտածեցի, որ Վեսնայի համար դժվարություն կներկայացներ այստեղ աշխատելը այն տարածության պատճառով, որ նա ստիպված էր լինելու ամեն օր կտրել-անցնել աշխատանքի գալու նպատակով: Դա ութ մղոն երկարությամբ մի ճանապարհ էր լինելու՝ երկու ավտոբուսով: Շատ դժվար է խանութը ղեկավարել, եթե աշխատակիցները մշտապես ուշանում են: Ես առավել կգերադասեի այդ աշխատանքին նշանակել մեկին, որը այս շրջանից կլիներ: Այն անձնավորությունը, ում ես տվեցի այդ աշխատանքը, շատ համապատասխան էր:»

Ուսուցիչը տեղեկացնում է աշակերտներին, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (Հոդված 14) նշվում է, որ. «Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից», իսկ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 2-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում նշված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ անկախ որևէ ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի տարբերակման:»

Ուսուցիչն այնուհետև հարցնում է աշակերտներին, թե ինչ նշանակություն ունեն այս տեքստերը Վեսնայի պարագայում: Որպես դասի ամփոփում՝ ուսուցիչը ներկայացնում է աշակերտներին, թե իրականում ինչ ավարտ է ունեցել Վեսնայի պատմությունը:

Վեսնայի պատմության հանգուցալուծումը

«Վեսնան դիմեց եվրոպական հատուկ դատարան, որը կիրառում է խտրականության մասին իրավական նորմը: Դատարանը համաձայնեց, որ Վեսնայի նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվել: Մի քանի այլ անձինք, ովքեր բնակվում էին խանութից հեռու, մասնակցել էին հարցազրույցին: Աշխատանքը ստացած աղջիկն ընդամենը 16 տարեկան էր, նա սպիտակամորթ էր և բնակվում էր խանութից այն նույն հեռավորության վրա, ինչ Վեսնան: Վճիռը հետևյալն էր, խանութը պետք է Վեսնային որոշակի գումար տար՝ որպես հասցված բարոյական վնասի փոխհատուցում»:

Որպես խնդրի իրականացման համար անհրաժեշտ գործողությունների համալիր՝ ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին մի նամակ գրել խանութի մենեջերին կամ քաղաքապետին: Ուսուցիչը (ուսուցչուհին) պետք է օգնի աշակերտներին կազմել այդ նամակը իրենց սեփական տեսանկյունից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսանկյունից: Կարևոր է, որ ամբողջ դասարանը տեսնի այս նամակները, որպեսզի հնարավոր լինի քննարկում անցկացնել նաև արտադպսարանական ժամերին:

Դաս 3.
Հավասարությունը տղամարդկանց և կանանց միջև
Ինչպե՞ս պետք է վերաբերվենք տղամարդկանց և կանանց

Ուսուցման նպատակներ	Աշակերտներին տեղեկացնել հասարակության մեջ առկա գենդերային խտրականությանը: Արձագանքել խտրականություն ներկայացնող իրավիճակներին:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները քննարկում են, թե իրենց երկրում ինչպիսի վերաբերմունք են դրսևորում իրենք և հասարակությունը կանանց նկատմամբ:
Ռեսուրսներ	Աշակերտների համար նախատեսված 2.2 նյութերից որևէ պատմության մեկ օրինակ խմբերից յուրաքանչյուրի համար: Մի մեծ թուղթ և գծանշիչ յուրաքանչյուր խմբի համար:
Մեթոդ	Փոքր խմբեր, քննարկում և պրեզենտացիաներ:

Տեղեկատվական անկյուն

Դեռևս շատ անելիքներ կան, նախքան տղամարդիկ և կանայք կդիտվեն հավասար օրենքի շրջանակում և առօրյա կյանքում: Ընտանիքում, դպրոցում և աշխատավայրում հանդիպող տարբեր իրավիճակները ընձեռում են հնարավորություններ՝ զարգացնելու սեփական էմփաթիայի զգացումը այս խնդիրների նկատմամբ և սրանք հաղթահարելու սեփական ներըմբռնումը: Դասը նաև կանչ է առ այն, որ փոփոխվեն որոշ գործելակերպեր դասարանում կամ դպրոցում:

Դասի ընթացքը

Դասարանը բաժանվում է չորս կամ հինգ հոգուց բաղկացած խմբերի: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է աշակերտների համար նախատեսված 2.2 բաշխման նյութերում ներկայացված երեք պատմություններից մեկը: Երբ աշակերտներն ավարտում են պատմություններն ընթերցելը, ուսուցիչը հրավիրում է նրանց քննարկելու յուրաքանչյուր պատմության հետ տրված հարցերը:

Ուսուցիչն այնուհետև անցկացնում է խնդրի իրականացման համար անհրաժեշտ քննարկում յուրաքանչյուր պատմության վերաբերյալ՝ խնդրելով ամեն խմբից մեկական զեկուցողի ամփոփ կերպով ներկայացնել իրենց պատմությունը և խմբային քննարկման արդյունքները:

Երբ սա արդեն կատարված է, ուսուցչի առաջադրանքով աշակերտներն ուշադիր կարդում են գրատախտակի տեքստն ու աղյուսակը, որից հետո պետք է ներկայացնեն սեռերի խտրականության երկու օրինակ և ևս երկուսը գենդերային տարբերությունների մասով, որպեսզի ապահովվի տրված սահմանումների վերաբերյալ ընկալումները:

Սեռ	**Գենդեր**
Կենսաբանորեն սահմանված	Սոցիալապես սահմանված
Ստատիկ, չի փոփոխվում	Դինամիկ, փոփոխության հնարավորություն
«Սեռ հասկացությամբ բնորոշվում են կենսաբանորեն տարբեր անձինք՝ պայմանավորված բնությամբ տրված իգական կամ արական կենսաբանական բնութագրերով:»	*«Գենդեր հասկացությամբ բնորոշվում են սոցիալական այն տարբերությունները՝ ի հակադրություն կենսաբանական տարբերությունների, որոնք գոյություն ունեն տղամարդկանց և կանանց միջև, որոնք ձեռք են բերվում վերջիններիս կողմից, ժամանակի ընթացքում փոփոխվում են և զգալիորեն տարբերվում են՝ կախված պատմության, մշակույթի, ավանդույթի, աշխարհագրության, դավանանքի, սոցիալական և տնտեսական գործոններից:»*

Երբ աշակերտները վերադառնում են իրենց տեղը խմբի կազմում, նրանց տրվում է մեծ թուղթ և գծանշիչ: Նրանք քննարկում են՝ արդյոք իրենց դպրոցը խթանում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (գենդերային հավասարություն), թե՝ ոչ: Եթե նրանք այն կարծիքին են, որ դպրոցը խթանում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, ապա պետք է հինգ օրինակ բերեն, որով կհիմնավորեն իրենց խմբերի տեսանկյունը: Եթե պատասխանը լինում է այնուամենայնիվ բացասական, ապա աշակերտները պետք է թվարկեն հինգ քայլ, որոնց իրագործումը կարող է խթանել կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն իրենց դպրոցում:

Խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է սեփական արդյունքները:

Եթե ուսուցիչը ցանկություն ունի դարձնել այս աշխատանքը նախագծային, ապա պետք է հրավիրի աշակերտներին ընտրելու երկու գաղափար և առաջարկի դպրոցում այդ գաղափարները կյանքի կոչելու մի ծրագիր կազմել: Այն պետք է ներառի ընդհանուր նպատակը, ձեռնարկվելիք տարբեր քայլերը, պատասխանատու անձանց և ժամանակացույցը:

Ծրագրի օրինակ

Ընդհանուր նպատակը՝		
Ի՞նչ պետք է արվի:	**Ո՞վ է անելու:**	**Ե՞րբ պետք է պատրաստ լինի:**

Դաս 4.
Սոցիալական արդարություն
Ինչպե՞ս հաղթահարենք անհավասարությունը:

Ուսուցման նպատակը	Աշակերտներին իրազեկել սոցիալական արդարության հետ կապված խնդիրներին:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները քննարկում են հասարակության անդամների միջև բարիքների հավասար բաշխման հարցերը: Աշակերտները վերանայում են գլուխն ամբողջությամբ:
Ռեսուրսներ	(կամընտրական) Աշակերտների համար նախատեսված 2.3 բաշխման նյութերի օրինակներ և հարցեր:
Մեթոդ	Տեքստին առնչվող քննարկում, աշխատանք զույգերով, քննադատական մտածողություն:

Տեղեկատվական անկյուն

Մեր հասարակության մեջ չկա համաձայնություն այն հարցի շուրջ, թե իրականում ինչ է նշանակում սոցիալական արդարություն: Այս դասի մեջ օգտագործվող պատմությունը նպատակ ունի օգնել աշակերտներին խորհրդածել այն հիմնական սկզբունքների շուրջ, որոնց վրա պետք է հիմնվի սոցիալական արդարությունը՝ միաժամանակ ներկայացնելով հարցի բարդությունը:

Դասի ընթացքը

Ուսուցիչը բացատրում է աշակերտներին, որ նրանց կտրվի չորս մասից բաղկացած մի պատմություն և որ յուրաքանչյուր մասի ընթերցումից հետո քննարկում կանցկացվի: Որպես այլընտրանք՝ ուսուցիչն ինքը կարող է բարձրաձայն կարդալ պատմությունը:

Ուսուցիչն այնուհետև բաժանում է դասարանը զույգերի՝ յուրաքանչյուրին տալով աշակերտների համար նախատեսված 2.3 բաշխման նյութի առաջին մասը: Ուսուցիչը կարող է բարձաձայն ընթերցել այն, խնդրել աշակերտներից որևէ մեկին ընթերցել այդ պատմությունը կամ աշակերտները կարող են լուռ կարդալ այն:

Ուսուցչի օրինակը՝ մաս առաջին

«Տագնապի առաջին ազդանշանի և «Քուին Մեդդի» զբոսանավի խորտակման միջև ավելի քան մեկ ժամ անցավ: Այդպիսով ուղևորները կարող էին մի փոքր ի մի բերել իրենց մտքերը նախքան փրկարարական նավ նստելը: Ուժգին փոթորկի հետևանքով զբոսանավը բախվել էր նավթատար նավին՝ առաջացնելով նավաբեկություն:

Մոտ կես օր անց փրկարարական նավերը փոքրիկ, ժայռոտ մի կղզու ափ հասան: Այն ձվաձև, մոտ 1,5 կմ երկարությամբ և դրա կեսի չափ լայնությամբ կղզի էր և մասամբ ծածկված էր փարթամ անտառներով: Աչքին մոտ հեռավորության վրա ոչ մի այլ կղզի չէր նշմարվում: Բավականին արևոտ այս կղզին բնակեցված չէր՝ բացառությամբ Ռիչարդ ընտանիքի, որն ապրում էր բլրի գլխին գտնվող շքեղ ամառանոցում և ողջ կղզին նրանց էր պատկանում:

Տարիներ առաջ այս ընտանիքը բնակություն էր հաստատել կղզում՝ խզելով գրեթե բոլոր կապերը արտաքին աշխարհի հետ. նրանք պարզապես կազմակերպում էին, որ յուրաքանչյուր ամիս առաքեն թարմ մթերք, վառելիք և իրենց անհրաժեշտ ապրանքների բոլոր այլ տեսակները: Նրանց կյանքը լավ էր կազմակերպված. նրանք արտադրում էին սեփական էլեկտրաէներգիան, կարող էին իրենց թույլ տալ գնել բավարար չափով ուտելիք և խմելիք, և ըստ պահանջի ունեին բոլոր ժամանակակից հարմարությունները: Նախկինում ամառանոցի սեփականատերը շատ հաջողակ գործարար էր եղել: Բշխանությունների հետ հարկային հարցերի շուրջ բախումներ ունենալուց հետո նա հիասթափվել էր կյանքից և որոշել էր այդուհետև խուսափել արտաքին աշխարհի հետ որևէ տեսակի կապ ունենալուց:

Ամառանոցի սեփականատերը նկատեց, որ փրկարարական նավերը հասել են իր գողտրիկ կղզու ափը և մոտեցավ նավաբեկյալներին»:

Ուսուցիչը բացատրում է, որ աշակերտների կողմից քննարկման ենթակա առաջին հարցն այն է, թե արդյոք, իրենց կարծիքով, կղզու տերը բարոյապես պարտավոր է թույլ տալ այս մարդկանց մնալ իր կղզում: Որպեսզի ուսուցիչն օգնի աշակերտներին եզրահանգման գալու հարցում, բարձրաձայն ընթերցում է մի շարք պնդումներ (թվարկված ստորև) և յուրաքանչյուր զույգ պետք է որոշի, թե որ պնդմանն են (պնդումներին են) համաձայն և թե ինչու են համաձայն: Աշակերտները քննարկում են զույգերով և գրի են առնում իրենց պատասխանները:

A. Կղզու տերը կարող է արգելել նավաբեկյալներին մնալ իր կղզում:

B. Կղզու տերը կարող է արգելել նավաբեկյալներին մնալ իր կղզում այնքան ժամանակ, որքան ինքը պետք է ապահովի նրանց անհրաժեշտ ուտելիքով և խմելիքով:

C. Կղզու տերը կարող է արգելել իր կղզում մնալ բոլոր նրանց, ովքեր ի վիճակի չեն վճարել (փողով, զարդեղենով կամ աշխատանքով):

D. Կղզու տերը պետք է թույլ տա մարդկանց մնալ իր կղզում այնքան, որքան անհրաժեշտ է: Նավաբեկյալները բարոյական պարտավորություն ունեն հարգել կղզու տիրոջ մասնավոր կյանքը և ունեցվածքը:

E. Կղզու տերը պետք է թույլ տա նավաբեկյալներին անվերապահ մուտք գործել կղզի և պետք է համարի նրանց կղզու համասեփականատեր:

Ուսուցիչը կարող է անդրադարձի ժամանակ տալ հետևյալ հարցերը, օրինակ. «Ձեզանից քանի՞սն է ընտրել Ա պնդումը», «Ձեզանից քանի՞սն է ընտրել Բ պնդումը», «Ինչու՞»:

Դրանից հետո ուսուցիչը բաժանում է պատմության երկրորդ մասը:

Ուսուցչի օրինակը՝ մաս երկրորդ

«Կոզու տերը որոշեց թույլ տալ նավաբեկյալներին որոշ ժամանակ մնալ կոզում: Նա ակնկալում էր, որ այդ մարդիկ կվճարեն իր պաշարներից տրամադրվող ուտելիքի և ծառայությունների դիմաց: Քանի դեռ նավում ուտելիք կար մնացած, կոզու տերն առհասարակ հրաժարվեց նրանց որևէ բան վաճառել:

Նավաբեկյալները թվով 13 հոգի էին: Նրանց մեջ էին Վիկտորը, մայրանալու պատրաստվող նրա կինը՝ Զոզեֆան, և նրանց երկու երեխաները (3 և 7 տարեկան): Աբրամովիչը, որը 64 տարեկան էր, զարդերի հարուստ վաճառական էր: Նա այս խմբում ամենաավագ անդամն էր և չուներ ազգականներ կամ ընկերներ: Իր հետ նա ուներ ոսկյա մատանիների, ադամանդների և թանկարժեք այլ զարդերի հավաքածու: Ջոնը, Քեյթը, Լեոն և Ալֆրեդը չորս երիտասարդ ընկեր էին, նրանք ուժեղ էին, առողջ և շատ հմուտ: Նրանք միասին ապրել էին համայնքի այլընտրանքային խնամքի տանը և ինքնուրույն վերանորոգել էին բնակության իրենց հատվածը:

Մարիան, ով համալսարանում կես դրույքով իրավաբան էր աշխատում, ձախ ոտքի և ազդրի հետ կապված խնդրի արդյունքում (վթարի արդյունքում) շատ դանդաղ էր քայլում: Նրան ուղեկցում էր համալսարանի իր օգնականը՝ Մաքսը, քանի որ նրանք մեկնելիս էին եղել ԱՄՆ, որպեսզի համաժողովի ընթացքում դասախոսություն կարդան և հրատարակչական կազմակերպության հետ մի գրքի հրատարակման հարցը քննարկեն: Երկուսն էլ քրեական իրավունքի մասնագետ էին, սակայն ձեռքի շնորհ չունեին: Եվ վերջապես Մարկոն և վերջինիս ընկերուհին՝ Վիկին, երկուսն էլ նավի անձնակազմի անդամներից էին, ովքեր վերջին պահին իրենց հետ նավի պահեստից վերցրել էին այնքան մթերք, որքան իրենց ուժը ներել էր՝ պահածոներ, թխվածք, բուսական յուղ և մի քանի տապակ: Այս բոլոր նավաբեկյալները իրենց հետ որոշ գումար ունեին, սակայն բոցման Մարկոյի մոտ մի մեծ գումար կար, որը նա գողացել էր խցիկներից մեկում՝ վերջին նավահանգստում կայանած ժամանակ:

Կոզում կար մի փոքր, հին ցախատուն, որը գտնվում էր բլրի լանջին՝ ծովին շատ մոտ: Այն միայն մեկ սենյակ ուներ, որը կարող էր երկու կամ երեք հոգու համար ծառայել որպես հասարակ կացարան:»

Ուսուցիչն այնուհետև բացատրում է, որ յուրաքանչյուր զույգ պետք է որոշի, թե, ըստ իրենց, ով է պետք է թույլտվություն ունենա օգտագործել այդ կացարանը: Ուսուցիչը բարձրաձայն ընթերցում է հետևյալ պնդումները և հանձնարարում աշակերտներին քննարկել զույգերով, թե որ պնդմանն (պնդումներին) են համաձայն, ինչու և արդյոք ունեն մեկ այլ լուծում.

A. Հղի կինը և երեխաները:

B. Չորս երիտասարդ ընկերները, ովքեր միակն են, որ կարող են վերանորոգել այն:

C. Купец-ювелір, які можа плаціць за яго (дазваляючы іншым купіць крыху ежы).

D. Զարդերի վաճառականը, ով վճարում է դրա դիմաց (ուստի և հնարավորություն է տալիս մյուսներին որոշ ուտելիք գնել):

E. Իրավաբանը, որը կարող է հանդես գալ որպես միջնորդ և լուծել նավաբեկյալների միջև ծագած վեճերը:

Արդյունքների ամփոփումից հետո աշակերտներին բաժանվում է պատմության մյուս մասը:

Ուսուցչի օրինակը՝ մաս երրորդ

«Նավաբեկյալները պետք է նաև որոշեին, թե ինչ անեն բոցմանի բերած ուտելիքի պաշարների հետ, որը նա մտադիր չէր կիսել մյուսների հետ: Իրականում ուտելիքը կիսելը կնշանակեր իր և իր ընկերուհու գոյատևման հնարավորությունների կրճատում:»

Այժմ զույգերին հանձնարարվում է քննարկել, թե ով պետք է ստանա ուտելիքը նավի պաշարներից: Ուսուցիչը վերընթերցում է պնդումները և կարգադրում զույգերին քննարկել և որոշել, թե որ պնդմանն (պնդումներին) են համաձայն, ինչու և արդյոք որևէ այլ լուծում են տեսնում.

A. Բոցմանին պետք է թույլ տալ պահել ուտելիքը իր և իր ընկերուհու համար:

B. Ուտելիքը պետք է հավասարապես բաժանվի բոլոր նավաբեկյալների միջև:

C. Ուտելիքը կարող է վաճառվել ամենաբարձր գին առաջարկողին (լինի փող, ապրանք թե ծառայություններ): Արդյունքների ամփոփումից հետո աշակերտներին բաժանվում է պատմության վերջին մասը:

Ուսուցչի օրինակը՝ մաս չորրորդ

Աշակերտները զույգերով քննարկում են, թե ով պետք է կղզու տիրոջից ուտելիք խնդրի և ինչպես սա պետք է արվի:

> *«Նավաբեկյալները որոշեցին, որ ուտելիքը պետք է բաժանվի առանց դրա դիմաց որևէ փոխհատուցման: Նրանք ստիպեցին Մարկոյին հանձնել իր մոտ եղածը՝ հղում անելով նրա բարոյական պարտքի զգացումին: Մոտ մեկ շաբաթ անց ուտելիք այլևս չկար և միակ լուծումը ամառանոցի տիրոջից որոշ ուտելիք ձեռք բերելն էր:»*

Ուսուցիչը բարձրաձայն ընթերցում է հետևյալ պնդումները և հարցնում աշակերտներին, թե որ պնդմանն (պնդումներին) են համաձայն, ինչու և արդյոք որևէ այլ լուծում են տեսնում:

A. Յուրաքանչյուր անձ պետք է անհատապես բանակցի տիրոջ հետ առևտրի պայմանների շուրջ (վճարել փողով, զարդերով, թե աշխատանքով): Այս պարագայում, մասնավորապես երեխաներ ունեցող ընտանիքը և իրավաբանն ու վերջինիս օգնականը խնդիրների առաջ կկանգնեն:

B. Առկա բոլոր ռեսուրսները (զարդեր, փող) պետք է բաժանվեն բոլորի միջև՝ անկախ նրանից, թե ով է այդ ամենի իրական տերը: Այս եղանակով գնված սնունդը պետք է բաժանվի հավասարապես: Անհատական եղանակով կարելի է հետո լրացուցիչ սնունդ գնել՝ փոխարենը առաջարկելով աշխատանք կատարել:

C. Նորից Բ տարբերակը, սակայն ակնկալվում է, որ յուրաքանչյուրը ոք պետք է աշխատի իր ուժերի ներածին չափով և կիսի այս ճանապարհով վաստակած ուտելիքը:

D. Զարդերի վաճառականին թույլատրվում է գնել այն ամենը, ինչ տերը պատրաստ է վաճառել և «օգնել» մյուսներին ուտելիքով:

Արդյունքների ամփոփումից հետո ուսուցիչը կարող է դասարանային քննարկում անցկացնել, որպեսզի օգնի աշակերտներին կիրառել պատմությունը իրական աշխարհում.

Քեզ ծանո՞թ են համանման իրավիճակներ մեր հասարակության մեջ:

A. ... քո թաղամասում կամ ընտանիքում:

B. .... քո երկրում:

C. ... աշխարհի մասշտաբով:

Արդյոք անարդա՞ր են սննդի, ջրի, տան բաշխվածության և այլ հարցերով այն փաստացի իրավիճակները, որոնց մասին դու գիտես:

A. ... քո թաղամասում կամ ընտանիքում:

B. ... քո երկրում:

C. .... աշխարհի մասշտաբով:

Ինչու՞:

Այս դասի ավարտին անհրաժեշտ է քննարկում անցկացնել հիմնական գաղափարի շուրջ: Ուսուցիչը կարող է որոշել՝ լրացուցիչ դաս տրամադրել: Առաջին հերթին ուսուցիչը մի կարճ դասախոսություն է կարդում՝ օգտագործելով հավասարության և բազմազանության մասին հիմնական տեղեկությունները ձեռնարկի այս գլխից: Նա կարող է նույնիսկ մի նյութ կազմել տարբեր սահմանումների վերաբերյալ: Դրանից հետո աշակերտները փոքր խմբերով կխորհրդածեն չորս իրավիճակների շուրջ: Ի՞նչ են նրանք քննարկել: Ի՞նչ են նրանք սովորել: Որո՞նք են այն նոր հարցերը, որոնց ծանոթացել են իրենք: Նրանք հանդես են գալիս առաջարկություններով այն մասին, թե ինչպես կարելի է արձագանքել իրենց կյանքում անհավասար իրավիճակային դրսևորումներին:

Աշակերտների համար նախատեսված 2.1 բաշխման նյութեր
Վեսնայի պատմությունը

Վեսնա անունով գնչու կինը պատմում է, թե ինչ է պատահել իր հետ.

«Հագուստեղենի խանութի ցուցափեղկին տեսա աշխատանքի հայտարարություն, որում վաճառքի օգնական էր պահանջվում: Պահանջվում էր մեկը 18-ից 23 տարեկանի սահմանում: Ես 19 տարեկան եմ, ուստի ներս մտա խանութ և դիմեցի կառավարչին (մենեջերին) այդ աշխատանքի հարցով: Նա ինձ ասաց, որ երկու օրից կրկին այցելեմ իրենց, որովհետև դիմորդների թիվը դեռ բավարար չէր:

Ես երկու անգամ վերադարձա խանութ, սակայն ինձ անընդհատ նույն բանն էին ասում: Գրեթե մեկ շաբաթ անց ես կրկին գնացի խանութ: Աշխատանքի մասին հայտարարությունը դեռևս ցուցափեղկին էր: Մենեջերը չափից դուրս զբաղված էր ինձ ընդունելու համար, սակայն ինձ ասացին, որ այդ թափուր աշխատատեղն արդեն զբաղեցված է:

Խանութից դուրս գալուց հետո ես այնքան վշտացած էի, որ խնդրեցի ծագումով ոչ գնչու ընկերոջս, որ գնա խանութ և հարցնի այդ աշխատանքի մասին: Երբ նա խանութից դուրս եկավ, ինձ ասաց, որ իրեն խնդրել են հարցազրույցի գալ երկուշաբթի օրը:»

Հարցեր

1. Ինչպե՞ս կզգայիր քեզ, եթե քեզ հետ պատահած լիներ այն, ինչ պատահեց Վեսնայի հետ: Ինչպե՞ս կարձագանքեիր, եթե ընկերդ քեզ ասեր, որ իրեն հարցազրույցի են հրավիրել:
2. Ըստ քեզ՝ խանութի մենեջերն ինչու՞ այդպես վարվեց: Համարու՞մ ես արդյոք սա խտրականության դրսևորում: Ինչու՞ (եթե ոչ, ապա ինչու):
3. Ինչպե՞ս կարող է Վեսնան վարվել այս դեպքում: Կարծում ես՝ նա կարո՞ղ է փոխել իրավիճակը: Ի՞նչ կարող են անել այլ մարդիկ նրա անունից:
4. Կարծում ես օրենքը ինչ որ բան կանի՞ այսպիսի իրավիճակի պարագայում: Ի՞նչ պետք է սահմանվի օրենքով:
5. Այսպիսի բան կարո՞ղ է պատահել քո երկրում: Եթե այո, ապա ո՞ր խմբերի վրա այն ազդեցություն կունենա:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 2.2.
Տղամարդիկ և կանայք

Պատմություն 1.

«Ինձ հետ դա բազմիցս տեղի է ունեցել: Ընթրիքից հետո իմ մայրիկը ակնկալում է, որ իր զավակները կհավաքեն բոլոր ափսեները և կաթսաները ու կտանեն խոհանոց, կմաքրեն սեղանը, կլվանան սպասքը, կդասավորեն այն խոհանոցի պահարանում և կապահովեն, որ ողջ խոհանոցը լինի կոկիկ և մաքուր: Կրկին անգամ իմ երկու եղբայրները, չնայած ինձնից ավելի մեծ են տարիքով, ասացին ինձ, որ դա իրենց գործը չէր և որ ես պարտավոր էի անել պարզապես այն պատճառով, որ ես աղջիկ եմ: Այս անգամ ես չառարկեցի, քանի որ այնքան վշտացած էի: Ես բողոքեցի հայրիկիս, սակայն նա ինձ ասաց, որ լավ է, երբ որոշ փորձ ես ունենում, որ տնային տնտեսուհի դառնալու համար դա լավ նախապատրաստում էր:»

Հարցեր

1. Կարո՞ղ ես պատկերացել, որ նման բան տեղի կունենա քո ընտանիքում:
2. Պատկերացրու, թե դու ես այս աղջիկը. ի՞նչ կկամենայիր ասել եղբայրներիդ: Իսկ հայրիկի՞դ:
3. Դու համամի՞տ ես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում շարադրված տեքստի հետ: Ինչպե՞ս է այս տեքստը կիրառվում վերոնշյալ պատմության մեջ:

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»:

Պատմություն 2.

«Դպրոցի խաղահրապարակում իմ շուրջը վեց տղա էր կանգնած: Նրանք բոլորը սևեռուն հայացքով նայում և ծաղրում էին ինձ: Նրանք ասացին. «Տղանե՛ր, դուք համոզվա՞ծ եք, որ սա աղջիկ է: Միգուցե ճշտե՞նք:» Այնուհետև նրանից մեկը մոտեցավ՝ պատրաստվելով ձեռք տալ ինձ: Սակայն այդ նույն րոպեին խաղահրապարակ մտավ դպրոցի տնօրենը և տղաները հեռացան:»

Հարցեր

1. Կարո՞ղ ես պատկերացել, որ նման բան տեղի ունենա քո դպրոցում կամ դրա շրջակայքում: Օրինակներ բեր:
2. Պատկերացրու, թե դու ես այս աղջիկը. ի՞նչ կկամենայիր ասել այդ տղաներին:
3. Պատկերացրու, թե մեկ այլ տղա հեռվից տեսել է, թե ինչ է տեղի ունենում: Արդյո՞ք այս տղան պետք է միջամտի: Ինչու՞այո/ինչու՞ ոչ: Ինչպե՞ս կարող է նա անել դա:
4. Դու համարու՞մ ես տեղի ունեցածը «սեռական ոտնձգություն» համաձայն հետևյալ սահմանման.

«Սեռական ոտնձգություն է համարվում ցակացած վարքագիծ, որն ունի սեռական բնույթի խոսքային, ֆիզիկական կամ հոգեբանական դրսևորում, որը մտադրությամբ կամ ըստ էության ուղղված է անձի արժանապատվությունը նվաստացնելուն կամ վախեցնելուն, թշնամությանը, ստորացմանը, սպառնալուն կամ նմանատիպ իրավիճակներին, և որը հրահրված է հակառակ սեռին պատկանելու կամ տարբեր սեռական կողմնորոշում ունենալու հիմքով և որը տուժողի համար ներկայացնում է ոչ պատշաճ ֆիզիկական, խոսքային, մտահարույց կամ վարքագծի այլ դրսևորում:»

Պատմություն 3.

«Որպես երիտասարդ ինժեներ՝ ես դիմեցի շինանյութի գործարան աշխատանքի ընդունվելու համար, որպես տեխնիկական սպասարկման կառավարիչ: Ինձ հրավիրեցին մասնակցելու ընդհանուր, տեխնիկական և հոգեբանական ստուգման՝ թվով 24 այլ անձանց հետ, որոնք բոլորը, ի տարբերություն ինձ, արական սեռի ներկայացուցիչներ էին: Այս փուլից հետո ընտրվեց հինգ հոգի՝ գլխավոր կառավարչի հետ հարցազրույցին մասնակցելու նպատակով: Չնայած այն հանգամանքին, որ ես երրորդն էի ստուգման արդյունքներով, այնուամենայնիվ, ես հարցազրույցի մասնակիցների թվում չէի (այս տեղեկությունը շատ գաղտնի կերպով էի ստացել, իմ մի ընկերոջից, որն աշխատում էր կադրերի կառավարման վարչությունում): Չնշելով այս տեղեկության մասին՝ ես փորձեցի զանգահարել գլխավոր կառավարչին: Երբ կարողացա խոսել նրա հետ, հարցրեցի նրան, թե արդյոք հաշվի են առել իգական սեռի ներկայացուցիչ լինելու հանգամանքը: Նա հերքեց՝ ասելով, որ պետք է ընդունել, որ կանայք հաճախ մի քանի տարի հետո հղիանում են, և որ որոշ աշխատանքների պարագայում այդ հանգամանքը աշխատանքը շարունակելու առումով դժվարություն է ստեղծում:

Նա նաև ասաց, որ հատկապես այդ աշխատանքի դեպքում, բավականին դժվար կլիներ կնոջ համար, քանի որ տեխնիկական խմբի բոլոր աշխատակիցները տղամարդիկ էին և նրանց վարմունքը շատ կոպիտ է: Ես պետք է ինձ բախտավոր համարեմ, որ չեմ ընտրվել այդ աշխատանքի համար:»

Հարցեր

1. Կարո՞ղ ես պատկերացնել, որ նման բան տեղի ունենա քո տարածքի ընկերություններից մեկում:

2 Պատկերացրու, թե դու ես այս կինը. ի՞նչ կկամենայիր ասել գլխավոր կառավարչին:

3.Կարծում ես գլխավոր կառավարիչը տվյալ դեպքում գործում է քո երկրի օրենքին հակառա՞կ: Եթե այո, ապա ինչպե՞ս ես ապացուցելու:

«Աշխատանքային գործընթացում, թափուր աշխատատեղերի մասին հայտարարություններում, ընտրության ընթացակարգերում, աշխատանքում և աշխատանքից հեռացման մեջ գենդերային հիմքով խտրական վերաբերմունքի դրսևորումների բոլոր ձևերը հակասում են օրենքի դրույթներին»:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 2.3
Նավաբեկություն

Մաս առաջին

«Տագնապի առաջին ազդանշանի և «Քուին Մեդդի» զբոսանավի խորտակման միջև ավելի քան մեկ ժամ անցավ: Այդպիսով ուղևորները կարող էին մի փոքր ի մի բերել իրենց մտքերը նախքան փրկարարական նավ նստելը: Ուժգին փոթորկի հետևանքով զբոսանավը բախվել էր նավթատար նավին՝ առաջացնելով նավաբեկություն:

Մոտ կես օր անց փրկարարական նավերը փոքրիկ և ժայռոտ մի կղզու ափ հասան: Այն ձվաձև, մոտ 1,5 կմ երկարությամբ և դրա կեսի չափ լայն կղզի էր և մասամբ ծածկված էր փարթամ անտառներով: Խելքին մոտ հեռավորության վրա ոչ մի այլ կղզի չէր նշմարվում: Բավականին արևոտ այս կղզին բնակեցված չէր՝ բացառությամբ Ռիչլոն ընտանիքի, որն ապրում էր բլրի գլխին գտնվող շքեղ ամառանոցում և ողջ կղզին նրանց էր պատկանում:

Տարիներ առաջ այս ընտանիքը բնակություն էր հաստատել կղզում՝ խզելով գրեթե բոլոր կապերը արտաքին աշխարհի հետ. նրանք պարզապես կազմակերպում էին, որ յուրաքանչյուր ամիս առաքեն թարմ մթերք, վառելիք և իրենց անհրաժեշտ ապրանքների բոլոր այլ տեսակները: Նրանց կյանքը լավ էր կազմակերպված. նրանք արտադրում էին սեփական էլեկտրաէներգիան, կարող էին իրենց թույլ տալ գնել բավարար չափով ուտելիք և խմելիք, ըստ պահանջի ունեին բոլոր ժամանակակից հարմարությունները: Նախկինում ամառանոցի սեփականատերը շատ հաջողակ գործարար էր եղել: Իշխանությունների հետ հարկային հարցերի շուրջ բախումներ ունենալուց հետո նա հիասթափվել էր կյանքից և որոշել էր այդուհետ խուսափել արտաքին աշխարհի հետ որևէ տեսակի կապ ունենալուց:

Ամառանոցի սեփականատերը նկատել էր, որ փրկարարական նավերը հասել են իր գողտրիկ կղզու ափ: Նա մոտեցավ նավաբեկյալներին:»

Մաս երկրորդ

«Կղզու տերը որոշեց թույլ տալ նավաբեկյալներին որոշ ժամանակ մնալ կղզում: Նա ակնկալում էր, որ այդ մարդիկ կվճարեն իր պաշարներից տրամադրվող ուտելիքի և ծառայությունների դիմաց: Քանի դեռ նավում ուտելիք կար մնացած, կղզու տերն առհասարակ հրաժարվեց նրանց որևէ բան վաճառել:

Նավաբեկյալները թվով 13 հոգի էին: Նրանց մեջ էին Վիկտորը, մայրանալու պատրաստվող նրա կինը՝ Ջոզեֆան, և նրանց երկու երեխաները (3 և 7 տարեկան): Աբրամովիչը, որը 64 տարեկան էր, զարդերի հարուստ վաճառական էր: Նա այս խմբի ամենաավագ անդամն էր և չուներ ազգականներ կամ ընկերներ: Իր հետ նա ուներ ոսկյա մատանիների, ադամանդների և թանկարժեք այլ զարդերի հավաքածու: Ջոնը, Քեյթը, Լեոն և Ալֆրեդը չորս երիտասարդ ընկեր էին, նրանք ուժեղ էին, առողջ և շատ հմուտ: Նրանք միասին ապրել էին համայնքի այլընտրանքային խնամքի տանը և ինքնուրույն վերանորոգել էին բնակության իրենց հատվածը:

Մարիան, ով համալսարանում կես դրույքով իրավաբան էր աշխատում, ձախ ոտքի և ազդրի հետ կապված խնդրի արդյունքում (վթարի արդյունքում) շատ դանդաղ էր քայլում: Նրան ուղեկցում էր համալսարանի իր օգնականը՝ Մաքսը, քանի որ նրանք մեկնելիս էին եղել ԱՄՆ, որպեսզի համաժողովի ընթացքում դասախոսություն կարդան և հրատարակչական կազմակերպության հետ մի գրքի հրատարակման հարցը քննարկեն: Երկուսն էլ քրեական իրավունքի մասնագետ էին, սակայն ձեռքի շնորհ չունեին: Եվ վերջապես Մարկոն և վերջինիս ընկերուհին՝ Վիկին, երկուսն էլ նավի անձնակազմի անդամներից էին, ովքեր վերջին պահին իրենց հետ նավի պահեստից վերցրել էին այնքան մթերք, որքան իրենց ուժը ներել էր՝ պահածոներ, թխվածք, բուսական յուղ և մի քանի տապակ: Այս բոլոր նավաբեկյալները իրենց հետ որոշ գումար ունեին,

սակայն բոցման Մարկոյի մոտ մի մեծ գումար կար, որը նա գողացել էր խցիկներից մեկից վերջին նավահանգստում կայանած ժամանակ:

Կղզում կար մի փոքր, հին ցախատուն, որը գտնվում էր բլրի լանջին՝ ծովին շատ մոտ: Այն միայն մեկ սենյակ ուներ, որը կարող էր երկու կամ երեք հոգու համար ծառայել որպես հասարակ կացարան:»

«Նավաբեկյալները պետք է նաև որոշեին, թե ինչ անեն բոցմանի բերած ուտելիքի պաշարների հետ, որը նա մտադիր չէր կիսել մյուսների հետ: Իրականում ուտելիքը կիսելը կնշանակեր իր և իր ընկերուհու գոյատևման հնարավորությունների կրճատում:»

Մաս չորրորդ

«Նավաբեկյալները որոշեցին, որ ուտելիքը պետք է բաժանվի առանց դրա դիմաց որևէ փոխհատուցման: Նրանք ստիպեցին Մարկոյին հանձնել իր մոտ եղածը՝ հղում անելով նրա բարոյական պարտքի զգացումին: Մոտ մեկ շաբաթ անց ուտելիք այլևս չկար և միակ լուծումը ամառանոցի տիրոջից որոշ ուտելիք ձեռք բերելն էր:»

ԳԼՈՒԽ 3.
Բազմազանություն և բազմակարծություն

Ինչպե՞ս կարող են մարդիկ պահպանել խաղաղ համակեցություն:

3.1. Ինչպե՞ս կարող են մարդիկ ապրել միասին:

Ինչպե՞ս կարող է կրթությունը նպաստել հանդուրժողականություն և ըմբռնում ձևավորելու գործում:

3.2. Ինչու՞ են մարդիկ ունենում անհամաձայնություններ:

Ի՞նչն է ընկած տարբերությունների հիմքում:

3.3. Ինչո՞վ են մարդիկ տարբերվում մեկը մյուսից:

Որքա՞ն տարբեր են մարդկանց կարիքները

3.4. Ինչու՞ են մարդու իրավունքները կարևոր

Ինչու՞ է մեզ հարկավոր ունենալ մարդու իրավունքների մասին օրենսդրություն խոցելի անձանց պաշտպանելու նպատակով:

ԳԼՈՒԽ 3. Բազմազանություն և բազմակարծություն Ինչպե՞ս կարող են մարդիկ պահպանել խաղաղ համակեցություն:

Ձեռնարկի այս գլուխը կենտրոնանում է երեք հիմնական հասկացությունների՝ բազմազանության, բազմակարծության և ժողովրդավարության շուրջ: Այն ուսումնասիրում է այս երեք հասկացությունների միջև առկա կապերից մի քանիսը, որպեսզի օժանդակի աշակերտներին վերաբերմունքի և հմտությունների ձևավորման հարցում, որոնք անհրաժեշտ են բազմակարծիք, ժողովրդավարությամբ կառավարվող հասարակության մեջ մասնակցություն ունենալու համար:

Բազմակարծությունն առնչվում է ժամանակակից հասարակության հիմնական որակին, որում ընդունվում է կրոնական և քաղաքական համոզմունքների լայն (սակայն ոչ համընդգրկուն) բազմազանություն և որում քաղաքական տարբեր կուսակցությունների կողմից նախատեսված հասարակության կատարելատիպերը կարող են իրար չհամապատասխանել: Օրինակ՝ արմատական սոցիալիստների կուսակցությանը պատկանող քաղաքացիները ձգտում են ստանալ այնպիսի հասարակություն, որն ամբողջությամբ խորթ կլինի աջաթևյան, կապիտալիստական համոզմունքին հարող քաղաքացիների համար: Բազմակարծիք հասարակություններում շատ ավանդույթների և արժեքների, այդ թվում նաև կրոնական համոզմունքների հիմնական ազդեցությունը թուլացել է: Անհատները կարող են և պետք է ինքուրույն մշակեն իրենց արժեհամակարգը (թե որ արժեքներին են հարում) և սեփական ապրելակերպը (թե ինչպես են կամենում ապրել իրենց կյանքը): Ուստի բազմակարծիք հասարակությունները մարտահրավեր են ներկայացնում առ այն, որ անհատներին, ավելի, քան երբևէ, տրված է անձնական ազատության մեծ չափաբաժին, սակայն, մյուս կողմից, նրանք պետք է առավել շատ ջանքեր գործադրեն համաձայնության և փոխզիջման հասնելու համար, առանց որի չի կարող գոյատևել ոչ մի հասարակություն: Արդյունքում հարց է բարձրացվում, թե քաղաքական որ համակարգը կարող է լինել այն լավագույնը, որով հնարավոր կլինի կազմակերպել որոշումների կայացման գործընթացը բաց, բազմակարծիք հասարակության պայմաններում:

Բռնապետական համակարգում՝ միակուսակցական կառավարման պարագայում, թեոկրատական կամ նույնիսկ դիկտատուրական համակարգում այս խնդիրը լուծվում է մեկ խաղացողին (օրինակ՝ կուսակցությանը կամ առաջնորդին) իշխանություն տալու միջոցով, որպեսզի վերջինս բոլորի անունից որոշում կայացնի, թե ինչն է ընդհանուր շահ համարվում: Այս տարբերակը լուծում է հանդիսանում բազմակարծությամբ դրված մարտահրավերին՝ խույս տալով հենց բազմակարծությունից՝ անհատների ազատությունը զոհաբերելու միջոցով: Բազմակարծիք հասարակություններում կանխվում են հնարավոր բախումները, սակայն դրա համար թանկ են վճարում՝ խնդիրներին չի տրվում պատշաճ և արդար լուծում, քանի որ դրանք այլևս հստակ կերպով չեն բարձրաձայնվում:

Ժողովրդավարության պայմաններում քաղաքացիները հիմնականում համաձայնում են մի շարք սկզբունքների, ընթացակարգային կանոնների և այն իրավունքների մասով, որոնց շնորհիվ նրանք կարողանում են արտահայտել իրենց անհամաձայնությունը բազմաթիվ հարցերի շուրջ, և որոնք նաև առաջարկում են գործիքներ՝ հնարավորություն տալով նրանց համաձայնության հասնել ոչ բռնի միջոցներով: Այս տեսանկյունից ժողովրդավարությունը նպաստում է խաղաղությանը՝ բազմակարծիք հասարակության մեջ բախումները առավելապես քաղաքակիրթ կերպով լուծելու, քան ճնշելու միջոցով: Ընդհանուր շահը մի բան է, որը պետք է համատեղ մշակվի և քննարկվի, այլ ոչ թե նախապես սահմանվի մեկ անձի կողմից: Անհամաձայնությունը և բախումները օրինաչափ երևույթներ են և վտանգավոր չեն այնքան ժամանակ, որքան վերահսկվում է դրանց կործանարար ներուժը: Ուստի ժողովրդավարության՝ որպես կառավարման համակարգի պարագայում, քաղաքացիներին շնորհվում են հիմնական այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են խղճի, հավատքի և արտահայտման ազատության իրավունքները: Երբ քաղաքացիներն օգտվում են այս իրավունքներից, առաջացնում են անհամաձայնություն և բախում և պարտավոր են բանակցել լուծում գտնելու համար: Ապահովելու համար, որ նրանք համաձայնության գան բախումները կարգավորելու և դրանք վերջնականապես լուծելու կանոնների շուրջ, բազմակարծիք հասարակությունների քաղաքացիները, համարվում է, որ պետք է մյուս բոլոր

քաղաքացիների հետ սոցիալական պայմանագրի մեջ մտնեն, որպեսզի պահպանեն տվյալ հասարակության մեջ գործող սոցիալական և քաղաքական կոնվենցիաները:

Նմանօրինակ սոցիալական պայմանագիրը ներառում է ձայների մեծամասնությամբ որոշում ընդունելու սկզբունքը: Նշվածի թերությունը որոշ փոքրամասնությունների համար կայանում է նրանում, որ նրանց սեփական արմատական հայացքները երբեք չեն կարող իրագործվել քվեատուփի միջոցով: Մյուս կողմից, այսպիսի հասարակությունները երաշխավորում են քաղաքական փոքրամասնությունների իրավունքները՝ ուղղված պետության կողմից չխոչընդոտվող լեգիտիմ քաղաքական նպատակների: Ըստ այդմ, բազմակարծիք հասարակություններում մշտապես առկա է արմատական կառավարություն ընտրելու հավանականությունը, որի անդամները, հնարավոր է, հակված լինեն սահմանափակել քաղաքական ընդդիմախոսների գործողությունները: Ահա թե ինչու է կարևոր ունենալ մարդու իրավունքները և ազատությունները սահմանող օրենսդրություն, որը պետք է ամրագրված լինի ժողովրդավարական երկրների սահմանադրություններում:

Յուրաքանչյուր սերունդ պետք է հասկանա բազմակարծիք հասարակություններում առկա մարտահրավերների այս համալիրը և թե ինչպես դրանք կարող են հաղթահարվել ժողովրդավարական հասարակության մեջ: Սա նախատեսում է գնահատել այն չգրված սոցիալական պայմանագիրը, առանց որի չի կարող գոյատևել ոչ մի ժողովրդավարական հասարակություն: Ժողովրդավարական քաղաքացիության կրթությունը և Մարդու իրավունքների կրթությունը կարող են օժանդակել աշակերտներին զարգացնել այն ըմբռնումը, վերաբերմունքը և հմտությունները, որոնք նրանց անհրաժեշտ են որպես քաղաքացի իրենց մասնակցությունն ունենալու համար:

Ուսուցում բազմազանության և բազմակարծության մասին

ԺՔԿ դասընթացներին մասնակցող աշակերտներին անհրաժեշտ է օգնել հասկանալ սոցիալական, քաղաքական, կրոնական և ռասայական բազմազանությունը: Նրանց պետք է օգնել, որ հասկանան այսպիսի բազմազանության հետևանքով առաջացող մարտահրավերների ողջ էությունը: Հաշվի առնելով այն, որ նախապաշարմունքների մեծ մասը ծնվում է իրազեկվածության և ըմբռնման պակասի մթնոլորտում, մոլուցքների թիվը կարելի է նվազեցնել՝ խելամիտ կերպով ուսումնասիրելով վերաբերմունք կոչվածը գիտելիքի և էմպաթիկ դատողության լույսի ներքո:

Ուսուցում բազմազանության և բազմակարծության համար

Աշակերտները նույնպես պետք է փորձ ունենան ժողովրդավարական քննարկման համար, որպեսզի սովորեն, թե ինչպես վարվել տարբեր իրավիճակներում: Ժողովրդավարական քաղաքացիության կրթությունն ուստի չպետք է բաց թողնի որևէ հնարավորություն թույլ տալու աշակերտներին արտահայտել սեփական կարծիքը որևէ թեմայի շուրջ (ինչքան էլ քիչ կարևոր լինի) և հիմնավորել իրենց տեսակետը: Նույն հարցի շուրջ մյուս աշակերտների կողմից հնչեցված տեսակետները լսելիս և դրանց արձագանքելիս աշակերտները կզարգացնեն ոչ միայն սեփական վերլուծական և խոսքային հմտությունները, այլև կձևավորեն հանդուրժողականության հիմնական դիրքորոշում բարոյական և քաղաքական բազմազանության նկատմամբ: Նրանք կզարգացնեն վիճահարույց և անհամաձայնությամբ լի իրավիճակները ընդունելու ունակություն, կգնահատեն փոխզիջման գնալու կարևորությունը, կհասկանան տարբերությունը արդար և կողմնակալ փոխզիջման միջև: Աշակերտները պետք է կենտրոնական հարցերի շուրջ և պետք է հարգեն մարդկանց՝ անկախ վերջիններիս ունեցած տեսակետներից և հետաքրքրություններից:

Ժողովրդավարական քննարկումների գործընթացի արդյունքում ձեռք բերված փորձի շնորհիվ աշակերտները նաև կսովորեն, որ բաց և արդար բանավեճերը պահանջում են հետևել որոշ հիմնական ընթացակարգերի, այդ թվում՝

- բոլոր մասնակիցներին պետք է հնարավորություն տրվի ներդնել իրենց հնարավորության չափով,
- յուրաքանչյուրի արձագանքը պետք է լսել հարգանքով,
- մասնակիցները պետք է գրոհեն փաստարկների վրա, այլ ոչ մարդկանց,
- մասնակիցները պետք է ներգրավվեն բանավեճում՝ ընդունելով, որ իրենց սեփական տեսակետը կարող է փոփոխվել,

– մրցակցային բանավեճերը, որոնցում մասնակիցները փաստարկներ են բերում ելնելով կոշտ դիրքորոշումներից, հաճախ նվազ օգտակար են, քան հետազոտական բանավեճերը, որտեղ նպատակը «վեճը հաղթելը» չէ, այլ «խնդիրն առավել լավ հասկանալը»:

Սա առանձնացնում է ԺՔԿ-ն որպես առարկա, որում հարցման և քննարկման գործընթացներն ընդհանուր առմամբ առավել կարևոր են, քան փաստացի ճշմարտությունները հրապարակելը: Հետևաբար, ուսուցման առումով արվող եզրահանգումներն այն են, որ ԺՔԿ գծով ուսուցիչները զարգացնում են հմտություններ, որպեսզի առավելապես խթանեն աշակերտների մտածողությունը, ոչ թե ազդեցություն գործեն այդ մտածողության վրա: Հետազոտությունը ցույց է տալիս, որ աշակերտները դասի ընթացքում խոսում են առավել շատ այն դեպքում, երբ ավելի քիչ է խոսում ուսուցիչը:

ԳԼՈՒԽ 3. Բազմազանություն և բազմակարծություն Ինչպե՞ս կարող են մարդիկ պահպանել խաղաղ համակեցություն:

Դասի վերնագիրը	Նպատակները	Առաջադրանքներ	Ռեսուրսներ	Մեթոդ
Դաս 1. Ինչպե՞ս կարող են մարդիկ ապրել միասին:	Քննարկել այն հարցերը, որոնք ծագում են, երբ տարբեր արժեքներ և համոզմունքներ ունեցող համայնքները փորձում են խաղաղ ապրել միասին: Քննարկել կրթության դերը տարբեր մշակույթներ ունեցող անձանց միջև ըմբռնում ձևավորելու գործում: Քննարկել,թե արդ-յոք անհատները կարող են ազդեցություն ունենալ հասարակության վրա:	Աշակերտները քննարկում են պատմության շրջանակում վեր հանված հարցերը: Աշակերտները քննադատական մտածողություն են դրսևորում: Նրանք կիսում են իրենց մտքերը մեկը մյուսի հետ: Աշակերտները դերային խաղ են կազմակերպում որևէ հարց ուսումնասիրելու նպատակով:	Աշակերտների համար նախատեսված 3.1 նյութերի օրինակներ	Քննարկում Քննադատական մտածողություն: Վարկածների առաջադրում: Դերային խաղ:
Դաս 2. Ինչու՞ են մարդիկ ունենում անհամաձայնություններ:	Քննարկել կարևոր հարցերի շուրջ մարդկանց կողմից տարբեր կարծիքներ ունենալու պատճառները: Զարգացնել վիճարկելի հարցերը քննարկելու հմտությունը: Քննարկել, թե որոնք են այն անհրաժեշտ արժեքները, որոնց վրա հիմնվում են ժողովրդավարական հասարակությունները:	Աշակերտները պնդումներ են ներկայացնում մի շարք հարցերի շուրջ և պաշտպանում են իրենց տեսակետը դրա վերաբերյալ: Աշակերտները վերլուծում են այն հիմքերը, որոնցից բխում են տարաձայնությունները՝ հրապարակավ վիճարկվող հարցերի շուրջ: Աշակերտները քննարկում են ազդեցություններն իրենց սեփական արժեքների վրա: Աշակերտները մշակում են ուղենիշներ, որպեսզի խրախուսեն հարգանք բազմակարծության նկատմամբ,ապահովելով հարգանքի որակը պահպանվում և հաստատվում է երկխոսություն հանրային հարցերի շուրջ:	Մեծ պիտակներ «չորս անկյուն» վարժության համար:	Քննարկում. Անդրադարձ: Քննադատական մտածողություն: Կանոնների համատեղ մշակում:

Դասի վերնագիրը	**Նպատակները**	**Առաջադրանքներ**	**Ռեսուրսներ**	**Մեթոդ**
Դաս 3. Ինչո՞վ են մարդիկ տարբերվում մեկը մյուսից:	Քննարկել հավասարության առկա խոչընդոտները լայն հասարակության մասշտաբով: Պարզել այն պատճառները, թե ինչու է խախտված կրթության իրավունքի անհասանելիությունը որոշ մարդկանց համար: Քննարկել, թե ով է կրում պատասխանատվություն հավասարության խոչընդոտների հաղթահարման հարցում:	Աշակերտները քննադատորեն վերլուծում են ենթադրյալ մի իրավիճակ, որտեղ քննարկվում են հիմնական հասկացությունները: Աշակերտները կիրառում են հիմնական սկզբունքները անձնական սոցիալական իրավիճակների օրինակով: Աշակերտները քննարկում են դասի շրջանակում վեր հանված հիմնական հարցերը: Աշակերտները կատարում են գրավոր հանձնարարություն:	Պատմության օրինակներ: Աշակերտների համար նախատեսված 3.3 նյութերի օրինակներ	Քննադատական մտածողություն: Քննարկում: Գրավոր փաստարկի մշակում:
Դաս 4. Ինչու՞ են մարդու իրավունքները կարևոր:	Քննարկել այն հարցերը, որոնք ծագում են, երբ տարբեր արժեքներ և կենսակերպ ունեցող մարդիկ փորձում են միասին ապրել: Քննարկել այն պատճառները, թե ինչու են մշակվել մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթեր, հատկապես խոցելի անհատների և խմբերի մասով:	Աշակերտները կատարում են իրավիճակների քննադատական վերլուծություն և առաջնահերթ կարևորում: Աշակերտները դերային խաղով ներկայացնում են քննարկումներ հակադիր կողմերի միջև: Աշակերտները դերային խաղի հիման վրա մշակում են հիմնական սկզբունքներ և համեմատում են դրանք ՄԻԵԿ-ի համեմատելի հատվածների հետ: Աշակերտները համեմատում են սցենարը իրենց երկրում մարդու իրավունքների ոտնահարման իրական օրինակների հետ: Աշակերտները ՄԻԵԿ-ի կոնկրետ բաղադրիչների մասին մշակում են պրեզենտացիաներ այլ աշակերտների համար:	Կղզու սցենարի օրինակներ: Իրավիճակային քարտերի օրինակներ փոքր խմբերից յուրաքանչյուրի համար: Մարդու իրավունքների հիմնական բաղադրիչների ցանկ: Մեծ թղթեր և նկարչական նյութեր, ըստ անհրաժեշտության, ամփոփիչ պրեզենտացիայի համար:	Քննադատական մտածողություն: Քննարկում: Բանակցություն: Խմբային պրեզենտացիա

Դաս 1.
Ինչպե՞ս կարող են մարդիկ ապրել միասին:
Ինչպե՞ս կարող է կրթությունը նպաստել հանդուրժողականություն և ըմբռնում ձևավորելու գործում:[13]

Ուսուցման նպատակներ	Աշակերտները ունակ են՝ – քննարկել հարցեր, որոնք ծագում են, երբ տարբեր արժեքներ և համոզմունքներ ունեցող համայնքները փորձում են խաղաղ ապրել միասին, – քննարկել կրթության դերը տարբեր մշակույթներ ունեցող անձանց միջև ըմբռնում ձևավորելու գործում, – քննարկել, թե արդյոք անհատները կարող են ինքնուրույն կերպով ազդեցություն ունենալ հասարակության վրա:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները քննարկում են պատմության շրջանակում վեր հանված հարցերը: Աշակերտները քննադատական մտածողություն են դրսևորում: Նրանք կիսում են իրենց մտքերը մեկը մյուսի հետ: Աշակերտները դերային խաղ են կազմակերպում որևէ հարց ուսումնասիրելու նպատակով:
Ռեսուրսներ	Աշակերտների համար նախատեսված 3.1 նյութերի օրինակներ
Մեթոդներ	Քննարկում: Քննադատական մտածողություն: Վարկածների առաջադրում: Դերային խաղ:

13. Քաղաքացիություն Հիմնադրամի կողմից մշակված դասի հիման վրա, Լոնդոն:

Դասի ընթացքը

Ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակները և դասարանի համար բարձրաձայն ընթերցում է «Անտառի եզրին գտնվող դպրոցը» վերնագրով պատմությունը (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութ 3.1):

Աշակերտները նստում են շրջանաձև: Ուսուցիչը հարցնում է նրանց, թե ինչն էր զարմանալի կամ հետաքրքրական պատմության մեջ և ինչու: Նախապես տրվում է «քննարկող խմբերին» (զույգերին) երկու րոպե, որպեսզի խոսեն զույգի հետ, նախքան իրենց տեսակետը ողջ խմբին արտահայտելը:

Ուսուցիչը հիշեցնում է դասարանին, որ «հարցակենտրոն» քննարկման պարագայում նպատակը կայանում է գաղափարներ կիսելու և դրանք միասին մշակելու մեջ: Չկան ճիշտ կամ սխալ պատասխաններ:

Ուսուցիչն այնուհետև ասում է հետևյալը. «Եկեք բոլորս մտածենք այն բոլոր հնարավոր մարդկանց մասին, ովքեր ցանկություն կունենային հրդեհել դպրոցը (օրինակ՝ երեխաներից մի քանիսը, ծնողներից մի քանիսը, համայնքի որևէ անդամ և այլն): Որո՞նք էին նրանց շարժառիթները: Ո՞վ է շահելու և ո՞վ է կորցնելու, եթե դպրոցը չվերակառուցվի: (Օրինակ՝ եթե աշակերտները պարտավոր չեն դպրոց հաճախել, այդպիսով նրանք կորցնու՞մ են, թե՞ շահում)»:

Սա կարելի է իրագործել ստորև ներկայացվող աղյուսակի տեսքով.

Կողմի անվանումը	**Ձեռքբերումներ**	**Կորուստներ**
Աշակերտներ		
Ծնողներ		
Ողջ համայնքը		
Ա՞յլ		

Այժմ ուսուցիչը հրավիրում է աշակերտների ուշադրությանը պատմության մեջ ուսուցչի դերի շուրջ: Սկզբում տրվող ընդհանուր հարցը, թե «Ինչպիսի՞ կարծիք ունեք ուսուցչի մասին», դրդում է աշակերտներին արտահայտել իրենց մտքերը: Խնդրի իրականացման համար անհրաժեշտ հարցադրումներ.

– Արդյոք նա հիմա՞ր էր, իդեալի՞ստ էր, թե՞ քաջ:
– Դու հիանու՞մ ես, թե՞ արհամարհում ես նրան այն բանի համար, ինչ նա փորձում էր անել:
– Որո՞նք էին, ըստ քեզ, նրա շարժառիթները:
– Քո կարծիքով որտեղի՞ց էր նա ձեռք բերել իր սոցիալական արժեքները:
– Ի՞նչ պետք է նա անի հիմա և ինչու՞: (Փորձի կրկի՞ն, թե՞ հրաժարվի)
– Եթե դու այս դպրոցի աշակերտներից լինեիր, ի՞նչ կցանկանայիր, որ ուսուցիչն աներ:

Այնուհետև ուսուցիչն օգնում է աշակերտներին կապ ստեղծել պատմության մեջ արծարծվող խնդիրների և իրենց համայնքի միջև: Հնարավոր հարցերը կարող են ներառել հետևյալը.

– Մտածիր այն մասին, թե որտեղ ես ապրում:
– Ի՞նչ ես կարծում՝ ուսուցչի պես մարդիկ գոյություն ունե՞ն:
– Հնարավո՞ր է արդյոք, որ անհատներն ինքնուրույն կերպով փոփոխություն բերեն հասարակության մեջ: Օրինակներ մտածիր: Պատմության շրջանակում վեր հանված կարևոր այլ հարցերում ընդգրկված են հետևյալ կետերը.
– Հնարավո՞ր կլիներ արդյոք իսկապես խաղաղություն հաստատել երկու ժողովուրդների միջև երեխաներին միասին կրթելու միջոցով:

Ինչպիսի՞ խնդիրների են բախվում դպրոցները և ուսուցիչները այն պարագայում, երբ տարբեր արժեքներ և կրոններ ունեցող երեխաները միասին են կրթություն ստանում: Ինչպե՞ս կարելի է լուծել այդ խնդիրները:

– Դասը կարելի է ավարտել դերային խաղով: Պատկերացրեք, թե նախքան դպրոցի այրվելը հարթավայրային համայնքի երեխաների ծնողներից մի քանիսը դիմել են ուսուցչին բողոքով: Նրանք ասացին.

«Այս դպրոցում անտառային համայնքի երեխաների համեմատությամբ հարթավայրային համայնքի երեխաներն ավելի մեծ թիվ են կազմում և ըստ այդմ մենք կարծում ենք, որ դուք չպետք է դասավանդեք մեր երեխաներին անտառային համայնքում ապրող մարդկանց դավանանքի մասին: Դրա պատճառով սեփական ժողովուրդը կարող է նրանց դեմ տրամադրվել:

Ուսուցիչը վշտանում է: Զույգերով հորինեք զրույց, որը տեղի է ունենում ծնողի և ուսուցչի միջև: Ներկայացրեք այն դասարանի մյուս անդամներին:

Դաս 2.
Ինչու՞ են մարդիկ ունենում անհամաձայնություններ:
Ի՞նչն է ընկած տարբերությունների հիմքում:

Ուսուցման նպատակներ	Աշակերտներն ունակ են քննարկել մարդկանց կողմից կարևոր հարցերի շուրջ տարբեր կարծիքներ ունենալու պատճառները: Աշակերտներն ունակ են քննարկել վիճարկելի հարցերը: Աշակերտներն ունակ են քննարկել, թե որոնք են այն անհրաժեշտ արժեքները, որոնց վրա հիմնվում են ժողովրդավարական հասարակությունները:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները պնդումներ են ներկայացնում մի շարք հարցերի շուրջ և պաշտպանում են իրենց տեսակետը դրանց վերաբերյալ: Աշակերտները վերլուծում են այն հիմքերը, որոնցից բխում են տարաձայնությունները հրապարակավ վիճարկվող հարցերի շուրջ: Աշակերտները քննարկում են իրենց սեփական արժեքների վրա եղած ազդեցություններն: Աշակերտները մշակում են ուղենիշներ, որպեսզի խրախուսեն հարգանք բազմակարծության նկատմամբ և որպեսզի ապահովեն բավարար հարգանք և երկխոսություն հանրային հարցերի շուրջ:
Ռեսուրսներ	Մեծ պիտակներ «չորս անկյուն» վարժության համար:
Մեթոդներ	Քննարկում: Անդրադարձ: Քննադատական մտածողություն: Կանոնների համատեղ մշակում:

Հիմնական հասկացություն

Բազմակարծություն Բազմակարծությունը գոյություն ունի այն հասարակություններում, որտեղ չկա շահերի, արժեքների կամ համոզմունքների մեկ պաշտոնական շարք: Քաղաքացիներն ունեն խղճի, կրոնի և արտահայտվելու ազատության իրավունք: Բացառություն է կազմում այն, որ մյուսների դավանանքի ազատությանը սպառնացող տեսակետները հակասում են օրենքին և դրանց նկատմամբ հանդուրժողականություն չի դրսևորվում: Պետությունը չի լինի բազմակարծիք, եթե թույլատրվի ունենալ միայն մեկ կրոն կամ հանդուրժողականություն չդրսևորվի որևէ կրոնի գոյության նկատմամբ:

Դասի ընթացքը

Ուսուցչի առաջադրանքով դասարանը հերթականությամբ քննարկում է հետևյալ վիճահարույց պնդումները.

Կո՞ղմ ես, թե՞ դեմ:

- Կենդանիներին ուտելը սխալ է:
- Եթե աշակերտը հիվանդ է ՄԻԱՎ-ով, ապա չպետք է գտնվի առողջ երեխաների հետ միևնույն դասարանում:
- Խաղաղասերներին չպետք է պարտադրել միանալ զինված ուժերին:
- Մահապատիժը պետք է արգելվի:
- Կնոջ տեղը տանն է:
- 14 տարին չլրացած երեխաներին չպետք է թույլ տալ աշխատել:
- Հասարակական շենքերում ծխելը պետք է արգելվի:
- Մարդիկ պետք է ավելի շատ հարկեր վճարեն:
- Ազատ խոսքի իրավունքը լավ բան չէ:

Դասասենյակի յուրաքանչյուր անկյունում փակցված է հետևյալը.

Միանշանակ համաձայն եմ	Համաձայն եմ	Համաձայն չեմ	Միանշանակ համաձայն չեմ

Ուսուցիչը հերթականությամբ ընթերցում է պնդումներից յուրաքանչյուրը և կարգադրում աշակերտներին գնալ դեպի դասասենյակի համապատասխան անկյունը՝ ելնելով այն պատասխաններից, որ նրանք տալիս են վերոնշյալ հարցերին: Եթե չեն կարողանում որոշել, պետք է մնան իրենց տեղում:

Երբ աշակերտները զբաղեցնում են իրենց տեղերը, ուսուցիչը չորս անկյուններից յուրաքանչյուրում գտնվող աշակերտներից մեկին խնդրում է ասել, թե ինչու են ընտրել այդ անկյունը: Այս փուլում արգելվում է որևէ քննարկում: Ուսուցիչն այնուհետև կարգադրում է իրենց միտքը փոխած աշակերտներին, ըստ անհրաժեշտության, դեպի ուրիշ անկյուն շարժվել:

Հաջորդ քայլին ուսուցիչը կարգադրում է դեռևս չկողմնորոշված աշակերտներին փորձել բացատրել, թե ինչու չեն կարողանում որոշում կայացնել: Նրանք պետք է գրի առնեն իրենց անվճռականության պատճառները (օրինակ՝ նրանք կարող են ավելի շատ տեղեկությունների կարիք ունենալ, նրանց համար պարզ չէ նշանակությունը, նրանք կարողանում են հասկանալ երկու կողմերի փաստարկները և այլն):

Վարժությունը կրկնվում է երեք կամ չորս անգամ՝ նշելով տարբեր պնդումներ: Յուրաքանչյուր անգամ ուսուցիչը պետք է զբաղվի ոչ այնքան որևէ մասնավոր հարց քննարկելով, որքան վեր հանելով այն հիմքերը, որոնց պատճառով մարդիկ ունենում են տարբեր տեսակետներ:

Քննարկման ընթացքում ուսուցիչը նշում է, որ միևնույն հարցերին շատ տարբեր պատասխաններ են արձանագրվել: Այնուհետև կարող է ներկայացնել բազմակարծության հասկացությունը և դասարանին տալ հետևյալ հարցերը՝ բացատրելով, որ աշակերտները կարող են օգնել հասկանալ այն հիմքերը, որոնց շնորհիվ բազմակարծությունը գոյություն ունի հասարակություններում.

- Մտածեք այն հարցերի շուրջ, որ մենք քննարկել ենք: Որո՞նք են առաջացնում ամենաուժեղ զգացումները: Ինչու՞ է այդպես:
- Որտեղի՞ց են բխում մեր գաղափարները, արժեքները և համոզմունքները: (Սա կօգնի աշակերտներին հասկանալ, որ մեր գաղափարները վիճահարույց հարցերի շուրջ կարող են ունենալ տարբեր հիմքեր):

Այնուհետև ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե ինչ չափով են ազդեցություն գործում նրանց վրա հետևյալ գործոնները.

- իրենց ծնողների գաղափարները,
- այն, թե ինչ են կարծում իրենց ընկերները,

- իրենց կրոնը կամ մշակույթը,
- մեդիան, օրինակ՝ թերթերը, հեռուստատեսությունը, համացանցը,
- ուսուցիչները,
- իրենց սեփական անձը:

Դրանից հետո աշակերտներն աշխատում են ինքնուրույն և դասավորում են այս կետերն ըստ կարևորության՝ բուրգի տեսքով, որտեղ ամենակարևորը դրվում է բուրգի գագաթին հետևյալ ձևով.

Կետ

կետ կետ

կետ կետ կետ

Ուսուցչի առաջադրանքով աշակերտները զույգերով համեմատում են իրենց կազմած բուրգերը: Որո՞նք են ընդհանուր դասարանի համար առավելագույնս կարևոր գործոնները: Սա կարելի պարզել հիշյալ կետերի հետևյալ գնահատման միջոցով. վերին հորիզոնականում գտնվող կետերը գնահատվում են վեց միավոր, միջին հորիզոնականում գտնվող կետերը՝ չորս միավոր և ստորին մասում գտնվող կետերը՝ յուրաքանչյուրը երկուական միավոր: Չորս հոգուց կազմված խմբերով աշակերտները զումարում են կետերից յուրաքանչյուրին տրված միավորները: Համեմատեք խմբերից յուրաքանչյուրի արդյունքները: Արդյո՞ք նույն գործոններն էին գտնվում ըստ կարևորության կազմված ցանկի վերին հորիզոնականում:

Ուսուցիչը բացատրում է, որ բազմակարծությունը զարգանում է ազատ և բաց հասարակության պայմաններում: Այդուհանդերձ, ոչ մի հասարակություն չի կարող գործել, եթե այդ հասարակության անդամների շրջանում չլինի ընդհանուր համաձայնության նվազագույն մակարդակ: Ուսուցչի առաջադրանքով աշակերտները թվարկում են մի քանի արժեքներ կամ կանոններ, որոնք ըստ իրենց, կարող են օգնել չհամընկնող արժեքները կամ շահերը հաղթահարելու գործում: Աշակերտները, օրինակ, կարող են առաջարկել հետևյալը.

- Հարգել այլոց կարծիքները:
- Փորձել այլ մարդկանց «տեղը դնել» քեզ:
- Հիշել, որ խոսելն ավելի լավ է, քան կռվելը:
- Փորձել չվիրավորել:
- Մարդկանց հնարվորություն տալ, որ իրենց տեսակետն արտահայտեն:

Եթե մարդիկ չեն կարողանում համաձայնության հասնել, մեզ անհրաժեշտ կլինի մի մեխանզիմ, ինչպիսին օրինակ քվեարկությունն է, որպեսզի որոշում կայացվի:

Դաս 3.
Ինչո՞վ են մարդիկ տարբերվում իրարից
Որքա՞ն տարբեր են մարդկանց կարիքները:

Ուսուցման նպատակներ	Աշակերտները կկարողանան. – պարզել այն պատճառները, թե ինչու է խախտված կրթության անհասանելիությունը որոշ մարդկանց համար, – քննարկել խոչընդոտները հավասարության համար լայն հասարակության մասշտաբով, – քննարկել, թե ով է կրում պատասխանատվություն հավասարության խոչընդոտների հաղթահարման հարցում:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները քննադատորեն վերլուծում են ենթադրյալ մի իրավիճակ՝ քննարկելով հիմնական հասկացությունները: Աշակերտները կիրառում են հիմնական սկզբունքները սեփական սոցիալական իրավիճակների նկատմամբ: Աշակերտները քննարկում են դասի շրջանակում վեր հանված հիմնական հարցերը: Աշակերտները կատարում են գրավոր հանձնարարություն:
Ռեսուրսներ	Պատմության օրինակները:
Մեթոդներ	Քննադատական մտածողություն: Քննարկում: Գրավոր փաստարկի մշակում:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Բազմազանություն. Բազմազանությունը չի սահմանափակվում սոսկ էթնիկ կամ ազգային պատկանելությամբ: Գոյություն ունեն տարբերությունների շատ այլ տեսակներ, որոնք տարանջատում են մարդկանց մեկը մյուսից և որոնք կարող են լուրջ սոցիալական տարբերությունների պատճառ լինել, հատկապես եթե մեծամասնությունը կամ իշխանությունն և ազդեցությունն ունեցողները ոչինչ չեն անում՝ ելնելով ըմբռնման կամ կարեկցանքի բացակայությունից:

Հավասարություն. Գոյություն ունի հավասարության երկու հիմնական տեսակ՝ հնարավորությունների հավասարություն կամ արդյունքի հավասարություն: Կարելի է յուրաքանչյուրին տալ հավասար հնարավորություն (օրինակ՝ դպրոց գնալու), սակայն եթե որոշակի խոչընդոտներ (ինչպես օրինակ հաշմանդամությունը) չեն հաղթահարվում, ապա ոմանք զրկվում են այդ հնարավորությունից: Արդյունքում հավասարությունը նպատակ ունի կրթվելու հնարավորություն տալ յուրաքանչյուր երեխայի՝ անկախ հաշմանդամության տեսակից:

Խտրականություն. Խտրականություն նշանակում է որևէ անձի նկատմամբ անարդար վերաբերմունք դրսևորել ռասայական, գենդերային, սեռային պատկանելության, տարիքի, համոզմունքների և այլ հիմքով:

Դասի ընթացքը

Ուսուցիչն ընթերցում է պատմությունը դասարանի համար (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.2)։ Այս պատմության մեջ քննարկվում են մի շարք հարցեր, որոնք կարող են դուրս մնալ աշակերտների ուշադրությունից, եթե վերջիններս պատմությունն առավել մանրակրկիտ չուսումնասիրեն։ Նրանց օգնելու նպատակով ուսուցիչը տալիս է աշակերտների համար նախատեսված 3.3 բաշխման նյութերը և բացատրում հետևյալ հանձնարարությունը։

Աշակերտներն աշխատում են զույգերով, որպեսզի գտնեն հնարավորինս շատ խնդիրներ, որոնց բախվում է Հույսի Քոլեջի անձնակազմը։ Նրանք գրառում են այդ խնդիրները աշակերտների համար նախատեսված բաշխման նյութերի առաջին սյունակում («Խնդիրներ»)։ Դրանից հետո առաջարկում են խնդիրների կարգավորման ուղիներ («Լուծումներ») և երրորդ սյունակում («Պարտականություններ») ավելացնում են նշումներ այն մասին, թե, ըստ իրենց, ով պետք է պատասխանատվություն կրի այս լուծումներն իրագործելու ուղղությամբ։ Վերջին սյունակը կարելի է դատարկ թողնել մինչև հաջորդ փուլը։

Աշակերտներն այնուհետև ներկայացնում, համեմատում և քննարկում են իրենց արդյունքները։ Պրեզենտացիաներին տեխնիկապես օժանդակելու նպատակով աշակերտներից մի քանիսը պետք է պատրաստեն աշակերտների համար նախատեսված նյութերի մանրակերտի ճիշտ նմանությամբ մի թղթե գրատախտակ։ Եթե առկա է առաստաղի լուսացիր (պրոյեկտոր), ապա աշակերտների համար նախատեսված նյութերը կարելի է արտապատկերել լուսացիրի լուսաանդրադարձնող շերտով, որպեսզի աշակերտների մի զույգ լրացնի այդ արտապատկերի մեջ։

Քննարկում դասարանում

Աշակերտները կարող են բարձրացնել հետևյալ հարցերից մի քանիսը, կամ ուսուցիչը կարող է սկսել քննարկումը՝ այդ հարցերի առաջադրմամբ.

- Կարծում եք տնօրենն իրագործե՞ց իր առջև դրված նպատակը՝ աշակերտներից յուրաքանչյուրին նույն վերաբերմունքին արժանացնելով։
- Կարծում եք տնօրենը պե՞տք է հարգանք դրսևորի փախստական ծնողների նկատմամբ և տղաներն ու աղջիկները կրթություն ստանան իրարից անջատ։ Մտածեք երկու կողմերի փաստարկների շուրջ։
- Արդյոք առավել լա՞վ կլիներ, եթե փախստական երեխաները սովորեին մյուս բոլոր աշակերտներից անջատ։ Թվարկեք մոտեցումներից յուրաքանչյուրի առավելություններն ու թերի կողմերը, առաջին հերթին աշակերտների և հետո ողջ համայնքի համար։

Բոլոր հարցերը քննարկելուց առաջ աշակերտները պետք է ժամանակ ունենան, որպեսզի մանրակիկիտ ուսումնասիրության ենթարկեն հարցերից մեկը։ Կարևոր է, որ նրանք հասկանան, որ բազմակարծիք հասարակության մեջ մարդիկ ունենում են տարբեր կարիքներ և սա կարող է հանգեցնել բախումների։ Ուստի կարևոր է արդարացի կերպով կարգավորել այս բախումները՝ պատշաճ ուշադրության արժանացնելով բոլոր անհատներին և խմբերին (տե՛ս գլուխ 4., բախումների կարգավորման մասին մանրամասների համար)։ Տվյալ ուսումնական դեպքի ուսումնասիրության պարագայում դպրոցը կարող է դիտվել որպես միկրոհասարակություն, որում երիտասարդ քաղաքացիները բախվում են ողջ հասարակության մեջ գոյություն ունեցող միևնույն տեսակի խնդիրների։

Հետևյալ հարցերը ցույց են տալիս, թե որքան հագեցած է ուսումնական այս իրավիճակը և որ այս հարցերը միանշանակ արժանի են ուշադրության։ Առավել հանգամանալի ուսումնասիրման դեպքում անհրաժեշտ կլինի լրացուցիչ դաս նշանակել։ Ուսուցիչը պետք է ընտրի հայեցակետեր՝ հաշվի առնելով դասաժամի հնարավորությունը և սովորողների հետաքրքրվածության աստիճանը։

Որքա՞ն տարբեր են երեխաների կրթական կարիքները

Հիմնական հարցերը, որոնց աշակերտները պետք է պատասխանեն, միանշանակ կայանում են նրանում, թե ինչպես կարելի է հաղթահարել այս խնդիրները և արդյոք դպրոցը պետք է ուշադրություն դարձնի խնդրին (և եթե այդպես է, ապա ինչու)։

Այս հարցերին կարելի է պատասխանել երկու եղանակով. առաջինը՝ քննարկելով, թե ում կարիքների վրա կանդրադառնա որոշակի խնդիր լուծելը կամ անտեսելը, և երկրորդ՝ պարզելով այն խնդիրները, որոնց լուծումը կարող է տրվել դպրոցի կոլեկտիվի կողմից:

Առաջինի դեպքում աշակերտներն առավել լավ կհասկանան փախստական (և տեղացի) աշակերտների հատուկ կարիքները, եթե քննարկեն հետևյալ հարցերը. «Փախստական երեխաների ո՞ր իրավունքներն են խախտվել՝ հաշվի առնելով մարդու իրավունքների կամ երեխաների իրավունքների շրջանակը»:

Ստորև ներկայացված են կրթական կարիքների որոշ տեսակներ: Աշակերտները պետք է նշվածներից գտնեն օրինակներ պատմությունից և գրառեն դրանք աշակերտների համար նախատեսված բաշխման նյութերի չորրորդ սյունակում.

- հուզական,
- ուսումնական,
- կրոնական,
- մշակութային,
- լեզվական,
- ֆիզիկական:

Աշակերտները պետք է ներկայացնեն իրենց օրինակները այս խմբերից յուրաքանչյուրի համար:

Պատասխանատվությունը և դրա սահմանները

Պատմության շրջանակում վեր հանված կոնկրետ հարցերը պետք է հանգեցնեն հավասար իրավունքների և կրթության մասին առավել ընդհանուր քննարկման:

Արդյոք դյուրի՞ն է ապահովել յուրաքանչյուր երեխայի համար լավագույն կրթություն՝ իր կարիքներին համապատասխան, թե՞ ոչ: Ի՞նչ կարող է դպրոցն անել և ո՞ր խնդիրներն են պահանջում կողմնակի աջակցություն, օրինակ՝ լրացուցիչ ֆինանսավորում տեղական խորհրդի կողմից:

Այս պարագայում աշակերտներն ընտրում են երկրորդ տարբերակը և այս վերլուծությունը հանգեցնում է կարևոր եզրակացության, այն է՝ ամենայն հավանականությամբ բարդ խնդիրները հնարավոր չի լուծել՝ ձեռնարկելով մեկ մեծ քայլ, որն այս դեպքում նշանակում է, օրինակ, դպրոցի ընդարձակում, հատուկ ուսուցում անցած կադրերի ընդունում, և այլն: Կրթական բարեփոխման այսպիսի միջոցները մեծապես ցանկալի կլինեն, սակայն կարող են երբեք չիրագործվել, քանի որ կախված են քաղաքական որոշումներից (օրիակ՝ ինչպես հատկացումներ անել հարկատուներից ստացվող վճարներից), որոնք կայացվում են լիազորված անձանց կողմից (ինչպիսիք են տեղական ինքնակառավարման մարմինը կամ կրթության նախարարությունը): Այն մարդիկ, ովքեր միայն մտածում են, ըստ երևույթին, այսպիսի արմատական քայլեր ձեռնարկելու մասին, արդյունքում ոչինչ չեն անում՝ բացառությամբ ուրիշների վրա մեղքը բարդելու: Մյուս կողմից, դրությունը կարելի է շտկել նաև փոքր քայլեր ձեռնարկելով: Վերլուծության ենթակա այս ուսումնական իրավիճակի շրջանակում պետք է դիտարկել խնդրի այն մասերը, որոնք կարող էին փոփոխության ենթարկվել տնօրենի, ուսուցչի, աշակերտների կամ նրանց ծնողների կողմից հաջորդ օրը՝ ըստ իրենց ցանկության կամ համաձայնության:

Ահա այստեղ է կարևոր աշակերտների համար նախատեսված բաշխման նյութերի երրորդ սյունակը: Ո՞վ է պատասխանատվություն կրում, այլ կերպ՝ ո՞վ է ի զորու որևէ բան փոխել: Աշակերտները կարող են քննարկել, թե արդյոք փոքր քայլերը՝ բարեփոխումները դպրոցի կոլեկտիվի հնարավորության սահմանում, բավարար են և արդյոք դրանց մասով կան սահմանափակումներ: Նրանք կարող են նաև քննարկել փոքր, կարճաժամկետ քայլերը և ժամանակ պահանջող ավելի մեծ քայլերն իրար միավորելու տարբերակը:

Կրկին այս պարագայում «դպրոցը կյանք է», միկրոհասարակություն: Դպրոցի զարգացման ռազմավարությունը քննարկելը մղում է աշակերտներին մտածելու քաղաքական որոշումների կայացման և ռազմավարության ծրագիր մշակելու ուղղությամբ:

Դպրոցը կյանք է

Աշակերտները կարող են համեմատել Հույսի Քոլեջում տիրող վիճակը իրենց դպրոցի իրավիճակի հետ՝ օգտագործելով հետևյալ գաղափարը:

«Ձեր դպրոցում կրթության ճանապարհին ի՞նչ խոչընդոտների են հանդիպում որոշ աշակերտներ: Ո՞վ է, ըստ ձեզ, կրում պատասխանատվություն, զբաղվելու այս կարիքներով (օրինակ՝ կառավարությունը, տնօրենը, անձնակազմը կամ աշակերտները):»

Այս հարցը քննարկելու նպատակով կարելի է կիրառել տարբեր մեթոդներ: Այն կարող է պլենար քննարկման առարկա հանդիսանալ, այլ աշակերտների հետ հարցազրույցի նախագիծ լինել (տե՛ս գլուխ 5):

Գրավոր հանձնարարություն

Ուսումնական գործընթացը կազմակերպելիս կարևոր է ապահովել, որ աշակերտները յուրացրած լինեն և կարողանան կիրառել իրենց սովորածը: Այն իրագործելու տարբերակներից մեկը պլենար քննարկումը գրավոր հանձնարարության հետ համատեղելն է: Այսպես բոլոր աշակերտները հնարավորություն են ստանում մտածել այն հարցերի շուրջ, որոնք պլենար կերպով քննարկվել են և սա կարող է առանձնապես օգտակար լինել դանդաղ և համակողմանի կերպով մտածողների համար, ովքեր հաճախ հակված են լռություն պահպանել քննարկման ժամանակ, չնայած այն հանգամանքին, որ շատ ասելիք ունեն:

Ուսուցիչը պետք է որոշի, թե որ թեման է առավելագույնս համապատասխանում աշակերտների խորհրդածության և ըմբռնման մակարդակին: Աշակերտների համար կարող է բավարար լինել քննարկումը կրկնելը և սեփական կարծիքը ներկայացնելը: Եթե վարժությամբ պահանջվում է ավելին, ապա աշակերտները կարող են հղում անել մարդու իրավունքներին և (կամ) հասարակության մեջ անհավասարության հարցերին, ինչպես օրինակ.

«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում և Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայում նշվում է, որ պետությունները պարտականություն են կրում կրթություն ապահովել յուրաքանչյուր երեխային:

- Բացատրիր, թե արդյո՞ք, ըստ քեզ, դպրոցը կատարել է այս պարտականությունը:
- Ի՞նչ է հարկավոր, որպեսզի երեխաներին տրվի իրենց արժանի կրթություն:
- Ո՞վ է, ըստ քեզ, պատասխանատու նշվածի իրագործման համար:
- Կյանքի ո՞ր ոլորտների վրա է ազդում հասարակության մեջ անհավասարության հանգամանքը:
- Քննարկում:

Պլենար քննարկման առաջարկվող արդյունք (գրատախտակ, լրացված նյութեր)

Օգնություն Հույսի Քոլեջին

Խնդիրներ	Լուծումներ	Պատասխանատու անձինք	Կրթական կարիքներ
(1) Փախստական երեխաներ			
Լեզվական խնդիրներ	Հատուկ դասընթացներ	Տնօրեն Տեղական խորհուրդ	Լեզու
Տղան չի խոսում	Թերապիա, հատուկ կրթություն	Խորհուրդ՝ տնօրեն, ուսուցիչ	Լեզու, հուզական
Աղջիկը չի կարողանում քայլել	Բուժում Հատուկ կրթություն Խորհուրդ ծնողներին		Ֆիզիկական
(2) Փախստական և տեղացի աշակերտներ			
Ահաբեկում, ծաղր Խումբ (բանդա) Սպառնալիքներ Կռիվ, վնասվածք ստացած տղա	Քննարկում դասարանում Վարքագծի կանոններ Աշակերտները որպես դասարանի ավագներ	Ուսուցիչներ Աշակերտներ Ծնողներ	Հուզական Սոցիալական Վերաբերմունք և արժեքներ
(3) Ուսուցիչները			
Չեն կարող հոգ տանել փախստական և տեղացի աշակերտների մասին	Ավելի փոքր դասարաններ Դասարաններ երկու հերթով Ավելի մեծ թվով ուսուցիչներ	Տարածքային խորհուրդ	Ուսուցում Լեզու Մշակութային Կրոնական
(4) Ծնողներ			
Ցանկանում են տեսնել տղաների և աղջիկների առանձին դասարաններ	«Ոչ», «Այո»	?	Մշակութային Կրոնական

Դաս 4.
Ինչու՞ են մարդու իրավունքները կարևոր:
Ինչու՞ է մեզ հարկավոր ունենալ մարդու իրավունքների մասին օրենսդրություն խոցելի անձանց պաշտպանելու նպատակով:[14]

Ուսուցման նպատակներ	Աշակերտներն կկարողանան քննարկել. – այն հարցերը, որոնք ծագում են, երբ տարբեր արժեքներ և կենսակերպ ունեցող մարդիկ փորձում են միասին ապրել, – այն պատճառները, թե ինչու են մշակվել մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթեր, հատկապես խոցելի անհատների և համայնքների մասով:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները. – կատարում են իրավիճակների քննադատական վերլուծություն և դրանց առաջնահերթ կարևորում, – դերային խաղով ներկայացնում են քննարկումներ հակադիր կողմերի միջև, – դերային խաղի հիման վրա մշակում են հիմնական սկզբունքներ և համեմատում են դրանք ՄԻԵԿ-ի համապատասխան բաժինների հետ, – սցենարը համեմատում են իրենց երկրում մարդու իրավունքների ոտնահարման իրական օրինակների հետ, – ՄԻԵԿ-ի կոնկրետ բաղադրիչների մասին կազմում են պրեզենտացիաներ այլ աշակերտների համար:
Ռեսուրսներ	Կղզու սցենարի օրինակներ (աշակերտների համար նախատեսված նյութեր 3.4): Իրավիճակային քարտերի օրինակներ փոքր խմբերից յուրաքանչյուրի համար (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.5): Մարդու իրավունքների հիմնական բաղադրիչներ (աշակերտների համար նախատեսված նյութեր 3.6): Մեծ թղթեր և նկարչական նյութեր, ըստ անհրաժեշտության, ամփոփիչ պրեզենտացիայի համար:
Մեթոդներ	Քննադատական մտածողություն: Քննարկում: Բանակցություն: Խմբային պրեզենտացիա:

Տեղեկատվական անկյուն

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ներմուծվել է՝ պաշտպանելու այն անձանց իրավունքները, ում հիմնարար իրավունքները ոտնահարվել են, օրինակ՝ կյանքի իրավունքը, դավանանքի ազատության իրավունքը կամ օրենքի շրջանակում արդարադատության իրավունքը: Բոլոր այն պետությունները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ են, համաձայնել են կատարել Կոնվենցիայի հոդվածները իրենց քաղաքացիների մասով: Յուրաքանչյուր երկիր պարտավոր է զեկուցել միջազգային հանրությանը ներպետական դաշտում մարդու իրավունքների առնչությամբ տիրող իրավիճակի մասին: Առանձին քաղաքացիները կարող են զանգատ ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, եթե հավատացած են, որ երկիրը, որի քաղաքացին իրենք հանդիսանում են, մերժում է իրենց՝ մարդու իրավունքները: Մի երկիրը կարող է նաև զանգատ ներկայացնել մեկ այլ երկրի դեմ մարդու իրավունքների խախտումների մասին, սակայն սա այնքան էլ հաճախադեպ երևույթ չէ:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համար հիմնական օրինակ է ծառայել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը ներկայացվել է երկրորդ աշխարհամարտի ցեղասպանություններից հետո:

14. Քաղաքացիություն Հիմնադրամի կողմից մշակված դասի հիման վրա, Լոնդոն

Դասի ընթացքը

Ուսուցիչը անդրադառնում է դերային քարտերին (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.4) սցենարը և դերային խաղում ընդգրկված երկու խմբերին ներկայացնելիս: Սկզբում ուսուցիչը նկարագրում է կղզին, թերևս գրատախտակին փակցված քարտեզի օգնությամբ, որից հետո նկարագրում է կղզիաբնակներին, ովքեր դարեր շարունակ ապրել են այդ կղզում:

Ուսուցիչն այնուհետև ասում է դասարանին, որ կղզի է եկել մեկ այլ խումբ և ցանկանում է բնակություն հաստատել այնտեղ: Նրանք շատ են տարբերվում կղզիաբնակներից: Ուսուցիչը նկարագրում է նորաբնակներին և նրանց կենսակերպը, և դրանից հետո դասարանը երկու մասի է բաժանում: Խմբի մի կեսը խաղալու է կղզիաբնակների դերը, իսկ մյուս կեսը՝ նորաբնակների: Գոյություն ունի այս հարցերի քննարկման երկու հնարավոր տարբերակ (տե՛ս ստորև ներկայացված մեթոդ 1 և մեթոդ 2): Դերային խաղերին ընտելացած դասարանների պարագայում օգտագործեք 1-ին մեթոդը: Առավել ֆորմալ ձևաչափում աշխատելուն սովոր դասարանների համար օգտագործեք 2-րդ մեթոդը:

Մեթոդ 1. Դերային խաղ

Աշակերտերն աշխատում են զույգերով: Նրանցից մեկը խաղում է կղզիաբնակի դերը, իսկ մյուսը՝ նորաբնակի: Նրանք պետք է քննարկեն փոքր քարտերի վրա նկարագրված իրավիճակներից յուրաքանչյուրը իրենց ժողովրդի տեսանկյունից: Նրանք պատրաստվում են բանակցություններ վարել մյուս ժողովրդի հետ (ենթադրելով, որ չկա լեզվական որևէ խոչընդոտ): Նրանք պետք է փորձեն համաձայնության գալ հետևյալ հարցերի շուրջ.

ա/ Ո՞ր խնդիրներն են առավել լուրջ իրենց ժողովրդի համար:

բ/ Ինչպիսի՞ արդյունք են նրանք ակնկալում բանակցություններից:

Ուսուցիչն այնուհետև խնդրում է բնիկների և նորաբնակների զույգերին նստել միասին: Նրանք դերային խաղով կներկայացնեն հանդիպում երկու ժողովուրդների միջև, որի ընթացքում վերջիններս կփորձեն համաձայնության գալ նշված երկու խնդիրների և ուղենիշների շուրջ հետագայի համար:

Քննարկումները սկսելուց առաջ հարկ է հիշեցնել երկու խմբերին, որ կղզու բնակիչները հնարավոր է լիովին երջանիկ չլինեն, քանի դեռ նորաբնակները չեն լքել կղզին, քանի որ բնիկների ողջ կենսակերպը կարող է վտանգվել: Մյուս կողմից, նորաբնակներին գրավել է այս նոր բնակավայրը և կարող են պատրաստ լինել դիմելու ուժի կիրառությանը այստեղ մնալու համար:

Ուսուցչի առաջադրանքով չորս աշակերտներից բաղկացած խմբերից յուրաքանչյուրն առաջին հերթին որոշում են, թե որոնք են խմբերի առջև դրված լուրջ խնդիրները և զբաղվում են այդ խնդիրներով ըստ դրանց լրջության՝ սկսելով առավելագույնս լուրջ խնդիրներից և անցում կատարելով նվազ կարևորներին, որքան դասաժամանակը թույլ է տալիս:

Մեթոդ 2. Ուղղորդված քննարկում

Այս վարժությունը կարելի է անցկացնել դերային խաղի միջոցով: Դասարանի կեսը դիտարկում է իրավիճակները կղզու բնիկների տեսանկյունից, իսկ մյուս կեսը՝ նորաբնակների տեսանկյունից: Յուրաքանչյուր իրավիճակ նկարագրված է երկու տեսանկյունից: Աշխատելով զույգերով՝ աշակերտները որոշում են, թե որոնք են առավել լուրջ խնդիրները և փորձում են գտնել այդ խնդիրներից յուրաքանչյուրի լուծման լավագույն ուղին ըստ իրենց ունեցած տեսանկյունի: Հարկավոր է նրանց հիշեցնել, որ յուրաքանչյուր խնդրի դեպքում կա լուծման «կատարյալ» կամ «արդար» ուղի, սակայն իրականությունը (և պատմությունը) հուշում է, որ կողմերից մեկը կարող է շահել ավելի շատ, քան մյուսը՝ ուժերի անհավասարակշռության հետևանքով:

Ուսուցիչը քննարկում է անցկացնում իրավիճակներից յուրաքանչյուրի շուրջ՝ դիտարկելով խնդրի վերաբերյալ մեկ տեսակետ, ապա մյուս խմբին առաջարկում հակադրել իրենց տեսանկյունը: Ուսուցիչը փորձում է հանդես գալ որպես միջնորդ երկու խմբերի միջև համաձայնություն ստեղծելու նպատակով: Կողմերից մեկական զույգ կարող է դասարանի առաջ վարել քննարկումները, որպեսզի ներկայացնի խնդրի վերաբերյալ իրենց տեսանկյունը: Այս մեթոդի կիրառման մեկ այլ տարբերակն էլ այն է, երբ զույգերը քննարկում են յուրաքանչյուր իրավիճակ այնպես, որ իրենցից մեկը ներկայացնի բնիկներին, մյուսը՝ նորաբնակներին:

Ամփոփում մեթոդ 1-ի և մեթոդ 2-ի վերաբերյալ

Ուսուցիչը հակիրճ ամփոփում է՝ աշակերտներին տալով հետևյալ հարցերը քննարկված իրավիճակների վերաբերյալ.

– Բանակցությունները հե՞շտ էին, թե՞ բարդ: Ինչու՞:
– Արդյո՞ք բանակցությունների ընթացքում խմբերից յուրաքանչյուրի ակնկալիքները արդարացվեցին:
– Ո՞ր խմբի համար առավել շահեկան եղան բանակցությունները: Ինչու՞:
– Խմբերից որևէ մեկը մյուսի համեմատ ունե՞ր արդյոք առավել շատ բարոյական իրավունքներ յուրաքանչյուր իրավիճակում:
– Ի՞նչ ապագա է սպասվում երկու խմբերին կղզու վրա:
– Ի՞նչը կարող էր կանխել խմբերից մեկի գերակայությունը մյուսի նկատմամբ:
– Կազմեք կանոնների կամ սկզբունքների ցանկ, որոնք կարող են նպաստել երկու խմբերի խաղաղ համակեցությունը կղզու վրա: Համեմատեք դասարանում կազմված այս ցանկը մարդու իրավունքների հիմնական բաղադրիչների հետ (տես աշակերտների համար նախատեսված 3.6 բաշխման նյութեր): Նշվածներից ո՞ր հոդվածները կարող են օգտակար լինել, որպեսզի կղզիաբնակները չկորցնեն իրենց հողը, կենսակերպը, և որպեսզի կանխվի վերջիններիս հիմնական իրավունքների ոտնահարումը:

Ուսուցիչը նշում է, որ պատմության ընթացքում նման իրավիճակներ հաճախ են ի հայտ եկել, ինչպես օրինակ այն ժամանակ, երբ բրիտանացի նորաբնակները գաղութացրեցին Ավստրալիան, կամ եվրոպացի նորաբնակների օրինակը, ովքեր գաղութացրեցին Հյուսիսային և Հարավային Ամերիկան: Այդ ժամանակ գոյություն չուներ մարդու իրավունքների գործող միջազգային օրենսդրություն, և բազմաթիվ գործողությունների հետևանքով խախտվեցին բնիկ ժողովուրդների իրավունքները: Մինչ այժմ կարելի է հանդիպել նման իրավիճակների, ինչպես օրինակ՝ Հարավային Ամերիկայում, որտեղ ցեղերին զրկում են իրենց հողից, քանի որ միջազգային ընկերություններն այնտեղ զբաղվում են հանքարդյունաբերությամբ կամ փայտամթերմամբ:

Մարդու իրավունքների կարևորությունը

Որպես ձեռնարկի այս գլխի ամփոփիչ վարժություն, ուսուցչի հրահանգով աշակերտները (բաժանված խմբերի) ընտրում են Եվրոպական կոնվենցիայում ամրագրված մարդու իրավունքներից մեկը, որը քննարկվել է այս գլխի ընթացքում: Աշակերտներն այնուհետև պատրաստում են այս իրավունքը նկարագրող վահանակ և կազմում վերջինիս կարևորությունը ներկայացնող պրեզենտացիա: Որոշ աշակերտներ կարող են մեջբերումներ անել կղզիաբնակների դերային խաղից՝ խնդիրներն առավել ազդեցիկ ներկայացնելու համար: Նշվածները կարող են ներկայացվել դասարանին, դպրոցում սովորող մյուս աշակերտներին Տես գլուխ 5-ի 4-րդ դասը (մեդիա) հասկանալու համար, թե ինչպես ծրագրավորել այսպիսի նախագիծ դասարանում:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.1
Անտառի եզրին գտնվող դպրոցը

Ժամանակին կար մի համայնք, որի անդամներն ապրում էին լեռնաշղթայի հարևանությամբ գտնվող խիտ անտառում: Նրանք կրոնավոր ժողովուրդ էին, ովքեր խիստ դաստիարակություն էին տալիս իրենց երեխաներին, որպեսզի վերջիններս երկրպագեն իրենց ժողովրդի աստվածներին: Համաձայն նրանց կրոնի՝ տղամարդկանց և կանանց միջև գոյություն չուներ որևէ տարբերություն:

Լեռների և այդ երկրի ամենահեռավոր եզրի միջև մի հսկայական դաշտավայր էր փռված: Այս դաշտավայրում ապրում էր մեկ այլ համայնք: Նրանք չունեին կրոն, բայց ջանասիրաբար աշխատում էին միմյանց համար: Նրանք կատաղի ռազմիկներ էին, և գերիշխող էր արական սեռը: Կանանց նկատմամբ կար հարգանք, սակայն նրանք զրկված էին առաջնորդ դառնալու հնարավորությունից:

Անտառի և դաշտավայրի ժողովուրդների միջև ոչ մի ընդհանուր բան չկար: Նրանք ատելություն և վախ էին զգում միմյանց նկատմամբ: Նրանց միջև երբեմն պատերազմներ էին ընթանում:

Օրերից մի օր մի երիտասարդ եկավ անտառի եզր: Նա հայտարարեց, որ ցանկանում է այդտեղ դպրոց կառուցել, որպեսզի երկու համայնքների երեխաները միասին կրթվեն, և որպեսզի երկու ժողովուրդների միջև ի վերջո խաղաղություն հաստատվի:

Կարճ ժամանակ անց մի հասարակ, փայտից շինություն կառուցվեց, և եկավ այն օրը, երբ ուսուցիչն առաջին անգամ բացեց իր դպրոցի դռները: Երկու համայնքներից մի քանի երեխա ժամանեցին՝ տեսնելու, թե ինչպիսին է այն: Երկու համայնքների ծնողներն ու առաջնորդներն անհանգստությամբ հետևում էին այդ ամենին:

Սկզբնական շրջանում երեխաների միջև խնդիրներ էին ծագում: Նրանք միմյանց վիրավորական խոսքեր էին ասում և հաճախ կռվի բռնվում: Սակայն երեխաները սկսեցին գիտակցել դպրոց գալու արժեքը, և աստիճանաբար բոլոր հարցերը սկսեցին կարգավորվել: Ուսուցիչը խստապահանջ էր, բայց արդար և հավասար վերաբերմունքի էր արժանացնում իր բոլոր աշակերտներին: Նա ասում էր, որ հարգում է կենսակերպերից թե՛ մեկը, թե՛ մյուսը, և երեխաներին սովորեցնում էր իրենց կենսակերպերի տարբերությունները:

Ավելի ու ավելի մեծ թվով երեխաներ էին սկսում հաճախել անտառի եզրին գտնվող դպրոցը:

Այնուամենայնիվ, ինչպես շուտով պարզ դարձավ, դպրոց հաճախող երեխաների մեծամասնությունը ներկայացնում էր դաշտավայրային համայնքը: Անտառային համայնքը ներկայացնող երեխաների թիվն այժմ կազմում էր դպրոցի մեկ քառորդ մասը միայն: Ուսուցիչը խոսեց երկու կողմերի ծնողների հետ, որպեսզի քաջալերի և հանգստացնի նրանց:

Սակայն մի առավոտ ուսուցիչը ժամանելով դպրոց՝ տեսավ, որ ինչ որ մեկը դպրոցն ամբողջովին այրել է:

(Քաղաքացիություն հիմնադրամից, Թեդ Հեդլսթոնի պատմության հիման վրա)

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.2
Հույսը յուրաքանչյուրինն է

Հույսի Քոլեջի տնօրենը մեծահոգի և մարդասեր կին էր: Նա խորապես հավատացած էր կրթության կարևորության մեջ: «Ամեն ոք արժանի է կյանքի լավ սկիզբ ունենալուն»,- ասում էր նա անձնակազմին: «Չեմ ցանկանում, որ այս դպրոցում դուք որևէ մեկին ավելի լավ վերաբերմունքի արժանացնեք, քան մյուսին: Դա արդար չի լինի:»

Օրերից մի օր դպրոց ժամանեց փախստական երեխաների մի խումբ: Նրանց ընտանիքները փախել էին՝ փրկվելու հարևան երկրում ծավալվող հակամարտությունից: Տնօրենն ասաց անձնակազմին,-

> *«Այս դժբախտ երիտասարդներն ամեն ինչ կորցրել են: Ձերմ ընդունեք նրանց ձեր դասերին: Նրանք պետք է հնարավորինս քիչ տառապանքներ կրեն: Նրանք մեղավոր չեն, որ պատերազմ է սկսվել»:*

Անձնակազմը համաձայնեց: Երեխաներն ըստ տարիքի տեղավորվեցին համապատասխան դասարաններում: Փախստական երեխաներից շատերն առանձնացած էին դասարանում, սակայն դասարաններից մեկում փախստական չորս տղաներից բաղկացած մի խումբ կար:

Շատ չանցած անձնակազմը սկսեց հասկանալ, որ որոշակի դժվարություններ են առաջանում փախստական երեխաներին և մնացածին նույնանման վերաբերմունքի արժանացնելու պարագայում: Մեկ առ մեկ նրանք տնօրենին էին ներկայացնում իրենց խնդիրները: «Իմ դասարանում փախստական երեխան չի կարողանում խոսել մեր լեզվով»,-ասաց ուսուցիչներից մեկը: «Ես այնքան ժամանակ չունեմ, որ ամեն ինչ թարգմանեմ նրա համար: Դա շատ ժամանակ է խլում: Մնացած աշակերտներն են տուժում»: «Իմ դասարանի փախստական աշակերտը ոչ մեկի հետ չի խոսում»,-նկատեց մեկ այլ ուսուցիչ: «Հնարավոր է, որ պատերազմը նրան հոգեբանական ցնցում է պատճառել: Կամ միգուցե նա ուղղակի դժվարություններ ունի սովորելու հարցում: Ի՞նչ կարող եմ անել»: Մեկ այլ ուսուցիչ ասաց,-«Ինձ մոտ մի երեխա կա, որը վիրավորված է: Նա չի կարողանում քայլել: Նա չի կարողանում մասնակցել ֆիզիկական որևէ վարժանքի և չի կարողանում աստիճաններով բարձրանալ գիտական լաբորատորիա»:

Այնուհետև սկսեցին ի հայտ գալ այլ խնդիրներ: Կեսօրյա ճաշի ընթացքում որոշ փախստական երեխաների ահաբեկում և ծաղրում էին: Նրանց հասցեին վիրավորական խոսքեր էին հնչում և որոշ տեղացի աշակերտներ կոչ էին անում նրանց վերադառնալ այնտեղ, որտեղից եկել են:

Նույն դասարանում սովորող չորս տղաները հանցախումբ կազմեցին, որպեսզի կարողանան պաշտպանվել: Մի օր նրանցից մեկի և տեղացի մի տղայի միջև կռիվ բռնկվեց: Փախստական տղան իր հակառակորդին ուժգին հարվածեց: Անձնակազմը բողոքեց տնօրենին, որ այդ տղային հարկավոր էր հեռացնել դպրոցից, սակայն տնօրենը փորձում էր հասկանալ, թե արդյոք այդ քայլը արդարացի կլիներ՝ հաշվի առնելով, թե ինչ դժվարությունների միջով էր անցել երիտասարդ փախստականը: Անձնակազմն ասաց.

> *«Մենք փորձեցինք այս ամենը գլուխ բերել, սակայն մեր երեխաները չափազանց շատ են տուժում: Մենք չենք կարող սովորեցնել այս երեխաներին և միևնույն ժամանակ անել առավելագույնը մեր տեղացի աշակերտների համար:»*

Կարճ ժամանակ անց փախստական երեխաների ծնողները ցանկություն հայտնեցին հանդիպելու տնօրենին: Նրանք ասացին.

> *«Մեզ համար տհաճ է այն փաստը, որ տղաները և աղջիկները միասին են հաճախում ֆիզկուլտուրայի դասերին: Սա հակասում է մեր կրոնին և մշակույթին:»*

Տնօրենի համբերությունն արդեն հատում էր: Ըստ նրա՝ սա բարդ խնդիր էր, սակայն սրտի խորքում հասկանում էր, որ հուսահատվել չի կարելի:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.3
Օգնություն Հույսի Քոլեջին

Խնդիրներ	Լուծումներ		
(1) Փախստական երեխաներ			
(2) Փախստական և տեղացի աշակերտներ			
(3) Ուսուցիչներ			
(4) Ծնողներ			

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.4
Կղզիաբնակները և նորաբնակները (քարտեր դերերի ուղղորդումով)

Խումբ 1 Կղզիաբնակները

Դուք կղզիաբնակների խումբ եք: Հազարավոր տարիներ շարունակ ձեր ժողովուրդն այստեղ է բնակվել: Ձեր նախնիները թաղված են լեռներում գտնվող սրբավայրերում, և դուք հավատում եք, որ նրանց հոգիները դեռ այնտեղ են:

Դուք շատ հասարակ կենսակերպ եք վարում: Կանայք խնամում են երեխաներին, մինչդեռ տղամարդիկ թափառում են ամբողջ կղզով մեկ՝ որսալով կենդանիներ և հավաքելով ուտելիք հյութեղ բուսականությունից: Ձեր ժողովուրդը հավատացած է, որ յուրաքանչյուր ոք պատասխանատվություն է կրում բնությունը պահպանելու և հաջորդ սերնդի համար այն անվնաս հանձնելու պահով: Ձեր զինատեսակներն են՝ նիզակ, նետ, աղեղ և կենդանի որսալու թակարդ:

Ձեր կրոնի հիմքում ընկած է բնության պաշտամունքը, իսկ ձեր մշակույթի հիմքում՝ համայնքի կարևորությունը: Երբ կա պարենային անբավարարություն, բոլորը կիսում են իրենց սնունդը մեկը մյուսի հետ և մարդիկ ջանասիրաբար աշխատում են մեկը մյուսին օգտակար լինելու համար: Երբ սնունդն առատ է, մարդիկ հավաքվում են, երգում, պարում և պատմություններ պատմում: Ձեր ժողովուրդը գրելու կարիք չունի:

Դուք շատ քիչ օրենքներ ունեք: Հարկ եղած դեպքում ցեղի առաջնորդը կարող է նոր օրենքներ ստեղծել: Երբ համայնքի անդամների միջև վեճ է ծագում, նա նաև կարող է կողմերի միջև որպես իրավարար հանդես գալ:

Խումբ 2. Նորաբնակները

Դուք Եվրոպայից ծովագնացության եք մեկնել մի խումբ մարդկանց հետ՝ ձեզ և ձեր ընտանիքի համար նոր կենսակերպ գտնելու հույսով: Դուք ցանկանում եք գտնել աշխարհի մյուս կողմում հայտնագործված նոր երկրներից մեկը: Դուք հույս ունեք բնակություն հաստատել այնտեղ, կառուցել տներ, ֆերմաներ և բարգավաճել:

Դուք ձեր հետ վերցրել եք հող վարելու գործիքներ և հրացաններ՝ որսորդությամբ զբաղվելու համար: Ձեր մշակույթի հիմքում ընկած է կրթությունը և աշխատասիրությունը: Յուրաքանչյուրդ նպատակ ունի բարգավաճել և բարեկեցիկ կյանքով ապրել: Դուք չեք պատկանում որևէ հատուկ կրոնի, սակայն հավատացած եք, որ յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա՝լինելու իր իսկ հավատքի հետևորդը:

Դուք ցանկանում եք ձեր նոր համայնքում հարցերի մասին որոշումներ կայացնել ժողովրդավարական եղանակով: Դուք հեռացել եք մի հասարակությունից, որտեղ միայն վերնախավն էր օժտված իշխանությամբ և որտեղ նյութական արժեքների առումով հսկայական սոցիալական անհավասարություն էր տիրում: Դուք ցանկանում եք հիմնել մի հասարակություն, որտեղ բոլորը հավասար են կամ ունեն հաջողության հասնելու նույն հնարավորությունները:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.5

Իրավիճակային քարտեր. Կղզիաբնակները

Ուսումնասիրեք հետևյալ իրավիճակներն ու ձեր խմբերում որոշեք, թե ինչ է պետք անել տվյալ իրավիճակներում:

Կղզիաբնակներ	Նորաբնակներ
1Ի Նոր ցանկապատներ Նորաբնակներից մի քանիսը սկսել են ցանկապատներ կառուցել իրենց տների շուրջ, որոնք անցնում են այն արահետի միջով, որը դուք մշտապես օգտագործել եք, որպեսզի տանեք նախիրն արածելու: Ցանկապատներից մի քանիսը դուք քանդել եք:	**1Տ Նոր ցանկապատներ** Կղզիաբնակները քանդել են ցանկապատներից մի քանիսը, որոնք դուք կառուցել էիք ձեր ունեցած կենդանիներին դուրս չթողնելու համար:
2Կ Սահմանախախտը Կղզիաբնակներից մեկը գնդակահարվեց այն պահին, երբ անցնում էր նորաբնակների կողմից ցանկապատված մի տարածքով:	**2Ն Սահմանախախտը** Կղզիաբնակները շարունակաբար մուտք են գործում այն տարածք, որ դուք ցանկապատել եք ձեր կենդանիների համար: Նրանցից մեկը նախազգուշացվել էր, իսկ հետո՝ գնդակահարվել:
3Կ Խառն ամուսնություն Կղզիաբնակներից մեկը սիրահարվել է նորաբնակ մի կնոջ: Նրանք ցանկանում են ամուսնանալ և ապրել նորաբնակների համայնքներից մեկում: Տղամարդու ընտանիքը շատ դժգոհ է այդ որոշումից:	**3Ն Խառն ամուսնություն:** Նորաբնակ կանանցից մեկը սիրահարվել է մի կղզիաբնակի: Նրանք ցանկանում են ամուսնանալ և ապրել նորաբնակների համայնքում: Նորաբնակներից մի քանիսը դժգոհ են այդ որոշումից:
4Կ Սրբավայրեր Նորաբնակներից մի քանիսը օգտակար հանածոներ գտնելու նպատակով փորման աշխատանքներ են իրականացնում լեռներում, որտեղ, ըստ ձեզ, ապրում են ձեր նախնիների հոգիները: Այս վայրերը ձեր սրբավայրերն են: Դուք հարձակում եք գործել փորման աշխատանքներն իրականացնողներից մի քանիսի վրա՝ որպես բողոքի նշան:	**4Ն Սրբավայրեր** Դուք լեռներում հայտնաբերել եք արժեքավոր հանածոներ: Դուք կկարողանաք վաճառել այս հանածոները ձեր հայրենիքում գտնվող առևտրականներին: Կղզիաբնակների համար այս լեռները սուրբ նշանակություն ունեն, մինչդեռ դա ձեր կարծիքով ուղղակի սնահավատություն է: Նրանք հարձակում են գործել փորման աշխատանքներ իրականացնողների վրա:
5Կ Կրթություն Նորաբնակներից մի քանիսը դպրոց են բացել և հրավիրել են ձեր երեխաներին նույնպես հաճախել այնտեղ՝ սովորելու համար:	**5Ն Կրթություն** Որոշ նորաբնակներ դպրոց են բացել: Նրանք առաջարկել են կղզիաբնակներին իրենց երեխաներին այդ դպրոցն ուղարկել:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 3.6
Մարդու իրավունքների հիմնական բաղադրիչներ[15]

1. Կյանքի իրավունք:
2. Խոշտանգումների արգելք:
3. Ստրկության արգելք:
4. Ազատության և անվտանգության իրավունք:
5. Արդար դատաքննության իրավունք:
6. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոց իրավունքի խախտումների դեպքում:
7. Խտրականության արգելք, հավասարության իրավունք:
8. Իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք, քաղաքացիության իրավունք:
9. Անձնական ու ընտանեկան կյանքի իրավունք:
10. Ամուսնանալու իրավունք:
11. Սեփականություն ունենալու իրավունք:
12. Մարդկանց տեղաշարժվելու իրավունք:
13. Ապաստանի իրավունք:
14. Մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք:
15. Արտահայտվելու ազատություն:
16. Հավաքների ու միավորման իրավունք:
17. Սննդի, ջրի և բնակարանի իրավունք:
18. Առողջության պահպանման իրավունք:
19. Կրթության իրավունք:
20. Աշխատանքի իրավունք:
21. Հանգստի և ժամանցի իրավունք:
22. Սոցիալական ապահովության իրավունք:
23. Քաղաքական մասնակցության իրավունք:
24. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:
25. Մարդու իրավունքների խախտման անթույլատրելիություն:
26. Մարդու իրավունքները ճանաչող հասարակարգի իրավունք:
27. Անհատի պարտականություններ:

15. Այս ցանկը հիմնված է գլուխ 5-ում տրված «Իրավունքներ, ազատություններ և պարտականություններ» վերնագրով դասավանդման նյութերի վրա:

ԳԼՈՒԽ 4
Բախում

Ի՞նչ անել անհամաձայնություն ունենալու դեպքում:



4.1. Բախումների կարգավորում

Ինչպե՞ս վարվել լուրջ տարաձայնությունների պարագայում:

4.2. Վեց քայլից բաղկացած մոտեցման կիրառում

Ինչպե՞ս կարող ենք խուսափել մեր հարևանի հետ բախումից:

4.3.Հակասող մարդու իրավունքներ

Բախում մարդու իրավունքների միջև: Ի՞նչ անել հիմա:

4.4. Բռնության գործադրում

Հնարավո՞ր է արդյոք, որ բռնության գործադրումը որոշ դեպքերում արդարացված կարող է լինել:

ԳԼՈՒԽ 4. Բախումնային իրավիճակներ
Ի՞նչ անել անհամաձայնություն ունենալու դեպքում:

Խաղաղության հասկացությունը կարևոր մշակութային հայեցակետ ունի: Հեռավոր արևելյան մշակույթներում խաղաղությունը սովորաբար առավելապես զուգորդվում է ներքին խաղաղության հետ (մտքի կամ սրտի խաղաղություն), մինչդեռ արևմտյան աշխարհում խաղաղությունը ընկալվում է անհատից դուրս (պատերազմի կամ դաժան հակամարտության բացակայություն): Օրինակ Հնդկաստանում խաղաղություն բառը գրում են «շանթի», ինչը ենթադրում է մտքի կատարյալ վիճակ կամ մտքի խաղաղություն: Գանդիի փիլիսոփայության և ռազմավարության հիմքում ընկած էր «Ահիսմա» կոչվող հասկացությունը, որը լայն իմաստով նշանակում է «խուսափել վնասակար ամեն ինչից»: Նա ասում էր, - «Ահիսման բառիս բուն իմաստով նշանակում է բռնությունից հրաժարում: Բայց այն ինձ համար ունի շատ ավելի, անսահման ավելի մեծ նշանակություն: Դա նշանակում է, որ դու չպետք է վիրավորես որևէ մեկին, չպետք է տեղի տաս չարաբաստիկ մտքերին, նույնիսկ այն մարդկանց նկատմամբ, ում դու թշնամի ես համարում: Նա, ով առաջնորդվում է այս սկզբունքով, թշնամիներ չունի»: Ըստ մայաների ավանդույթի, խաղաղությունն առնչվում է բարօրություն հասկացությանը և մեր կյանքի տարբեր ոլորտներում կատարյալ հավասարակշռության գաղափարի հետ է կապված:[16]

«Դրական խաղաղությունը» բնութագրում է մի դրություն, որում հավաքական կամքն ուղղված է խաղաղության ամրապնդմանը և դրա խոչընդոտների վերացմանը: Այն ընդգրկում է հանձնառություն սոցիալական արդարության ողողությամբ՝ այսպիսով, դուրս գալով այն գաղափարի սահմաններից, թե խաղաղությունը վախի, բռնության և պատերազմի բացակայությունն է: Այն ներառում է բախումները ոչ բռնի եղանակով լուծելու հանձնառություն, և ձգտում է խրախուսել անհատների և խմբերի կարողությունները, որպեսզի նրանք կարողանան կառուցողական մոտեցում ցուցաբերել սոցիալական խնդիրներին: ԺՔԿ-ի գծով մանկավարժների պարագայում այն նաև նշանակում է դասարանում խթանել ժողովրդավարական գործընթացները, քննարկել հարցեր իշխանության կամ այն չարաշահելու վերաբերյալ, ինչպես նաև փորձել մշտապես խրախուսել լսելու և կառուցողական երկխոսություն վարելու հմտությունները և բախումները կարգավորելու հանձնառությունը:[17]

Արդյո՞ք բռնությունը բնական երևույթ է: Շատերը համոզված են, որ անձի՝ բռնության հանդեպ հակումը տրված է ի բնե, և հետևաբար, մենք չենք կարող մեր կյանքում և հասարակության մեջ խուսափել պատերազմներից, բախումներից և բռնության տարածված դրսևորումներից: Այս բնագավառի այլ մասնագետներ պնդում են, որ մենք կարող ենք խուսափել բռնությամբ լի մտածողությունից, զգացողություններից և գործողություններից: Սևիլյան հայտարարությունը բռնության մասին՝ բազմաթիվ երկրներ ներկայացնող գիտնականների և գիտաշխատողների կողմից, մշակված 1986 թվականին, ,հաստատում է այս հանգամանքը՝ նշելով, որ.

«1. Գիտականորեն ճիշտ չէ ասել, թե մենք մեր կենդանակերպ նախնիներից պատերազմելու հակում ենք ժառանգել (…) Պատերազմը բացառապես մարդկային գործոններով պայմանավորված երևույթ է և չի հանդիպում կենդանի այլ էակների մոտ (…):

2. Որոշ մշակույթներ դարեր շարունակ պատերազմից զերծ են մնացել, և կան մշակույթներ, որոնք հաճախակի են պատերազմել մի ժամանակաշրջանում, և հազվադեպ՝ մեկ այլ ժամանակաշրջանում:

3. Գիտականորեն ճիշտ չէ ասել, թե պատերազմը կամ բռնություն պարունակող որևէ այլ վարքագիծ գենետիկորեն ծրագրավորված է մեր մարդկային էության մեջ (...):

4. Գիտականորեն ճիշտ չէ ասել, թե մարդիկ ունեն «վայրագ ուղեղ» (...) մեր վարքագիծը ձևավորվում է նրա հիման վրա, թե ինչ պայմաններ են մեզ հրամցվել և ինչպես ենք մենք սոցիալիզացվել:

16. Տեքստը՝ «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ. մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ»-ից, Եվրոպայի Խորհուրդ, Ստրասբուրգ 2002, 376-րդ էջից սկսած:

17. Վերցված՝ «Ժողովրդավարական քաղաքացիության կրթության մասնագիտական տերմինների բառարան»-ից, Կարլն Օշի, Եվրոպայի խորհուրդ, DGIV/EDU/CIT (2003թ.) 29:

Շրջակա միջավայրը շատերիս վրա այնպիսի ազդեցություն է թողնում, որ մենք արձագանքում ենք ագրեսիվ և վայրագ պահվածքով: Մենք սովորում ենք մտածել, զգալ և գործել ագրեսիվ, իսկ որոշ դեպքերում՝ բռնի կերպով: Անկախ մեր բնակության վայրից՝ մենք գտնվում ենք հանրային և մշակութային այնպիսի ճնշման ներքո, որի ազդեցության տակ գրեթե մշտապես կարդում, դիտում և լսում ենք բռնությունների մասին: Հեռուստահաղորդումները, գովազդները, թերթերը, տեսախաղերը, կինոարտադրությունը և երաժշտական արդյունաբերությունը մեծապես նպաստում են այս իրավիճակին: Նախքան պատանեկություն թևակոխելը երեխան արդեն տեսել է հազարավոր սպանություններ և բռնարարքներ երևի թե միայն հեռուստացույց դիտելով: Մերօրյա հասարակությունները, գիտակցաբար կամ անգիտակցաբար, բռնությունը ներկայացնում են որպես դրական երևույթ: Բռնությունը դիտվում է որպես դրական արժեք: Շատ մշակույթներում բռնությունը մերժելը կամ ֆիզիկական բռնությունից և առճակատումից խուսափելն ընկալվում է որպես թուլության նշան, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է տղամարդկանց, ովքեր իրենց հասակակիցների կողմից մեծ ճնշումների են ենթարկվում շատ վաղ հասակից:[18]

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար տե՛ս սույն գլխի վերջում դասավանդման նյութերի էջը:

Ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթություն

Այս շարքի դասերի արդյունքում աշակերտները կկարողանան.

- հասկանալ կոնֆլիկտների հիմքում ընկած մեխանիզմների էությունը,
- գիտակցել բախումները ոչ բռնի կերպով լուծելու եղանակները,
- կատարելագործել սեփական միջավայրում տեղի ունեցող բախումներին արձագանքելու ունակությունը,
- կատարելագործել բախման մեջ ներգրավված բոլոր կողմերի տեսակետները և կարիքները հաշվի առնելու ունակությունը,
- ընդլայնել մարդու իրավունքների միջև առկա հակասությունների մասին գիտելիքները,
- զարգացնել քննադատական մտածողությունը բռնության կիրառման վերաբերյալ,
- խորացնել ընկալումն այն մասին, թե ինչպես հաղթահարել բռնությունը, որին բախվում են;
- ունենալ բախումների առնչությամբ ոչ բռնի մոտեցում ցուցաբերելու խթան:

18. Տեքստը՝ «ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ. մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ»-ից, Եվրոպայի Խորհուրդ: Ստրասբուրգ 2002, էջ 380:

ԳԼՈՒԽ 4. Բախում
Ի՞նչ անել անհամաձայնություն ունենալու դեպքում:

Դասի վերնագիրը	Նպատակները	Աշակերտական առաջադրանքներ	Ռեսուրսներ	Մեթոդ
Դաս 1. Բախումների կարգավորում	Բախումների կարգավորման՝ վեց քայլից բաղկացած մոտեցման ներածական մաս:	Վերլուծել որևէ բախում, գտնել լուծումներ:	Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.1	Աշխատանք փոքր խմբով:
Դաս 2. Վեց քայլից բաղկացած մոտեցման կիրառում	Սովորել, թե ինչպես կիրառել վեց քայլից բաղկացած մոտեցումը:	Վերլուծել որևէ բախում, գտնել լուծումներ:	Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.1 Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.2	Աշխատանք փոքր խմբով:
Դաս 3. Մարդուն հակասող իրավունքներ	Սովորել, թե ինչպես ճանաչել և վերլուծել այն իրավիճակները, որոնց պարագայում մարդու իրավունքների միջև առկա է հակասություն:	Վերլուծել մի իրավիճակ, որում մարդու իրավունքների միջև առկա է հակասություն:	Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.3 Աշակերտների համար նախատեսված բաշման նյութեր 5.2	Աշխատանք փոքր խմբով: Քննադատական մտածողություն:
Դաս 4. Բռնության կիրառում	Զարգացնել քննադատական մտածողություն բռնության կիրառման թույլատրելիության և անհատական վարքագծի վերաբերյալ:	Խորհրդածել բռնության կիրառման և անհատական վարքագծի շուրջ:	Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.4	Աշխատանք փոքր խմբով: Քննադատական մտածողություն:

Դաս 1.
Բախումների կարգավորում
Ինչպե՞ս վարվել լուրջ տարաձայնությունների դեպքում:

Ուսուցման նպատակը	Բախումների կարգավորման վեց քայլից բաղկացած մոտեցման ներածական մաս:
Առաջադրանք աշակերտների համար	Վերլուծել որևէ բախում, գտնել լուծումներ:
Օժանդակ նյութեր	Թղթեր կամ տետրեր և գրիչներ: Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.1.
Մեթոդ	Աշխատանք դասարանով, իսկ ցանկության դեպքում՝ նաև զույգերով:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Բախումները առօրյա կյանքի մաս են կազմում: Դրանք պետք է դիտվեն ոչ որպես բացասական երևույթ, այլ որպես անհատների կամ խմբերի շահերի բախում: Քաղաքականության ոլորտում բախումները նույնիսկ հանրային քննարկման կարևոր բաղադրիչ են: Միայն բաց հակասությունների և փոխզիջումային տարբերակների որոնման արդյունքում է, որ բոլոր տարբեր սոցիալական խմբերն իրենց ինտեգրված են համարում՝ զգալով, որ իրենց ձայնը լսելի է: Հակամարտությունների հաղթահարումը (փոխզիջումային տարբերակների որոնմամբ) ձեռքբերովի հմտություն է: Սույն դասը նպաստում է այս նպատակի իրականացմանը:

Բախումների կարգավորման հետևյալ նկարագրությունները տեղ են գտել այս դասի շրջանակում և կարևոր է, որ ուսուցիչը տեղյակ լինի դրանց նշանակությանը:

Հաղթող-հաղթող փոխհարաբերություն. այս դեպքում նկարագրվում է մի իրավիճակ, որում բախումների փոխհամաձայնեցված կարգավորման արդյունքում հակամարտող կողմերը հավասարապես օգտվում են՝ զգալով, որ իրենք հասել են իրենց նպատակին: Սա դիտվում է որպես բախումների կարգավորման առավելագույնս կատարյալ եղանակ, քանի որ այն երաշխավորում է, որ հակամարտությունը չի վերսկսվի:

Հաղթող-պարտվող կամ պարտվող-հաղթող փոխհարաբերություն. այս դեպքում նկարագրվում է մի իրավիճակ, որում բախումների կարգավորման արդյունքում հակամարտող կողմերից մեկը պարտվել է, իսկ մյուսը՝ հաղթել: Նման իրավիճակները հաճախ հուշում են, որ հակամարտությունը կվերսկսվի, քանի որ պարտվող կողմը բախումների կարգավորման արդյունքում գրեթե ոչինչ ձեռք չի բերել:

Պարտվող-պարտվող փոխհարաբերություն. Հակամարտության կարգավորման նման ելքը նկարագրում է մի իրավիճակ, որում բախումների կարգավորման արդյունքում հակամարտող կողմերից ոչ մեկը ոչինչ չի շահում: Նման իրավիճակները հաճախ հուշում են, որ հակամարտությունն ընդամենը ժամանակավորապես անհետացել է, և առավել քան հավանական է, որ այն կվերսկսվի:

Դասի ընթացքը

Ուսուցիչը սկսում է դասը՝ գրատախտակի ձախ կողմում գրելով «ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ» բառը: Դրանից հետ ուսուցիչն աշակերտներին առաջադրանք է տալիս՝ առանձին թղթի վրա գրի առնել իրենց մտքին եկած բառեր և արտահայտություններ, որոնք զուգորդվում են «հակամարտություն» բառի հետ:

Նույն վարժությունը կատարվում է «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» բառի պարագայում, որն ուսուցիչը գրում է գրատախտակի աջ կողմում: Ուսուցիչն այնուհետև թվով մոտ 10 աշակերտի հարցնում է, թե ինչ բառեր են նրանք գրի առել: Արդյունքներն ի մի են բերվում գրատախտակի վրա, որից հետո աշակերտները ներկայացնում են իրենց մեկնաբանությունները հետևյալ հարցերի շուրջ.

– Արդյո՞ք ընտրված բառերից որևէ մեկն անսապասելի էր նրանց համար:
– Արդյո՞ք բոլոր այն բառերը, որոնք զուգորդվել են հակամարտության հետ, բացասական իմաստ ունեն, իսկ խաղաղության հետ զուգորդված բառերը՝ դրական:

Այնուհետև ուսուցչի առաջադրանքով աշակերտները հակամարտության օրինակներ են բերում, որոնց իրենք բախվել են կամ որ պատահել են իրենց միջավայրում: Նա աշակերտներին առաջարկում է մտածել, թե արդյոք նշված բախումները պատկանում են բախումների այն խմբին, որոնք կարող են լուծում ստանալ և արդյոք այդ կարգավորման համար հարկավոր փոխզիջման առաջին քայլն են հանդիսանում, թե պատկանում են բախումների այն խմբին, որոնք հնարավոր չէ կարգավորել: Այնուհետև ուսուցիչը նրանց ծանոթացնում է այն գաղափարին, որ հակամարտությունները ոչ միշտ են հանգեցնում բռնության, և որ բախումների դեպքում հնարավոր է ցուցաբերել առավել կառուցողական մոտեցում:

Այնուհետև ուսուցիչը բերում է հակամարտության կոնկրետ օրինակ, որը կարող է հանդիպել ընտանիքում: «18-ամյա Կատյան՝ ընտանիքի դուստրը, ցանկանում է դիտել մի հոլովակ, որը վերջերս ստացել է իր ընկերներից մեկից: Նրա եղբայրը, 15-ամյա Մարտինը, ցանկանում է դիտել իր սիրելի հեռուստահաղորդումը»: Ուսուցիչն աշակերտներից յուրաքանչյուրին է փոխանցում աշակերտների համար նախատեսված 4.1 բաշխման նյութի օրինակը և սկսում վերլուծել այս հակամարտությունը՝ կիրառելով ստորև ներկայացված վեց քայլից բաղկացած մոտեցումը:

1-ին և 2-րդ քայլերը ձեռնարկվում են ողջ խմբի մասնակցությամբ, որն ուղղորդում է ուսուցիչը և հանձնարարում, որ աշակերտները պարզեն կողմերի իրական «կարիքները» և ձևավորեն հակամարտության հստակ սահմանում: 1-ին քայլն իրագործելիս կարևոր է, որ կողմերից յուրաքանչյուրի իրական կարիքները շարադրվեն առանց որևէ վրդովեցուցիչ ձևակերպման: Հարկավոր է կենտրոնանալ խնդրի հիմքում ընկած իրական կարիքները պարզելու վրա, քանի որ հնարավոր է, որ դրանք չհամընկնեն կողմերի ներկայացրած կարիքների հետ: 2-րդ քայլով հարկավոր է այնպես ձևակերպել հակամարտության հիմքում ընկած խնդիրը, որ երկու կողմերի համար այն ընդունելի լինի:

3-րդ քայլը լուծումներ փնտրելու փուլն է: Այս փուլում կարիք չկա մեկնաբանել կամ դատել այդ լուծումները. պետք է ողջունել յուրաքանչյուր առաջարկ: 3-րդ քայլը կարելի է ձեռնարկել զույգերով, որին հաջորդում է տեսակետների փոխանակումը (կամ միգուցե զույգերով փոխվե՞լը): Այնուհետև ուսուցիչը ներկայացնում է պարտվող-պարտվող, հաղթող-պարտվող, պարտվող-հաղթող կամ հաղթող-հաղթող մոտեցումների գաղափարը լուծումները վերլուծելիս, ապա զույգերին հանձնարարում գնահատել սեփական լուծումներն այս գաղափարի հիման վրա (քայլ 4-րդ):

Եթե աշակերտները պարզում են, որ իրենց առաջարկած լուծումներից ոչ մեկի արդյունքում չի ստեղծվում հաղթող-հաղթող փոխհարաբերությունը, ապա նրանք պետք է շարունակեն մտածել այդ ուղությամբ: Այնուամենայնիվ, հաղթող-հաղթող ձևաչափով լուծում գտնելը ոչ միշտ է հնարավոր: Իրենց պատասխանները ներկայացնելուց հետո, աշակերտները ուսուցչի առաջադրանքով փորձում են գտնել լավագույն լուծումը (քայլ 5-րդ): Իրական բախումների դեպքում, երբ կողմերն ուղղակի ներգրավված են հակամարտության կարգավորման տվյալ փոխհարաբերության մեջ, պարտավոր են ընդունել լուծումը: Ուսուցիչն ավարտում է թեման՝ հակիրճ ներկայացնելով, որ կա 6-րդ քայլի հնարավորություն: 6-րդ քայլի հիմնական բաղադրիչը կայանում է նրանում, որ որոշ ժամանակ անց (մի քանի րոպե, ժամ, օր կամ շաբաթ՝

կախված հակամարտության բնույթից) լուծումը գնահատվում է, իսկ հարկ եղած դեպքում՝ հարմարեցվում: Որպես վերջաբան, ուսուցիչը ծավալում է քննարկում այն մասին, թե արդյոք վեց քայլից բաղկացած մոտեցման միջոցով կարելի է արդյունքի հասնել և որ դեպքերում է դա հնարավոր, ինչպես նաև՝ ինչ հետևանքների կարող էր հանգեցնել, եթե լիներ լայնորեն ճանաչված և կիրառվող: Այս հարցերը հարկավոր է քննարկել տարբեր իրավիճակների և մարդկանց խմբերի համատեքստում, ինչպիսիք են.

- հասակակիցների խմբեր,
- ընտանիք,
- դասարան,
- դպրոց,
- պետություն,
- պատերազմ,
- սպորտ:

Դաս 2.
Վեց քայլից բաղկացած մոտեցման կիառում
Ինչպե՞ս կարող ենք խուսափել մեր հարևանի հետ բախումից:

Ուսուցման նպատակը	Սովորել, թե ինչպես կիրառել վեց քայլից բաղկացած մոտեցումը:
Առաջադրանքներ աշակերտների համար	Վերլուծել որևէ հակամարտություն և գտնել լուծումներ, որոնք կբխեն երկու կողմերի շահերից:
Ռեսուրսներ	Աշակերտների համար նախատեսված 4.2 բաշխման նյութերից հակամարտության որևէ սցենարի օրինակ յուրաքանչյուր փոքր խմբի համար: Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.1.
Մեթոդ	Աշխատանք փոքր խմբով:

Տեղեկատվական անկյուն

Միայն տեսական հայեցակարգը հասկանալը բավարար չէ հակամարտության խաղաղ կարգավորումը գործնականում իրականացնելու համար: Այն իրական հմտություն է, որը հարկավոր է ձեռք բերել, և այս դասը աշակերտներին հնարավորություն է ընձեռում սովորել, թե ինչպես կարելի է հակամարտության խաղաղ կարգավորումը գործնականում իրականացնել: Հաջորդ քայլը կլինի ձեռք բերված գիտելիքների կիրառումը դպրոցում հանդիպող իրական կյանքի իրավիճակում:

Դասի ընթացքը

Ուսուցիչը սկսում է դասը՝ աշակերտներին բացատրելով, որ նրանց առաջադրանքն է կիրառել հակամարտության կարգավորման վեց քայլից բաղկացած մոտեցումը բախումնային տարբեր իրավիճակներում:

Դասարանը բաժանվում է չորս կամ հինգ աշակերտից բաղկացած փոքր խմբերի, որոնցից յուրաքանչյուրը ստանում է աշակերտների համար նախատեսված 4.2 բաշխման նյութերի մի օրինակ: Յուրաքանչյուր խումբ աշխատում է սցենարներից մեկի վրա, որպեսզի յուրաքանչյուր սցենարի վրա աշխատեն մեկից ավել խմբեր: Աշակերտները նաև օգտվում են աշակերտների համար նախատեսված «Հակամարտության կարգավորման վեց քայլից բաղկացած մոտեցում» վերնագրով 4.1 բաշխման նյութերից: Ավարտելուց հետո յուրաքանչյուր խմբից մեկական խոսնակ դասարանին ներկայացնում է իր խմբի կողմից մշակված վեց քայլերը: Անրաժեշտ է սա կատարել սկզբում «հակամարտություն 1»-ի, ապա «հակամարտություն 2»-ի մասով:

Նրանց պրեզենտացիաներից հետո ուսուցիչը ծավալում է դասարանային քննարկում առաջարկված լուծումների վերաբերյալ՝ օգտագործելով հետևյալ հարցերը.

- Արդյոք հասկանու՞մ ենք «կարիքներ» կոչվածը և «խնդրի սահմանումը»: Կա՞ն արդյոք հարցեր, որոնք լուծում չեն ստացել:
- Հնարավո՞ր է արդյոք գտնել այլ լուծումներ, որոնք, ըստ մեզ, առավել դրական ազդեցություն կունենան խնդրի երկարաժամկետ կարգավորման համար:

Երկրորդ քայլով աշակերտները, ուսուցչի առաջադրանքով, վերլուծում են բախումներ, որոնք տեղի են ունեցել կամ շարունակում են տեղի ունենալ դպրոցում, հասակակիցների խմբերում, պետության ներսում և այլն: Նրանք պետք է ընտրեն մեկ կամ ավելի հակամարտության օրինակ (կախված դասաժամանակից) և փորձեն մտածել հաղթել-հաղթել փոխհարաբերությամբ կազմված լուծումների շուրջ:

Եթե ուսուցիչն օգտագործում է այս երկու դեպքերի ուսումնասիրությունները որպես աշակերտներին միջնորդության (մեդիացիա) ձևերին ծանոթացնելու միջոց, նա կարող է նախ որոշակի տարրական տեղեկություն հաղորդել աշակերտներին տվյալ երկրում հակամարտությունների կարգավորման դատական համակարգի մասին (միջնորդության ձևեր, հակամարտությունը դատարանում վիճարկելու հնարավորություն, և այլն): Նշված հակամարտությունները վեց քայլից բաղկացած մոտեցմամբ քննարկելու փոխարեն, իրավիճակները կարելի է ներկայացնել նաև դերային խաղի միջոցով:

Դերային խաղի պարագայում աշակերտներից մեկը կարող է լինել Ա կողմը, մյուսը՝ Բ կողմը, իսկ երրորդը կարող է խաղալ միջնորդի դերը: Այնուհետև ուսուցիչը խմբերից յուրաքանչյուրի հետ հետադարձ կապի միջոցով պարզում է, թե հակամարտությունն ինչպես կարգավորեցին: Կարելի է քննարկել տարբեր լուծումներ, ինչպես նաև կարգավորմանն ուղղված գործընթացը: Այս հավելյալ բաղադրիչները կարող են բավական երկար ժամանակ խլել, և հնարավոր է անհրաժեշտ լինի իրագործել դրանք արտադասարանային աշխատանքի կամ լրացուցիչ դասի միջոցով:

Դաս 3.
Մարդուն հակասող իրավունքներ
Բախում մարդու իրավունքների միջև: Ի՞նչ անել հիմա:

Ուսուցման նպատակը	Սովորել, թե ինչպես ճանաչել և վերլուծել այն իրավիճակները, որոնց պարագայում մարդու իրավունքների միջև առկա է հակասություն:
Աշակերտական առաջադրանքներ	Վերլուծել մի իրավիճակ, որում մարդու իրավունքների միջև առկա է հակասություն:
Ռեսուրսներ	Մեծ թուղթ և գծանշիչ յուրաքանչյուր խմբի համար: Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.3: Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.2:
Մեթոդ	Աշխատանք փոքր խմբով: Քննադատական մտածողություն:

Տեղեկատվական անկյուն

Թեև մարդու իրավունքները կարող են առաջին հայացքից հարցերի տեղիք չտալ, սակայն ոչ միշտ է դա այդպես: Միանշանակ լինում են շատ իրավիճակներ, երբ որևէ անձի իրավունքները հակասում են մյուսի իրավունքներին: Այսպիսի իրավիճակներում քննադատական մտածողությունը կարող է օգնել անձին գնահատել հակասող իրավունքները և հանգել խնդրի սեփական լուծմանը:

Դասի ընթացքը

Աշխատանքային խմբերին (յուրաքանչյուր խումբը բաղկացած 4-5 աշակերտից) տրվում է մարդու հակասող իրավունքների մասին դեպքի օրինակ («Մարդու հակասող իրավունքների հինգ դեպք», աշակերտների համար նախատեսված 4.3 բաշխման նյութեր), մի մեծ թուղթ և գծանշիչ:

Առաջին հերթին, աշակերտները պետք է քննարկեն, թե մարդու որ իրավունքներն են հայտնվել հակասության մեջ: Խմբին կարող է տրվել մարդու իրավունքների ցանկը քննարկման նպատակով (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.2): Գալով համաձայնության այն հարցի շուրջ, թե որ իրավունքներն են հակասում իրար, աշակերտները բաժանարար գծերի միջոցով թուղթը մասերի են բաժանում ստորև նշված օրինակով: Ուսուցիչը կարող է գծել այս նույնը գրատախտակին և գրանցել հակասող իրավունքների ցանկն առաջին աղյուսակում:

Ուսումնասիրվող դեպքի թիվը
Հակասության մեջ հայտնված մարդու իրավունքներ – – –
Լուծում
Ինչու՞:

Երկրորդ առաջադրանքով պահանջվում է ծավալել բաց քննարկում այն մասին, թե աշակերտների կարծիքով որը կարող է լինել հակասության լուծումը: Նրանք հիմնավորում են իրենց կատարած ընտրությունը և գրի առնում այդ տարբերակները:

Այնուհետև խմբերից յուրաքանչյուրն ընտրում է մի խոսնակ, ով ներկայացնում է խմբի պատասխաններն ամբողջ դասարանին: Ուսուցչի առաջադրանքով դասարանը հետադարձ կապ է ապահովում իրենց կողմից ընտրված տարբերակների մասով և ներկայացնում, թե արդյոք համամիտ է խմբի գաղափարների հետ:

Դաս 4.
Բռնության կիրառում
Որոշ իրավիճակներում արդյո՞ք թույլատրելի է բռնության կիրառումը:

Ուսուցման նպատակը	Զարգացնել քննադատական մտածողություն բռնության կիրառման թույլատրելիության և անհատական վարքագծի դրսևորման վերաբերյալ:
Աշակերտական առաջադրանքներ	Խորհրդածել բռնության կիրառման և անհատական վարքագծի շուրջ:
Ռեսուրսներ	Յուրաքանչյուր խմբին տրվող քարտեր կամ թղթե ժապավեններ, բաշխման նյութ 4.4 : (Ուսուցիչը պետք է որոշ տեղեկություն ունենա տվյալ երկրում բախումների կարգավորման դատական համակարգի մասին):
Մեթոդ	Աշխատանք փոքր խմբով: Քննադատական մտածողություն:

Տեղեկատվական անկյուն

Թեև խաղաղ աշխարհի գաղափարը դիտվում է որպես գերագույն նպատակ, այդուհանդերձ, ո՛չ մարդու իրավունքների միջազգային օրենքում, ո՛չ միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակում չկան բացարձակ տերմիններ, որոնք կբացառեն բռնության կիրառումը: Այս դասի նպատակն է նպաստել աշակերտների քննադատական մտածողությանը հատուկ դեպքերում բռնության կիրառման լեգիտիմության (օրինականության) շուրջ: Աշակերտներին հանձնարարվում է խորհրդածել իրենց սեփական վարքագծի շուրջ միջավայրում իրենց կամ այլոց կողմից կիրառված բռնության առնչությամբ:

Դասի ընթացքը

Դասարանը բաժանվում է չորս կամ հինգ աշակերտից բաղկացած աշխատանքային խմբերի: Աշակերտներից մեկը կամ ուսուցիչը ներկայացնում է աշակերտների համար նախատեսված 4.4 բաշխման նյութերում տեղ գտած թիվ 1 դեպքը:

Հնարավոր է, որ մեկ դասաժամը չբավականացնի՝ ուսումնասիրելու համար բոլոր չորս դեպքերը: Ուսուցիչը կարող է հանձնարարել, որ տարբեր խմբեր ուսումնասիրեն տարբեր դեպքեր, կարող է ընտրել չորս դեպքերից միայն երկուսը կամ ևս մեկ դասաժամ ավելացնել:

Խմբի առաջադրանքն է քննարկել իրավիճակը՝ օգտվելով քարտի վրա գրված հարցերից, և բանավոր ներկայացնել իրենց պատասխանը: Ուսուցիչը պետք է տեղյակ լինի, որ քննարկման ենթակա հիմնական հարցն այն է, թե որքանով պետք է ընդունելի լինի բռնության կիրառումը: Նրանից հետո, երբ խմբերից յուրաքանչյուրը ներկայացրել է իրենց պատասխանները, ուսուցիչը, նախքան հաջորդ իրավիճակի օրինակը բաժանելը, կարող է որոշ լրացուցիչ տեղեկություն հաղորդել ներկայացված իրավիճակի վերաբերյալ:

Իրավիճակների մասին ուսուցչի օրինակը, հարցեր և լրացուցիչ տեղեկություն

Իրավիճակ 1.

Գլոբալացման երևույթի դեմ ցույցի ժամանակ մարդկանց մի փոքր խումբ սկսում է քարեր նետել հայտնի անդրազգային մի ընկերության գլխամասային շենքի ուղղությամբ: Ցույցի վայրում գտնվող ոստիկանական ուժերը տեսնելով, թե ինչ է կատարվում, փորձում են ձերբակալել այս քայլի կազմակերպիչներին: Միջամտության ընթացքում քար նետողները առևանգում են ոստիկաններից մեկին և ուժեղ ծեծի ենթարկում:

Հարցեր

1. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե ոստիկանական ուժերն իրենց զենքերով կրակ բացեին քար նետող մարդկանց վրա:
2. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե ոստիկանական ուժերը միջամտեին՝ կիրառելով գնդացիրներ: (Այս դեպքում ամեն ինչ ավելի արագ կկատարվեր, սակայն դժբախտ դեպքերի թիվը միանշանակ ավելի մեծ կլիներ:)
3. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե ոստիկանական ուժերը սպասեին այնքան, մինչև հնարավորություն ստեղծվեր միջամտելու ջրցան մեքենաների օգնությամբ:
4. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե ոստիկանական ուժերը չմիջամտեին ուժ կիրառելու միջոցով, որպեսզի խուսափեին բախումը սրացնելուց:

Տեղեկություն

Համաձայն միջազգային չափանիշների՝ ոստիկանությունն իրավունք ունի կիրառելու ֆիզիկական ուժ որոշակի պայմաններում: Ֆիիկական ուժ կարող է կիրառվել միայն անհրաժեշտության դեպքում և պետք է համաչափ լինի միջամտության նպատակին: Եթե ոստիկանության ծառայողը վերադասից հրաման ստանա միջամտելու այս կանոնին ակնհայտորեն հակասող եղանակով, ապա ՄԱԿ-ի կանոններով պահանջվում է, որպեսզի նա հրաժարվի հրամանը կատարելուց:

Իրավիճակ 2.

X երկիրը պատերազմ է հայտարարում Y երկրին, քանի որ Y երկիրը բացահայտորեն պաշտպանում և նույնիսկ ֆինանսավորում է սեփական տարածքից X երկրի դեմ գործող ապստամբ խմբերին: X երկրի հետախուզական ստորաբաժանումը հայտնաբերում է այն գյուղը, որտեղ մի խումբ լավ պատրաստված և զինված ապստամբ ուժեր են տեղակայված և պարզում է, որ նրանք խոշոր ռմբակոծություն են նախապատրաստում՝ թիրախավորելով արդյունաբերական կարևոր օբյեկտ:

Հարցեր

1. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե X երկիրը ծանր ռմբակոծության ենթարկեր այդ գյուղը՝ գիտակցելով, որ մեծ մասը կզոհվեն՝ ներառյալ տեղացի բնակիչները:

2. Արդյոք ճի՞շտ կլիներ, եթե նույն գործողությունն իրականացվեր այն բանից հետո, երբ ապստամբներին հանձնվելու հստակ պահանջ, իսկ տեղացի բնակչությանը գյուղը լքելու և տարածքային մարզադահլիճում հավաքվելու հստակ նախազգուշացում ներկայացվեր, որտեղից նրանց վերադառնալու թույլտվություն կտրվեր զենքի առկայությունը ստուգելուց հետո:
3. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե միջամտությունը տեղի ունենար առանց ֆիզիկական ուժի կիրառելու: Ի՞նչ այլընտրանքներ կարող եք առաջարկել:

Տեղեկություն

Պատերազմ վարելու մասին միջազգային կանոնները (այսպես կոչված «Ժնևի Կոնվենցիաները») ամբողջական արգելք չեն նախատեսում ռազմական ուժի կիրառման առնչությամբ, այլ արգելում են միջամտության և զենքերի որոշ տեսակներ: Սկզբունքներից մեկն այն է, որ ռազմական ուժը չպետք է կիրառվի ոչ ռազմական թիրախների դեմ և այն նաև չպետք է լինի անհամաչափ և անխտրական (առանց թիրախի տարբերակման), օրինակ՝ քաղաքացիական բնակչության շրջանում զոհերից խուսափելու համար անհրաժեշտ է լուրջ քայլեր ձեռնարկել՝ ձեռնպահ մնալով ամենահզոր ռումբերի կիրառումից այն ռազմական թիրախների դեմ, որտեղ ավելի թույլ ռումբերը բավարար են՝ լուծելու մարտական խնդիրը: Այս եղանակով հնարավոր կլինի կանխել քաղաքացիական բնակչության շրջանում դժբախտ դեպքերը և անմեղ կողմերի մահը (այսպես կոչված «անուղղակի վնաս»): Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տրվել վերևում, սա չի նշանակում, թե պատերազմ վարելու եղանակների մասին Ժնևի Կոնվենցիաներով անընդունելի է համարվում անուղղակի վնասը :

Իրավիճակ 3.

Պարոն X-ը երիտասարդ մի տղամարդ է, ով աշխատում է տարածքային հիվանդանոցներից մեկում՝ որպես տեխնիկական օգնական, միշտ ծեծի է ենթարկում իր կնոջը, երբ խմիչքի ազդեցության տակ վերադառնում է տուն: Մի անգամ նրա կինը ոստիկանությանը հայտնեց ամուսնու կողմից ծեծի ենթարկվելու մասին, որոնք երբեմն լուրջ բնույթի են լինում: Հարևանի կինը, ով պատահաբար տեղեկացել էր իրավիճակի մասին, արդեն պատկերացնում է, թե ինչ է կատարվում հարևանի տանը, երբ լսում է նրանց վեճի և բղավոցների ձայները:

Հարցեր.

1. Արդյոք հարևանի կինը այսպիսի դեպքերում պե՞տք է տեղեկացնի ոստիկանությանը, թե՞ դա կհամարվի հարևանի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի անընդունելի խախտում:
2. Այսպիսի իրավիճակների մասին տեղեկություն ստանալու դեպքում արդյոք ոստիկանությունը պե՞տք է միջամտի:

Տեղեկություն

«(...) Պետությունները պետք է դատապարտեն կանանց դեմ բռնությունը և չպետք է վկայակոչեն որևէ սովորույթ, ավանդույթ կամ կրոնական դիտարկում, որպեսզի խուսափեն կանանց դեմ բռնությունը վերացնելու մասով իրենց պարտավորությունների կատարումից: Պետությունները պետք է անհապաղ կերպով և համապատասխան բոլոր միջոցներով փարեն կանանց դեմ բռնությունը վերացնելու քաղաքականություն, և այս նպատակով պետք է ձեռնարկեն հետևյալը.

Դիտարկեն «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա»-ն վավերացնելու կամ դրան միանալու հնարավորությունը կամ հանեն այդ կոնվեցիայի դրույթների մասով արված վերապահումները, եթե դեռ չեն կատարել այս քայլերը,

Ձեռնպահ մնալ կանանց հանդեպ բռնություն կատարելուց,

Պատշաճ ջանադրություն ցուցաբերել՝ կանխելու, հետաքննելու և, համաձայն ազգային օրենսդրության, պատժի ենթարկելու կանանց հանդեպ բռնության դրսևորումները, անկախ նրանից՝ այդ բռնարարքներն իրագործվել են պետության, թե մասնավոր անձանց կողմից(...):»

Նյութը՝ Կանանց նկատմամբ բռնության վերացման ՄԱԿ-ի հռչակագրից (1993թ.):

Իրավիճակ 4.

13-ամյա Լեոն թուլակազմ և բավականին փոքրամարմին տղա է: Իրենից մեծահասակ մի քանի տղաներ նրան հաճախ ահաբեկում են, երբ նա խաղում է իրենց թաղամասի խաղահրապարակում: Այս անգամ նա արձագանքում է՝ ասելով, որ նրանք չպետք է ամեն անգամ իրեն անհանգստություն պատճառեն և որ նրանք իրենց պահում են անկիրթ, նախնադարյան մարդկանց նման: Հետևանքը լինում է այն, որ մեծահասակ տղաները սկսում են դաժանորեն ծեծել նրան: Լեոյի ընկերը տեսնում է այս ամենը խաղահրապարակ մտնելիս: Մի քանի տարեց մարդիկ նույնպես կատարվածի ականատեսն են լինում, երբ խանութից սնունդ գնելուց հետո խաղահրապարակի միջով վերադառնում են տուն:

Հարցեր՝

1. Արդյո՞ք Լեոյի ընկերը պետք է միջամտի այս դեպքում: Ինչպե՞ս:
2. Արդյո՞ք տարեց մարդիկ պետք է միջամտեն: Ինչպե՞ս:
3. Ինչպիսի՞ այլ լուծումներ կառաջակեք:

Որպես լրացուցիչ առաջադրանք աշակերտները կարող են մեծահասակ տղաներին ուղված նամակ կազմել, որում կներկայացնեն, թե ինչ են մտածում նրանց վարքագծի մասին: Սա կարող է լինել տնային հանձնարարություն կամ առաջադրանք առավել արագ աշխատող խմբերի համար:

Ուսուցչի համար նախատեսված դասավանդման նյութեր Միջազգային մարդասիրական իրավունք

Ի՞նչ է իրենից ներկայացնում միջազգային մարդասիրական իրավունքը:

Միջազգային մարդասիրական իրավունքը (ՄՄԻ) իր մեջ ներառում է թե՛ մարդասիրական սկզբունքներ, թե՛ միջազգային պայմանագրեր, որոնց նպատակն է փրկել կյանքեր և մեղմել զինվորականների և ոչ զինվորականների տառապանքները զինված հակամարտությունների ժամանակ: Միջազգային մարդասիրական իրավունքի գլխավոր իրավական փաստաթղթերն են Ժնևի՝ 1949 թվականի Կոնվենցիաները՝ չորս պայմանագիր, որոնք ստորագրվել են աշխարհի գրեթե բոլոր պետությունների կողմից: Կոնվենցիաները սահմանում են քաղաքացիական բնակչության և այն զինվորականների հիմնարար իրավունքները, ովքեր լքել են մարտադաշտը վնասվածք ստանալու, հիվանդության կամ գերեվարվելու պատճառով: Ժնևի կոնվենցիաներին կից Ժնևի 1977 թվականի լրացուցիչ արձանագրությունները հավելյալ կերպով մանրամասն շարադրում են այդ իրավունքները:

Ովքե՞ր են պաշտպանված ՄՄԻ-ի շրջանակում: Արդյո՞ք ես պաշտպանված եմ:

ՄՄԻ-ին պաշտպանում է զինված ուժերի վիրավոր, հիվանդ կամ գերեվարված անդամներին և քաղաքացիական բնակչությանը: Համաձայն Ժնևի առաջին կոնվենցիայի դրույթների՝ պետք է հավաքել և խնամել վիրավոր և հիվանդ զինվորականներին՝ անկախ վերջիններիս ազգային պատկանելիությունից: Արգելվում է սպանել կամ խոշտանգումների կամ կենսաբանական փորձարկումների ենթարկել նրանց: Նրանք պետք է ստանան բավարար խնամք և պաշտպանված լինեն կողոպուտից կամ դաժան վերաբերմունքից: Այս կոնվենցիայի պաշտպանության ներքո են գտնվում նաև բուժաշխատողները, ռազմական հոգևոր անձնակազմը, ռազմաբժշկական կառույցները և շարժական միավորները:

Վիրավոր, հիվանդ և նավաբեկյալ զինվորականները գտնվում են Ժնևի Երկրորդ Կոնվենցիայի պաշտպանության ներքո: Նրանք ստանում են նույն պաշտպանությունը, ինչ ցամաքային ուժերը՝ համապատասխանեցված ծովում հանդիպող պայմաններին: Որպես հիվանդանոց ծառայող նավերը գտնվում են պաշտպանության ներքո:

Ժնևի Երրորդ Կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող ռազմագերիների նկատմամբ պետք է դրսևորվի մարդկային վերաբերմունք և նրանց պետք է ապահովել համապատասխան բնակարանային պայմաններով, սնունդով, հագուստով և բուժօգնությամբ: Նրանք չպետք է ենթարկվեն խոշտանգումների կամ բժշկական փորձերի և պետք է պաշտպանված լինեն բռնությունից, վիրավորանքից և ամբոխի հետաքրքրասիրությունից: Գերեվարված զինվորական թղթակիցները և քաղաքացիական այն անձինք, ովքեր լիազորված են ուղեկցել զինվորականներին, նույնպես ունեն այս կարգավիճակը:

Քաղաքացիական բնակչությունը գնվում է Ժնևի Կոնվենցիայի պաշտպանության ներքո IV. Հակամարտության կողմերը պարտավոր են մշտապես տարբերել քաղաքացիական բնակչության և զինվորականներին միջև և իրենց գործողություններն ուղղել բացառապես ռազմական օբյեկտների դեմ: Քաղաքացիական բնակչությանը պետք է թույլատրվի ապրել հնարավորինս նորմալ պայմաններում: Նրանք պետք է պաշտպանված լինեն սպանությունից, խոշտանգումներից, հաշվեհարդարներից, սեփականության անխտրական ոչնչացումից և պատանդ վերցվելուց: Նրանց պատիվը, ընտանեկան իրավունքները, կրոնական համոզմունքները և սովորույթները պետք է հարգվեն: Զավթող ուժերը (օկուպացրած տերություն) պետք է ապահովեն և թույլատրեն բավարար սննդի և բժշկական պարագաների անվտանգ տեղափոխումը, ինչպես նաև հիվանդանոցների և անվտանգ գոտիների կառուցումը վիրավորներին, հիվանդներին, զառամյալներին, երեխաներին, ծննդաբերող կանանց և փոքր երեխաներ ունեցող մայրերին

պատսպարելու համար: Կոնվեցիան ապահովում է հատուկ պաշտպանության կանանց և երեխաների համար: Այս մարդկանց խնամքով զբաղվող բժշկական անձնակազմն օգտվում է հարգանքից և պաշտպանությունից:

Ժնևի կոնվենցիաները նշում են մարդասիրական օգնության մասին, որը ցուցաբերվում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ), Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ազգային ընկերությունների կամ անաչառ մարդասիրական այլ կազմակերպությունների կողմից՝ որպես հակամարտող կողմերի կողմից լիազորված կազմակերպություններ:

Արդյո՞ք տարբեր են միջազգային մարդասիրական իրավունքը եւ մարդու իրավունքների մասին օրենքը:

Այո, տարբեր են, սակայն նրանք փոխլրացնում են միմյանց: Երկուսն էլ նպատակ են հետապնդում պաշտպանել անհատներին վնասից և պահպանել մարդկային արժանապատվությունը, սակայն ուղղված են տարբեր իրավիճակների և դրանց հիմնական փաստաթղթերը տարբեր են: ՄՄԻ-ն կիրառվում է զինված հակամարտությունների ժամանակ, որպեսզի մեղմի պատերազմի պատճառած տառապանքը և պաշտպանի հակառակորդի ձեռքին գտնվող անձանց: ՄՄԻ-ի գլխավոր նպատակն է երաշխավորել վիրավոր, հիվանդ և նավաբեկյալ զինվորականների, ռազմագերիների և քաղաքացիական բնակչության հիմնարար իրավունքները: Մարդու իրավունքների մասին օրենքը կիրառվում է խաղաղ ժամանակաշրջանում և պատերազմի օրոք, սակայն վերջինիս հիմնական առաքելությունն է պաշտպանել մարդկանց այն դեպքերում, երբ միջազգայնորեն ճանաչված նրանց քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները խախտվում են պետության կողմից:

Ի՞նչ է ՄՄԻ-ն նախատեսում անչափահաս զինվորների մասով:

Մարդասիրական իրավունքն արգելում է երեխաների մասնակցությունը թշնամական գործողություններին, սակայն անչափահաս զինվորները շարունակում են լուրջ խնդիր ներկայացնել աշխարհի շատ մասերում: Ըստ ՄՄԻ-ի պահանջի՝ արգելվում է հավաքագրել 15 տարեկանից փոքր երեխաներին զինված ուժերում ընդգրկելու նպատակով, և որ պետք է ձեռնարկել «բոլոր հնարավոր միջոցները»՝ ապահովելու, որ մարտերին նրանք ուղղակի կերպով մասնակցություն չունենան: 15-ից 18 տարեկան երեխաներին հավաքագրելիս նախապատվությունը պետք է տրվի առավել ավագ տարիքի անձանց (Արձանագրություն I, Հոդված 77): Դժբախտաբար, թե՛ կամավոր հիմունքներով, թե՛ ստիպողաբար զինվորագրվող երեխաների թիվն աճում է: Հակամարտության գոտիներում բնակվող երեխաները, մասնավորապես նրանք, ովքեր անջատվել են իրենց ընտանիքներից կամ մեկուսացվել են այլ եղանակով, կարող են դառնալ պոտենցիալ հավաքագրվողներ: Երեխաներին հաճախ ստիպում են անդամակցել զինված որևէ խմբավորման կամ դառնալ անչափահաս զինվոր՝ որպես փրկության միջոց:

Ե՞րբ է կիրառվում ՄՄԻ-ն:

ՄՄԻ-ն կիրառվում է պետությունների միջև (միջազգային բնույթի զինված հակամարտություններ) զինված հակամարտությունների (պատերազմների) կամ ներքին զինված հակամարտությունների նկատմամբ, ինչպես օրինակ՝ քաղաքացիական պատերազմները:

ՄՄԻ-ն տարածվու՞մ է արդյոք սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակման վրա:

Թեև 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումը պատճառեց այնպիսի մեծամասշտաբ ավերածություն և մարդկային զոհեր, որը զուգորդվում է պատերազմի հետ, այդուհանդերձ, պարզ չէ, թե արդյոք ՄՄԻ-ն կիրառվում է տվյալ պարագայում: ՄՄԻ-ն կիրառվում է պետությունների միջև (միջազգային բնույթի զինված հակամարտություններ) զինված հակամարտությունների կամ ներքին զինված հակամարտությունների նկատմամբ, ինչպես օրինակ՝ քաղաքացիական պատերազմները: Այն փաստը, որ ինքնուրույն գործող ահաբեկչական ցանցը Նյու Յորքում և Վաշինգտոնում թիրախավորեց քաղաքացիական

օբյեկտներ, կարող է համարվել հրեշավոր հանցագործություն, սակայն ոչ պատերազմական գործողություն, որի պարագայում ՄՄԻ-ն կարող է կիրառվել:

Արդյոք ՄՄԻ-ն ապահովու՞մ է հատուկ պաշտպանություն կանանց համար:

Այո: Չնայած այն հանգամանքին, որ կանայք օգտվում են նույն ընդհանուր իրավական պաշտպանությունից, ինչ տղամարդիկ, Ժնևի կոնվենցիաներով ճանաչվում է այն սկզբունքը, որ «կանանց նկատմամբ հարկ է վերաբերվել նրանց սեռին վայել ամենայն հարգանքով» (ԺԿ I և II, Հոդված 12, ԺԿ III, Հոդված 14): Սա նշանակում է, որ կանայք ապահովվում են լրացուցիչ պաշտպանությամբ՝ ուղղված գենդերային տարբերություններից բխող հատուկ կարիքներին, պատվին և պարկեշտությանը, հղիությանը և ծննդաբերությանը: Դիցուք, կին ռազմագերիները կամ ներկալված կանայք պետք է պահվեն ռազմագերի տղամարդկանցից անջատ շենքերում և գտնվեն այլ կանանց անմիջական հսկողության ներքո: Կանայք պետք է պաշտպանված լինեն «բռնաբարություններից, բռնի պոռնկությունից կամ նրանց բարոյականության նկատմամբ ցանկացած այլ տեսակի ոտնձգությունից» (ԺԿIV, Հոդված 27, ինչպես նաև Արձանագրություն I, Հոդված 75 և 76): Ինչ վերաբերում է օգնության մատակարարումները բաշխելուն՝ «գերապատվությունը տրվում է ծննդաբեր, մայրանալու պատրաստվող և կերակրող կանանց» (Արձանագրություն I, Հոդված 70): Զինված հակամարտությունների ժամանակ կանանց մասով խնդիրներին, ինչպես նաև շատերի կողմից ցուցաբերված տոկունությանը ավելի մանրակրկիտ ծանոթանալու համար տե՛ս «Կանայք, որ առերեսվել են պատերազմին» վերնագրով վերջերս կատարված հետազոտությունը www.womenandwar.org կայքում:

Ինչպե՞ս են պաշտպանված երեխաները ՄՄԻ-ի շրջանակում:

ՄՄԻ-ն արգելում է քաղաքացիական բնակչության դեմ հարձակումները և սահմանում է հատուկ պաշտպանություն երեխաների համար: Քաղաքացիական բնակչությունը պետք է պաշտպանված լինեն սպանությունից, խոշտանգումներից, հաշվեհարդարներից, սեփականության անխտրական ոչնչացումից և պատանդ վերցվելուց: Նրանց պատիվը, ընտանեկան իրավունքները, կրոնական համոզմունքները և սովորույթները պետք է հարգվեն: Զավթող ուժերը (օկուպացրած տերություն) պարտավոր են ապահովել և թույլատրել բավարար սննդի և բժշկական պարագաների անվտանգ տեղափոխումը, ինչպես նաև հիվանդանոցների և անվտանգ գոտիների հիմնումը վիրավորներին, հիվանդներին, զառամյալներին, երեխաներին, ծննդաբեր կանանց և փոքր երեխաներ ունեցող մայրերին պատսպարելու համար: Գոյություն ունեն նաև հատուկ դրույթներ, որոնք ուղղված են ծնողներից առանձնացված երեխաների կարիքներին, հոգեսոցիալական կարիքներին և ընտանիքի անդամների հետ հաղորդակցությանը:

Որբացած կամ իրենց ընտանիքներից անջատված 15 տարեկանից փոքր երեխաները պետք է ապահովվեն ապրուստի միջոցներով: Նրանց պետք է հնարավորություն տրվի հետևել իրենց կրոնական համոզմունքին և պետք է դյուրացնել նրանց կրթությունը:

Արդյո՞ք պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության սպանվելը որևէ կերպ խախտում է ՄՄԻ-ը:

Քաղաքացիական բնակչության պաշտպանությունը ՄՄԻ-ի հիմնական նպատակն է: Համաձայն ԺնևիI V կոնվենցիայի՝ քաղաքացիական բնակչությունը պետք է պաշտպանված լինի սպանությունից և նրանց պետք է թույլատրվի վարել նորմալ կյանք, եթե այս վերջին հանգամանքն իրագործելի է անվտանգության առկա պայմաններում: 1997 թվականի Լրացուցիչ արձանագրություն I-ը շարադրում է քաղաքացիական բնակչության պաշտպանության լրացուցիչ մանրամասները միջազգային զինված հակամարտությունների ժամանակ: Թեև Միացյալ Նահանգները ստորագրել են Արձանագրություն I-ը, այդուհանդերձ, այն դեռ վավերացված չէ: Նույնիսկ այս պարագայում Միացյալ Նահանգները նշել է, որ կկատարի արձանագրության դրույթները, որոնք շատերի կողմից համարվում են հարյուրամյակների ընթացքում ձևավորված և լայնորեն ընդունված սովորութային իրավունքի կոդիֆիկացիա:

Տարբերակման սկզբունքի հիմնական կանոնը սահմանվում է Արձանագրություն I-ի 48-րդ Հոդվածում, համաձայն որի. «Քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ հարգանքի և դրանց պաշտպանության ապահովման համար, կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը պետք է մշտապես տարբերություն դնեն քաղաքացիական բնակչության և ռազմական գործողությունների մասնակիցների միջև, ինչպես նաև քաղաքացիական օբյեկտների և ռազմական թիրախների միջև և դրան համապատասխան իրենց գործողություններն ուղղեն միայն ռազմական օբյեկտների դեմ»: Ի լրումն ուղիղ հարձակումներն արգելելուն՝ ՄՄԻ-ն արգելում է նաև անխտրական բնույթի հարձակումները քաղաքացիական բնակչության ուղղությամբ: Այսպիսի իրավիճակ կարող է ի հայտ գալ երբ, օրինակ, զինված ուժերը հարձակման են ենթարկում ռազմական որևէ թիրախ՝ առանց հաշվի առնելու քաղաքացիական բնակչությանը սպառնացող չափազանց ծանր հետևանքները (Արձանագրություն I, Հոդված 41):

Այնուամենայնիվ, պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության շրջանում մահացության դեպքերը միշտ չէ, որ անօրինական են: ՄՄԻ-ն չի արգելում զինված հակամարտությունները, այլ փորձում է հավասարակշռություն մտցնել պետության՝ լեգիտիմ ռազմական թիրախների վրա հարձակում գործելու ճանաչված օրինական իրավունքի և քաղաքացիական բնակչության՝ թշնամական գործողությունների հետևանքներից պաշտպանված լինելու իրավունքի միջև: Այլ կերպ ասած՝ հաշվի առնելով պատերազմի էությունը, ՄՄԻ-ն ենթադրում է, որ անհնար է խուսափել որոշակի «անուղղակի վնաս»-ից, որը որոշ դեպքերում, դժբախտաբար, կարող է ներառել զոհեր քաղաքացիական բնակչության շրջանում:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.1
Բախումների կարգավորման վեց քայլից բաղկացած մոտեցում

1. Ա կողմի կարիքները ա) բ) գ) դ)	1. Բ կողմի կարիքները ա) բ) գ) դ)
2. Խնդրի սահմանում	
3. Գաղափարներ լուծման ուղղությամբ ա) բ) գ) դ)	
4. Գնահատեք լուծումներն Ա կողմի համար ա) բ) գ) դ)	4. Գնահատեք լուծումները Բ կողմի համար ա) բ) գ) դ)
5. Ո՞րն է լավագույն լուծումը:	
6. Որոշել, թե երբ և ինչպես պետք է իրականացվի գնահատված լուծումը:	

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.2
Բախումների սցենարներ

Բախում 1

Երկու հարևան տարաձայնություն ունեն իրենց սեփականությունը բաժանող ցանկապատի վերաբերյալ: Հարևաններից մեկը կամենում է ցանկապատը փոխարինել նորով, քանի որ նրա կարծիքով հին ցանկապատն այլևս լավ վիճակում չէ: Նա ակնկալում է, որ իր հարևանը կվճարի նոր ցանկապատի արժեքի կեսը: Մյուս հարևանը համամիտ է, որ ցանկապատը իսկապես լավ վիճակում չէ, սակայն չի ցանկանում գումար ծախսել նորը ձեռք բերելու համար: Նա կարծում է, որ ներկայիս ցանկապատը, թեև լավ տեսք չունի, առնվազն կարողանում է հարևանի շանը իր այգուց հեռու պահել: Ավելին, նրան տհաճություն է պատճառում այն, որ իր հարևանը մշտապես ցուցադրում է իր նոր ու թանկարժեք իրերը:

Բախում 2.

Հայրն ու մայրը անհամաձայնություն ունեն այն առումով, թե ինչպես արձագանքեն, երբ իրենց երկու տարեկան երեխան չափազանց շատ է աղմկում իրենց բնակարանում: Հայրը կարծում է, որ իր երեխան պետք է սովորի իրեն ճիշտ պահել, և որ այս վարքագծի յուրացումը պետք է սկսել հմարավորինս շուտ: Ավելին, ազատ ժամանակ նա սիրում է վայելել խաղաղություն և հանդարտություն, քանի որ իր աշխատանքը շատ հոգնեցուցիչ է: Մայրը կարծում է, որ չի կարելի երկու տարեկան երեխային մշտապես արգելել խաղալ կամ բղավել, քանի որ այն բացասաբար կանդրադառնա երեխայի վրա և կվնասի վերջինիս զարգացմանը:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.3
Մարդու իրավունքներին հակասող հինգ իրավիճակ

Իրավիճակ 1.

Մաքսն ութ տարեկան տղա է, ով վթարի հետևանքով ծանր վիրավորվել է և հիվանդանոցում անհապաղ արյան փոխներարկման կարիք ունի: Այդուհանդերձ, նրա հայրը հիվանդանոցի անձնակազմին արգելում է դա իրականացնել կրոնական պատճառներով: Մաքսի մայրը և բժիշկները ցանկանում են փրկել նրա կյանքը:

Իրավիճակ 2.

Հիվանդանոցի անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում սահմանափակ թվով անձնակազմ է աշխատում: Երեկոյան հիվանդների հոսքը հիվանդանոց շատ մեծ է և մնացել է միայն մեկ ազատ հիվանդասենյակ, որտեղ միայն մեկ մարդ կարող է անհետաձգելի բուժօգնություն ստանալ: Քանի որ երկու հոգու կյանքին դեռ վտանգ է սպառնում, բժիշկները ստիպված են որոշում կայացնել՝ բուժօգնություն ցուցաբերել փոքր երեխային, թե հաջողակ գործարարին:

Իրավիճակ 3.

Գասը կրոնական ուղղվածություն ունեցող քաղաքական կուսակցության մեծ հարգանք վայելող անդամ է, և այդ կուսակցությունը առանձնահատուկ շեշտադրում է ընտանեկան արժեքները: Մի լրագրող, ով այցելում է կուսակցության գլխամաս, պատահաբար հայտնաբերում է մի շարք անձնական բնույթի նամակներ X-ից, որի հիման վրա նա կարող է վստահորեն եզրակացնել, որ Գասը արտաամուսնական կապի մեջ է: Լրագրողը հրապարակում է այդ պատմությունը:

Իրավիճակ 4.

Յուտչյուն ապրում է Երրորդ աշխարհի երկրներից մեկում: Նա աղքատ է և բացառապես ի վիճակի չէ հոգալ իր հիմնական կարիքները: Նա ուսում ստանալու ցանկություն ունի, սակայն չի կարողանում հայթայթել անհրաժեշտ միջոցներ: Իր երկիրը ի զորու չէ իրեն անհրաժեշտ միջոցներ տրամադրել, քանի որ գտնվում է տնտեսապես ծանր վիճակում և ստիպված է առկա բոլոր ռեսուրսներն ուղղել բնակչության հիմնական կարիքները հոգալուն:

Իրավիճակ 5.

Տեղական իշխանությունները ծրագրում են նոր դպրոց կառուցել մի հողատարածքում, որն այն հազվագյուտ վայրերից է, որտեղ երեխաները դեռ կարողանում են խաղալ:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 4.4
Արդյոք ընդունելի՞ է բռնության կիրառումը որոշակի իրավիճակներում:

Իրավիճակ 1.

Գլոբալացման երևույթի դեմ ցույցի ժամանակ մարդկանց մի փոքր խումբ սկսում է քարեր նետել հայտնի անդրազգային մի ընկերության գլխամասային շենքի ուղղությամբ: Ցույցի վայրում գտնվող ոստիկանական ուժերը տեսնելով, թե ինչ է կատարվում, փորձում են ձերբակալել այս քայլի կազմակերպիչներին: Միջամտության ընթացքում քար նետողները առևանգում են ոստիկաններից մեկին և ուժեղ ծեծի ենթարկում:

Հարցեր՝

1. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե ոստիկանական ուժերն իրենց զենքերով կրակ բացեին քար նետող մարդկանց վրա:
2. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե ոստիկանական ուժերը միջամտեին՝ կիրառելով գնդացիրներ: (Նման միջամտության դեպքում ամեն ինչ ավելի արագ կկատարվեր, սակայն դժբախտ դեպքերի թիվը միանշանակ ավելի մեծ կլիներ:)
3. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե ոստիկանական ուժերը սպասեին այնքան, մինչև հնարավորություն ստեղծվեր միջամտելու ջրցան մեքենաների օգնությամբ:
4. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե ոստիկանական ուժերը չմիջամտեին ուժ կիրառելու միջոցով, որպեսզի խուսափեին բախումը սրացնելուց:

Իրավիճակ 2.

X երկիրը պատերազմ է հայտարարում Y երկրին, քանի որ Y երկիրը բացահայտորեն պաշտպանում և նույնիսկ ֆինանսավորում է սեփական տարածքից X երկրի դեմ գործող ապստամբ խմբերին: X երկրի հետախուզական ստորաբաժանումը հայտնաբերում է այն գյուղը, որտեղ մի խումբ լավ պատրաստված և զինված ապստամբ ուժեր են տեղակայված և պարզում է, որ նրանք խոշոր ռմբակոծություն են նախապատրաստում՝ թիրախավորելով արդյունաբերական կարևոր օբյեկտ:

Հարցեր՝

1. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե X երկիրը ծանր ռմբակոծության ենթարկեր այդ գյուղը՝ գիտակցելով, որ մեծ մասը կզոհվեն՝ ներառյալ տեղացի բնակիչները:
2. Արդյոք ճի՞շտ կլիներ, եթե նույն գործողությունն իրականացվեր այն բանից հետո, երբ ապստամբներին հանձնվելու հստակ պահանջ, իսկ տեղացի բնակչությանը գյուղը լքելու և տարածքային մարզադահլիճում հավաքվելու հստակ նախազգուշացում ներկայացվեր, որտեղից նրանց վերադառնալու թույլտվություն կտրվեր զենքի առկայությունը ստուգելուց հետո:
3. Արդյո՞ք ընդունելի կլիներ, եթե միջամտությունը տեղի ունենար առանց ֆիզիկական ուժ կիրառելու: Ի՞նչ այլընտրանքներ կարող եք առաջարկել:

Իրավիճակ 3.

Պարոն X-ը, երիտասարդ մի տղամարդ, ով աշխատում է տարածքային հիվանդանոցերից մեկում՝ որպես տեխնիկական օգնական, միշտ ծեծի է ենթարկում իր կնոջը, երբ խմիչքի ազդեցության տակ վերադառնում է տուն: Մի անգամ նրա կինը ոստիկանությանը հայտնեց ամուսնու կողմից ծեծի ենթարկվելու մասին, որոնք երբեմն լուրջ բնույթի են լինում: Հարևանի կինը, ով պատահաբար տեղեկացել էր իրավիճակի մասին, այժմ արդեն պատկերացնում է, թե ինչ է կատարվում հարևանի տանը, երբ լսում է նրանց վեճի և բղավոցների ձայները:

Հարցեր՝

1. Արդյոք հարևանի կինը այսպիսի դեպքերում պե՞տք է տեղեկացնի ոստիկանությանը, թե՞ դա կհամարվի հարևանի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի անընդունելի խախտում:
2. Այսպիսի հանգամանքներում արդյոք ոստիկանությունը պե՞տք է միջամտի տեղեկություն ստանալու դեպքում:

Իրավիճակ 4.

13-ամյա Լեոն թուլակազմ և բավականին փոքրամարմին տղա է: Իրենից մեծահասակ մի քանի տղաներ նրան հաճախ ահաբեկում են, երբ նա խաղում է իրենց թաղամասի խաղահրապարակում: Այս անգամ նա արձագանքում է՝ ասելով, որ նրանք չպետք է ամեն անգամ իրեն անհանգստություն պատճառեն և որ նրանք իրենց պահում են անկիրթ, նախնադարյան մարդկանց նման: Հետևանքը լինում է այն, որ մեծահասակ տղաները սկսում են նրան դաժանորեն ծեծել: Լեոյի ընկերը տեսնում է այս ամենը խաղահրապարակ մտնելիս: Մի քանի տարեց մարդիկ նույնպես կատարվածի ականատեսն են լինում, երբ խանութից սնունդ գնելուց հետո խաղահրապարակի միջով վերադառնում են տուն:

Հարցեր՝

1. Արդյո՞ք Լեոյի ընկերը պետք է միջամտի այս դեպքում: Ինչպե՞ս:
2. Արդյո՞ք տարեց մարդիկ պետք է միջամտեն: Ինչպե՞ս:
3. Ինչպիսի՞ այլ լուծումներ կառաջակեք:

Բաժին 2.

Պատասխանատվություն

Գլուխ 5.

Իրավունքներ, ազատություններ և պարտականություններ
Որո՞նք են մեր իրավունքները և ինչպե՞ս են դրանք պաշտպանված:

Գլուխ 6.

Պատասխանատվություն
Ինչպիսի՞ պարտականություններ են կրում մարդիկ:

ԳԼՈՒԽ 5.
Իրավունքներ, ազատություններ և պարտականություններ

Որո՞նք են մեր իրավունքները և ինչպե՞ս են դրանք պաշտպանված:



5.1. Ցանկություններ, հիմնական կարիքներ, մարդկային արժանապատվություն և մարդու իրավունքներ

Մարդու իրավունքներն արդյոք թու՞յլ են տալիս ինձ անել այն ամենն, ինչ կցանկանամ:

5.2. Ինչպես բացահայտել մարդու իրավունքների խախտումները:

Մարդու ո՞ր իրավունքն է խախտված այս նկարում:

5.3. Իրավունքներ և պարտականություններ

Ինչպ՞ս կարող են իրավունքները գոյություն ունենալ առանց պարտականությունների:

5.4. Թեստ մարդու իրավունքների վերաբերյալ

Ո՞րն է ճիշտ: Որն է անհատի՝ մարդու իրավունքը:

ԳԼՈՒԽ 5. Իրավունքներ, ազատություններ և պարտականություններ

Որո՞նք են մեր իրավունքները և ինչպե՞ս են դրանք պաշտպանված:

Մարդու իրավունքները, մի կողմից, կապված են մարդկանց զարգացման հետ, այն է՝ ինչպես են նրանք կարողանում իրականացնել իրենց ողջ ներուժը իրենց համաքաղաքացիների հետ հարաբերվելիս: Մյուս կողմից, մարդու իրավունքները սահմանում են պետության պարտականությունները անհատի նկատմամբ: Մարդու իրավունքների մասին կարևոր փաստաթղթերից են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան: Ավանդաբար, մարդու իրավունքները դասակարգվում են մի քանի խմբերի՝ քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային: Այս խմբերի գոյությունը հաճախ կապվում է մարդու իրավունքների պատմության մեջ այս իրավունքների զարգացման փուլերի հետ, որտեղ քաղաքացիական և քաղաքական իրավունքները համարվում են «առաջին սերնդի իրավունքներ», որոնց հաջորդում են սոցիալական և տնտեսական իրավունքները՝«երկրորդ սերնդի իրավունքներ», իսկ մշակութային կամ զարգացման իրավունքները դասվում են «երրորդ սերնդի» իրավունքների շարքին: Անկախ իրավունքների դասակարգման կարևորությունից, ԺՔԿ/ՄԻԿ-ը ձգտում է խթանել մարդու իրավունքների մասին ընդգրկուն ըմբռնում: Այն հավասարապես կարևորում է թե՛ քաղաքացիական և քաղաքական, թե՛ սոցիալական և տնտեսական, և թե՛ մշակութային դասակարգումները: Այսպիսով, ԺՔԿ/ՄԻԿ-ը ձգտում է հակակշռել անցյալի այն միտումը, թե որոշ իրավունքներ առավել կարևոր են մյուսների համեմատությամբ: Թեև մարդու իրավունքներն ավանդաբար կապվել են պետության հետ և պետության ու անհատի փոխհարաբերության հետ, ԺՔԿ/ՄԻԿ-ը հիմնականում շեշտադրում է մարդկանց խմբերի կամ ժողովուրդների իրավունքները: Այս գաղափարները ԺՔԿ/ՄԻԿ-ի մեջ ներառելու փորձերը կարևոր նշանակություն ունեն նշված հասկացության, ինչպես նաև տեղական, ազգային և տարածաշրջանային համայնքների զարգացման գործում:[19]

Մարդու իրավունքները պարունակում են երեք բաղադրիչ՝ իրավատերը, իրավունքի բովանդակությունը (պահանջներ, որ սուբյեկտը իրավունք ունի ներկայացնելու), և պարտականություն կրողը (անձ կամ հաստատություն, որը պետք է արձագանքի այդ պահանջներին): Պարտականությունները սովորաբար գնահատվում են երեք մակարդակով՝

- Հարգել նշանակում է ձեռնպահ մնալ ուղղակի կամ անուղղակի կերպով անհատներին իրավունքից զրկելուց, այդ թվում նաև ձեռնպահ մնալ սահմանակարգային (ինստիտուցիոնալ) այնպիսի համակարգ հիմնելուց, որը կզրկի մարդկանց իրենց իրավունքներից կամ այլ անձանց կդրդի զրկել մարդկանց իրենց իրավունքներից:
- Պաշտպանել նշանակում է կենսագործել այդ հարգանքը, կանխել անհատի՝ մյուսին իրավունքից զրկելու փորձը՝ անկախ այն բանից, թե այդ փորձն անողը պետական պաշտոնյա է, միջազգային կառույց, մասնավոր ընկերություն, համայնքի ղեկավար, արդարադատության աչալուրջ դիտորդ, կամ ընտանիքի անդամ:
- Իրականացնել նշանակում է օգնություն ցուցաբերել իրավունքից զրկված անձանց, ներառյալ այն անձինք, ում նկատմամբ գոյություն ունի հատուկ պատասխանատվություն՝ մարդիկ, ովքեր զրկվել են իրավունքից, քանի որ հարգելու և վերջիններիս իրավունքները պաշտպանելու պարտականությունները չեն կատարվել, ինչպես նաև բնական աղետներից տուժածները: Այսպիսի օժանդակությունը ներառում է օրենսդրական, բյուջետային, դատական և այլ միջոցների կիրառում ապահովելու համար հնարավորինս լավագույն քաղաքականության միջավայր իրավունքների պաշտպանության համար:[20]

19. Վերցված՝ «Ժողովրդավարական քաղաքացիության կրթության մասնագիտական տերմինների բառարան»-ից, Կարլն Օշի, Եվրոպայի խորհուրդ, DGIV/EDU/CIT (2003թ.) 29:
20. Վերցված՝ «Պարտականություններ առանց սահմանների: Մարդու իրավունքներ և համընդհանուր սոցիալական արդարություն» նյութից, Մարդու իրավունքների քաղաքականության հարցերով միջազգային խորհուրդ:

Մտքի, կարծիքի և արտահայտվելու ազատությունները, կրոնական համոզմունքի և ավանդույթի, ինչպես նաև պետության շրջանակում տեղաշարժի ու խաղաղ հավաքների և միավորման ազատությունները ներառված են այն ազատությունների շարքում, որոնք պաշտպանված են որպես քաղաքացիական իրավունքներ: Անհատի գաղտնիության, ընտանեկան կյանքի և օրենքի առջև հավասարության իրավունքները նույնպես պաշտպանված են քաղաքացիական իրավունքով:[21]

Պարտականությունները մարդու իրավունքների տրամաբանական հետևանք են: Յուրաքանչյուր իրավունք, պաշտպանված լինելու նպատակով, նախատեսում է համապատասխան պարտականությունների առկայություն քաղաքացիների և պետության մասով: Յուրաքանչյուր անհատ կրում է բարոյական պարտականություն այլ անձի անձնական արժանապատվությունը չխախտելու մասով: Կառավարությունները, անդամակցելով միջազգային համաձայնագրերին և պարտավորված լինելով իրենց երկրի սեփական սահմանադրությամբ, ունեն ոչ միայն բարոյական պարտավորություններ, այլև իրավական պարտականություններ:

ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթություն

այս դասերի արդյունքում աշակերտները.

- առավել լավ կըմբռնեն մարդու իրավունքների բնույթը. այն նախադրյալները, որոնք հնարավորություն են ընձեռում մարդկային յուրաքանչյուր էակին ապրել արժանապատվությամբ,
- կընդլայնեն միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների մասին իրենց գիտելիքներն ու կարողությունները,
- կզարգացնեն մարդու իրավունքների խախտման դեպքերը ճանաչելու կարողությունը,
- կընդլայնեն ընկալումն այն մասին, թե ինչպես կարող են նպաստել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի բարելավմանը,
- կբարձրացնեն իրազեկվածությունը մարդու իրավունքների հետ կապված պարտականությունների՝ պետության և տարբեր հաստատությունների պարտականությունների, ինչպես նաև իրենց սեփական բարոյական պարտականությունների մասին:

21. *Նույնը*

ԳԼՈՒԽ 5. Իրավունքներ, ազատություններ և պարտականություններ

Որո՞նք են մեր իրավունքները և ինչպե՞ս են դրանք պաշտպանված:

Դասի վերնագիրը	Նպատակները	Աշակերտական առաջադրանքներ	Ռեսուրսներ	Մեթոդ
Դաս 1: Ցանկություններ, հիմնական կարիքներ, մարդկային արժանապատվություն և մարդու իրավունքներ	Աշակերտները կարողանում են ցույց տալ, որ մարդու իրավունքները հանդիսանում են յուրաքանչյուրի կողմից արժանապատիվ կյանք վարելու նախադրյալ:	Աշակերտները կապ են ստեղծում իրենց ցանկությունների և հիմնական կարիքների ու մարդու իրավունքների միջև:	Աշակերտների համար նախատեսված նյութեր 5.1: Աշակերտների համար նախատեսված նյութեր 5.2 (ուսուցիչները պետք է հաշվի առնեն, որ աշակերտների համար նախատեսված այս նյութերը օգտագործվելու են գրքի այս գլխի դասավանդման ողջ ընթացքում, ուստիև անհրաժեշտ կլինեն մյուս դասերին):	Խմբային աշխատանք, պլենար աշխատանք Քննադատական մտածողություն:
Դաս 2. Մարդու իրավունքների խախտումները բացահայտելը	Աշակերտները կարողանում են նշելմարդու իրավունքների խախտման դեպքերը:	Աշակերտները ուսումնասիրում են մարդու իրավունքների խախտման դեպքեր:	Աշակերտների համար նախատեսված նյութեր 5.3: Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.2:	Աշխատանք զույգերով կամ խմբով: Պլենար քննարկում:
Դաս 3. Իրավունքներ և պարտականություններ	Աշակերտները հասկանում են, թե ինչպես կարող են նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը: Աշակերտները հասկանում են, որ մարդու իրավունքները կապված են պարտականությունների՝ պետության և դերը այդ գործընթացում:	Աշակերտները նշում են մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պարտականությունների մասին, ներառյալ իրենց իսկ անձնական ներդրումը:	Թուղթ և գրիչ Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.4: Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.2:	Աշխատանք զույգերով կամ խմբով: Քննադատական մտածողություն:
Դաս 4. Թեստ մարդու իրավունքների վերաբերյալ	Աշակերտները տեղեկանում են միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների մասին:	Աշակերտները պատասխանում են բազմակի ընտրության հարցերի և քննարկում իրենց պատասխաններից արված եզրակացությունները:	Քարտեր յուրաքանչյուր աշակերտի համար՝ դարձերեսին պատասխանների առկայությամբ (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.5):	Բազմակի ընտրության հարցեր

Դաս 1.
Ցանկություններ, հիմնական կարիքներ, մարդկային արժանապատվություն և մարդու իրավունքներ:
Մարդու իրավունքներն արդյոք թու՞յլ են տալիս ինձ անել այն ամենն, ինչ ցանկանում եմ:

Ուսուցման նպատակը	Աշակերտները կկարողանան ցույց տալ, որ մարդու իրավունքները անհրաժեշտ նախադրյալներ են յուրաքանչյուրի կողմից արժանապատիվ կյանք վարելու համար:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները պետք է կարողանան կապ ստեղծել իրենց ցանկությունների և (իրենց) հիմնական կարիքների ու մարդու իրավունքների միջև:
Ռեսուրսներ	Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.1 (նյութի մեկական օրինակ չորս կամ հինգ աշակերտից բաղկացած խմբերից յուրաքանչյուրին): Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.2 (նյութի մեկական օրինակ չորս կամ հինգ աշակերտից բաղկացած խմբերից յուրաքանչյուրին):
Մեթոդ	Խմբային աշխատանք, պլենար աշխատանք Քննադատական մտածողություն:

Հասկացություններ

Կարևոր է ունակ լինել տարբերել **ցանկությունը հիմնական կարիքից**: Մարդկանց հիմնական կարիքները անհրաժեշտ է բավարարել, որպեսզի նրանց հնարավորություն տրվի արժանապատիվ կյանք վարել, կարող են համարվել այն հիմքը, որի վրա ձևավորվել են մարդու իրավունքները:

Այս դասի մեջ, որպես լրացուցիչ աշխատանք, կարելի է նախատեսել, որ պատրաստվեն պաստառներ և որ տեղ տրվի կոնցեպտուալ մտածողությանը:

Դասի ընթացքը

Ներկայացնելով դասը՝ ուսուցիչը տեղեկացնում է աշակերտներին, թե ինչպես է այն կազմակերպվելու, սակայն հիմնական թեմայի մասին մանրամասներ ներկայացնելու կարիք չկա: Աշակերտները սկսում են դասը իրենք իրենց և մեկը մյուսին հարցեր տալով, որոնք վերաբերում են իրենց սեփական ցանկություններին և կարիքներին. մի փոքր անց նրանք դասի ընթացքում կպարզեն, որ այդ ցանկությունների մեծ մասը համապատասխանում է մարդու իրավունքներին: Դասին ծանոթանալուց հետո (մեկ-երկու րոպեից ոչ ավել) աշակերտները բաժանվում են չորս կամ հինգ հոգուց կազմված փոքր խմբերի և ստանում են երկու փուլից բաղկացած առաջադրանք: Ուսուցիչը նախ բացատրում է 1-ին առաջանդրանքը, այնուհետև, առաջադրանքն ավարտելուց հետո, խմբերին անհատապես բացատրում է երկրորդ քայլը: Այս կերպով կարելի է բավարարել անհատական ուսուցման ընթացքի պահանջները:

Առաջադրանք 1

– Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.1, Ցանկություններ, կարիքներ և իրավունքներ: Խմբերը կազմում են իրենց «նյութական» ցանկությունների ցանկը (օրինակ՝ «համեղ կերակուր») աշխատանքային թղթի ձախակողմյան սյունակում և ավելացնում են առնվազն երեք «ոչ նյութական» ցանկություն (օրինակ՝ «սիրված լինել»): Այնուհետև նրանք մտածում են այդ ցանկություններին համապատասխան կարիքների մասին և լրացնում մեջտեղի սյունակում:

Առաջադրանք 2

– Ուսուցիչն այնուհետև 1-ին առաջադրանքն ավարտած խմբերին տալիս է աշակերտների համար նախատեսված 5.2 բաշխման նյութերի՝ մարդու իրավունքների ցանկի օրինակը, և հանձնարարում վերջին սյունակում գրի առնել համապատասխան իրավունքը (օրինակ՝ «սնվելու իրավունք» կամ «խտրականությունից ազատ լինելու իրավունք»):

Առաջադրանք 3

– Առաջադրանքը ժամանակից շուտ ավարտած խմբերը պետք է սկսեն մտածել մարդու իրավունքների մասին պաստառ պատրաստելու մասին՝ ընտրելով կարիքներից մեկը և դրան համապատասխան իրավունքը: Նրանք պետք է քննարկեն իրենց հասկացության բովանդակությունը, և ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում՝ պատրաստեն պաստառի նախագիծ:

Երբ խմբային աշխատանքներն ավարտված են, ուսուցիչը կարող է խմբերի գաղափարները գրի առնել գրատախտակին: Նա գծում է երեք սյունակից բաղկացած աղյուսակ և հանձնարարում յուրաքանչյուր խմբից մեկական ներկայացուցչի ավելացնել մեկ ցանկություն, կարիք և դրանց համապատասխան իրավունքը: Այս ամենը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև գրատախտակին գրված լինի թվով մինչև տասը ցանկություն, կարիք և իրավունք (հնարավորության դեպքում օգտագործել թղթե գրատախտակ, քանի որ դրա թղթերը կարելի կլինի փակցնել դասարանի պատերին՝ հիշեցնելու համար խմբերին իրենց քննարկումների մասին):

Ուսուցիչն այժմ վարում է կարճատև պլենար քննարկում հետևյալ գաղափարների հիման վրա.

– «Դուք պարզել եք, որ ձեր ցանկությունները և կարիքները համապատասխանում են Մարդու Իրավունքների մասին Կոնվենցիայում արտահայտված մտքերին: Այստեղ անհրաժե՛շտ է որոշակի բացատրություն»:

– «Կոնվենցիայով ամրագրված որոշ իրավունքների շուրջ մենք չենք մտածել: Հնարավոր է, որ դրանք այնքան էլ կարևոր չեն, կամ դրանց վերաբերյալ շարադրանքը կարող է տրված լինել մեկ այլ իրավունքի շրջանակում: Ո՞րն է ձեր տեսակետը»:

– «Ուշադրություն դարձրեք մարդու իրավունքների այս ցանկին: Երբ դուք մտածում եք այն մասին, թե ինչի կարիք ունեք դուք, կամ ինչի կարիք ունեն այլ տարածաշրջաններում,

երկրներում կամ մայրցամաքներում ապրող մարդիկ արժանապատիվ կյանք վարելու համար, ո՞ր բաղադրիչն է բացակայում: Ի՞նչ իրավունք կավելացնեիք դուք մարդու իրավունքների ցանկին»:

Քննարկումն ավարտելու նպատակով ուսուցիչը տեղեկացնում է աշակերտներին, որ մարդու իրավունքների հիմնական ուղղության շուրջ համաշխարհային բանավեճ է ընթանում: Եզրակացություններից մեկը հետևյալն է. «Մարդու իրավունքները հարկավոր են, որպեսզի բոլոր մարդիկ արժանապատիվ ապրելու հնարավորություն ունենան»: Այնուհետև, ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին մտածել այլընտրանքային եզրակացությունների շուրջ: Սա կարող է տնային աշխատանքի մի մասը լինել: Հնարավորության դեպքում, հաջորդող մի քանի օրերի ընթացքում աշակերտները պետք է գրի առնեն իրենց գաղափարները պատին փակցված թղթերի վրա: Այս եղանակը հնարավորություն կտա աշակերտներին շարունակաբար մտածել թեմայի շուրջ:

Որպես լրացուցիչ առաջադրանք՝ աշակերտներին կարելի է հանձնարարել մարդու իրավունքների թեմայով պաստառ պատրաստել՝ օգտագործելով թերթերից և ամսագրերից կտրած հատվածներ, կամ իրենց կողմից պատրաստված նկարները և գծագրերը: Այս պաստառները կարող են օգտագործվել դասարանի ձևավորման կամ ցուցահանդեսի կազմակերպման նպատակով:

Դասի ավարտին ուսուցիչը հակիրճ ամփոփում է արտահայտվածը մտքերը և դասի նպատակները: Նա կարող է նույնիսկ բացատրել իր կողմից կիրառվող ինդուկտիվ հայեցակարգի դիդակտիկ սկզբունքը, այն է՝ սկսել դասը անձնական փորձի և գաղափարների քննարկմամբ և ավարտել՝ հասկացությունը կամ տեսությունը բացատրելով:

Դաս 2.
Մարդու իրավունքների խախտումները բացահայտելը
Մարդու ո՞ր իրավունքն է խախտված այստեղ:

Ուսուցման նպատակը	Աշակերտները կարողանում են նշել մարդու իրավունքների խախտման իրավիճակները:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները ուսումնասիրում են մարդու իրավունքների խախտման իրավիճակներ:
Ռեսուրսներ	Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.3 աշակերտական յուրաքանչյուր զույգի համար: Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.2 աշակերտական յուրաքանչյուր զույգի համար:
Մեթոդներ	Աշխատանք զույգերով կամ խմբով: Պլենար քննարկում:

Տեղեկատվական անկյուն

Մարդու իրավունքների խախտումներ և դրանց հանդեպ ոտնձգություններ տեղի են ունենում ամենուրեք և ամեն օր: Անցյալից և ներկայից իրական դեպքեր ուսումնասիրելով՝ աշակերտերն առավել հստակ և ճիշտ պատկերացում են կազմում մարդու իրավունքների մասին:

Դասի ընթացքը

Դասը մեկնարկում է նախորդ դասի առաջադրանքների և արդյունքների քննարկմամբ: Ներկայացվում են պաստառները և կատարվում է եզրահանգումների ցանկերի համեմատություն: Հնարավորության դեպքում առաջարկությունները գրի են առնվում առանձին թերթիկների վրա և պաստառների հետ միասին փակցվում դասարանի պատերին:

Աշակերտները այժմ զույգեր են կազմում: Զույգերից յուրաքանչյուրին տրվում է աշակերտների համար նախատեսված 5.3 բշխման նյութերի՝ մարդու իրավունքների խախտումների օրինակը, և 5.2 բաշխման նյութերի՝ մարդու իրավունքների ցանկի օրինակը:

Այնուհետև մարդու իրավունքների խախտման դեպքերի ցանկը բաժանվում է զույգերի միջև, օրինակ՝ 1-ին զույգին կարելի է տալ ա-ից դ կետերը, 2-րդ զույգին՝ ե-ից ժ կետերը և այսպես շարունակ:

Գերադասելի է, որ այդ ցանկն այնպես բաժանվի, որ խախտումների յուրաքանչյուր խումբ ուսումնասիրվի մեկից ավելի զույգերի կողմից:

Աշակերտները ընթերցում և քննարկում են մարդու իրավունքների խախտման օրինակը: Այնուհետև նրանք փորձում են համաձայնության գալ այն հարցի շուրջ, թե իրավունքների ցանկից որ իրավունքն է խախտվել կամ ոտնահարվել, դիցուք՝ «ա» օրինակում խախտված իրավունքը ցանկի 10-րդ իրավունքն է:

Պատասխանները քննարկվում են դասարանում: Միևնույն օրինակի շուրջ մեկից ավել զույգի աշխատանքի առավելությունը կայանում է նրանում, որ տարբեր կարծիքների առկայության պարագայում քննարկումը կարող է ուղղորդվել մի շարք կարճ հարցերի միջոցով, ինչպիսիք են.

– Ինչպե՞ս դուք հանգեցիք այդ կարծիքին:
– Երբ դուք լսեցիք մյուս զույգերի պատասխանները, ձեզ մոտ ցանկություն առաջացա՞վ փոփոխել ձեր սեփական պատասխանը: Եթե այո, ի՞նչը ձեզ դրանում համոզեց: Ինչու՞:

Քննարկման նպատակն է ուսումնասիրել օրինակներից մի քանիսը և աշակերտների պատասխանները, այլ ոչ թե համարել, որ կա միայն մեկ ճիշտ պատասխան:

Լրացուցիչ աշխատանք

Եթե դասի ավարտին դեռ մնացել է որոշ ժամանակ, ուսուցիչը կարող է աշակերտներին հարցնել, թե այս կոնկրետ օրինակներից որն է նրանց առավել ապշեցնում: Տրված օրինակների համատեքստում աշակերտներին կարելի է տալ հետևյալ հարցերը.

– Ինչպե՞ս ձեզ կզգայիք, եթե այդ ամենը ձեզ հետ պատահեր:
– Ինչպե՞ս կարձագանքեիք:
– Ի՞նչ ակնկալիք կունենայիք այլ մարդկանցից:

Նմանատիպ հարցերը կարող են օգնել աշակերտներին բացահայտել, որ այլ մարդիկ ունեն պարտականություններ՝ գործելու ի պաշտպանություն մարդու իրավունքների:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.3
Մարդու իրավունքների խախտման դեպքեր

Ուսուցչի օրինակը՝ լուծումներով (ճիշտ պատասխաններով)

Մարդու իրավունքների խախտում կամ ոտնահարում	**Մարդու խախտված իրավունքը**
ա. Տիկին X-ը, ով տարիներ առաջ ավտովթարի հետևանքով կորցրել էր ամուսնուն և դստերը, չէր կարող ամուսնանալ մեկ այլ տղամարդու հետ քանի դեռ իր հանգուցյալ ամուսնու եղբայրը բացահայտ կերպով չէր տվել իր թույլտվությունը:	10
բ. Բանտապահներն օգտագործում էին շներ, որպեսզի կալանավորներին վախեցնեին և ահաբակեին հարձակման ենթարկելու սպառնալիքով, և մի անգամ նրանք այնպես արեցին, որ շները կծեցին կալանավորներից մեկին:	2
գ. Տեղական գործարանում աշխատակիցները ստիպված են օրեկան առնվազն 10 ժամ աշխատել առանց հանգստի:	21
դ. Ձերբակալվելու պահից ի վեր երեք տղամարդիկ խոչընդոտների էին բախվել փաստաբանների հետ կապվելու հարցում: Շատ դեպքերում փաստաբանները ժամանում էին կալանավայր և նրանց թույլ չէին տալիս տեսակցել տղամարդկանց, տղամարդկանց թույլ չէին տալիս իրենց փաստաբանների հետ համատեղ քննարկում ունենալ, ինչը, փաստորեն, նշանակում էր, որ նրանցից երկուսի համար փաստաբաններն անհասանելի էին:	5
ե. Կինը, կատարելով ճիշտ նույն աշխատանքը և ունենալով նույնքան փորձ, ինչ իր հասակակից տղամարդ գործընկերը, ստանում էր ավելի ցածր աշխատավարձ:	7
զ. X-ը առևանգեց Y-ին և, երեք օր նրան կալանքի տակ պահելուց հետո, կրակեց նրա գլխին, ինչը 3 օր անց դարձավ վերջինիս մահվան պատճառը:	1
է. Ինչ-որ մեկը լուսանկարում է թմրամոլ տիկին X-ին այն պահին, երբ վերջինս դուրս էր գալիս Անանուն թմրամոլների հանդիպումից: Որոշ ժամանակ անց այդ նկարը հրապարակվեց:	9
ը. Կինը, որին ամուսինը վատ վերաբերմունքի էր արժանացնում, կարողացավ ամուսնալուծության համաձայնություն ստանալ միայն այն բանից հետո, երբ տղամարդուն տվեց իրեն պատկանող տունը, մեքենան և ողջ ունեցվածքը: Նրան ոչինչ չմնաց:	11
թ. X-ը, ով տառապում էր կյանքին վտանգ սպառնացող թոքաբորբի տարատեսակով, հիվանդանոցում բուժօգնություն չստացավ, քանի որ մուտք էր գործել այդ երկիր անօրինական ճանապարհով:	18
ժ. X տարածաշրջանի բնակչության յոթանասուն տոկոսին բռնի կերպով տեղահանեցին իրենց տներից և հետագայում արգելեցին նրանց վերադառնալ: Նրանց թույլ չէին տալիս լքել իրենց ճամբարները և գնալ մոտակա դաշտերը, որպեսզի մշակեն իրենց բերքը, և կային շատ ճանապարհներ, որոնցով նրանց արգելվում էր երթևեկել:	12
ի. Աֆրիկայում սևամորթ աֆրիկացիներին գնում էին, օրինակ՝ մեկ շիշ վիսկիով և վաճառում Հյուսիսային Ամերիկայում 1200-ից 1500 ԱՄՆ դոլարով:	3
լ. X երկրի բնակչության համար կենսական նշանակության բոլոր միջոցները՝ բերքը, ջրի պաշարները և եղջերավոր անասունները, միտումնավոր կերպով ոչնչացվել են:	17
խ. X երկրում քաղաքացիները կարող են բանտարկվել առանց որևէ մեղադրանքի ներկայացման:	4
ծ. Օրաթերթի 26-ամյա թղթակիցը վերջերս տեղի ունեցած ընտրարշավը լուսաբանելու համար կյանքով հատուցեց վրեժի հիմքով ենթադրյալ հարձակման արդյունքում:	15
կ. Պարոն X-ը զորակոչվելու ծանուցագիր ստացավ: Նա նամակ գրեց զինվորական զորակոչի վարչությանը՝ հայտնելով համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայության մերժման մասին և չներկայացավ ծառայության: Նա մեղադրվեց չենթարկվելու մեջ, և նրան արգելվեց լքել երկիրը:	14

Մարդու իրավունքների խախտում կամ ոտնահարում	**Մարդու խախտված իրավունքը**
h. X երկրում Ֆալունգուն կրոնին հետևել ցանկացողներին արգելված է հանդիպել:	16
ձ. Էթնիկ մեծամասնությունը որոշում կայացրեց, որ բոլոր նրանք, ովքեր պատկանում են փոքրամասնություններին, ինչպիսիք են հրեաները և գնչուները, պարտավորված են ապրել քաղաքի հատուկ սահմանված վայրերում:	25
ղ. Գյուղում ապրող երեխաները հնարավորություն չունեն հաճախելու տարրական դպրոց, քանի որ խելքին մոտ հեռավորության վրա չկա այդպիսի դպրոց:	19
ճ. X-ը չկարողացավ մասնակցել խորհրդարանական ընտրություններին, քանի որ երկրի կրոնական իշխանությունները հավանություն չտվեցին նրա թեկնածությանը:	23
մ. X-ը չի կարողանում տարածքային հիվանդանոցում բժշկի աշխատանք ստանալ սևամորթ լինելու պատճառով:	20
յ. Որոշ երկրներում չքավոր մարդիկ հնարավորություն չունեն դիմել սննդօգնության կամ բնակարանային ապահովման ծրագրերին, և ոչ էլ մատչելի առողջապահական ծառայություններին:	26
ն. Պարոն X-ը, ում տունը ամբողջությամբ հրդեհվել էր, չէր կարողանում վնասի փոխհատուցման հայց ներկայացնել:	6
շ. 47-ամյա տիկին X-ը, ով հինգ երեխաների մայր է և մշտապես զբաղվել է տնային տնտեսությամբ այդ տանը, զրկվում է ամեն տեսակի սոցիալական ապահովության նպաստից այն պահին, երբ ամուսանալուծվում է:	22
ո. Երկու երեխաների հայր պարոն X-ը բանտարկվել և խոշտանգման էր ենթարկվել X երկրում այն բանի համար, որ գրում էր իշխանությանը քննադատող բանաստեղծություններ: Երկիր A-ում քաղաքական ապաստան ստանալու նրա դիմումը մերժվեց: Նա պնդում էր՝ եթե վերադառնա իր երկիր, ինչը իրեն այժմ պարտադրում են, նրան խոշտանգումների կենթարկեն:	13
չ. Այսպես կոչված գործնական պատճառներով պայմանավորված՝ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց, ինչպիսիք են հաշմանդամի սայլակից օգտվողները, չի թույլատրվում ներկա գտնվել տեղական թատրոնում կազմակերպված մշակութային միջոցառումներին:	24
պ. Երկիր X-ում քաղաքացիություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է բնակվել այդ երկրում 15 տարի, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան առողջության ստուգում անցնել և կատարել անհիմն բարձր վճարումներ փաստաթղթերի ձևակերպման դիմաց: Արդյունքում հազարավոր գնչուներ, ովքեր երկարամյա կապեր ունեն իրենց երկրի հետ, զրկված են քաղաքացիությունից իրենց իսկ հողի վրա:	8

Դաս 3.
Իրավունքներ և պարտականություններ
Ինչպե՞ս կարող են իրավունքները գոյություն ունենալ առանց պարտականությունների:

Ուսուցման նպատակներ	Աշակերտները հասկանում են, թե ինչպես կարող են նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը: Աշակերտները հասկանում են, որ մարդու իրավունքները կապված են պարտականությունների՝ պետության և տարբեր հաստատությունների պարտականությունների, ինչպես նաև իրենց սեփական բարոյական պարտականությունների հետ:
Առաջադրանքներ աշակերտների համար	Աշակերտները նշում են մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պարտականությունների մասին, ներառյալ իրենց իսկ անձնական ներդրումը:
Ռեսուրսներ	Մաքուր թուղթ և գրիչ: Աշակերտների համար նախատեսված 5.4 նյութեր աշակերտների յուրաքանչյուր զույգի համար: Աշակերտների համար նախատեսված նյութեր 5.2 աշակերտական յուրաքանչյուր զույգի համար:
Մեթոդներ	Աշխատանք զույգերով կամ խմբերով: Քննադատական մտածողություն:

Տեղեկատվական անկյուն

Մարդու իրավունքները երբեք չեն պահպանվի, եթե ոչ մի անհատ կամ իշխանություն պատասխանատվություն չստանձնի դրա իրականացման մասով: Թեև այս պարագայում պարտականության հիմնական կրողները իշխանություններն են, սակայն կա խիստ անհրաժեշտություն, որպեսզի այլ մարմիններ կամ անհատներ խթանեն և պաշտպանեն մարդու իրավունքները: Յուրաքանչյուր անհատ ունի բարոյական պարտականություն նպաստելու այն մշակույթին, որում մեր ամենօրյա վարքագիծը ոգեշնչվում է մարդու իրավունքների արժեքներից:

Որպես լրացուցիչ աշխատանք՝ կարելի է ներկայացնել դրական և բացասական իրավունքների թեման կամ հանձնարարել աշխատանք որևէ նախագծի շուրջ:

Դասի ընթացքը

Աշակերտները կազմում են զույգեր: Կարևոր է, որ դասարանում լինեն հավասար թվով զույգեր:

Յուրաքանչյուր զույգին տրվում է մեկ մաքուր թուղթ և գրիչ և հանձնարարվում է գրի առնել երեք կարևոր իրավունք, որ, ըստ իրենց, պետք է ունենային դպրոցում և երեք կարևոր իրավունք, որ իրենց կարծիքով իրենք պետք է ունենային տանը: Օրինակների հնարավոր տարբերակներ են տնային աշխատանքով չծանրաբեռնվելու իրավունքը կամ գրպանի որոշ գումար ստանալու իրավունքը:

Այս հանձնարարությունն ավարտելուց հետո ուսուցիչը յուրաքանչյուր զույգին բաժանում է «Իրավունքներ և պարտականություններ» խորագրով աշակերտների համար նախատեսված 5.4 բաշխման նյութերի օրինակը և «Մարդու իրավունքների ցանկ» խորագրով աշակերտների համար նախատեսված 5.2 բաշխման նյութերի օրինակը: Այնուհետև աշակերտներին հանձնարարվում է ուսումնասիրել մարդու իրավունքների ցանկը և քննարկել, թե որ իրավունքներն են առավելագույնս համապատասխանում այն վեց իրավունքներին, որ իրենք գրել էին իրենց մոտ գտնվող թղթի վրա:

Երբ աշակերտները որոշում են կայացնում, նրանք այդ վեց իրավունքները գրի են առնում աշակերտների համար նախատեսված 5.4 բաշխման նյութերի աղյուսակի առաջին սյունակում: Այս փուլում ուսուցիչը կարող է հարցնել աշակերտներին՝ արդյոք իրենց կողմից թվարկված իրավունքների վերաբերյալ պարզաբանման կարիք ունեն, թե ոչ:

Երբ առաջին սյունակը լրացված է, ուսուցիչը բացատրում է աշակերտներին, որ յուրաքանչյուր իրավունք ենթադրում է համապատասխան պարտականություններ՝ բերելով հետևյալ օրինակը. «Խոսքի ազատության մասով կա սահմանափակում՝ արտահայտված սուտ չխոսելու պարտականությամբ, ինչը կարող է ստորացնել դիմացինին և ոտնահարել վերջինիս արժանապատվության և բարի համբավի իրավունքը»: Ուսուցիչը կարող է նաև բացատրել, որ անձի իրավունքների և այլոց իրավունքները հարգելու իր պարտականությունների միջև հավասարակշռությունը նշանակում է, որ մենք պետք է իրականացնենք մեր իրավունքները որոշակի սահմանափակումների ներքո: Կան շատ իրավիճակներ, որտեղ լինում է բախում տարբեր մարդկանց իրավունքների և պարտականությունների միջև: Դիցուք՝ դասարանում, կրթություն ստանալու իրավունքը կարող է հակասել հանգստի իրավունքին, երբ որոշ աշակերտներ ցանկանում են սովորել, մինչդեռ մնացածը գերադասում է ուղղակի զվարճանալ: Ավելին, դպրոցը պարտականություն է կրում աշակերտներին սովորեցնելու և կրթելու, ինչպես նաև ուսուցիչների համար պատշաճ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքը ապահովելու մասով (օրինակ, որ աղմուկը վերջիններիս աշխատանքային միջավայրում լինի ցածր):

Այժմ ուսուցիչը հանձնարարում է աշակերտների զույգերից յուրաքանչյուրին փոխանակվել իրենց ցուցակներով: Նոր կազմավորված զույգը պետք է այժմ քննարկի պարտականության երկու մակարդակի օրինակներ, որոնք համապատասխանում են մյուս զույգի կողմից թվարկված իրավունքներից յուրաքանչյուրին (տե՛ս օրինակը ստորև):

- **Առաջին մակարդակ.** պարտականություններ, որոնց կատարումը պետք է անհատները ապահովեն, որպեսզի այլոք կարողանան օգտվել այս իրավունքից (սա պետք է գրի առնվի երկրորդ սյունակում):
- **Երկրորդ մակարդակ.** ղեկավարության (ինչպես օրինակ, դպրոցի տնօրինության կամ տեղական իշխանությունների) պարտականություններ (եթե այդպիսիք կան)՝ ապահովելու համար այս իրավունքի իրականացումը: Սա պետք է գրվի երրորդ սյունակում: Օրինակ, յուրաքանչյուր անհատի պարտականությունը՝ հարգելու այլ աշակերտների՝ հուշատետր պահելու իրավունքը, կամ դպրոցի ղեկավարության պարտականությունը՝ չխուզարկել անհատի անձնական իրերը, երբ դրա կարիքը չկա (օրինակ, գողացված հաշվիչ փնտրելիս չօգտվել հուշատետրը կարդալու հնարավորությունից):

Մարդու իրավունք (դպրոցում, տանը)	**Անհատի (բարոյական) պարտականություն**	**Դպրոցի ղեկավարության պարտականություններ, իշխանությունների պարտականություններ, և այլն:**
Գաղտնիության իրավունք	Չկարդալ մեկ այլ անձի հուշատետրը	Չկարդալ աշակերտի հուշատետրը գողության դեպքում անձնական իրերի խուզարկության ժամանակ:

Այնուհետև ուսուցիչը կարող է հանձնարարել յուրաքանչյուր զույգին իրենց ցուցակում ներառված իրավունքը և դրան համապատասխան պարտականությունները հայտնել մնացած դասարանին:

Քանի որ այս դասի շրջանակում շեշտը դրվում է պարտականությունների վրա, ուսուցիչը կարող է ցանկության դեպքում գրատախտակի վրա երկու սյունակ գծել՝ մեկը անհատական պարտականությունների համար, մյուսը՝ իշխանությունների, և երբ աշակերտները բերում են այդ իրավունքների մասին օրինակներ, դրանք կարող են գրի առնվել գրատախտակին: Ուսուցիչը կարող է դասն ավարտել ՝ վերանայելով պարտականությունները և առաջարկելով աշակերտներին մեկնաբանել ցուցակները:

Լրացուցիչ աշխատանք

Եթե կա բավարար ժամանակ, կամ եթե ուսուցիչը ցանկանում է երկարաձգել դասը, որպեսզի բացատրի նաև դրական և ոչ դրական իրավունքների թեման, ինչպես նաև հանձնարարի աշխատանք որևէ նախագծի շուրջ, նա կարող է իրականացնել հետևյալ գործողությունները.

Ուսուցիչը կարող է սկսել՝ բացատրելով, որ երբեմն մարդու իրավունքները բաժանվում են երկու խմբի՝ «նեգատիվ իրավունքների» և «պոզիտիվ իրավունքների»:

«Նեգատիվ» են այն իրավունքները, որոնք արգելք են սահմանում տհաճ երևույթների դեմ (ինչպես օրինակ՝ խոշտանգումների արգելքը): «Պոզիտիվ» են այն իրավունքները, որոնք ուղղակիորեն պահանջում են որևէ մեկից ինչ որ բան կատարել կամ ինչ որ բանի կատարումն ապահովել (ինչպես օրինակ, սնվելու իրավունք. յուրաքանչյուր անձ բավարար սնվելու իրավունք ունի): Եթե «նեգատիվ իրավունքներ»-ով ենթադրվում է, որ մարդիկ չպետք է կատարեն որոշակի գործողություններ, ապա «պոզիտիվ իրավունքներ»-ով ենթադրվում է, որ անհատները և իշխանությունները պետք է որոշակի գործողություններ իրականացնեն՝ ապահովելու համար այդ իրավունքները:

Ուսուցիչը նաև բացատրում է, որ մարդու իրավունքների գերակշիռ մասն ունի թե՛ դրական, թե՛ բացասական կողմ: Օրինակ, խոշտանգման չենթարկվելու իրավունքը նշանակում է, որ իշխանությունները չպետք է դաժան վերաբերմունքի արժանացնեն կալանավորված անձանց, և նաև այն, որ իշխանությունները պետք է սրա վերաբերյալ հստակ հրահանգներ տան իրենց ենթակա ոստիկանական ուժերին:

Աշակերտներին հանձնարարվում է կրկին բացել մարդու իրավունքների իրենց ցանկը և ընտրել դրանցից երեքը: Այնուհետև նրանք պետք է բերեն իրենց կյանքում հանդիպած պոզիտիվ կամ նեգատիվ գործողությունների օրինակներ՝ ներկայացնելու իրենց սեփական բարոյական պարտականությունները: Այնուհետև նրանք պետք է այլ օրինակներ բերեն՝ այս անգամ մատնանշելու դպրոցի տնօրինության կամ տեղական/ազգային իշխանությունների պարտականությունները: Այս նպատակով նրանք կարող են դնել գումարման կամ հանման նշան ընտրված պարտականությունների դիմաց (տե՛ս օրինակը ստորև):

Մարդու իրավունք (դպրոցում, տանը)	**Անհատի (բարոյական) պարտականություն**	**Դպրոցի ղեկավարության պարտականություններ, իշխանությունների պարտականություններ, և այլն:**
Գաղտնիության իրավունք (= օրինակ)	(+)	(+) Ապահովել, որ այցելուներին հասանելի չլինեն աշակերտների դպրոցական գործերը
	(-) Չկարդալ ուրիշի հուշատետրը առանց թույլտվության	(-) (դպրոցի տնօրինություն) Չխուզարկել այլոց անձնական իրերը, եթե չկա դրա խիստ անհրաժեշտությունը (-) (պետական իշխանություն) Ապահովել անձի գաղտնիության իրավունքը պաշտպանող օրենսդրություն

Եթե ուսուցիչները ցանկություն ունեն այս աշխատանքն օգտագործել որպես նախապատրաստություն նախագծային որևէ աշխատանքի համար, նրանք կարող են աշակերտներին հանձնարարել, որպեսզի վերջիններս ընտրեն մարդու մի քանի իրավունք, որոնք առաջիկա մի քանի շաբաթների կամ ամիսների ընթացքում առավել խորը ուսումնասիրության կենթարկվեն: Այնուհետև աշակերտները կազմում են ծրագիր, որտեղ համաձայնության են գալիս ընդհանուր նպատակի և ձեռնարկվող տարբեր քայլերի շուրջ: Նրանք նաև որոշում են, թե երբ և որ առաջադրանքը պետք է ավարտվի և ում կողմից:

Ծրագիր

Ընդհանուր նպատակը՝ …….....……		
Ի՞նչ պետք է արվի:	**Ո՞վ է անելու:**	**Ե՞րբ պետք է այն պատրաստ լինի:**

Առաջիկա մի քանի դասերի ընթացքում այս ծրագիրը պետք է իրագործվի և վերջում գնահատում անցնի:

Դաս 4.
Թեստ մարդու իրավունքների վերաբերյալ
Ո՞րն է ճիշտ: Ո՞րն է անհատի՝ մարդու իրավունքը:

Ուսուցման նպատակը	Աշակերտները տեղեկանում են միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների մասին:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները պատասխանում են բազմակի ընտրության հարցերին և քննարկում իրենց պատասխաններից արված եզրակացությունները:
Ռեսուրսներ	Քարտեր յուրաքանչյուր աշակերտի համար՝ դարձերեսին պատասխանների առկայությամբ (տե՛ս աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.5):
Մեթոդ	Բազմակի ընտրության հարցեր

Տեղեկատվական անկյուն

Թեև մարդու իրավունքի հասկացությունը քարացած չէ և, ըստ այդմ, շարունակաբար զարգանում է, այդուհանդերձ, միջազգային իրավունքով սահմանված են մարդու իրավունքների բովանդակությունը և շրջանակը: Մարդու իրավունքների վերաբերյալ հաջորդիվ ներկայացվող թեստը, որը չպետք է օգտագործվի գիտելիքների ստուգման նպատակով, նպաստում է, որպեսզի աշակերտները հասկանան, թե ինչ փուլում ենք մարդու իրավունքների մասին գիտելիքների առումով: Այն նաև օգնում է խուսափել մարդու իրավունքների շրջանակը սխալ մեկնաբանելուց:

Նախքան դասը սկսելը, ուսուցիչը պետք է նշում կատարի բոլոր այն հարցերի մասով, որոնք կապված են ՄԱԿ-ի կամ Եվրոպայի Խորհրդի շրջանակներում կնքված համաձայնագրերի հետ: Արդյունավետ կլինի նաև, եթե ուսուցիչը դասը սկսի օգտագործված տերմինների և հասկացությունների հակիրճ բացատրությամբ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, Եվրոպայի խորհուրդը (չշփոթել Եվրոպական Միության Խորհրդի հետ), մարդու իրավունքները, ազգը/պետությունը, խտրականությունը, դատավորը կամ դատաքննությունը:

Դասի ընթացքը

Առաջին հերթին ուսուցիչը բացատրում է, որ թեստի նպատակը նրանց գիտելիքները ստուգելը չէ, այլ ընդլայնել մարդու իրավունքների մասին նրանց ըմբռնումը արդյունավետ եղանակով:

Աշակերտներն ինքնուրույն են պատրաստում քարտերը՝ կտրել հանելով հարցերն ու պատասխանները պարունակող ժապավենները: Այնուհետև նրանք սոսնձում են կտրված ժապավեններն այնպես, որ հարցերն ու պատասխանները լինեն միևնույն քարտի վրա:

Ավարտելուց հետո աշակերտները նստում են փոքր խմբերով (կամ զույգերով) և հարցեր են ուղղում միմյանց: Այնուհետև աշակերտների խմբերից յուրաքանչյուրին տրվում է քարտերի հավաքածուն: Յուրաքանչյուր հարց ունի պատասխանների երեք հնարավոր տարբերակ՝ Ա, Բ կամ Գ, որոնցից աշակերտներն ընտրում են այն մեկը, որը իրենց կարծիքով տվյալ հարցի ճիշտ պատասխանն է: Հարկավոր է աշակերտների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ որոշ դեպքերում հնարավոր են մեկից ավելի ճիշտ պատասխաններ, քանի որ մարդու իրավունքները ոչ թե քարացած հասկացություն է, այլ շարունակաբար զարգացող, ինչը մեկնաբանության հնարավորություն է տալիս:

Պատասխաններ ժամանակ առ ժամանակ դասարանում քննարկելը կարող է արդյունավետ լինել: Այս եղանակով դասը չի վերածվի սոսկ գիտելիքի վրա հիմնված ստուգողական հարց ու պատասխանի: Սակայն կարևոր է նաև պատրաստ լինել հանրային քննարկումների՝ զարգացնելով նաև գիտելիքի բաղադրիչը:

Հարցեր և պատասխաններ

Տե՛ս նաև աշակերտների համար նախատեսված 5.5 բաշխման նյութերը: Ուսուցիչը կամ մի խումբ աշակերտներ պատրաստում են բավարար քանակությամբ քարտերի հավաքածուներ՝ կտրել հանելով հարցերն ու պատասխանները պարունակող կտորները և ծալելով ու սոսնձելով դրանք միմյանց:

17 տարեկան երեխաների աշխատուժի օգտագործում. Ա. Այն բոլոր դեպքերում համարվում է երեխայի իրավունքների խախտում: Բ. Այն երեխայի իրավունքների խախտում է, եթե աշխատանքը վտանգավոր է: Գ. Այն կարող է թույլատրելի լինել, եթե կառավարությունը աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը սահմանել է 17 տարեկանից ցածր:	**17 տարեկան երեխաների աշխատուժի օգտագործում.** Ճիշտ պատասխանն է Գ-ն: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան արգելում է մանկական աշխատուժի օգտագործումը, եթե այն վտանգ է պարունակում կամ շահագործման տեսակ է, սակայն այն թույլ է տալիս պետություններին սահմանել այն տարիքը, որից ցածր լինելու դեպքում արգելքն ուժի մեջ է: Մանկական աշխատուժի օգտագործման դեմ ավելի խիստ սահմանափակումներ ներդնելու մեծ անհրաժեշտություն կա:
Համաձայն ջրի իրավունքի մասին միջազգային համաձայնագրերի. Ա. Պետությունները պարտավոր են իրենց քաղաքացիներին ապահովել մաքուր և չաղտոտված ջրով: Բ. Պետություններն իրավունք չունեն ջրի ապահովման հարցում որոշ քաղաքացիների մասով խտրականություն կիրառել: Գ. Պետություններն իրավունք չունեն իրենց քաղաքացիների ջրամատակարարումը դարձնել անմատչելի:	**Համաձայն ջրի իրավունքի մասին միջազգային համաձայնագրերի.** Համաձայն ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական իրավունքների կոմիտեի մեկնաբանության՝ ճիշտ են Բ և Գ պատասխանները, սխալ է Ա տարբերակը: Պետությունները պետք է ձգտեն իրականացնել ջրի իրավունքը, սակայն քաղաքացիները չեն կարող, որպես այդպիսին,այս իրավունքի վերաբերյալ պահանջներ ներկայացնել:

Մահապատիժ. Ա. Ընդհանուր առմամբ այն արգելված է ամբողջ աշխարհում: Բ. Այն վերացված է օրենքով կամ գործելակերպով ավելի քան 50 տոկոս պետությունների կողմից: Գ. Չի թույլատրվում կիրառել 18 տարեկանից ցածր երիտասարդների մասով:	**Մահապատիժ.** Ճիշտ են Բ և Գ պատասխանները, սխալ է Ա տարբերակը: Ո՛չ ՄԱԿ-ի պայմանագրերը, ո՛չ ՄԻԵԿ-ը ամբողջությամբ չեն արգելում մահապատժի կիրառումը, թեև երկու դեպքում էլ այն արգելված է կամընտիր արձանագրությամբ: ՄԻԵԿ-ի Արձանագրություն 6-ը (մահապատժի վերացում խաղաղ ժամանակ) և Արձանագրություն 13-ը (մահապատժի վերացում բոլոր հանգամանքներում) ստորագրվել և (կամ) վավերացվել են բազմաթիվ պետությունների կողմից:
Տնտեսական և սոցիալական իրավունքներ. Ա. Դրանք մարդու իրական իրավունքներ չեն: Բ. Պետությունները պարտադրված չեն այս իրավունքներն անհապաղ իրականացնել բոլոր քաղաքացիների մասով: Գ. Եվրոպայի յուրաքանչյուր քաղաքացի կարող է պահանջել, որ այդ իրավունքներն իրականացվեն:	**Տնտեսական և սոցիալական իրավունքներ.** Ճիշտ պատասխանն է Բ-ն: Պաշտոնապես տնտեսական և սոցիալական իրավունքները մարդու իրական իրավունքներ են, թեև դրանց ճանաչման պարտավորությունն առավել թույլ է արտահայտված ի տարբերություն այն պարտավորության, որը գործում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասով: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը պահանջում է, որպեսզի պետությունները ձգտեն այդ իրավունքների իրականացմանը, սակայն գոյություն չունի եվրոպական որևէ մեխանիզմ, որը թույլ կտա անհատներին բողոք ներկայացնել (թեև կամընտիր արձանգրությունը, որոշ սահմանափակուներով, թույլ է տալիս կազմակերպություններին դիմել այդ քայլին):
Համաձայն կրթության իրավունքի մասին դրույթների՝ Ա. Անհատներին ու խմբերին թույլատրված է դպրոց բացել, եթե նրանք կատարում են նվազագույն իրավական պահանջները: Բ. Կրթական ծրագրերի բովանդակության առնչությամբ որևէ պարտավորություն չկա: Գ. Պետությունները պարտավոր են ապահովել պարտադիր կրթություն 18 տարին չլրացած բոլոր երիտասարդների համար:	**Համաձայն կրթության իրավունքի մասին դրույթների՝** Ա-ն ճիշտ պատասխանն է , Բ և Գ տարբերակները սխալ են: Միջազգային կոնվենցիաները, ինչպիսին է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, սահմանում են, որ կրթության միջոցով երեխան պետք է տեղեկացվի մարդու իրավունքների մասին:
Փախստական ճանաչվելու իրավունք. Ա. Սահմանված է նրանց համար, ովքեր ունեն ռասայական պատկանելության, կրոնական կամ քաղաքական հայացքների հիմքով հետապնդված լինելու հիմնավորված վախ և սրա հետևանքով փախուստի են դիմել իրենց երկրից: Բ. Այն նաև գործում է նաև նրանց համար, ովքեր փախուստի են դիմել իրենց երկրից քաղաքացիական պատերազմի կամ սովի հետևանքով: Գ. Պետությունը կարող է ինքնաբերաբար մերժել այս իրավունքից օգտվել ցանկացող բոլոր դիմորդներին, ովքեր եկել են ապահով համարվող երկրից:	**Փախստական ճանաչվելու իրավունք.** Ա-ն ճիշտ պատասխանն է, իսկ Բ-ն սխալ է (թեև որոշ երկրներում մարդիկ, ովքեր փախուստի են դիմել իրենց երկրից քաղաքացիական պատերազմի կամ սովի հետևանքով, կարող են ստանալ պաշտպանություն առանց միջազգային կոնվենցիաներով փախստական համարվելու): Համաձայն Ժնևի կոնվենցիայի՝ պատասխան Գ-ն չի կիրառվում փախստականների նկատմամբ, սակայն լայնորեն կիրառվում է ԵՄ-ում ապաստան հայցողների մասով:

Կրոնի ազատության իրավունք. Ա. Կրոնական փոքրամասնության պատկանելը չի կարող հիմք ծառայել, որպեսզի մարդկանց այդ իրավունքը մերժվի: Բ. Այն պետություններին պարտավորեցնում է ճանաչել և դրամական օժանդակություն տրամադրել կրոններին: Գ. Այն որևէ կերպով չի կարող պետության կողմից սահմանափակվել:	**Կրոնի ազատության իրավունք.** Ա-ն ճիշտ պատասխանն է: Պետությունները պարտավորված են հարգել կրոնի ազատության իրավունքը, սակայն ճանաչման կամ սուբսիդավորման որևէ համակարգի մասով իրավական պարտավորություն չեն կրում: Պետությունները կարող են սահմանափակել կրոնի ազատությունը օրինակ այն դեպքում, երբ կրոնը հակասում է մարդու հիմնարար իրավունքներին:
Սեփականության իրավունք. Ա. Սա, այնուամենայնիվ, նշանակում է, որ պետությունները կարող են վերցնել անձի սեփականությունը, եթե սա բխում է հանրային շահերից: Բ. Այս իրավունքը խախտվում է, եթե մի ամբողջ գյուղի բնակչություն տարհանվում է առանց պատշաճ փոխհատուցում ստանալու, որպեսզի այդ տարածքում կառուցվի հիդրոէլեկտրակայան: Գ. Այն թույլ է տալիս, որ անձն իր ձեռքբերած գողոնը համարի իր սեփականությունը:	**Սեփականության իրավունք.** Ա-ն և Բ-ն ճիշտ պատասխաններն են: Գ-ն ակնհայտորեն սխալ է:
Ընտրություններ. Ա. Բոլոր քաղաքացիներին թույլատրվում է քվեարկել, նույնիսկ եթե քրեական գործունեության հետևանքով զրկվել են իրենց քաղաքացիական իրավունքներից: Բ. Մեկ անձը կարող է երկու անգամ քվեարկել, եթե նա գործատու է: Գ. Քվեարկությունը պետք է անցկացվի գաղտնի:	**Ընտրություններ.:** Ճիշտ է միայն Գ տարբերակը: Պետությունը կարող է թույլ չտալ քաղաքացիական իրավունքներից զրկված անձանց քվեարկել: Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի հավասար իրավունքներ, որը միջազգային կանոն է:
Արտահայտվելու ազատության իրավունք. Ա. Այն կարող է սահմանափակվել զրպարտությունից պաշտպանված լինելու նպատակով: Բ. Այն չի կարող սահմանափակվել հասարակական բարքերի հիմնավորմամբ: Գ. Այն կարող է սահմանափակվել կրոնական անհանդուրժողականությունը կանխելու նպատակով:	**Արտահայտվելու ազատության իրավունք.** Ա և Գ տարբերակները ճիշտ են: Արտահայտվելու ազատության իրավունքը որոշակի պայմաններում կարող է սահմանափակվել հասարակական բարքերի հիմնավորմամբ, հանցագործությունների կանխմանշն, առողջության պաշտպանության կամ զրպատությունից պաշտպանելու նպատակով, եթե դա նախատեսված է օրենքով:
Աշխատանքի իրավունք. Ա. Պարտավորեցնում է պետություններին բոլոր քաղաքացիներին աշխատանքով ապահովել: Բ. Նշանակում է, որ ոչ ոք կամայականորեն չի կարող աշխատանքից ազատվել: Գ. Չի նշանակում, որ պետությունը պետք է ջանքեր գործադրի ապահովելու համար բնակչության լրիվ զբաղվածություն:	**Աշխատանքի իրավունք.** Բ-ն միակ ճիշտ պատասխանն է: Եվրոպայում պետությունները պարտավորված են քայլեր ձեռնարկել ապահովելու համար բնակչության լրիվ զբաղվածությունը, սակայն սա ներառված չէ ՄԱԿ-ի պայմանագրերում:

Առողջ շրջակա միջավայրի իրավունք. Ա. Արգելում է պետություններին թափել թունավոր թափոններ, որոնք անդառնալիորեն փչացնում են հողը: Բ. Նպատակն է պաշտպանել մարդկանց, կենդանիներին և բույսերին: Գ. Այն դեռ ամրագրված չէ որպես համընդհանուր իրավունք:	**Առողջ շրջակա միջավայրի իրավունք.** Գ-ն ճիշտ պատասխանն է, թեև առողջության պահպանման իրավունքը պաշտպանում է մարդկանց ուղղակիորեն աղտոտման հետևանքով ի հայտ եկող վնասից: Այսպիսի դեպքերում միայն մարդիկ են համընդհանուր կերպով պաշտպանված, մինչդեռ կենդանիներն ու բույսերը պաշտպանված չեն: Աֆրիկյան խարտիան և Եվրոպական Միության խարտիան, որոնք համընդհանուր ուժ չունեն, որոշ չափով սահմանում են առողջ շրջակա միջավայրի իրավունքը:
Համաձայն կրթության իրավունքի՝ Ա. Տարրական դպրոց հաճախող երեխաներից դպրոցական վճարներ չեն գանձվում, կարող է պահանջվել միայն դպրոց գնալու ճանապարհածախսի և դպրոցական դասագրքերի գումարը: Բ. Պետության պարտավորությունն է ձգտել հնարավորինս շատ աշակերտների օգնել հաջողելու համար ուսումնառության մեջ: Գ. Պետությունները պետք է աշակերտներին ապահովեն հավասար հնարավորություններով կրթության ոլորտում:	**Համաձայն կրթության իրավունքի՝** Բ և Գ պատասխանները ճիշտ են (այս պարտավորությունները ներառված են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում): Սկզբունքորեն, տարրական կրթությունը պետք է լինի անվճար, և սա ներառում է ոչ միայն դպրոցական վճարները, այլև դպրոցական հիմնական աշխատանքների հետ կապված մյուս անուղղակի ծախսերը:
Դպրոցներում երեխաներին պատժելը. Ա. Մարմնական պատիժն արգելված է: Բ. Դաժան հոգեբանական պատիժը արգելված չէ: Գ. Թույլատրելի է, միայն եթե ծնողները համաձայնություն են տալիս:	**Դպրոցներում երեխաներին պատժելը.** Ա պատասխանը ճիշտ է, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շարունակաբար գնահատել է մարմնական պատիժը որպես ՄԻԵԿ-ի խախտում (և սա համապատասխանում է Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի մասով արված մեկնաբանությանը): Բ պատասխանը սխալ է, քանի որ արգելքը վերաբերում է բոլոր տեսակի դաժան պատիժներին: Ինչ վերաբերում է Գ տարբերակին, ապա գոյություն չունի որևիցե դրույթ, որով պատիժն ուղղակիորեն պայմանավորված է ծնողների համաձայնությամբ:
Դպրոցում. Ա. Հարկավոր չէ ուշադրության արժանացնել բնապահպանական խնդիրները: Բ. Փոքր երեխաներին պետք է սովորեցնել հարգել իրենց ծնողներին: Գ. Փոքր երեխաները պետք է սովորեն մարդու իրավունքների մասին և կիրառեն այդ իրավունքները:	**Դպրոցում.** Բ-ն և Գ-ն պատասխանները ճիշտ են: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում առկա են նման դրույթներ: Կոնվենցիան նաև սահմանում է, որ կրթության նպատակը պետք է լինի շրջակա միջավայրի նկատմամբ հարգանք սերմանելը:
Դատարանում. Ա. Յուրաքանչյուր հանցագործ փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունք ունի: Բ. Մարդիկ կարող են մեղավոր ճանաչվել միայն այն դեպքում, եթե խոստովանել են հանցանքի կատարման մասին: Գ. Կասկածյալը անվճար թարգմանչական ծառայությունից օգտվելու իրավունք ունի, եթե դատավարությունը տեղի է ունենում իրեն անծանոթ լեզվով:	**Դատարանում.** Ա և Գ տարբերակները ճիշտ են:

Խոշտանգում. Ա. Այն թույլատրվում է, եթե կիրառվում է ահաբեկչական հարձակում կանխելու նպատակով: Բ. Այն թույլատրվում է միայն դատավորի որոշումը ստանալուց հետո: Գ. Այն ոչ մի պարագայում թույլատրելի չէ:	**Խոշտանգում.** Գ-ն ճիշտ պատասխանն է (չի թույլատրվում խոշտանգման ենթարկել նույնիսկ ներպետական մակարդակով արտակարգ դրության պարագայում):
Կյանքի իրավունքը խախտված է, եթե՝ Ա. Ինչ-որ մեկը պատահաբար սպանվում է ոստիկանական ուժերի կողմից, երբ վերջիններս կանխում էին մեկ այլ մարդու կյանքի դեմ ուղղված հարձակում: Բ. Ինչ-որ մեկը մահանում է պատերազմական գործողության հետևանքով, նույնիսկ եթե այդ գործողությունն օրինական էր: Գ. Ինչ-որ մեկը մահանում է ոստիկանական ուժերի կողմից կիրառված ոչ անհրաժեշտ ուժի հետևանքով:	**Կյանքի իրավունքը խախտված է, եթե՝** Ճիշտ պատասխանն է Գ-ն: Ա պատասխանի դեպքում կյանքի իրավունքը կարող է խախտվել, եթե ոստիկանության կողմից կիրառված ուժը լինի ավելին, քան անհրաժեշտ:
Համաձայն բնակարանի իրավունքի՝ Ա. Պետությունները պարտավորված են ապահովել, որ ոչ մեկ անօթևան չմնա: Բ. Օտարերկրացիների համար պետք է հասանելի լինեն բնակարանային նույն սոցիալական ծրագրերը, որոնք գործում են երկրի քաղաքացիների համար: Գ. Պետությունը պետք է ջանքեր գործադրի կրճատելու համար անօթևան անձանց թիվը:	**Համաձայն բնակարանի իրավունքի՝** Բ-ն և Գ-ն պատասխանները ճիշտ են:
Համաձայն առողջության պահպանման իրավունքի՝ Ա. Պետությունները պարտավորված չեն կանխարգելել աշխատանքային պատահարները: Բ. Առողջապահությունը պետք է մատչելի լինի յուրաքանչյուրի համար: Գ. Դեղորայքը պետք է անվճար լինի:	**Համաձայն առողջության պահպանման իրավունքի՝** Ճիշտ պատասխանն է Բ-ն: Աշխատանքի վայրում պատահարների կանխարգելումը համարվում է պարտավորություն:
Համաձայն ազատ տեղաշարժի իրավունքի՝ Ա. Անձին կարող է թույլ չտրվել ընտրել բնակության որոշակի վայր՝ ելնելով հանրային անվտանգության նկատառումներից: Բ. Հանցագործություն կատարելու մեղադրանքով երբևէ չդատապարտված անձին վիզայի տրամադրումը մերժելը մարդու իրավունքների խախտում է: Գ. Հանցագործին կարելի է բանտարկել:	**Համաձայն ազատ տեղաշարժի իրավունքի՝** Ա և Գ տարբերակները ճիշտ են: Ոչ միայն հանցագործներին, այլև ցանկացած մեկին վիզայի տրամադրումը կարող է մերժվել: Ազատ տեղաշարժի մասով սահմանափակումներ կարող են կիրառվել նաև հանրային առողջության, հասարակական կարգի կամ ազգային անվտանգության նկատառումներով օրենքով նախատեսված լինելու դեպքում:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.1
Ցանկություններ, կարիքներ և իրավունքներ

Ցանկություններ	Հիմնական կարիքներ	Մարդու իրավունքներ

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.2
Մարդու իրավունքների ցանկ

Այս ցանկը ներառված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (ՄԻՀՀ), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (ՔՔԻՄԴ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (ՄԻԵԿ) և վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայում (ՎԵՍԽ):

1. Կյանքի իրավունք:
2. Խոշտանգումների արգելք:
3. Ստրկության արգելք:
4. Ազատության և անվտանգության իրավունք:
5. Արդար դատաքննության իրավունք:
6. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, եթե խախտվել է մարդու իրավունքը:
7. Խտրականության արգելք, հավասարության իրավունք:
8. Իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք, քաղաքացիության իրավունք:
9. Անձնական ու ընտանեկան կյանքի իրավունք:
10. Ամուսնանալու իրավունք:
11. Սեփականություն ունենալու իրավունք:
12. Մարդկանց տեղաշարժի իրավունք:
13. Ապաստանի իրավունք:
14. Մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք:
15. Արտահայտվելու ազատություն:
16. Հավաքների ու միավորման իրավունք:
17. Սննդի, ջրի և բնակարանի իրավունք:
18. Առողջության պահպանման իրավունք:
19. Կրթության իրավունք:
20. Աշխատանքի իրավունք:
21. Հանգստի և ժամանցի իրավունք:
22. Սոցիալական ապահովության իրավունք:
23. Քաղաքական մասնակցության իրավունք:
24. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:
25. Մարդու իրավունքների խախտման անթույլատրելիություն:
26. Մարդու իրավունքները ճանաչող հասարակարգի իրավունք:
27. Անհատի պարտականություններ և պարտավորություններ:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.3
Մարդու իրավունքների խախտման դեպքեր

Մարդու իրավունքների խախտում կամ ոտնահարում	**Մարդու իրավունք**
ա. Տիկին X-ը, ով տարիներ առաջ ավտովթարի հետևանքով կորցրել էր ամուսնուն և դստերը, չէր կարող ամուսնանալ մեկ այլ տղամարդու հետ քանի դեռ իր հանգուցյալ ամուսնու եղբայրը բացահայտ կերպով չէր տվել իր թույլտվությունը:	
բ. Բանտապահներն օգտագործում էին շներ, որպեսզի կալանավորներին վախեցնեին և ահաբակեին հարձակման ենթարկելու սպառնալիքով, և մի անգամ նրանք այնպես արեցին, որ շներն իսկապես կծեցին կալանավորներից մեկին:	
գ. Տեղական գործարանում աշխատակիցները ստիպված են օրեկան առնվազն 10 ժամ աշխատել առանց հանգստի:	
դ. Ձերբակալվելու պահից ի վեր երեք տղամարդիկ խոչընդոտների էին բախվել փաստաբանների հետ կապ հաստատելու հարցում: Շատ դեպքերում փաստաբանները ժամանում էին կալանավայր, սակայն նրանց թույլ չէր տրվում տեսակցել տղամարդկանց, տղամարդկանց թույլ չէին տալիս իրենց փաստաբանների հետ համատեղ քննարկում ունենալ, ինչը, փաստորեն, նշանակում էր, որ նրանցից երկուսի համար փաստաբաններն անհասանելի էին:	
ե. Կինը, կատարելով ճիշտ նույն աշխատանքը և ունենալով նույնքան փորձ, ինչ իր հասակակից տղամարդ գործընկերները, ստանում էր ավելի ցածր աշխատավարձ:	
զ. X-ը առևանգեց Y-ին և, երեք օր նրան կալանքի տակ պահելուց հետո, կրակեց նրա գլխին, ինչը 3 օր անց դարձավ վերջինիս մահվան պատճառը:	
է. Ինչ-որ մեկը լուսանկարում է թմրամոլ տիկին X-ին Անանուն թմրամոլների հանդիպումից դուրս գալու պահին: Որոշ ժամանակ անց այդ նկարը հրապարակվեց:	
ը. Կինը, որին ամուսինը վատ վերաբերմունքի էր արժանացնում, կարողացավ ամուսնալուծության համաձայնություն ստանալ միայն այն բանից հետո, երբ տղամարդուն տվեց իրեն պատկանող տունը, մեքենան և ողջ ունեցվածքը: Նրան ոչինչ չմնաց:	
թ. X-ը, ով տառապում էր կյանքին վտանգ սպառնացող թոքաբորբի տարատեսակով, հիվանդանոցում բուժօգնություն չստացավ, քանի որ մուտք էր գործել այդ երկիր անօրինական ճանապարհով:	
ժ. X տարածաշրջանի բնակչության յոթանասուն տոկոսին բռնի կերպով տեղահանեցին իրենց տներից և հետագայում արգելեցին նրանց վերադառնալ: Նրանց թույլ չէին տալիս լքել իրենց ճամբարները և գնալ մոտակա դաշտերը, որպեսզի մշակեն իրենց բերքը, և կային շատ ճանապարհներ, որոնցով նրանց արգելվում էր երթևեկել:	
ի. Աֆրիկայում սևամորթ աֆրիկացիներին գնում էին, օրինակ՝ մեկ շիշ վիսկիով և վաճառում Հյուսիսային Ամերիկայում 1200-ից 1500 ԱՄՆ դոլարով:	
լ. X երկրի բնակչության համար կենսական նշանակության բոլոր միջոցները՝ բերքը, ջրի պաշարները և եղջերավոր անասունները, միտումնավոր կերպով ոչնչացվել են:	
խ. X երկրում քաղաքացիները կարող են բանտարկվել առանց որևէ մեղադրանքի ներկայացման:	
ծ. Օրաթերթի 26-ամյա թղթակիցը վերջերս տեղի ունեցած ընտրարշավը լուսաբանելու համար կյանքով հատուցեց վրեժի հիմքով ենթադրյալ հարձակման արդյունքում:	
կ. Պարոն X-ը զորակոչվելու ծանուցագիր ստացավ: Նա նամակ գրեց զինվորական զորակոչի վարչությանը՝ հայտնելով համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայության մերժման մասին և չներկայացավ ծառայության: Նա մեղադրվեց չենթարկվելու մեջ, և նրան արգելվեց լքել երկիրը:	
հ. X երկրում Ֆալունգուն կրոնին հետևել ցանկացողներին արգելված է հանդիպել:	

Մարդու իրավունքների խախտում կամ ոտնահարում	**Մարդու իրավունք**
ձ. Էթնիկ մեծամասնությունը որոշում կայացրեց, որ բոլոր նրանք, ովքեր պատկանում են փոքրամասնություններին, ինչպիսիք են հրեաները և գնչուները, պարտավորված են ապրել քաղաքի հատուկ սահմանված վայրերում:	
ղ. Գյուղում ապրող երեխաները հնարավորություն չունեն հաճախելու տարրական դպրոց, քանի որ խելքին մոտ հեռավորության վրա չկա այդպիսի դպրոց:	
ճ. X-ը չկարողացավ մասնակցել խորհրդարանական ընտրություններին, քանի որ երկրի կրոնական իշխանությունները հավանություն չտվեցին նրա թեկնածությանը:	
մ. X-ը չի կարողանում տարածքային հիվանդանոցում բժշկի աշխատանք ստանալ սևամորթ լինելու պատճառով:	
յ. Որոշ երկրներում չքավոր մարդիկ հնարավորություն չունեն դիմել սննդօգնության կամ բնակարանային ապահովման ծրագրերին, և ոչ էլ մատչելի առողջապահական ծառայություններին:	
ն. Պարոն X-ը, ում տունն ամբողջությամբ հրդեհվել էր, չէր կարողանում վնասի փոխհատուցման հայց ներկայացնել:	
շ. 47-ամյա տիկին X-ը, ով հինգ երեխաների մայր է և մշտապես զբաղվել է տնային տնտեսությամբ այդ տանը, զրկվում է ամեն տեսակի սոցիալական ապահովության նպաստից այն պահին, երբ ամուսանալուծվում է:	
n. Երկու երեխաների հայր պարոն X-ը բանտարկվել և խոշտանգման էր ենթարկվել X երկրում այն բանի համար, որ գրում էր իշխանությանը քննադատող բանաստեղծություններ: Երկիր A-ում քաղաքական ապաստան ստանալու նրա դիմումը մերժվեց: Նա պնդում էր, որ եթե վերադառնա իր երկիր, ինչն իրեն այժմ պարտադրում են, նրան խոշտանգումների կենթարկեն:	
չ. Այսպես կոչված գործնական պատճառներով պայմանավորված՝ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց, ինչպիսիք են հաշմանդամի սայլակից օգտվողները, չի թույլատրվում ներկա գտնվել տեղական թատրոնում կազմակերպված մշակութային միջոցառումներին:	
պ. Երկիր X-ում քաղաքացիություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է բնակվել այդ երկրում 15 տարի, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան առողջության ստուգում անցնել և կատարել անհիմն բարձր վճարումներ փաստաթղթերի ձևակերպման դիմաց: Արդյունքում հազարավոր գնչուներ, ովքեր երկարամյա կապեր ունեն իրենց երկրի հետ, զրկված են քաղաքացիությունից իրենց իսկ հողի վրա:	

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.4
Իրավունքներ և պարտականություններ

Մարդու իրավունք	Անհատի պատասխանատվություն	Դպրոցի ղեկավարության պատասխանատվություն, իշխանությունների պարտականություններ, և այլն:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 5.5
Թեստ մարդու իրավունքների վերաբերյալ (ուսումնական բացիկ)

17 տարեկան երեխաների աշխատուժի օգտագործում. Ա. Այն բոլոր դեպքերում համարվում է երեխայի իրավունքների խախտում: Բ. Այն երեխայի իրավունքների խախտում է, եթե աշխատանքը վտանգավոր է: Գ. Այն կարող է թույլատրելի լինել, եթե կառավարությունը աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը սահմանել է 17 տարեկանից ցածր:	**17 տարեկան երեխաների աշխատուժի օգտագործում.** Ճիշտ պատասխանն է Գ-ն: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան արգելում է մանկական աշխատուժի օգտագործումը, եթե այն վտանգ է պարունակում կամ շահագործման տեսակ է, սակայն այն թույլ է տալիս պետություններին սահմանել այն տարիքը, որից ցածր լինելու դեպքում արգելքն ուժի մեջ է: Մանկական աշխատուժի օգտագործման դեմ ավելի խիստ սահմանափակումներ ներդնելու մեծ անհրաժեշտություն կա:
Համաձայն ջրի իրավունքի մասին միջազգային համաձայնագրերի, ա. Պետությունները պարտավոր են իրենց քաղաքացիներին ապահովել մաքուր և չաղտոտված ջրով: բ. Պետություններն իրավունք չունեն ջրի ապահովման հարցում որոշ քաղաքացիների մասով խտրականություն կիրառել: գ. Պետություններն իրավունք չունեն իրենց քաղաքացիների ջրամատակարարումը դարձնել անմատչելի:	**Համաձայն ջրի իրավունքի մասին միջազգային համաձայնագրերի.** Համաձայն ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական իրավունքների կոմիտեի մեկնաբանության՝ ճիշտ են Բ և Գ պատասխանները, սխալ է Ա տարբերակը: Պետությունները պետք է ձգտեն իրականացնել ջրի իրավունքը, սակայն քաղաքացիները չեն կարող, որպես այդպիսին,այս իրավունքի վերաբերյալ պահանջներ ներկայացնել:
Մահապատիժ. Ա. Ընդհանուր առմամբ այն արգելված է ամբողջ աշխարհում: Բ. Այն վերացված է օրենքով կամ գործելակերպով ավելի քան 50 տոկոս պետությունների կողմից: Գ. Չի թույլատրվում կիրառել 18 տարեկանից ցածր երիտասարդների մասով:	**Մահապատիժ.** Ճիշտ են Բ և Գ պատասխանները, սխալ է Ա տարբերակը: Ո՛չ ՄԱԿ-ի պայմանագրերը, ո՛չ ՄԻԵԿ-ը ամբողջությամբ չեն արգելում մահապատժի կիրառումը, թեև երկու դեպքում էլ այն արգելված է կամընտիր արձանագրությամբ: ՄԻԵԿ-ի Արձանագրություն 6-ը (մահապատժի վերացում խաղաղ ժամանակ) և Արձանագրություն 13-ը (մահապատժի վերացում բոլոր հանգամանքներում) ստորագրվել և (կամ) վավերացվել են բազմաթիվ պետությունների կողմից:
Տնտեսական և սոցիալական իրավունքներ. Ա. Դրանք մարդու իրական իրավունքներ չեն: Բ. Պետությունները պարտադրված չեն այս իրավունքներն անհապաղ իրականացնել բոլոր քաղաքացիների մասով: Գ. Եվրոպայի յուրաքանչյուր քաղաքացի կարող է պահանջել, որ այդ իրավունքներն իրականացվեն:	**Տնտեսական և սոցիալական իրավունքներ.** Ճիշտ պատասխանն է Բ-ն: Պաշտոնապես տնտեսական և սոցիալական իրավունքները մարդու իրական իրավունքներ են, թեև դրանց ճանաչման պարտավորությունն առավել թույլ է արտահայտված ի տարբերություն այն պարտավորության, որը գործում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասով: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը պահանջում է, որպեսզի պետությունները ձգտեն այդ իրավունքների իրականացմանը, սակայն գոյություն չունի եվրոպական որևէ մեխանիզմ, որը թույլ կտա անհատներին բողոք ներկայացնել (թեև կամընտիր արձանգրությունը, որոշ սահմանափակուներով, թույլ է տալիս կազմակերպություններին դիմել այդ քայլին):

Համաձայն կրթության իրավունքի մասին դրույթների՝ Ա. Անհատներին ու խմբերին թույլատրված է դպրոց բացել, եթե նրանք կատարում են նվազագույն իրավական պահանջները: Բ. Կրթական ծրագրերի բովանդակության առնչությամբ որևէ պարտավորություն չկա: Գ. Պետությունները պարտավոր են ապահովել պարտադիր կրթություն 18 տարին չլրացած բոլոր երիտասարդների համար:	**Համաձայն կրթության իրավունքի մասին դրույթների՝** Ա-ն ճիշտ պատասխանն է , Բ և Գ տարբերակները սխալ են: Միջազգային կոնվենցիաները, ինչպիսին է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, սահմանում են, որ կրթության միջոցով երեխան պետք է տեղեկացվի մարդու իրավունքների մասին:
Փախստական ճանաչվելու իրավունք. Ա. Սահմանված է նրանց համար, ովքեր ունեն ռասայական պատկանելության, կրոնական կամ քաղաքական հայացքների հիմքով հետապնդված լինելու հիմնավորված վախ և սրա հետևանքով փախուստի են դիմել իրենց երկրից: Բ. Այն նաև գործում է նաև նրանց համար, ովքեր փախուստի են դիմել իրենց երկրից քաղաքացիական պատերազմի կամ սովի հետևանքով: Գ. Պետությունը կարող է ինքնաբերաբար մերժել այս իրավունքից օգտվել ցանկացող բոլոր դիմորդներին, ովքեր եկել են ապահով համարվող երկրից:	**Փախստական ճանաչվելու իրավունք.** Ա -ն ճիշտ պատասխանն է, իսկ Բ-ն սխալ է (թեև որոշ երկրներում մարդիկ, ովքեր փախուստի են դիմել իրենց երկրից քաղաքացիական պատերազմի կամ սովի հետևանքով, կարող են ստանալ պաշտպանություն առանց միջազգային կոնվենցիաներով փախստական համարվելու): Համաձայն Ժնևի կոնվենցիայի՝ պատասխան Գ-ն չի կիրառվում փախստականների նկատմամբ, սակայն լայնորեն կիրառվում է ԵՄ-ում ապաստան հայցողների մասով:
Կրոնի ազատության իրավունք. Ա. Կրոնական փոքրամասնության պատկանելը չի կարող հիմք ծառայել, որպեսզի մարդկանց այդ իրավունքը մերժվի: Բ. Այն պետություններին պարտավորեցնում է ճանաչել և դրամական օժանդակություն տրամադրել կրոններին: Գ. Այն որևէ կերպ չի կարող պետության կողմից սահմանափակվել:	**Կրոնի ազատության իրավունք.** Ա-ն ճիշտ պատասխանն է: Պետությունները պարտավորված են հարգել կրոնի ազատության իրավունքը, սակայն ճանաչման կամ սուբսիդավորման որևէ համակարգի մասով իրավական պարտավորություն չեն կրում: Պետությունները կարող են սահմանափակել կրոնի ազատությունը օրինակ այն դեպքում, երբ կրոնը հակասում է մարդու հիմնարար իրավունքներին:
Սեփականության իրավունք. Ա. Սա, այնուամենայնիվ, նշանակում է, որ պետությունները կարող են վերցնել անձի սեփականությունը, եթե սա բխում է հանրային շահերից: Բ. Այս իրավունքը խախտվում է, եթե մի ամբողջ գյուղի բնակչություն տարհանվում է առանց պատշաճ փոխհատուցում ստանալու, որպեսզի այդ տարածքում կառուցվի հիդրոէլեկտրակայան: Գ. Այն թույլ է տալիս, որ անձն իր ձեռքբերած գողոնը համարի իր սեփականությունը:	**Սեփականության իրավունք.** Ա-ն և Բ-ն ճիշտ պատասխաններն են: Գ-ն ակնհայտորեն սխալ է:
Ընտրություններ. Ա. Բոլոր քաղաքացիներին թույլատրվում է քվեարկել, նույնիսկ եթե քրեական գործունեության հետևանքով զրկվել են իրենց քաղաքացիական իրավունքներից: Բ. Մեկ անձը կարող է երկու անգամ քվեարկել, եթե նա գործատու է: Գ. Քվեարկությունը պետք է անցկացվի գաղտնի:	**Ընտրություններ.** Ճիշտ է միայն Գ տարբերակը: Պետությունը կարող է թույլ չտալ քաղաքացիական իրավունքներից զրկված անձանց քվեարկել: Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի հավասար իրավունքներ, որը միջազգային նորմ է:

Արտահայտվելու ազատության իրավունք. Ա. Այն կարող է սահմանափակվել զրպարտությունից պաշտպանված լինելու նպատակով: Բ. Այն չի կարող սահմանափակվել հասարակական բարքերի հիմնավորմամբ: Գ. Այն կարող է սահմանափակվել կրոնական անհանդուրժողականությունը կանխելու նպատակով:	**Արտահայտվելու ազատության իրավունք.** Ա և Գ տարբերակները ճիշտ են: Արտահայտվելու ազատության իրավունքը որոշակի պայմաններում կարող է սահմանափակվել հասարակական բարքերի հիմնավորմամբ, հանցագործությունների կանխմանշն, առողջության պաշտպանության կամ զրպատությունից պաշտպանելու նպատակով, եթե դա նախատեսված է օրենքով:
Աշխատանքի իրավունք. Ա. Պարտավորեցնում է պետություններին բոլոր քաղաքացիներին աշխատանքով ապահովել: Բ. Նշանակում է, որ ոչ ոք կամայականորեն չի կարող աշխատանքից ազատվել: Գ. Չի նշանակում, որ պետությունը պետք է ջանքեր գործադրի ապահովելու համար բնակչության լրիվ զբաղվածություն:	**Աշխատանքի իրավունք.** Բ-ն միակ ճիշտ պատասխանն է: Եվրոպայում պետությունները պարտավորված են քայլեր ձեռնարկել ապահովելու համար բնակչության լրիվ զբաղվածությունը, սակայն սա ներառված չէ ՄԱԿ-ի պայմանագրերում:
Առողջ շրջակա միջավայրի իրավունք. Ա. Արգելում է պետություններին նետել թունավոր թափոններ, որոնք անդառնալիորեն փչացնում են հողը: Բ. Նպատակն է պաշտպանել մարդկանց, կենդանիներին և բույսերին: Գ. Այն դեռ ամրագրված չէ որպես համընդհանուր իրավունք:	**Առողջ շրջակա միջավայրի իրավունք.** Գ-ն ճիշտ պատասխանն է, թեև առողջության պահպանման իրավունքը պաշտպանում է մարդկանց ուղղակիորեն աղտոտման հետևանքով ի հայտ եկող վնասից: Այսպիսի դեպքերում միայն մարդիկ են համընդհանուր կերպով պաշտպանված, մինչդեռ կենդանիներն ու բույսերը պաշտպանված չեն: Աֆրիկյան խարտիան և Եվրոպական Միության խարտիան, որոնք համընդհանուր ուժ չունեն, որոշ չափով սահմանում են առողջ շրջակա միջավայրի իրավունքը:
Համաձայն կրթության իրավունքի՝ Ա. Տարրական դպրոց հաճախող երեխաներից դպրոցական վճարներ չեն գանձվում, կարող է պահանջվել միայն դպրոց գնալու ճանապարհածախսի և դպրոցական դասագրքերի գումարը: Բ. Պետության պարտավորությունն է ձգտել հնարավորինս շատ աշակերտների օգնել հաջողելու համար ուսումնառության մեջ: Գ. Պետությունները պետք է կրթության ոլորտում աշակերտներին ապահովեն հավասար հնարավորություններով:	**Համաձայն կրթության իրավունքի՝** Բ և Գ պատասխանները ճիշտ են (այս պարտավորությունները ներառված են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում): Սկզբունքորեն, տարրական կրթությունը պետք է լինի անվճար, և սա ներառում է ոչ միայն դպրոցական վճարները, այլև դպրոցական հիմնական աշխատանքների հետ կապված մյուս անուղղակի ծախսերը:
Դպրոցներում երեխաներին պատժելը. Ա. Մարմնական պատիժն արգելված է: Բ. Դաժան հոգեբանական պատիժը արգելված չէ: Գ. Թույլատրելի է, միայն եթե ծնողները համաձայնություն են տալիս:	**Դպրոցներում երեխաներին պատժելը.** Ա պատասխանը ճիշտ է, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շարունակաբար գնահատել է մարմնական պատիժը որպես ՄԻԵԿ-ի խախտում (և սա համապատասխանում է Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի մասով արված մեկնաբանությանը): Բ պատասխանը սխալ է, քանի որ արգելքը վերաբերում է բոլոր տեսակի դաժան պատիժներին: Ինչ վերաբերում է Գ տարբերակին, ապա գոյություն չունի որևիցե դրույթ, որով պատիժն ուղղակիորեն պայմանավորված է ծնողների համաձայնությամբ:

Դպրոցում. Ա. Հարկավոր չէ ուշադրության արժանացնել բնապահպանական խնդիրները: Բ. Փոքր երեխաներին պետք է սովորեցնել հարգել իրենց ծնողներին: Գ. Փոքր երեխաները պետք է սովորեն մարդու իրավունքների մասին և կիրառեն այդ իրավունքները:	**Դպրոցում.** Բ-ն և Գ-ն պատասխանները ճիշտ են: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում առկա են նման դրույթներ: Կոնվենցիան նաև սահմանում է, որ կրթության նպատակը պետք է լինի շրջակա միջավայրի նկատմամբ հարգանք սերմանելը:
Դատարանում. Ա. Յուրաքանչյուր հանցագործ փաստաբանի ծառայություններից օգտվելու իրավունք ունի: Բ. Մարդիկ կարող են մեղավոր ճանաչվել միայն այն դեպքում, եթե խոստովանել են հանցանքի կատարման մասին: Գ. Կասկածյալը անվճար թարգմանչական ծառայությունից օգտվելու իրավունք ունի, եթե դատավարությունը տեղի է ունենում իրեն անծանոթ լեզվով:	**Դատարանում.** Ա և Գ տարբերակները ճիշտ են:
Խոշտանգում. Ա. Այն թույլատրվում է, եթե կիրառվում է ահաբեկչական հարձակում կանխելու նպատակով: Բ. Այն թույլատրվում է միայն դատավորի որոշումը ստանալուց հետո: Գ. Այն ոչ մի պարագայում թույլատրելի չէ:	**Խոշտանգում.** Գ-ն ճիշտ պատասխանն է (չի թույլատրվում խոշտանգման ենթարկել նույնիսկ ներպետական մակարդակով արտակարգ դրության պարագայում):
Կյանքի իրավունքը խախտված է, եթե՝ Ա. Ինչ-որ մեկը պատահաբար սպանվում է ոստիկանական ուժերի կողմից, երբ վերջիններս կանխում էին մեկ այլ մարդու կյանքի դեմ ուղղված հարձակում: Բ. Ինչ-որ մեկը մահանում է պատերազմական գործողության հետևանքով, նույնիսկ եթե այդ գործողությունն օրինական էր: Գ. Ինչ-որ մեկը մահանում է ոստիկանական ուժերի կողմից կիրառված ոչ անհրաժեշտ ուժի հետևանքով:	**Կյանքի իրավունքը խախտված է, եթե՝** Ճիշտ պատասխանն է Գ-ն: Ա պատասխանի դեպքում կյանքի իրավունքը կարող է խախտվել, եթե ոստիկանության կողմից կիրառված ուժը լինի ավելին, քան բացարձակ անհրաժեշտ:
Համաձայն բնակարանի իրավունքի՝ Ա. Բոլոր պետությունները պարտավորված են ապահովել, որ ոչ մեկ անօթևան չմնա: Բ. Օտարերկրացիների համար պետք է հասանելի լինեն բնակարանային նույն սոցիալական ծրագրերը, որոնք գործում են երկրի քաղաքացիների համար: Գ. Պետությունը պետք է ջանքեր գործադրի կրճատելու համար անօթևան անձանց թիվը:	**Համաձայն բնակարանի իրավունքի՝** Բ-ն և Գ-ն պատասխանները ճիշտ են:
Համաձայն առողջության պահպանման իրավունքի՝ Ա. Պետությունները պարտավորված չեն կանխարգելել աշխատանքային պատահարները: Բ. Առողջապահությունը պետք է մատչելի լինի յուրաքանչյուրի համար: Գ. Դեղորայքը պետք է անվճար լինի:	**Համաձայն առողջության պահպանման իրավունքի՝** Ճիշտ պատասխանն է Բ-ն: Աշխատանքային պատահարների կանխարգելումը համարվում է պարտավորություն: Դեղորայքը կարող է վաճառվել:

Համաձայն ազատ տեղաշարժի իրավունքի՝ Ա. Անձին կարող է թույլ չտրվել ընտրել բնակության որոշակի վայր՝ ելնելով հանրային անվտանգության նկատառումներից: Բ. Հանցագործություն կատարելու մեղադրանքով երբևէ չդատապարտված անձին վիզայի տրամադրումը մերժելը մարդու իրավունքների խախտում է: Գ. Հանցագործին կարելի է բանտարկել:	**Համաձայն ազատ տեղաշարժի իրավունքի՝** Ա և Գ տարբերակները ճիշտ են: Ոչ միայն հանցագործներին, այլև ցանկացած մեկին վիզայի տրամադրումը կարող է մերժվել: Ազատ տեղաշարժի մասով սահմանափակումներ կարող են կիրառվել նաև հանրային առողջության, հասարակական կարգի կամ ազգային անվտանգության նկատառումներով օրենքով նախատեսված լինելու դեպքում:

Ուսուցչի համար նախատեսված դասավանդման նյութեր

Այս ցանկում ընդգրկված են «Մարդու իրավունքների ցանկ»-ում առկա իրավունքները՝ մեջբերելով համապատասխան հոդվածներ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից (ՄԻՀՀ), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրից (ՔՔԻՄԴ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրից, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից (ՄԻԵԿ) և վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայից (ՎԵՍԽ): Այս համառոտ ակնարկը կազմվել է կրթական նկատառումներով:

	ՄԻՀՀ	ՄԻԵԿ	ՎԵՍԽ	ՔՔԻՄԴ	ՏՍՄԻՄԴ
1. Կյանքի իրավունքը	3	2		6	
2. Խոշտանգումների արգելք	5	3	26	7, 10	
3. Ստրկության արգելք	4	4		8	
4. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք	3	5		9	
5. Արդար դատաքննության իրավունք	10, 11	6, 7		14, 15	
6. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք խախտումների դեպքում	8	13	D	2, 9	
7. Խտրականության արգելք, հավասարության իրավունք	2, 7	14	4, 15, 20, 27, E	3, 26	3
8. Իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք, քաղաքացիության իրավունք	6, 15			16, 24	
9. Գաղտնիության և ընտանեկան կյանքի իրավունք	12	8		17	
10. Ամուսնության իրավունք	16	12		23	
11. Սեփականություն ունենալու իրավունք	17				15
12. Մարդկանց տեղաշարժի իրավունք	13		18	12	
13. Ապաստանի իրավունք	14			18	
14. Մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք	18	9		18	
15. Արտահայտվելու ազատություն	19	10	28	19	8
16. Հավաքների և միավորման ազատության իրավունք	20	11	5, 28	21, 22	8
17. Սննդի, ջրի և բնակարանի իրավունք	25		30, 31		11
18. Առողջության պահպանման իրավունք	25		11		7, 12
19. Կրթության իրավունք	26		10		13, 14
20. Աշխատանքի իրավունք	23		1,2, 3, 4, 24		6, 7
21. Հանգստի և ժամանցի իրավունք	24		2		7

	ՄԻՀՀ	ՄԻԵԿ	ՎԵՍԽ	ՔՔԻՄԴ	ՏՍՄԻՄԴ
22. Սոցիալական ապահովության իրավունք	22, 25		7, 8, 12, 13, 14 16, 17 19, 23 25		9, 10
23. Քաղաքական մասնակցության իրավունք	21		22	25	
24. Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք	27			27	15
25. Մարդու իրավունքների խախտման անթույլատրելիություն	30	17		5, 20	5
26. Սոցիալական կարգուկանոնի իրավունք որը ճանաչում է մարդու իրավունքերը	28			2	2
27. Անհատի պարտականություններ	29				

Ծանոթագրություն. ՎԵՍԽ-ում տեղ գտած որոշ հոդվածներ նշված են թվերի, իսկ որոշները՝ տառերի միջոցով:

Գլուխ 6.
Պարտականություն

Ինչպիսի՞ պարտականություններ ունեն մարդիկ:



6.1. Պարտականություններ տանը

Մարդիկ հանդիպում են իրավիճակների, երբ բախվում են իրենց տարբեր հանձնառությունները – ինչպիսի՞ որոշում կայացնել:

6.2. Ինչու՞ պետք մարդիկ ենթարկվեն օրենքին:

Որո՞նք են օրենքին ենթարկվելու համար լավագույն փաստարկները:

6.3. Ո՞վ է դրա համար պատասխանատու:

Ինչպե՞ս են սոցիալական պատասխանատվությունները բաշխվում:

6.4. Ինչու՞ են մարդիկ դառնում ակտիվ քաղաքացի:

Ինչու՞ են մարդիկ ցանկանում փոխել հասարակությունը և ինչպե՞ս կարող են նրանք դա իրագործել:

ԳԼՈՒԽ 6. Պարտականություն
Ինչպիսի՞ պարտականություններ ունեն մարդիկ:

Իրավական պարտականություն

Ցանկացած պետության քաղաքացի իրավունք ունի իմանալ այդ երկրի օրենքով սահմանված իր իրավունքները, ինչպես նաև գնահատել պետության և այլ քաղաքացիների նկատմամբ իրենց կրած իրավական պարտականությունները: Ժողովրդավարական պետություններում քաղաքացիների պարտականությունները երբեմն ամփոփվում են երեք հիմնական պարտականությունների մեջ՝ քվեարկել, վճարել հարկեր և ենթարկվել օրենքին:

Պարտականությունները հաճախ իրավունքների հակադարձումն են: Դիցուք՝ ազատ խոսքի իրավունքը ծնում է պարտականություն՝ այլ մարդկանց թույլ տալու նույն իրավունքից օգտվել: Այնուամենայնիվ, մարդիկ, ովքեր հանցագործություն են կատարում, միշտ չէ որ կորցնում են այն իրավունքը, որից նրանք զրկել էին այլ մարդկանց (ինչպես սպանության կամ խտրականության դեպքում): Նույն կերպ, մարդիկ հաճախ ունեն պարտավորություններ, որոնք փոխադարձ բնույթ չեն կրում, օրինակ՝ երեխաների հանդեպ պարտականությունները:

Բարոյական պարտականություն

ԺՔԿ-ի շրջանակում շատ կարևոր է երիտասարդների բարոյապես մտածելու կարողության զարգացումը: Առանց այս կարողության չի կարող լինել հասարակության օրենքների կամ սոցիալական կառույցների արդարության (անաչառության) վերաբերյալ քննադատական գնահատում: Այս պատճառով, երբ աշակերտները սովորում են իրենց վրա ազդեցություն ունեցող օրենքների մասին, նրանց հարկավոր է նաև խրախուսել, որպեսզի վերջիններս քննադատորեն գնահատեն այդ օրենքների գործառույթները և նպատակը, ինչպես նաև դրանց որևէ կերպ փոփոխելու անհրաժեշտությունը:

Ուսուցում հանուն պատասխանատվության

Ուսուցիչները կարող են օգնել, որպեսզի աշակերտները առավել խորը իրազեկված լինեն այլոց կարիքների և իրավունքների մասին՝ ուսումնասիրելով մարդկանց սոցիալամետ վարքագծի պատճառները կամ նշելով այլ մարդկանց կարիքների սահմանները: Կարևոր է նաև, որ ուսուցիչները աշակերտների առաջ դրսևորեն պատասխանատվությունը ցուցադրող վերաբերմունք:

Աշակերտները սովորում են պատասխանատու քաղաքացի լինել ոչ միայն դասարանում սովորելու, այլև ուրիշների փորձից դասեր քաղելու հնարավորության միջոցով: Այս առումով ԺՔԿ զծով հաջողակ դպրոցը հակված կլինի խրախուսել աշակերտների ներգրավվածությունը դպրոցական և ընդհանուր համայնքային կյանքին, օրինակ՝ դպրոցական խորհուրդների միջոցով:

Սույն գլուխում աշակերտների կողմից պետք է կատարվի հետևյալը.

- ուսումնասիրել մի շարք պարտականություններ, որոնք կրում են քաղաքացիները հասարակության մեջ,
- ուսումնասիրել մարդկանց իրավական պարտականությունների բնույթը,
- քննարկել համատեղ սոցիալական պատասխանատվությունների բնույթը,
- քննարկել, թե ինչու են մարդիկ անձնական պատասխանատվություն ստանձնում սոցիալական փոփոխություններ իրագործելու համար:

ԳԼՈՒԽ 6. Պարտականություն
Ինչպիսի՞ պարտականություններ են կրում մարդիկ:

Դասի վերնագիրը	Նպատակները	Առաջադրանքներ	Ռեսուրսներ	Մեթոդ
Դաս 1: Տնային պարտականություններ	Ուսումնասիրել մարդկանց մի շարք պարտականություններ: Հասկանալ, որ պարտականությունները կարող են հակասել միմյանց:	Աշակերտները վերլուծում են բարոյական երկընտրանքի հասկացությունը: Աշակերտները քննարկում են այլընտրանքային վերլուծություններ: Աշակերտները հանդես են գալիս անհատական պնդումներով:	«Միլանն ընտրություն է կատարում» պատմության օրինակներ: Գրավոր առաջադրանքների համար նախատեսված թուղթ:	Ինքնուրույն քննարկում և քննարկում փոքր խմբով: Պլենար քննարկում: Ինքնուրույն գրավոր աշխատանք:
Դաս 2՝ Ինչու՞ պետք մարդիկ ենթարկվեն օրենքին:	Ուսումնասիրել պարտականության հակասությունների հիմքում ընկած որոշումների բարոյական փաստարկները:	Աշակերտները վերլուծում են բարոյական երկընտրանքի մի իրավիճակ: Աշակերտները քննադատորեն գնահատում են օրենքին ենթարկվելու պատճառները: Աշակերտները բերում են այնպիսի իրավիճակների օրինակներ, որտեղ բարոյական պարտականությունը կարող է գերակայել օրենքին ենթարկվելու պարտականությանը:	«Ծմիտի երկընտրանքը» պատմվածքի օրինակներ: Գրավոր առաջադրանքների համար նախատեսված թուղթ: Գրատախտակ	Բարոյական պարտականության հասկացության համատեղ վերլուծություն: Վերլուծություն ուսուցչի աջակցությամբ: Շարադրություն: Պլենար քննարկում:
Դաս 3. Ո՞վ է դրա համար պատասխանատու:	Ուսումնասիրել մարդկանց իրավական պարտականությունների բնույթը: Ուսումնասիրել բարոյական և իրավական պարտավորությունների միջև տարբերությունը:	Աշակերտները քննարկում են պարտականություններ սոցիալական որոշ խնդիրների ուղղությամբ: Աշակերտները լրացնում են մտածողության ֆրեյմը (մտածողությունը զարգացնող աղյուսակ): Աշակերտները բարձրացված հարցերին տալիս են գրավոր պատասխաններ:	«Նամակի» օրինակներ: Գրատախտակ Ինքնուրույն գրավոր աշխատանքի համար նախատեսված թղթեր:	Կառուցվածքային քննադատական վերլուծություն: Վերլուծություն և քննարկում փոքր խմբերով: Համաձայնության ձեռքբերում և բանակցություն: Ինքուրույն գրավոր աշխատանք:
Դաս 4. Ինչու՞ են մարդիկ դառնում ակտիվ քաղաքացի:	Քննարկել սոցիալական խնդիրների ուղղությամբ համատեղ պատասխանատվություն կրելու բնույթը: Քննարկել պատճառները, թե մարդիկ ինչու են պատասխանատվություն ստանձնում այլ մարդկանց տառապանքների համար: Ուսումնասիրել ՀԿ-ների դերը քաղաքացիական հասարակության մեջ:	Աշակերտները աշխատում են խմբերով, որպեսզի պատմություն կազմեն: Աշակերտներն առաջադրում են վարկածներ սոցիալապես պայմանավորված վարքագծի հիմքում ընկած պատճառների շուրջ: Աշակերտները քննարկում են ՀԿ-ների դերը: Խմբերի բաժանված՝ աշակերտներն ուսումնասիրում են որևէ ՀԿ-ի կամ սոցիալական իրավունքների պաշտպանի աշխատանքը: Խմբերի բաժանված՝ աշակերտները ներկայացնում են իրենց արդյունքները:	Հելենա Սանտիկի մասին պատմության արդեն առանձնացված հատվածի օրինակներ (աշակերտների համար նախատեսված 6.4 նյութերից): Օժանդակ նյութեր աշակերտների կողմից կատարվող հետազոտության համար: Խմբային պրեզենատացիաների համար նախատեսված օժանդակ նյութեր, ինչպես օրինակ՝ մեծ չափսի թուղթ, գունավոր գրիչներ:	Խմբային աշխատանք: Բանակցություն: Բարոյական դատողություն: Քննադատական գնահատում: Հետազոտություն: Խմբային պրեզենտացիա:

Դաս 1.
Տնային պարտականություններ
Մարդիկ հանդիպում են դեպքերի, երբ բախվում են իրենց տարբեր հանձնառությունները – ինչպիսի՞ որոշում կայացնել:

Ուսուցման նպատակներ	Ուսումնասիրել մարդկանց մի շարք պարտականություններ: Հասկանալ, որ պարտականությունները կարող են հակասել միմյանց: Ուսումնասիրել պարտականության հակասությունների հիմքում ընկած որոշումների բարոյական փաստարկները:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները վերլուծում են բարոյական երկընտրանքի հասկացությունը: Աշակերտները քննարկում են այլընտրանքային վերլուծություններ: Աշակերտները հանդես են գալիս անհատական պնդումներով:
Ռեսուրսներ	«Միլանն ընտրություն է կատարում» պատմության օրինակներ: Գրավոր առաջադրանքների համար նախատեսված թուղթ:
Մեթոդներ	Ինքնուրույն քննարկում և քննարկում փոքր խմբով: Պլենար քննարկում: Ինքնուրույն գրավոր աշխատանք:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Պարտականություն. Մի բան, որ մարդիկ պետք է անեն – պարտականությունները կարող են լինել իրավական, բարոյական կամ սոցիալական՝ կախված նրանից, թե ինչպես են դրանք ի հայտ գալիս:

Բարոյական հակասություններ. Հակասություն, որին մարդիկ կարող են առերեսվել գործողության երկու կամ ավելի եղանակների միջև ընտրություն կատարելիս:

Քաղաքացիական պարտականություն. Մարդկանց պարտականությունները ընդհանուր համայնքի նկատմամբ: Այս պարտականություններն ի հայտ են գալիս, քանի որ անդամակցությունը որևէ համայնքին ենթադրում է իրավունքներ պարտականությունների դիմաց:

Դասի ընթացքը

Ուսուցիչը ներկայացնում է այն գաղափարը, որ յուրաքանչյուր ոք ունի որոշակի պարտականություններ, և երբ մարդիկ այդ պարտականություններից մի մասը վեր են դասում մնացածից, կարող են խնդիրներ ծագել: Հանդիպում են իրավիճակներ, երբ անհրաժեշտ է լինում կատարել դժվար ընտրություն: Ուսուցիչն աշակերտների համար ընթերցում է «Միլանն ընտրություն է կատարում» պատմությունը և հանձնարարում մտածել ստորև նշված հարցերի շուրջ: Հարցերի մի մասը կարող է քննարկվել զույգերով նախքան պատասխանները վերջնական ձևակերպում կստանան: Մնացած հարցերի վերաբերյալ աշակերտները կարող են օգտակար նշումներ կատարել նախքան դասարանին իրենց գաղափարները ներկայացնելը:

1. Ըստ պատմության՝ Միլանն ինչպիսի՞ պարտականություններ ուներ: Քանի՞ տեսակի պարտականություն եք տեսնում (սեփական անձի, ընտանիքի, դպրոցի, տեղական համայնքի նկատմամբ կամ աշխարհի մասշտաբով):
2. Ըստ ձեզ՝ ինչպե՞ս պետք է Միլանը վարվեր և ինչու՞: Բոլո՞ր աշակերտներն են համամիտ:
3. Ըստ ձեզ՝ որչա՞փ դժվար է այն որոշումը, որ Միլանը պետք է կայացնի: Ի՞նչն այն դժվար դարձնում:
4. Այս պատմության շրջանակում Միլանի հայրն ի՞նչ պարտականություններ ունի: Քանի՞ այդպիսի պարտականություն եք նկատել:
5. Ձեր կարծիքով Միլանի հայրը իրավացի՞ էր, երբ խնդրեց նրան տանից չհեռանալ:
6. Որչա՞փ լուրջ կլինեին հետևանքները, եթե Միլանը չենթարկվեր իր հայրիկին: Միլանի համար դժվա՞ր կլիներ այդպիսի որոշում կայացնել: Հիմնավորե՛ք ձեր պատասխանները:

Գրավոր հանձնարարություն

Ձեր բառերով գրեք, թե, ըստ ձեզ, Միլանը ինչ գրություն թողեց իր հայրիկի համար: Համամատեք ձեր տարբերակը դասընկերների տարբերակների հետ: Աշակերտները ներկայացնում են իրենց մտքերը դասարանին:

Ընդհանրացում

Հավանաբար աշակերտներն արդեն քննարկել են բարոյական հակասության որոշ ընդհանուր հայեցակետեր:

Ուսուցիչն արձագանքում է աշակերտների հնչեցրած մտքերին կամ հանձնարարում նրանց առավել ընդհանրացված ձևով մտածել այն պարտականությունների մասին, որ մարդիկ ունեն.

- սեփական անձի նկատմամբ,
- իրենց ընտանիքի նկատմամբ,
- իրենց տեղական համայնքի նկատմամբ,
- երկրի նկատմամբ,
- աշխարհի մասշտաբով:

Աշակերտները կրկին աշխատում են խմբերի բաժանված: Նրանք կարող են օգտագործել աղյուսակ տարբեր պարտականություններ սահմանելու նպատակով: Այնուհետև դասարանում քննարկում է ծավալվում այն մասին, թե որոնք են պատճառները, որ մարդիկ տարաձայնություն ունեն այլոց և համայնքի նկատմամբ պարտականությունների շրջանակի վերաբերյալ:

Անհատական պնդումներ

Ուսուցիչը աշակերտներին հաղորդում է հետևյալ տեղեկությունը: «Պատմության մեջ Միլանի պարտականություններից մի քանիսը հակասում են իրար»: Մտածեք ձեր սեփական օրինակների մասին, որտեղ մարդկանց պարտականությունները կարող են հակասել մեկը մյուսին: Վերցրեք որոշ կոնկրետ օրինակներ և խոսեք այն մասին, թե ըստ ձեզ, ինչպես պետք է մարդիկ լուծեն պարտականությունների այդպիսի հակասությունները:»

Եթե աշակերտները դժվարանում են գտնել նման օրինակներ, ապա ուսուցիչը պետք է ներկայացնի որոշ կոնկրետ օրինակներ տեղեկան կյանքի համատեքստում:

Դաս 2.
Ինչու՞ պետք մարդիկ ենթարկվեն օրենքին:
Որո՞նք են օրենքին ենթարկվելու համար լավագույն փաստարկները:

Ուսուցման նպատակներ	Ուսումնասիրել մարդկանց իրավական պարտականությունների բնույթը: Ուսումնասիրել բարոյական և իրավական պարտավորությունների միջև տարբերությունը:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները վերլուծում են բարոյական երկընտրանքի դեպք պլենար քննարկման ժամանակ: Աշակերտները քննադատորեն գնահատում են օրենքին ենթարկվելու պատճառները: Աշակերտները բերում են այնպիսի իրավիճակների օրինակներ, որտեղ բարոյական պարտականությունը կարող է գերակայել օրենքին ենթարկվելու պարտականությանը:
Ռեսուրսներ	«Շմիտի երկընտրանքը» պատմվածքի օրինակներ: Գրավոր առաջադրանքների համար նախատեսված թուղթ: Գրատախտակ:
Մեթոդներ	Բարոյական պարտականության հասկացության համատեղ վերլուծություն: Վերլուծություն ուսուցչի աջակցությամբ: Շարադրություն: Պլենար քննարկում:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Օրենք. Տեղական ինքնակառավարման մարմինների կամ ազգային կառավարության կողմից սահմանված կանոն:

Իրավունքի գերակայություն. Ժողովրդավարական հասարակություններում կառավարությունները և իշխանության գլուխկանգնածները ենթակա են այդ երկրի օրենքին: Իշխանափոխության գործընթացները տեղի են ունենում ժողովրդավարական եղանակով՝ համաձայն երկրի սահմանադրության կանոնների, այլ ոչ ուժի կամ պատերազմի արդյունքում: Մարդիկ ունեն օրենքին ենթարկվելու համընդհանուր պարտականություն, քանի որ այդ որոշումը կայացվել է ժողովրդավար եղանակով:

Իրավական պարտականություն. Մարդկանց կողմից ստանձնած պարտավորություններ՝ սահմանված օրենքով:

Բարոյական պարտականություն. Մարդկանց անձնական պարտավորությունները՝ հիմնված իրենց այն համոզմունքների վրա, թե ինչն է ճիշտ, և ինչը՝ սխալ:

Դասի ընացքը

Ուսուցիչը ներկայացնում է «Շմիտտի երկընտրանքը» վերնագրով պատմությունը և հանձնարարում աշակերտներին աշխատել զույգերով և քննարկել՝ արդյոք ճիշտ կվարվեր Շմիտտը, եթե օրենքը խախտեր և գումար գողանար: Ուսուցիչը գրատախտակին գրում է տարբեր տեսակետներ, այն մասին, թե արդյոք Շմիտտը պետք է գումար գողանա:

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին ընտրել տեսակետներից այն մեկը, որին համամիտ են և գրի առնել իրենց սեփական հիմնավորումները:

– Փող գողանալու Շմիտտի որոշումն արդարացված էր, որովհետև…
– Փող գողանալու Շմիտտի որոշումն արդարացված չէր, որովհետև…

Ուսուցիչը գրատախտակին ավելացնում է աշակերտների կողմից առաջարկված հիմնավորումները: Օրինակ,

«Գումար գողանալու նրա քայլն արդարացված էր, որովհետև նրա դստեր կյանքն առավել կարևոր է, քան գողությունն արգելող օրենքը»,

«Գումար գողանալու նրա քայլն արդարացված չէր, որովհետև նա կարող էր բռնվել», կամ

«Գումար գողանալու նրա քայլն արդարացված չէր, որովհետև օրենք խախտելը սխալ է»:

Այնուհետև այդ տարբեր հիմնավորումները քննարկվում են դասարանում: Ինչո՞վ են դրանք տարբերվում: Արդյո՞ք հիմնավորումների մի մասը մյուսից լավն է: Ապա ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին ավարտել հետևյալ նախադասությունը.

«Ընդհանուր առմամբ սխալ է օրենք խախտելը, որովհետև…»:

Որպես այլընտրանք՝ ուսուցիչը կարող է դասարանին հանձնարարել մտածել հնարավորինս մեծ թվով հիմնավորումների մասին, որոնք ցույց կտան, թե ինչու է սխալ օրենք խախտելը: Որպես կանոն մարդիկ այս հարցին տալիս են մի շարք պատասխաններ, ներառյալ ստորև նշվածները:

«Օրենք խախտելը սխալ է, որովհետև.

– խախտողը կարող է բռնվել և պատժի ենթարկվել,
– օրենքը մարդկանց պաշտպանում է վնասաբեր երևույթներից, և այլ մարդկանց վնասելը սխալ է,
– բոլորը անօրինության մեջ կընկնեն, եթե օրենքը նրանց արարքները չկանխեր,
– օրինախախտումների արդյունքում սասանվում է վստահությունը մարդկանց միջև,
– Գոյատևելու համար հասարակությանն անհրաժեշտ է օրենք և կարգուկանոն. օրենքների բացակայության դեպքում կտիրի քաոս,
– օրինախախտումը ոտնահարում է անհատների իրավունքները, օրինակ՝ սեփականության կամ կյանքի իրավունքը»:

Ուսուցիչը դասարանի ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ մարդիկ ունեն օրենքին ենթարկվելու մի շարք պատճառներ: Այս պատճառներից մի քանիսը պայմանավորված են մարդու անձնական շահերով, մյուս մասն էլ կապված են այլոց նկատմամբ մտահոգության կամ հասարակության բարեկեցության հետ (տե՛ս ստորև ներկայացված ծանոթագրությունը):

Այս հասկացությունները պարզաբանելու նպատակով ուսուցիչը կարող է գրատախտակին գծել համակենտրոն երեք շրջանագիծ՝ սկսելով ներքին շրջանագծից և դրանցից յուրաքանչյուրի ներսում գրելով «ես», «այլոք» և «հասարակություն» բառերը: Տարբեր հիմնավորումները պետք է գրի առնվեն համապատասխան հատվածներում:

Ուսուցիչը շեշտում է այն հանգամանքը, որ օրինապահությունն ինքնին դեռ չի նշանակում «լավ քաղաքացի»: Շատ են այն սխալ արարքները, որոնք կատարվել են իսկապես օրինապահ մարդկանց կողմից՝ հնչեցնելով այն միտքը, որ իրենք միայն «իրենց պարտականությունն են կատարում»: Մյուս կողմից այս պատմությունը ցույց է տալիս, որ ժամանակ առ ժամանակ

նույնիսկ լավ մարդիկ կարող են ստիպված լինել որոշակի օրենք խախտելու մասին մտածել՝ պայմանավորված բարոյապես բարի հիմքերով:

Խթանելու համար աշակերտների ըմբռնումը իրավական պարտականությունների և բարոյական պատասխանատվության միջև բարդ հավասարակշռության մասին, ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է գրել սեփական կարճ պատմությունները, որոնցում մարդիկ (բարի նպատակների մղումով) մտածում են օրենք խախտելու մասին: Օրինակ կարող են ծառայել արագությունը գերազանցելը արտակարգ իրավիճակի պայմաններում կամ օրենքին չենթարկվելը՝ ելնելով նրանից, որ այն վատն է կամ անարդար:

Աշակերտներից մի քանիսը պլենար քննարկման ժամանակ բարձրաձայն ընթերցում են իրենց օրինակները: Ուսուցիչն այնուհետև ընդգծում է բարոյական պարտականությունների (որոնք մարդիկ ստանձնում են ինքնակամ՝ որպես սեփական արժեքների և համոզմունքների մի մաս) և պետության կողմից սահմանված իրավական պարտականությունների միջև գոյություն ունեցող տարբերությունը: Այս երկու տեսակի պարտականությունների միջև լարվածությունը կարող է պատճառ հանդիսանալ, որպեսզի քաղաքացիները քննադատեն որոշ օրենքներ, որոնց հետ իրենք համաձայն չեն, և աշխատեն դրանք փոփոխելու ուղղությամբ: Հնարավոր է՝ լինեն դեպքեր, երբ նրանք նույնիսկ որոշեն խախտել որոշ օրենքներ՝ ելնելով բարոյապես դրական նկատառումներից: Պատմության մեջ գոյություն ունեն բազմաթիվ օրինակներ, երբ մարդիկ խախտել են օրենքներ՝ որպես դրանց դեմ բողոքի նշան, կամ ի նշան ապստամբության՝ բռնակալ կառավարությունների դեմ: Ուսուցիչը պետք է այս ամենը պարզաբանի իրենց երկրին համապատասխան մի քանի օրինակների միջոցով: Ուսուցիչը պետք է ընդգծի, որ նման արարքներին պետք չէ վերաբերվել մակերեսորեն՝ հաշվի առնելով իրավունքի գերակայության սկզբունքի խախտման վտանգը, որի վրա հիմնված են կայուն ժողովրդավարությունները:

Ծանոթագրություն

Այս դասում տեղ գտած բարոյական երկընտրանքի օրինակը բավականին նման է հայտնի «Հեինզի երկընտրանքին»՝ հնարված Ամերիկացի հոգեբան Լորենց Կոլբերգի կողմից 1950-ական թվականներին: Սա Կոլբերգի և իր գործընկերների կողմից մշակված երկընտրանքների շարքից մեկն էր, որոնք հրամցվում էին 10-25 տարեկան երիտասարդներին մոտավորապես ամեն երեք տարին մեկ անգամ: Արդյունքում պարզ դարձավ, որ ժամանակի ընթացքում երիտասարդները, միջին հաշվով, անցում էին կատարում եսակենտրոն դատողությունից դեպի մարդակենտրոն դատողություն՝ վաղ պատանեկության տարիքում: Այնուհետև, միջին պատանեկան տարիքում նրանց մեծ մասի մոտ արձանագրվում էր առաջադիմություն դեպի հասարակակենտրոն դատողություն, թեև երկընտրանքի տեսակն ու համատեքստը կարող են ազդեցություն ունենալ մարդկանց կողմից տարբեր ժամանակահատվածներում կիրառվող դատողության վրա: Առավել կրտսերներին սովորեցրել են օրենքներին և կանոններին վերաբերվել որպես ոչ ճկուն երևույթ, որոնց հիմքում ընկած են ոչ թե սոցիալական նշանակության նպատակները, այլ բացառապես օրենսդիրի լիազորությունը: Պատանեկան հասակում երիտասարդներն առավել լավ են տեղեկացված այն մասին, որ օրենքներն ուղղված են սոցիալական նպատակների, որոնք հնարավոր է վերահսկել, կասկածի տակ առնել և քննադատել՝ որպես բարոյապես սխալ կամ անարդար:

Դաս 3.
Ո՞վ է պատասխանատու:
Ինչպե՞ս են սոցիալական պատասխանատվությունները բաշխվում:

Ուսուցման նպատակը	Քննարկել սոցիալական խնդիրների ուղղությամբ համատեղ պատասխանատվություն կրելու բնույթը:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները քննարկում են պարտականություններ սոցիալական որոշ խնդիրների ուղղությամբ: Աշակերտները լրացնում են մտածողության ֆրեյմը (մտածողությունը զարգացնող աղյուսակ): Աշակերտները բարձրացված հարցերին տալիս են գրավոր պատասխաններ:
Ռեսուրսներ	«Նամակի» օրինակներ: Գրատախտակ: Ինքնուրույն գրավոր աշխատանքի համար նախատեսված թղթեր:
Մեթոդներ	Կառուցվածքային քննադատական վերլուծություն: Վերլուծություն և քննարկում փոքր խմբերով: Համաձայնության ձեռքբերում և բանակցություն: Ինքուրույն գրավոր աշխատանք:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Սոցիալական խնդիր. Խնդիր, որին առերեսվում են համայնքի բոլոր անդամները կամ դրա մեծ մասը, և որի պատասխանատվությունը բաշխված է համայնքի տարբեր հատվածների կամ ամբողջ համայնքի միջև: Պարտադիր չէ, որ սոցիալական խնդրի մասով պատասխանատվությունը հավասարապես բաշված լինի խնդրի մեջ ներգրավված կողմերի միջև:

Պատասխանատվության աստիճան. Սոցիալական խնդրի մասով անհատի պատասխանատվության աստիճանը:

Դասի ընթացքը

Ուսուցիչը ներկայացնում է տեղական թերթին ուղարկված մտացածին նամակը: Այն պարունակում է բողոք՝ քաղաքի բնակիչներին անհանգստացնող սոցիալական երկու խնդրի վերաբերյալ:

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին որպես դասարան՝ ա) սահմանել խնդիրները և բ) կազմել մարդկանց ցուցակ (երկու խնդիրների մասով), ովքեր կարող են պատասխանատվություն կրել: Ուսուցիչը կարող է աջակցել այս գործընթացին՝ գրատախտակին գծելով մտածողության ֆրեյմ ստորև նշված ձևով:

Ո՞վ է որևէ կերպով ներգրավված այս խնդրի մեջ:



Խմբային աշխատանք

Քայլ 1.

Բաժանել դասարանը երեք կամ չորս աշակերտներից բաղկացած խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամի տվեք մի քանի միավոր, որոնք հավասար կլինեն ներգրավված կողմերի թվին:

Քայլ 2.

Խմբի յուրաքանչյուր անդամ սկզբում բաժանում է միավորները կողմերի միջև՝ ըստ իրենց տեսակետի այն մասին, թե ինչպես պետք է խնդրի մասով պատասխանատվությունը բաշխվի: Օրինակ, հավանական է, որ երեխաներն ու շները միավորներ չստանան, սակայն միավորները կարող են բաժանվել շան տերերի և քաղաքական գործիչների միջև, կամ մի կողմը կարող է ստանա ավելի շատ միավորներ, քան մյուսը:

Քայլ 3.

Երբ խմբի անդամներից յուրաքանչյուրն արդեն կայացրել իր որոշումը, նրանք հերթով միմյանց հետ կիսում են իրենց գաղափարները՝ ներկայացնելով իրենց հիմնավորումները: Այս փուլում աշակերտները կարող են մտափոխվել: Վերջում խմբերից յուրաքանչյուրը հաշվում է ամեն կողմին տրված միավորների ընդհանուր թիվը: Սա ցույց է տալիս, թե որպես մեկ ամբողջություն կազմող խմբի կարծիքով ինչպես պետք է բաշխվի պատասխանատվությունն այս խնդրի ուղղությամբ:

Ուսուցիչը դասարանի հետ քննարկում է տարբեր խմբերի եզրակացությունները: Ուսուցիչն ուսումնասիրում է առաջ քաշված տարբեր տեսակետները՝ աշակերտներից լսելով իրենց դատողության խորքային պատճառները:

Եթե ժամանակը բավականացնի, կրկնեք վարժությունը աղբի և մնացորդների մասին իրավիճակի միջոցով: Կամ փոխարինեք իրավիճակը դպրոցի տեղանքին առավել առնչվող կամ խմբի ունակությունները լավագույնս խթանող իրավիճակով:

Ծանոթագրություն

Այս օրինակներում ներկայացված խնդիրները համապատասխանում են այն աշակերտների ունակություններին, ովքեր դեռ այնքան էլ փորձառու չեն քաղաքական խնդիրներ քննարկելու մեջ: Դրա պատճառն այն է, որ նշված խնդիրները կոնկրետ են, տեսանելի և համեմատաբար դյուրին (թեև դրանք էլ բավականին դժվար են լուծելու համար): Տարիքով ավելի մեծ աշակերտներին կամ առավել ընդունակ դասարաններին հարկավոր է հանձնարարել ավելի բարդ խնդիրներ, ինչպիսիք են գործազրկությունը կամ ռասիզմը՝ օգտվելով մտածողությունը զարգացնող նույնատեսակ աղյուսակից:

Քայլ 4.

Քննարկում վարժությունների հիման վրա

Վերջին պլենար քննարկման ժամանակ ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին քննարկել այն հարցը, թե արդյոք մարդիկ, ընդհանուր առմամբ, իրենց արարքների համար բավարար չափով են պատասխանատվություն ստանձնում: Եթե ոչ, ապա պետք է քննարկել, թե ինչպես կարելի է նրանց հորդորել բավականաչափ պատասխանատվություն ստանձնել: Կարո՞ղ է կրթությունը որևէ կերպով օգտակար լինել այդ հարցում: Կամ միգուցե անհրաժեշտ է ստեղծել նոր օրենքներ կամ սահմանել առավել խիստ պատժամիջոցներ: Եթե տեղական ինքնակառավարման մարմինները կամ ազգային կառավարությունները պետք է պատասխանատվություն ստանձնեն որոշակի խնդիրների ուղղությամբ, ապա հարցրեք աշակերտներին հավանական ծախսերի և դրանց վճարման եղանակների մասին: Ուսուցիչը կարող է նաև հանձնարարել դասարանին քննարկել երիտասարդության դերը սոցիալական նմանաբնույթ խնդիրների պարագայում: Արդյոք նրանց պե՞տք է ազատել պատասխանատվությունից տարիքի հիմնավորմամբ: Արդյոք ճի՞շտ է երիտասարդության կողմից համայնքում խնդիրների լուծումը թողնել մեծահասակներին: Այսպիսի հարցերը կարող են հիմք լինել ինքնուրույն գրավոր առաջադրանքի համար:

Ուսուցիչը բացատրում է, որ տեղական և ազգային իշխանությունները պետք է իրազեկ լինեն խորացող խնդիրներից: Քաղաքականությունը հաճախ ենթադրում է ընդհանուր խնդիրների հաղթահարում որպես մեկ համայնք: Սա չի նշանակում, թե կառավարությունները կարող են լուծել յուրաքանչյուր խնդիր, և շատ խնդիրներ նույնիսկ չէին էլ ծագի, եթե մարդիկ ի սկզբանե ավելի մեծ պատասխանատվություն ստանձնեին իրենց արարքների հետևանքների համար:

Դաս 4.
Ինչու՞ են մարդիկ դառնում ակտիվ քաղաքացի:
Ինչու են մարդիկ ցանկանում փոխել հասարակությունը և ինչպես կարող են նրանք դա իրագործել:

Ուսուցման նպատակներ	Քննարկել պատճառները, թե մարդիկ ինչու են պատասխանատվություն ստանձնում այլ մարդկանց տառապանքների համար: Ուսումնասիրել ՀԿ-ների դերը քաղաքացիական հասարակության մեջ:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները աշխատում են խմբերով, որպեսզի պատմություն կազմեն: Աշակերտներն առաջադրում են վարկածներ սոցիալապես պայմանավորված վարքագծի հիմքում ընկած պատճառների շուրջ: Աշակերտները քննարկում են ՀԿ-ների դերը: Խմբերի բաժանված՝ աշակերտներն ուսումնասիրում են որևէ ՀԿ-ի կամ սոցիալական իրավունքների պաշտպանի աշխատանքը: Խմբերի բաժանված՝ աշակերտները ներկայացնում են իրենց արդյունքները:
Ռեսուրսներ	Հելենա Սանտիկի մասին պատմության արդեն առանձնացված հատվածի օրինակներ (աշակերտների համար նախատեսված 6.4 բաշխման նյութերից): Օժանդակ նյութեր աշակերտների կողմից կատարվող հետազոտության համար: Խմբային պրեզենատացիաների համար նախատեսված օժանդակ նյութեր, ինչպես օրինակ՝ մեծ չափի թուղթ, գունավոր գրիչներ:
Մեթոդներ	Խմբային աշխատանք: Բանակցություն: Բարոյական դատողություն: Քննադատական գնահատում: Հետազոտություն: Խմբային պրեզենտացիա:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Սոցիալական գործողություն. Քաղաքացիների կամ համայնքի անդամների կողմից ձեռնարկված գործողություններ՝ ուղղված սոցիալական խնդիրները հաղթահարմանը:

Քաղաքացի. Մարդ, ով ունի օրինական անդամակցություն (քաղաքացիություն) ազգային որևէ համայնքին: Քաղաքացիությունը ենթադրում է իրավունքներ և պարտականություններ, թեև մարդիկ տարբեր ըմբռնում ունեն համայնքում կատարվող իրադարձությունների մասով իրենց պարտականությունների սահմանների վերաբերյալ:

Ակտիվ քաղաքացի. Մարդ, ով դիմում է հասարակական գործողությունների՝ արձագանքելու համար սոցիալական կամ համայնքային խնդիրներին:

Հասարակական կազմակերպություն (ՀԿ). Քաղաքացիների (ոչ թե կառավարության) կողմից հիմնված և կառավարվող կազմակերպություն՝ ուղղված սոցիալական խնդիրների հաղթահարմանը: ՀԿ-ները հրապարակային են, այլ ոչ գաղտնի և գործում են հասարակության կառուցվածքների շրջանակում հանուն փոփոխության: Դրանք հաճախ բարձրացնում են այնպիսի խնդիրներ, որտեղ մարդկանց իրավունքները բավարար չափով պաշտպանված կամ պետության կողմից ճանաչված չեն: ՀԿ-ները կարող են համագործակցել կառավարության հետ կամ գործել ընդդեմ կառավարության: Ժողովրդավարական հասարակություններն ունեն օրենքներ, որոնք հնարավոր են դարձնում, որպեսզի ՀԿ-ները գոյություն ունենան և ստանան իրավաբանական իրավունքներ և պաշտպանություն:

Քաղաքացիական հասարակություն. Մարդիկ և կազմակերպություններ, որ ձեռնամուխ են լինում սոցիալական գործողությունների ի լրումն պետության կողմից կատարված աշխատանքների, անվանվում են քաղաքացիական հասարակություն: Քաղաքացիական հասարակությունը առանձին քաղաքացիների և պետության միջև կապի մի մասնիկն է:

Դասի ընթացքը

Ուսուցիչը դասարանը բաժանում է մոտավորապես չորս աշակերտից բաղկացած խմբերի: Այնուհետև հաղորդում է Հելենա Սանտիկի մասին տեղեկությունը (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 6.4): Նախընտրելի է, որ այն առանձին կտորների բաժանված լինի: Ուսուցիչը հանձնարարում է խմբի անդամներին, որպեսզի նրանք պատահականության սկզբունքով իրար մեջ բաժանեն իրենց այդ հատվածները: Խմբի յուրաքանչյուր անդամ իր հերթին ընթերցում է իրեն բաժին հասած հատվածի բովանդակությունը խմբի մյուս անդամների համար: Այնուհետև խումբը կտրված կտորները դասավորում է այնպես, որ այն լինի հնարավորինս իմաստալից:

Ապա ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է խմբով քննարկել ստորև նշված հարցերը և, հնարավորության սահմանում, հանգել ընդհանուր պատասխանի: Ուսուցիչն ընդգծում է, որ հնարավոր է, որ խմբի անդամները համաձայնության չհասնեն, սակայն գաղափարներ փոխանակելու արդյունքում ի հայտ են գալիս առավել լավ պատասխաններ: Առանձին աշակերտներ պետք է գրի առնեն իրենց սեփական պատասխանները: Ուսուցիչն այնուհետև դասարանի հետ համատեղ քննարկում է առանցքային այն խնդիրները, որոնք առաջացել են ստորև նշված հարցերի արդյունքում:

Հարցեր

- Ըստ ձեզ՝ որո՞նք էին Հելենա Սանտիչի՝ Խումբ 484-ի աշխատանքներում ներգրավվելու պատճառները:
- Ելնելով Հելենա Սանտիչի մասին ձեր ունեցած տեղեկություններից ո՞ր բառերը կօգտագործեիք վերջինիս նկարագրելու համար:
- Ձեր կարծիքով ինչու՞ Հելենա Սանտիչն ու Խումբ 484-ը չթողեցին կառավարության կատարմանը այն աշխատանքը, որը ցանկանում էին իրենք իրագործել:
- Ինչպիսի՞ կարիքներ է փորձում Խումբ 484-ը բավարարել:
- Ինչպիսի՞ հասարակություն էին երազում հիմնել Հելենա Սանտիչն ու Խումբ 484-ը:
- Ըստ ձեզ՝ որքանո՞վ են կարևոր հասարակական կազմակերպությունները (ինչպիսին Խումբ 484-ն է) հասարակության մեջ: Ձեր կարծիքով ինչպիսի՞ ձեռքբերումներ կարող են ունենալ հիշյալ կազմակերպությունները: Մտածե՛ք նրանց դերակատարման մասին՝ կապված կառավարության աշխատանքների, ինչպես նաև մարդկանց կարիքների (իրավունքների) բավարարման հետ:
- Մտածե՛ք ձեր երկրի հասարակության մասին: Ի՞նչ կարիքների մասին եք դուք իրազեկված, որոնց բավարարմանը կարող են նպաստել ակտիվ անհատները կամ ՀԿ-ները, եթե վերջիններս ստանձնեն դրանց մասով պատասխանատվություն:

Որպես օրինակ՝ ուսուցիչն այնուհետև ընթերցում է հետևյալ մեջբերումը Բոսնիա և Հերցեգովինայում ՀԿ-ների մասին 2003 թվականի միջազգային զեկույցից.

«ՀԿ-ների սեկտորը Բոսնիա և Հերցեգովինայում շարունակում է դրական ներդրում ունենալ ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կերտման գործընթացում: [...] Ներկայումս Բոսնիա և Հերցեգովինայում կան թվով 7874 հասարակական կազմակերպություններ, որոնք գործում են գրանցման մասին նոր և նախկին օրենքների շրջանակում: [...]

ՀԿ-ների սեկտորն ապացուցեց, որ այն ի զորու էր անցկացնել լայնամասշտաբ հանրային քարոզարշավներ՝ ի պաշտպանություն փոփոխությունների Բոսնիայի հասարակությանը և երիտասարդությանը մտահոգող այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսիք են՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, շրջակա միջավայրը, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը և այլն: Մեծ թվով ՀԿ-ներ շարունակում են ծառայություններ առաջարկել առողջապահության, սոցիալական ապահովության, վերակառուցման, մարդու իրավունքների պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության և փոքրամասնությունների պաշտպանության ոլորտներում»:[22]

22. Աղբյուրը. ԱՄՆ ՄԶԳ-ի «ՀԿ-ների կայունության 2003 թվականի համաթիվ, Եվրոպա և Եվրասիա» խորագրով զեկույց, 42 և 43 էջերը, www.usaid.gov/locations/europe_eurasia/dem_gov/ngoindex/2003/bosnia.pdf

Ուսուցիչն աշակերտների հետ քննարկում է այս մեջբերումը: Առաջին հերթին նրանք պետք է քննարկեն՝ արդյոք զեկույցում նշված գործունեության ոլորտները գործում են նաև իրենց երկրի պարագայում: Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է նրանց մտածել այնպիսի ծրագրերի մասին, որոնք կարող են կիրառելի լինել նշված տարբեր ոլորտների գործունեության դաշտում:

Հարցեր

Որպես այս գլխի ամփոփիչ աշխատանք՝ խմբերից յուրաքանչյուրը կարող է ընտրել այս ոլորտներից մեկը և դրա մասին պրեզենտացիա պատրաստել: Որպես այլընտրանք՝ հետազոտության համար անհրաժեշտ միջոցների առկայության դեպքում աշակերտները կարող են հետազոտել ակտիվ քաղաքացիների կենսակերպը, որը կարող է խմբային պրեզենտացիայի թեմա դառնալ: Աշակերտները կարող են նաև ներառել միջազգային ճանաչում վայելող մարդկանց, ինչպես օրինակ Մայր Թերեզան և Նելսոն Մանդելան:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 6.1
Միլանն ընտրություն է կատարում

Միլանը գրեթե պատրաստ էր դպրոց գնալու համար, երբ նրա հայրը ներս մտավ խոհանոց:

«Միլան, ես այսօր իսկապես քո օգնության կարիքն ունեմ դաշտում: Չե՞ս կարող մնալ տանը և չգնալ դպրոց: Բերքը կվնասվի, եթե շարունակենք այսպես թողնել»:

Միլանը տխրեց:

«Հայրիկ, ես այսօր պետք է դպրոց գնամ»,- ասաց նա,- «Այսօր աշակերտական խորհրդի առաջին նիստն է, և ես նոր եմ ընտրվել որպես 8-րդ դասարանի ներկայացուցիչ»:

«Բայց դու միակը չես, այնպես չէ՞»,- ասաց հայրը,-«Եթե չգնաս, ոչինչ չի փոխվի: 8-րդ դասարանի այլ ներկայացուցիչներ ևս կան, այնպես չէ՞»:

«Այո, բայց եթե ես չգնամ, ապա ես հուսախաբ կանեմ բոլոր այն մարդկանց, ովքեր ինձ ընտրել են: Բացի այդ, մենք այսօր գիտության դաս ունենք: Ես չեմ ուզում բաց թողնել այն: Ես պետք է քննություններս հանձնեմ, եթե համալսարան ընդունվելու նպատակ ունեմ»:

Միլանի հայրը տխուր փնթփնթաց:

«Դու համալսարան ընդունվելու մասին այնպես ես խոսում, կարծես քո ընտանիքը քեզ չի հետաքրքրում: Ինչու՞ չես կարողանում հասկանալ, որ մենք տանը քո կարիքն ունենք: Քեզանից ի՞նչ օգուտ մենք կունենանք, եթե դու ընդունվես համալսարան: Եվ ու՞ր ես գնալու, երբ ստանաս որակավորումներդ: Դժվար թե վերադառնաս այստեղ, դա միանշանակ պարզ է»:

«Դուք պետք է գոհ լինեք, որ ես ցանկանում եմ կյանքում հաջողությունների հասնել»,- Միլանը բղավեց զայրացած,-«ի տարբերություն այստեղի տղաների մեծ մասի: Նրանք ոչ մի ձգտում չունեն: Վերջում նրանք անելու են այն, ինչ իրենց հայրերն են անում»:

«Ոչ մի վատ բան չկա ավելի քան տարեց սերնդի նկատմամբ մի փոքր հարգանք տածելու մեջ»,- պատասխանեց Միլանի հայրը՝ կորցնելով ինքնատիրապետումը: «Այս օրերում կրթության մասին խոսակցություններն ինձ մոտ սրտխառնոց են առաջացնում: Ինձ թվում է՝ դու մոռացել ես որոշ ավանդական արժեքներ, երբ մենք ամեն ինչ համատեղ էինք անում: Դու միայն քո մասին ես մտածում»:

Միլանը հոգոց հանեց: Նա այս ամենը լսել էր նախկինում:

«Հայրիկ, եթե ես լավ աշխատանք գտնեմ, ես քեզ ու ընտանիքս չեմ մոռանա: Ինչպե՞ս կարող էիր մտածել, թե այդպես կվարվեմ: Դու իսկապե՞ս ցանկանում ես, որ ես թողնեմ դպրոցն ու չհասնեմ այն ամենին, ինչին համոզված եմ, որ ընդունակ եմ: Իմ բոլոր ուսուցիչներն ասում են, որ ես կարող եմ լավ գիտնական դառնալ: Միգուցե մի օր ես այնպիսի բացահայտումներ անեմ, որոնք կօգնեն աշխարհի բոլոր մարդկանց»:

Միլանի հայրը հարվածեց սեղանին:

«Քո առաջնահերթ պարտականությունը քո ընտանիքի և այս համայնքի նկատմամբ է, մասնավորապես հիմա, երբ դժվար ժամանակներ են: Դու գլուխդ լցնում ես երազանքներով: Ի՞նչ ես հասկանում դու իրական աշխարհից»:

Միլանը վիրավորվեց այս խոսքերից, սակայն չէր ցանկանում ցույց տալ: Մի պահ նա լուռ անհնազանդությամբ հայացքը սևեռեց հոր վրա: Հայրը շրջվեց և դուրս եկավ տնից՝ շրխկացնելով դուռն իր ետևից:

Միլանը նստեց և հոգոց հանեց: Նա մի րոպե մտածեց, ապա կայացրեց իր որոշումը: Նա վերցրեց իր դպրոցական պայուսակը և շրջվեց դեպի դուռը: Ապա կանգնեց, հանեց մի թուղթ և նստեց, որպեսզի հորն ուղված մի երկտող գրի: Դա ամենադժվար բանն էր, որ արել էր իր կյանքում:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 6.2
Շմիտտի երկընտրանք

Շմիտտի միակ դուստրը ծանր հիվանդ է: Նա անհապաղ վիրահատության կարիք ունի, բայց այդ տարածքի միակ բժիշկները, որ կարող են դա անել, որևէ մեկին բուժելուց առաջ գումար են պահանջում: Շմիտտը չգիտի ինչ անել: Նա և իր կինը որոշակի խնայողություններ ունեն, որի միջոցով նրանք հույս ունեին մի փոքրիկ խանութ գնել: Նրանք ուրախությամբ այս ամբողջ խնայողությունը կտային՝ փրկելու իրենց դստեր կյանքը, սակայն դա հազիվ թե բավարար լիներ:

Շմիտտն աղերսում է բժիշկներին վիրահատությունն իրականացնել ավելի քիչ գումարի դիմաց, սակայն նրանք ասում են, որ չեն կարող անել դա, քանի որ այդպիսի քայլն արդարացի չի լինի մնացած բոլորի նկատմամբ, ովքեր ստիպված են վճարել ամբողջ գումարը: Շմիտտն իր ընտանիքից և ընկերներից պարտքով գումար է խնդրում, սակայն եղած գումարին շատ քիչ ավելացում է լինում: Եվ այս ամբողջ ընթացքում Շմիտտի դստեր վիճակը գնալով վատանում է:

Հուսահատության մեջ հայտնված Շմիտտը սկսում է մտածել պակասող գումարը գողությամբ համալրելու մասին, որպեսզի փրկի դստեր կյանքը:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 6.3
Իրավիճակը սկսում է դուրս գալ վերահսկողությունից:

Քննարկեք տեղական թերթում հրապարակված հետևյալ նամակը:

Որպես մի խումբ տեղացի բնակիչներ՝ մենք շատ մտահոգված ենք մի քանի խնդիրների կապակցությամբ, որոնք առաջանում են այն պատճառով, որ մարդիկ պատրաստ չեն պատասխանատվություն ստանձնել իրենց սեփական վարքագծի համար:

Բազմաթիվ շներ վերահսկողությունից դուրս են մնում: Նրանց տերերը կամ չգիտեն այ մասին, կամ անտարբեր են այս հարցի առնչությամբ: Շները թողնում են իրենց արտաթորանքը փողոցներում, ինչը ոչ միայն տհաճ է, այլև կարող է առողջության համար վտանգավոր լինել: Որոշ շներ թափառում են ոհմակներով և շատ գազազած են: Նրանց պետք է խիստ վերահսկողության տակ պահել, մասնավորապես, երբ մոտակայքում երեխաներ են խաղում:

Մենք նաև կարծում ենք, որ քաղաքում և դրա արվարձաններում չափազանց շատ աղբ է կուտակված: Սրա պատճառն այն է, որ մարդիկ ծուլանում են դրանից պատշաճ կերպով ազատվել: Այն տգեղ է և գրավում է առնետներին, նաև նպաստում է հիվանդությունների տարածմանը: Երբ մարդիկ թողնում են ներկի կամ քիմիական նյութերի հին թիթեղատուփերը շրջակայքում, դրանք կարող են հայտնվել վտակների և գետերի մեջ և բացասաբար ազդել խմելու ջրի մատակարարման վրա:

Ինչու՞ մարդիկ չեն մտածում իրենց արարքների հետևանքների մասին: Եվ ինչու՞ քաղաքական գործիչներն այս խնդիրների լուծման ուղղությամբ ոչինչ չեն ձեռնարկում:

Հարգանքով՝

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 6.4
Քարտի դասակարգում՝ Հելենա Սանտիկի կյանքը

1. Հելենա Սանտիկը ծնվել է 1944 թվականին: Նա սերբ է:	2. Հելենա Սանտիկը մահացել է 2000 թվականին քաղցկեղից:
3. Հելենայի մահից հետո նրա ընկերներից մի քանիսը Բելգրադի ռմբակոծված շինություններից մեկից մի քար հանեցին: Այն զարդարվել էր Կոսովոյից ժամանած փախստական երեխաների կողմից: Այնուհետև այդ քարը տեղափոխվեց Հելենա Սանտիկի անվան խաղաղության զբոսայգի՝ որպես խորհրդանիշ:	4. Հելենա Սանտիկն ու Խումբ 484-ը իրականացնում էին Պակրակ ծրագիրը Խորվաթիայում, որը 1991 թվականի պատերազմից հետո օգեց, որպեսզի սերբերի և խորվաթների միջև վստահություն ձևավորվի: Այս ծրագրի շրջանակում նրան էին միացել կամավորներ երկու կողմերից, ինչպես նաև միջազգային հանրությունից:
5. Հելենա Սանտիկը Խումբ 484 անունը կրող կազմակերպության հիմնադիր անդամն ու ղեկավարն էր: Խում 484-ը հասարակական կազմակերպություն է (ՀԿ): Խումբ 484-ը հանդես է գալիս հակամարտությունների ոչ բռնի կարգավորման, հանդուրժողականության և համագործակցության դիրքերից՝ որպես մարդկային հասարակությունների կերտման հիմք:	6. Հելենա Սանտիկը հոդվածներ էր գրում ազգայնականության և ռասիզմի մասին,որոնք հրապարակվում էին տարբեր երկրներում: Փաքս Քրիստի անունը կրող կազմակերպությունը նրան շնորհել էր խաղաղության միջազգային մրցանակ իր կատարած աշխատանքի համար:
7. Բեռլինում Հելենա Սանտիկի անունը կրող խաղաղության զբոսայգի կա՝ ի ճանաչումն վերջինիս կատարած աշխատանքի: Հելենան այս զբոսայգում հանրության առջև ելույթ էր ունեցել:	8. Հելենա Սանտիկը դարձավ միջազգային ճանաչում վայելող բալետի պարուհի և բալետի ուսուցչուհի:
9. Հելենա Սանտիկը պատերազմի դեմ քարոզարշավի մասնակից էր և պայքարում էր բոլոր մարդկանց իրավունքների համար: Նա և իր կազմակերպությունը մեծ ջանքեր գործադրեցին Սերբիայում փախստականներին օգնություն հասցնելու համար:	10. Խումբ 484-ը ստացավ իր այդ անունը, որովհետև առաջին ծրագրերից մեկի շրջանակներում աշխատանքներ էին տարվել Խորվաթիայի թվով 484 ընտանիքների հետ, որոնք պատերազմի հետևանքով կորցրել էին իրենց տները: Խումբ 484-ը փախստականներին տրամադրում էր օգնություն, սփոփում էր նրանց և խորհրդատվություն տալիս նրանց իրավունքների մասին:

Բաժին 3.

Մասնակցություն

Գլուխ 7.

Թերթ դասարանի համար
Լրատվության ընբռնումը լրատվություն ստեղծելու միջոցով

ԳԼՈՒԽ 7.
Թերթ դասարանի համար

Լրատվության ըմբռնումը լրատվություն ստեղծելու միջոցով



7.1. Մեր շուրջը շրջանառվող թերթը

Ո՞ւմ են տեղեկություններ հաղորդում: Ինչպե՞ս են տեղեկություններ հաղորդում: Ի՞նչ են հաղորդում:

7.2. Մեր թերթը ամենալավն է.... այդպես չե՞ք կարծում:

Ի՞նչն է թերթը դարձնում ավելի լավը:

7.3. Մենք ստեղծում ենք մեր պատի թերթը:

Բոլոր «կարելիները» և մի քանի «չի կարելիներ»:

7.4. Մեր առաջին հարցը:

Ո՞ւր ենք շարժվելու այստեղից:

ԳԼՈՒԽ 7. Թերթ դասարանի համար Լրատվության ըմբռնումը լրատվություն ստեղծելու միջոցով

Ամբողջ աշխարհում լրատվամիջոցների առկայությունը և ազդեցությունը մեծացել է վերջին մի քանի տարիների ընթացքում: Ինչքան բարդանում և փոխկապակցված է դառնում մեր կյանքը, այնքան ավելի շատ ենք հենվում տեղեկատվության վրա՝ հասկանալու այն ազդեցությունները և զարգացումները, որոնք ներգործում են մեզ վրա: Մեր անձնական փորձառությունից և անմիջական ընկալումից դուրս հարցերի մասին ցանկացած տեղեկատվության համար մենք պետք է հենվենք տեղեկատվության միջոցների վրա:

Այնուամենայնիվ, տարբեր լրատվամիջոցներից անհատական հասանելիությունը բավականին բազմազան է: Դա անդրադառնում է տեղեկատվություն ստանալու անձի հնարավորությունների և ազդեցություն գործելու ու իշխանություն իրականացնելու նրա ներուժի վրա: Մեկ այլ կարևոր խնդիր է գրաքննության հարցը և կողմերի, կառավարությունների ու հզոր լոբբիստական խմբերի կողմից ապատեղեկատվության տրամադրման խնդիրը: Կոնֆլիկտները, այդ թվում՝ սոցիալական փոփոխությունները և պատերազմները հանգեցնում են մենաշնորհային և աղճատված տեղեկատվության:

Չնայած այս փոխհարաբերությունների, կարելի է նշել մի քանիսը ևս, աշակերտները դրանց տարրերի մասին բացահայտումներ կանեն, երբ համեմատեն իրենց երկրի կամ իրենց տարածաշրջանի տպագիր մամուլը և կգնահատեն դրանք՝ կիրառելով որոշակի չափանիշներ:

Սույն գլխում կիրառվել է այլ մոտեցում լրատվամիջոցներ մասին կրթության վերաբերյալ: Ստեղծելով իրենց սեփական պատի թերթը՝ աշակերտները պատկերացում կկազմեն թերթ ստեղծելու մասին և կսովորեն որոշ բաներ լրատվամիջոցների իրականության վերաբերյալ: Դասավանդման փորձառությունը ցույց է տվել, որ այս մոտեցումն անմիջականորեն կապում է աշակերտներին տպագիր մամուլին, որն ավելի հեռու է իրենց առօրյա կյանքից: Աշակերտները քննադատաբար կվերաբերվեն նման լրատվամիջոցներին, ինչպես նաև նոր տեսանկյունից կգնահատեն էլեկտրոնային մամուլը, և թե իրենք ինչպես են օգտվում տարբեր լրատվամիջոցներից: Նրանք ձեռք կբերեն մեդիագրագիտություն:

Վերջապես, մեկ գործնական հուշում՝ սույն գլխում, մասնավորապես, ներուժ է պահանջվում և առաջարկվում միջառարկայական կապի և համագործակցության համար: Տեքստեր կարելի է գրել և վերանայել լեզվի դասավանդման շրջանակում, մինչդեռ գծագիրը կարող է կատարվել արվեստի դասի ժամանակ: Որոշ դեպքերում, կարիք կլինի դասը սկսել ինքնուրույն՝ լրացուցիչ ներդրում ստանալով հատկապես հետաքրքրված աշակերտներից բաղկացած խմբագրական թիմի կողմից:

Միգուցե կարիք կլինի պատի թերթը պահել դպրոցում որոշ ժամանակ, մինչև մյուս ուսուցիչները բավարար չափով կհամոզվեն, որ արժե միանալ այդ նախաձեռնությանը:

Ուսուցում ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության թեմայով

Մեդիագրագիտությունը մարդու իրավունքների և քաղաքացիական կրթության ոլորտում ընդհանուր նպատակին հասնելու, այսինքն ակտիվ, մասնակցող քաղաքացի դառնալու առանցքներից մեկն է: Ստորև ներկայացվում է մեդիագրագիտության ամենակարևոր կողմերի ամփոփ շարադրանքը.

1. հաղորդակցության կոմպետենցիան օգնում է հասկանալ, թե ընդհանուր առմամբ մարդիկ ինչպես են փոխհարաբերվում միմյանց հետ: Սոցիալական իրականություն որպես այդպիսին գոյություն չունի: Այն համատեղ սահմանվում է մարդկանց կողմից սոցիալական փոխհարաբերության միջոցով, ինչը նշանակում է, որ այն ստեղծվում է հաղորդակցության գործողությունների միջոցով: Ընդհանուր հաղորդակցության կոմպետենցիան սկսվում է

մայրենի լեզուն սովորելով և հետագայում զարգանում է այդ կոմպտենցիան հանրության շրջանակում օգտագործելու միջոցով:

2. Յուրաքանչյուր մարդ ունի հաղորդակցության այս կոմպետենցիան ի ծնե: Մեզ տրված է այս կոմպտենեցիան բնությունից, բայց այն պետք է կրթել, կիրառել և վերամշակել:
3. Մեդիագրագիտությունը հաղորդակցության կոմպետենցիայի ընդհանուր հասկացության մաս է կազմում: Այն վերաբերում է մեդիայի համալիր բազմազանությանը, որի օգտագործումը պետք է սովորել և գործնականում կիրառել, օրինակ՝ որպես աշակերտ առաջադրանք ստանալու միջոցով: Տպագիր մամուլը, այդ թվում պատի թերթը, ամենօրյա հաղորդակցության կարևոր միջոցներից են, որոնց հետ աշակերտները պետք է ծանոթ լինեն: Այնուամենայնիվ, դրանք մեդիագրագիտության ընդհանուր նպատակի միակ բաղադրիչները չեն:

ԳԼՈՒԽ 7. Թերթ դասարանի համար
Լրատվության ըմբռնումը լրատվություն ստեղծելու միջոցով

Դասի վերնագիրը	**Նպատակները**	**Աշակերտական առաջադրանքներ**	**Ռեսուրսներ**	**Մեթոդ**
Դաս 1. Մեր շուրջ շրջանառվող թերթը	Աշակերտներին ներկայացվում է տպագիր մամուլի բազմաթիվ տեսակներ: Նրանք հասկանում են բովանդակության կառուցվածքի տարբերությունները:	Աշակերտները հավաքում և վերլուծում են թերթերը և ամսագրերը, որոնք սովորաբար ընթերցվում են իրեն համայնքներում: Նրանք կազմում են պաստառ իրենց արդյունքները արձանագրելու համար:	Թերթեր, մկրատներ, սոսինձ, մեծ չափի թուղթ:	Խմբային աշխատանք:
Դաս 2. Մեր թերթը ամենալավն է....այդպես չե՞ք կարծում:	Աշակերտները պարզաբանում են թերթը կամ ամսագիրը լավը համարելու չափանիշները: Նրանք իրազեկ են դառնում իրենց սեփական տեսքի, արժեքների և հետաքրքրությունների մասին:	Աշակերտները գնահատում են այլ խմբերի կողմից կատարվող պրեզենտացիաները և համաձայնություն են ձեռք բերում փոխզիջումների շուրջ:	Պրեզենտացիաներ, որոնք նախապատրաստվել են նախորդ դասի ընթացքում: Սխեմա գրատախտակի կամ թղթե գրատախտակի վրա	Խմբային պրեզենտացիաներ, պլենար քննարկում և գնահատում:
Դաս 3. Մենք ստեղծում ենք մեր պատի թերթը:	Խմբերում աշակերտները համաձայնում են թեմաների և նպատակների շուրջ: Նրանք համագործակցում են խմբում՝ թիմի հետ փոխանակելով սեփական գաղափարները և կոմպետենցիաները:	Աշակերտները որոշում են, թե ինչ կառուցվածք պետք է ունենա համատեղ կազմված թերթը: Նրանք սահմանում են թեմաներ, որոնք հատուկ են իրենց դպրոցին և գրում են հոդված պատի թերթի իրենց բաժնում:	Կախված առկա նյութական ռեսուրսներից՝ արդյունքները կարող են լինել ձեռագիր տեքստերից մինչև համակարգչային տպագիր նյութեր՝ թվային լուսանկարներով:	Համատեղ որոշումների ընդունում, խմբային աշխատանք:
Դաս 4. Մեր առաջին հարցը:	Բաց քննարկման ընթացքում աշակերտները հասկանում են, թե ինչ պետք է անել շարունակելու համար պատի թերթի ծրագիրը: Նրանք կարողանում են որոշում ընդունել և դրա համար պատասխանատվություն վերցնել:	Աշակերտները պետք է կարծիքներ ձևավորեն և որոշեն, թե ինչպես են ներգրավվելու հետագա ծրագրում:	Գրատախտակ կամ թղթե գրատախտակ:	Պլենար քննարկում:

Դաս 1.
Մեր շուրջը շրջանառվող թերթը
Ում են տեղեկացնում: Ինչպես են տեղեկություններ հաղորդում: Ինչ են հաղորդում:

Ուսուցման նպատակը	Աշակերտներին ներկայացվում է տպագիր մամուլի բազմաթիվ տեսակներ: Նրանք հասկանում են բովանդակության կառուցվածքի տարբերությունները:
Առաջադրանքներ	Աշակերտները հավաքում և վերլուծում են թերթերը և ամսագրերը, որոնք սովորաբար ընթերցվում են իրեն համայնքներում: Նրանք կազմում են պաստառ իրենց արդյունքները արձանագրելու համար:
Ռեսուրսներ	Թերթեր, մկրատներ, սոսինձ, մեծ չափի թուղթ:
Մեթոդ	Խմբային աշխատանք:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

«Տպագիր մամուլ» եզրույթը վերաբերում է տեղեկությունների տպված աղբյուրներին՝ այսպես կոչված դասական մեդիային՝ ներառելով թերթեր, ամսագրեր, գրքեր, կատալոգներ, տեղեկագրեր, թերթիկներ, քարտեզներ, սխեմաներ, բացիկներ, օրացույցեր և պաստառներ:

Տպագիր մամուլը սովորաբար տպվում է թղթի վրա: Տպագրական տեխնոլոգիակաները արագ փոփոխվում են, և շատ տարածված է դառնում թվային տպագրությունը:

Դասի ընթացքը

Այս դասը սկսելուց մի քանի շաբաթ առաջ ուսուցիչը խնդրում է աշակերտներին հավաքել բոլոր թերթերն ու ամսագրերը, որոնք ձեռք կբերեն և բերել դրանք դասարան: Աշակերտներին իրենց աշխատանքի ընթացքում աջակցելու համար խորհուրդ է տրվում դասարանում սեղան հատկացնել, որը կարելի է օգտագործվել պրեզենտացիաների համար: Եթե հաջողվի, աշակերտները կարող են ձեռք բերել հին թերթի խուրձ լրագրավաճառից, որը գերազանց միջոց է թերթերն ու ամսագրերը ներկայացնելու համար: Ուսուցիչը պետք է ապահովի, որ ներառվեն բոլոր օրաթերթերը:

Ուսուցիչը սկսում է առաջին դասը աշակերտներին տեղեկացնելով սույն գլխի նպատակների և խնդիրների մասին: Ուսուցիչը պետք է ընդգծի, որ սույն գլխի ուսումնասիրությամբ սկսվում է մի ծրագիր, որը կարող է և պետք է շարունակվի առնվազն կես ակադեմիական տարի: Աշակերտները պետք է նաև հասկանան, որ այս ծրագիրը նրանց հնարավորություն է տալիս գործնական փորձառություն ձեռք բերել լրագրության ոլորտում: Փորձը ցույց է տալիս, որ ապագա լրագրողները առաջին քայլերը կատարել են նման ծրագրերում մասնակցությամբ:

Աշակերտները փոքր խմբեր են կազմում՝ նախընտրելի է երեք կամ առավելագույն չորս աշակերտների կազմով: Յուրաքանչյուր խումբ պետք է վերլուծի տարբեր թերթ կամ ամսագիր: Աշակերտները առաջնորդվում են հետևյալ հարցերով.

– Ի՞նչ բաժիններ են ներառված թերթում կամ ամսագրում:
– Ի՞նչ հերթականությամբ եմ տեղադրված բաժինները:
– Ի՞նչ թիրախ խմբերի համար են նախատեսված բաժինները: Ընտանիքի ո՞ր անդամն է հատկապես հետաքրքրված որևէ կոնկերտ բաժին ընթերցելու մեջ:
– Ի՞նչ թեմաներ են ներառված այն հարցի բաժնում, որը խումբը ուսումնասիրում է:
– Յուրաքանչյուր բաժնից ընտրեք մեկ տիպային հոդված: Կտրեք հոդվածը և փակցրեք թղթի վրա՝ պաստառ սարքելու համար:

Պաստառի վրա պետք է գրված լինի թերթի կամ ամսագրի վերնագիրը՝ լավագույն դեպքում բնօրինակ անվան օգտագործմամբ, և պետք է պատասխանել վերոնշյալ հարցերին: Աշակերտներին պետք է հիշեցնել պարզ և կոկիկ կառուցվածք ունենալու կարևորության մասին:

Այս փուլում կարևոր է, որ աշակերտները հասկանան իրենց թերթի հիմնական կառուցվածքը, որպեսզի հստակ ներկայացնեն և բացատրեն այն դասարանին:

Խմբերը նախապատրաստում են իրենց պրեզենտացիաները հաջորդ դասի համար կարծես գովազդում են իրենց թերթը կամ ամսագիրը՝ շեշտելով դրա բոլոր առավելությունները և ուժեղ կողմերը: Բոլոր պրեզենտացիաները լսելուց հետո՝ դասարանը պետք է որոշի, թե որ թերթն է ամենահետաքրքիրը և տեղեկատվականը: Այս քայլի նպատակն է մի քանի շաբաթ թերթը անվճար առաքել՝ մի ծառայություն, որ շատ լրատվական ծառայություններ կցանկանան մատուցել դպրոցներին:

Այս փուլում ուսուցիչը ունի խորհրդատուի դեր: Նա օժանդակության կցուցաբերի խմբերին ուսումնասիրել իրենց թերթի ներքին կառուցվածքը, քանի որ ոչ բոլոր թերթերն են հավասարապես հեշտ վերլուծության համար: Ուսուցիչը նաև պետք է մշտադիտարկի աշակերտներին խմբային աշխատանքի ժամանակ, որ ապահովի յուրաքանչյուր խմբի անելիքները: Չափազանց կատարելության ձգտելը ժամանակային առումով վնաս է այս միջոցառման համար:

Դաս 2.
Մեր թերթը ամենալավն է.... այդպես չե՞ք կարծում:
Ի՞նչն է թերթը դարձնում լավ թերթ:

Ուսուցման նպատակը	Աշակերտները պարզաբանում են թերթը կամ ամսագիրը լավը համարելու չափանիշները: Դա անելով՝ նրանք իրազեկ են դառնում իրենց սեփական տեսակետների, արժեքների և հետաքրքրությունների մասին:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները գնահատում են այլ խմբերի կողմից ներկայացվող պրեզենտացիաները և համաձայնություն են ձեռք բերում փոխզիջումների շուրջ:
Ռեսուրսներ	Վերջին դասի ժամանակ նախապատրաստված պրեզենտացիան: Գրատախտակ կամ թղթե գրատախտակ:
Մեթոդ	Խմբային պրեզենտացիաներ, պլենար քննարկում և գնահատում:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

«Մամուլի ազատություն» եզրույթը վերաբերում է մամուլի՝ սեփական բիզնեսով զբաղվելու ազատության իրավունքին, ինչպես նաև տեղեկությունների և կարծիքների առանց գրաքննության հրատարակելու իրավունքին: Մամուլի ազատությունը կոնկրետ ձև է ընդունում նրանով, որ լրագրողներն ունեն ապացույցներ տրամադրելը մերժելու, ինչպես նաև լսողական սարքավորումների միջոցով լրագրողների վերահսկելու (գաղտնալսելու) սահմանափակումների հատուկ իրավունքներ, որի նպատակն է պաշտպանել տեղեկատվության աղբյուրները, որոնք անհրաժեշտ են լրագրողներին իրենց աշխատանքի ընթացքում: Լրագրությամբ զբաղվելը չի կարող վերահսկվել պետության կողմից, իսկ լրագրողների կրթությունը կատարվում է մասնավոր հիմունքներով՝ առանց պետության կողմից ներգործության:

Դասի ընթացքը

Երկրորդ դասը սկսվում է պրեզենտացիայով: Խմբերը պատրաստել են իրենց պաստառները և ընտրել են փակցնելու համար նախատեսված թերթը և ամսագիրը: Խորհուրդ է տրվում խմբերին հինգ րոպե տալ դասի սկզբում՝ իրենց պրեզենտացիան ևս մեկ անգամ աչքի անցկացնելու համար:

Աշակերտները գնահատում են պրեզենտացիաները՝ օգտագործելով սահմանված չափանիշներ: Ուսուցիչը կարող է ներկայացնել այդ չափանիշները և կազմել աղյուսակ:

	Խումբ 1	**Խումբ 2**	**Խումբ 3**	**Խումբ 4**	**Խումբ 5**	**Բալեր**
Թերթի կամ ամսագրի վերնագիրը						
Պաստառ						
Պրեզենտացիայի ֆորմալ կողմերը						
Պրեզենտացիայի բովանդակությունը						
Թերթի կամ ամսագրի ֆորմալ կողմերը						
Թերթի կամ ամսագրի բովանդակություն						

Գնահատմանը չափից շատ կարևորություն չպետք է տրվի, այլ, ընդհակառակը, մրցակցության տարրերի միջոցով պետք է խրախուսի աշակերտներին լավ պրեզենտացիա պատրաստելու համար:

Պրեզենտացիաներից հետո աշակերտները պետք է գնահատեն տպագիր մամուլը, որ իրենք տեսել են (քննադատական մտածողություն)՝ ուշադրությունը կենտրոնացնելով հետևյալ հարցերի շուրջ.

– Ի՞նչն է թերթը/ամսագիրը դարձնում հետաքրքիր:
– Ի՞նչ նպատակ է այն հետապնդում:
– Ի՞նչ եք մտածում այն թերթերի/ամսագրերի մասին, որոնք ներկայացված են Ձեզ:
– Ի՞նչը կարելի է բարելավել:

Փորձը ցույց է տալիս, որ ուսուցիչը կարող է օժանդակել և քննարկմանը կառուցվածք տալ՝ աշակերտների գաղափարները նախքան դասը նախապատրաստած թղթե գրատախտակի վրա գրելով: Կարելի է օգտագործել սովորական գրատախտակ, բայց սրա թերությունն այն է, որ տեղեկությունները հասանելի չեն լինի հաջորդ դասին:

Դասի վերջում ուսուցիչը առաջարկում է, որ աշակերտները կազմեն և բոլորին ներկայացնեն դպրոցական «պատի թերթ»: Աշակերտներին պետք է խնդրել մտածել հանձնարարության վերաբերյալ և մտածել, թե որ բաժինները պետք է ներառվեն, որպեսզի համապարփակ ձևով ներկայացվի դպրոցական կյանքը, և թե որ բաժինները կցանկանային հենց իրենք մշակել: Նրանք պետք է վերնագիր առաջարկեն իրենց թերթին:

Դաս 3.
Մենք ստեղծում ենք մեր պատի թերթը
Բոլոր «կարելիները» և մի քանի «չի կարելիներ»

Ուսուցման նպատակը	Խմբերում աշակերտները համաձայնում են թեմաների և նպատակների շուրջ: Նրանք համագործակցում են խմբում՝ թիմում փոխանակելով սեփական գաղափարները և կոմպետենցիաները:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները որոշում են, թե ինչ կառուցվածք պետք է ունենա համատեղ կազմված թերթը: Նրանք սահմանում են թեմաներ, որոնք հատուկ են իրենց դպրոցին և գրում են հոդված պատի թերթի իրենց բաժնում:
Ռեսուրսներ	Կախված առկա նյութական ռեսուրսներից՝ արդյունքները կարող են լինել ձեռագիր տեքստերից մինչև համակարգչային տպագիր նյութեր՝ թվային լուսանկարներով:
Մեթոդներ	Համատեղ որոշումների ընդունում: Խմբային աշխատանք:

Դասի ընթացքը

Երեք կամ չորս հոգուց բաղկացած խմբերում աշակերտները փոխանակում են իրենց գաղափարները այն մասին, թե թերթի որ բաժիններն են համապատասխան տեղեկություններ տրամադրում դպրոցի կյանքի մասին:

Ուսուցիչը նախապատրաստել է փոքր պատի թերթ յուրաքանչյուր խմբի համար՝ իրար կպցնելով երեք A4 ձևաչափի թղթեր: Խմբերին հետո տրվում է թերթի ընդհանուր կառուցվածքը մշակելու հանձնարարություն, ներառյալ՝ թերթի վերնագիրը, նախատեսված կառուցվածքը և այն բաժինները, որոնք աշակերտները ընտրել են: Նրանք կարող են ստանալ նման արդյունք.

Աշակերտների կողմից կազմված ժամանակագրությունը					
Վերջին նորությունները	Մարզական	Առաջնային նշանակության նորությունները	Միջոցառումները	Ծնողները	Մեր մտահոգությունները

Խմբերի կողմից կատարված առաջարկները փակցվում են դասարանի պատին, և սովորողներին ժամանակ է տրվում պաստառները կարդալու և իրենց տեսակետները ձևավորելու համար: Այնուհետև «խմբագիրների խումբը» հետևյալ կարևոր որոշումներն է ընդունում.

– Թերթի վերնագիրը (մտքերի փոխանակություն, քննարկում և վերջնական քվեարկություն),
– Այն բաժինների ընտրությունը, որոնք ամենակարևորն ու իմաստալիցն են դպրոցի և աշակերտների համար:

Աշակերտները այնուհետև փոքր թիմեր են կազմում: Թիմի անդամների թիվը համապատասխանում է այն բաժինների թվին, որոնք պետք է կազմել: Եվս մեկ թիմ պատասխանատու է ներկայացման համար:

Սկզբում ներկայացնող թիմը զբաղվում է այնպիսի գործնական հարցերով, ինչպիսիք են կառուցվածքը և պատի թերթի ներկայացումը: Նախքան դա, ուսուցիչը տեղեկացրած է լինում տնօրենին թերթի ծրագրի մասին և ստացած է լինում նրա թույլտվությունը ցուցադրելու այն դպրոցում:

Մինչ խմբագիրների թիմերը մշակում են առաջին հոդվածները տարբեր բաժինների համար, ուսուցիչը քննարկում է տեխնիկական կողմերը ներկայացնող թիմի հետ:

Աշակերտներին տրվում է հանձնարարություններ, որոնք պետք է կատարված լինեն մինչև հաջորդ շաբաթ: Խմբագրական յուրաքանչյուր թիմ ներկայացնում է հոդվածը և ներկայացնող թիմը կազմում է պատի թերթը, կատարում է վերնագրերի ձևավորումը՝ ցույց տալով խորհրդանիշը և թերթի վերնագիրը, և այն բաժինները, որոնք ընտրվել են:

Այս հանձնարարությամբ աշակերտները հնարավորություն են ստանում ապրել իրենց առաջին հաջողությունը, բայց նրանք նաև անմիջականորեն դիմագրավում են աշխատանքում ներառված դժվարություններին: Այս մոտեցման նպատակն է ստեղծել ղեկավար խմբագիրների թիմ, որոնք կանոնավոր կերպով դպրոցական նորությունները կհրապարակեն: Թիմերը կազմված են լինում հատկապես ակտիվ և հետաքրքրված աշակերտներից, որոնք ունակ են շարունակելու պատի թերթի ծրագիրը առավել երկար ժամանակի ընթացքում:

Դաս 4.
Մեր առաջին հարցը:
Ո՞ւր ենք շարժվելու այստեղից:

Ուսուցման նպատակը	Ուսանողները ունակ են բաց քննարկում անցկացնել և իրազեկ են դառնում թերթի ծրագիրը շարունակելու արդյունքների և հետևանքների մասին: Նրանք կարողանում են որոշում ընդունել և դրա համար պատասխանատվություն վերցնել:
Առաջադրանքներ	Աշակերտները պետք է կարծիքներ ձևավորեն և որոշեն, թե ինչպես են ներգրավվելու հետագա ծրագրում:
Ռեսուրսներ	Գրատախտակ կամ թղթե գրատախտակ:
Մեթոդ	Պլենար քննարկում:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Քննարկումը (փաստարկների փոխանակումը, որը ծագել է լատիներեն *discussio* բառից) բանավոր հաղորդակցության հատուկ ձև է երկու և ավելի անձանց միջև, որի ընթացքում քննարկվում են մեկ կամ մի քանի հարցեր, ընդ որում, յուրաքանչյուր կողմ բերում է իր փաստարկները: Քննարկումը պետք է տեղի ունենա փոխադարձ հարգանքի մթնոլորտում: Լավ քննարկումը պահանջում է, որ խոսակիցները թույլ տան և նույնիսկ խրախուսեն միմյանց արտահայտելու տեսակետներ և կարծիքներ, որոնք տարբերվում են իրենց տեսակետներից և կարծիքներից՝ դրանց մասին խորը մտածելով, այլ ոչ թե միանգամից հերքելով: Երկու կողմերի համար շահեկան կլինեն այնպիսի անձնական հատկանիշներ, ինչպիսիք են պարզությունը, հանդարտությունը և քաղաքավարությունը: Լավագույն քննարկումը հանգեցնում է խնդրի լուծման, կամ փոխզիջման, որն ընդունելի է քննարկման մասնակից բոլոր կողմերի համար:

Ժամանակակից հասարակությունում քննարկումները քաղաքակիրթ, այսինքն, ոչ բռնի միջոց են հակասությունները լուծելու և շահերի բախումները հարթեցնելու ու նպատակներ սահմանելու համար: Հակասությունները ոչ թե ճնշվում, այլ լուծվում են: Գործնականում քննարկման հմտություններ կիրառելով՝ աշակերտները սովորում են հասարակության մեջ խաղաղություն ձևավորելու և այն պահպանելու հիմնական գործիքներից մեկի մասին:

Դասի ընթացքը

Այն բանից հետո, երբ խմբագիրների թիմերը պատին փակցնում են իրենց հոդվածները և համառոտ ներկայացնում են իրենց աշխատանքային փորձը, հաջորդ խնդիրը պետք է լինի, թե արդյոք պետք է շարունակել պատի թերթի ծրագիրը, թե ոչ: Այժմ, երբ բոլոր աշակերտները որոշ գաղափար ունեն, թե ինչքան ժամանակ է պահանջվում դրա վրա ծախսելու համար և թե ինչ կազմակերպական խնդիրներ պետք է լուծեն, նրանք կարող են իրատեսական քննարկում ունենալ շարունակելու հարցի շուրջ:

Ուսուցիչը կարող է օգնել նրանց հստակություն և կառուցվածք տալու համար աշակերտների քննարկմանը՝ թղթե գրատախտակի կամ սովորական գրատախտակի վրա նշելով հետևյալը.

Կազմակերպում	**Անձնական հայեցակետեր**	**Հիմնագործակցություն**	**Ժամանակի կառավարում**
Եթե շարունակենք. – Ի՞նչը պետք է հաշվի առնել: – Ժամանակը – խնդիր կլինի՞: – Ի՞նչ տեխնիկական միջոցներ մենք ունենք: – Ինչպե՞ս կարող ենք կանխել, որ մեր թերթը չփչացնեն: – Ի՞նչ ֆինանսական միջոցների կարիք կունենանք: Ինչպե՞ս կարելի է ֆինանսներ գտնել:	Ո՞վ է հետաքրքրված: – Գլխավոր խմբագի՞ր: – Խմբագիրների կոմիտե՞: – Ո՞րն է ուսուցչի – դերը և կարգավիճակը: – Անուններ.	– Ինչպե՞ս կարող ենք գրավել այլ աշակերտների հետաքրքրությունը: – Ո՞ր ուսուցիչը կցանկանանք, որ միանա մեր ծրագրին: – Կարո՞ղ ենք այցելություններ կատարել տեղական խմբագրությունները (մամուլ, հեռարձակման և էլեկտրոնային լրատվամիջոցներ): – Կարո՞ղ ենք հարցազրույց վերցնել որևէ լրագրողից որպես փորձագետ:	

Երբ ուսուցիչները սկսեն նման ծրագիր, նրանք կհասկանան, որ ամեն ինչ չէ, որ հնարավոր է պլանավորել: Պահանջվում է շարունակական խորհրդածություն բոլոր մասնակիցների կողմից: Սա կենդանի, ոգեշնչող, բայց նաև դժվար և երբեմն բարկացնող պրոցես է:

Այն ուսուցիչները, որոնք արդեն ունեցել են ծրագրերով զբաղվելու փորձառություն դասարաններում, կիմանան պահանջվող քայլերի հաջորդականությունը, ինչպես նաև նրանք գիտեն, որ անհրաժեշտ է ունենալ առաջնորդության ուժեղ հմտություններ: Այնուամենայնիվ, եթե զգուշավորություն չդրսևորվի, չափից շատ առաջնորդությունը, իհարկե, կարող է կոտրել աշակերտների մոտիվացիան և նախաձեռնությունը: Նման ծրագրերում մասնակցությունը օգտակար է աշակերտների համար, քանի որ նրանց տալիս է քաղաքացիական և մարդու իրավունքների կրթության ոլորտում կարևոր փորձառություն:

Ուսուցիչները պետք է իրենց առաջնորդության հմտությունները կիրառեն ապահովելու համար, որ այս դասի վերջում հնարավոր լինի ընդունել հստակ որոշումներ և սահմանել ժամանակացույց՝ խնդրի իրականացման համար անհրաժեշտ գործողությունների համալիր քայլեր ձեռնարկելու համար:

Օժանդակ նյութեր ուսուցիչների համար

Մեդիագրագիտություն զարգացնելու երեք ուղղությունները

1. Առաջին ուղղությունը՝ դատողություն մեդիայի վերաբերյալ

Դատողությունը մեդիայի վերաբերյալ կարելի է ամփոփել հին հունարեն Κρινειν (krinein) բայով, որը ի սկզբանե նշանակել է «տարբերակել» և վերաբերել է գիտելիքի և փորձառության մշտական ձեռքբերմանը և հետադարձելիությանը:

Մեդիա դատողությունը մեդիայի վերլուծությունն է: Այս վերլուծական ենթաուղղությունը վերաբերում է հասարակության մեջ զարգացումներն ընկալելու և հասկանալու կոմպետենցիային: Օրինակ կարող է հանդիսանալ մեդիան որպես բիզնես տեսնելը, որը կարող է վտանգել մեդիայի գործառույթը ժողովրդավարական հասարակությունում: Այս օրինակում, կարևոր է իմանալ, թե ով է թերթի սեփականատերը և քանի տեսակի լրատվամիջոցներ են պատկանում միևնույն ընկերությանը: Այնուամենայնիվ, մենք չպետք է մոռանանք, որ մեդիան առևտրային ձեռնարկություն է, որը պետք է շահույթ ստանա: Այնուամենայնիվ, ուզենք, թե չուզենք, ինչքան փոխկապակցված և գլոբալացված է դառնում մեր կյանքը, այնքան ավելի շատ անհրաժեշտություն կա հենվելու մեդիայի վրա: Մեդիա վերլուծությունը հնարավորություն է տալիս դատողություններ կատարել մեդիա զարգացումների վրա քննադատական տեսանկյունից, այսինք, կատարել տարբերակումներ, որպեսզի մենք պատշաճ կերպով կիրառենք մեր մեդիագրագիտությունը:

Ինքնաանդրադարձ ենթաուղղությունը նշանակում է, որ մենք պետք է կարողանանք մեր վերլուծական ներուժը և գիտելիքները կապել և կիրառել սեփական անձի հետ և գործունեության մեր անձնական ոլորտների հետ: Մասնավորապես, մեդիայի հետ շփվելիս, մեզ մոտ ուժեղ հակվածություն կա մտածելու «մյուսների» մասին և անտեսելու մեր անձնական ներգրավումը:

Վերլուծելու և մտորելու կարողությունը երրորդ ենթաուղղությունն է, որն իրենից ներկայացնում է այլոց մասին էթիկական տեսանկյունից մտահոգությունը, որը հավասարակշռում և սահմանում է վերլուծական մտածողություն և ինքնաանդրադարձը՝ սոցիալական պատասխանատվության տեսանկյունից:

2. Երկրորդ ուղղությունը՝ գիտելիք մեդիայի մասին

Այստեղ մենք նկատի ունենք մեդիա և մեդիա համակարգերի մասին «զուտ» գիտելիքը: Սա կարելի է բաժանել երկու ենթաուղղությունների:

Տեղեկատվության ենթաուղղությունը ներառում է հիմնական գիտելիքներ, ինչպես օրինակ՝ ինչպես են լրագրողները զբաղվում իրենց աշխատանքով, հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող ծրագրերի տեսակները, հեռուստատեսություն դիտելիս ունկնդիրների նախապատվությունների պատճառները և թե ինչպես կարելի է համակարգիչ օգտագործել արդյունավետ կերպով օգտագործողների կարիքները բավարարելու համար:

Հմտությունների ենթաուղղությունը ավելացնում է մեդիա գիտելիքին նոր սարքավորումներ օգտագործելու ունակությունը՝ առանց ցուցումների ձեռնարկը կարդալու: Այս պրոցեսը ներառում է «ուսուցում՝ կատարելով»՝ ինչպես օգտագործել համակարգիչը, ինչպես օգտվել համացանցից, ինչպես օգտագործել տեսաձայնագրիչ, և այլն:

3. Երրորդ ուղղությունը՝ մեդիայի կիրառում

Մեդիայի կիրառումը նույնպես կարող է բաժանվել երկու ենթաուղղությունների.

1. Մեդիա արտադրանքից օգտվելու, օրինակ մեդիա արտադրանք ստանալու և սպառելու կոմպետենցիա: Հեռուստացույց դիտելը դրա օրինակներից մեկն է: Սա մի գործողություն է, որ ընթացքում մենք պետք է մշակենք այն, ինչ տեսել ենք և ներառենք այն մեր

ճանաչողական կառուցվածքներում և պատկերացումների ռեպերտուարում: Այսօր մենք կարող ենք ընդլայնել մեր ընկալունակության կոմպետենցիան ոչ միայն տեքստեր կարդալու միջոցով, այլ նաև ֆիլմեր դիտելով:

2. Մեդիա սարքավորումների ակտիվ կիրառում: Այս ենթաուղղությունը վերաբերում է սոցիալական փոխազդեցության ընթացքում մեդիայի կիրառմանը: Օրինակ կարող է հանդիսանալ հեռահար բանկային գործը, հեռահար առևտուրը և տեսա- ու հեռախոսային համաժողովները, ավանդական և թվային լուսանկարչությունը և տեսաարտադրություն: Մեդիայի բազմազանությունը հնարավորություն է տալիս մեզ կիրառել աշխարհը ընկալելու ներուժը ոչ միայն տեղեկություններ ստանալու, այլ ստեղծելու միջոցով:

Մեդիայի մասին այս գլուխը վերաբերում է կոնկրետ մեդիա այս ակտիվ կիրառմանը, բայց փոխկապակցված է նաև մեդիա կրթության երկու այլ ուղղությունների հետ, որոնք նշված են վերևում:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 7.1.
Ինչպես հոդված գրել

Հոդվածի հիմնական կառուցվածքը

1.Վերնագիր

Յուրաքանչյուր հոդված պետք է վերնագիր ունենա: Վերնագիրը կարևոր ֆունկցիա է կատարում. այն չպետք է ծանրաբեռնի ընթերցողին, այլ պետք է գրավի նրա ուշադրությունը և հետաքրքրություն առաջացնի հոդված կարդալը շարունակելու համար:

Թերթ ընթերցողները արագ անցնում են էջերի վրայով ընտրելու համար այն հոդվածները, որոնք հետաքրքրում են նրանց և ուստի, վերնագրերը պետք է տրամդրող լինեն: Վերնագրերը կարճ դրեք, օգտագործեք մեծ և մուգ տառաշար և առանձնացրեք վերնագրերը տեքստից:

2. Ներածական տողեր

Ներածական տողերը սովորաբար Ձեր հոդվածի առաջին պարբերությունն են (թերթ արտադրողները դրանք անվանում են «հոդվածի առաջին պարբերություն»): Որպես կանոն, այն նշվում է մուգ տառաշարով:

Առաջին պարբերությունը ընթերցողին տալիս է ամենակարևոր տեղեկությունը: Տեղեկատվական տեքստի առաջին պարբերությունում ընթերցողը գտնում է հիմնական հարցերի պատասխանները:

Սենսացիոն հոդվածներում և այլ տեքստերում, որոնք ավելի շատ էմոցիոնալ քան փաստագրական են, առաջին տողը վառ կերպով կնկարագրի տեսարանը: Այստեղ հոդվածը ցանկանալ ընթերցելո հետաքրքրությունը ոչ թե փաստագրական տեղեկություններով է գրավում, այլ ոճական միջոցներով:

3. Լեզվի և ոճի կիրառությունը

Լեզվի ուշադիր և ճարտար կիրառությունը հավանաբար ավելի կարևոր է լավ հոդվածի համար, քան լրագրողական ձևի կամ ոճի ճիշտ օգտագործումը: Եթե մենք դիտենք թերթը որպես տուն, ապա լրագրողական շարադրանքի և ներկայացման ձևերը կարող են լինել կահույքը, բայց բառերը կլինեն աղյուսը, որից տունը կառուցված է:

Եթե մենք մի կերպ կարող ենք հարմարվել առանց կահույքի, ապա չէինք կարողանա ապրել առանց տան: Էմոցիոնալ գրված հոդվածները, որ «շոշափում են մարդու զգացմունքները», շատ տարածված են թերթերում: Բայց զգույշ եղեք, աղի շատությունը կարող է փչացնել ապուրը:

Հիմա հասանք նախադասությանը: Նախադասությունները կարճ և պարզ կազմեք: Ընթերցողները դժվարություն կունենան նախադասությունները կարդալու հարցում, եթե դրանք ունեն 14 բառից շատ բառ: Իսկ 25 կամ ավելի բառերով նախադասությունները պարզապես անընթեռնելի են: Բոլոր հանգամանքներում խուսափեք բարդ նախադասությունների կառուցվածքից, որտեղ կան շատ ստորակետներ և ստորադասական նախադասություններ: Սովորություն դարձրեք յուրաքանչյուր նախադասություն անմիջապես կարդալ այն գրելուց հետո: Նախադասությունը պարզ և հեշտ է՞ հասկանալու համար: Կա՞ն անտեղի բառեր:

Ուղղագրական սխալները ոչ միայն վատ տպավորություն են ստեղծում, այլև նյարդայնացնում են ընթերցողին, որովհետև շեղում են նրա ուշադրությունը հաղորդագրությունից: Նախքան հոդվածը ներկայացնելը, վերանայեք այն: Սա նշանակում է ստուգել սխալների առկայությունը և տեղեկությունների ամբողջական լինելը (սրա մաս է կազմում տեղեկությունների ճիշտ և ստույգ լինելը ստուգելը), լեզվական սխալները, ոճը և հասկանալի լինելը:

Բաժին 4.

Իշխանություն և իրավասություն

Գլուխ 8.

Կանոններ և իրավունք
Ինչպիսի՞ կանոններ են անհրաժեշտ հասարակությանը:

Գլուխ 9.

Կառավարություն և քաղաքականություն
Ինչպե՞ս պետք է կառավարվի հասարակությունը:

ԳԼՈՒԽ 8.
Կանոններ և իրավունք

Ինչպիսի՞ կանոններ են անհրաժեշտ հասարակությանը:



8.1. Լավ օրենք - վատ օրենք

Ի՞նչն է օրենքը դարձնում լավը:

8.2. Ո՞ր տարիքում:

Ինչպես պետք է իրավունքը կիրառվի երիտասարդների նկատմամբ:

8.3. Դուք օրենք եք ընդունում:

Ինչպե՞ս եք վերաբերվում երիտասարդ իրավախախտներին:

8.4. Ապացույցների վերաբերյալ կանոններ

Ի՞նչ ապացույցներ պետք է ուժ ունենան ընդհանուր իրավասության դատարանում:

ԳԼՈՒԽ 8. Կանոններ և իրավունք
Ինչպիսի՞ կանոններ են անհրաժեշտ հասարակությանը:

Ցանկացած օրենք էական է հասարակության արդար և արդյունավետ կառավարման համար: Երկրի հասարակության մեջ օրենքները կիրառելի են բոլոր իրավիճակներում, բոլոր մարդկանց նկատմամբ, չնայած կան որոշ խմբեր, ինչպես օրինակ երեխաները, որոնց վրա այդ օրենքները չեն տարածվում, մինչև որոշակի տարիքի հասնելը:

Իրավունքը բաժանելու ձևերից մեկը հայտնի է որպես քաղաքացիական և քրեական իրավունք: Քաղաքացիական իրավունքը հնարավոր է դաձնում լուծել անձանց և մարդկանց խմբերի միջև ծագած վեճերը: Քրեական իրավունքը ներառում է այն վարքագիծը, որը պետության որոշմամբ պետք է դատապարտվի կամ կանխարգելվի:

Չնայած սրան՝ օրենքները երբեք կատարյալ չեն լինում: Դրանք ստեղծված են մարդու կողմից և երբեմն պետք է փոփոխվեն: Դրանք կարող են ժամանակին անհամապատասխան լինել, լինել անարդյունավետ կամ պարզապես անարդար հասարակության որոշ խմբերի համար:

Իրավունքը երբեք չի կարող բաժանվել քաղաքականությունից: Սրա պատճառն այն է, որ օրենքները ստեղծվում և փոփոխվում են քաղաքական համակարգերում: Ժողովրդավարական քաղաքական համակարգում կարևոր է, որ բոլոր քաղաքացիները կարողանան դրա մասին հավասար արտահայտվել: Նաև կարևոր է, որ իրավունքը հավասարապես կիրառվի բոլոր քաղաքացիների նկատմամբ: Այս հասկացությունը երբեմն հայտնի է իրավունքի գերակայություն եզրույթով:

Ի վերջո, օրենքները պետք է պահպանեն մարդու իրավունքները: Սա կարևոր է համոզվելու համար, որ օրենքները լինեն արդար, և որ դրանք չչարաշահվեն որպես ճնշումների կամ դիկտատուրայի միջոցներ: Ուստի, ժողովրդավարական շատ համակարգեր հենվում են գրված սահմանադրությունների վրա, որոնք երաշխավորում են մարդու իրավունքների շրջանակը, որը վեր է երկրի օրենքներից: Որոշ երկրներ նույնպես ունեն կայուն սահմանադրական դատարաններ՝ որոշելու համար, թե արդյոք օրենքները համապատասխանում են սահմանադրությանը, թե ոչ:

Ուսուցում ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության թեմայով

Դասերի արդյունքում աշակերտները.

- առավել խորը կըմբռնեն իրավունք հասկացությունը և դրա կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում,
- կընդունեն, որ իրավունքի հիմնական նպատակը մարդկանց օգնելն ու հասարակությունը պաշտպանելն է,
- հարգանք կձևավորեն իրավունքի գերակայության գաղափարի նկատմամբ,
- ավելի շատ բան կիմանան իրենց երկրում իրավական համակարգի մասին:

ԳԼՈՒԽ 8. Կանոններ և իրավունք
Ինչպիսի՞ կանոններ են անհրաժեշտ հասարակությանը:

Դասի վերնագիրը	Նպատակները	Աշակերտական առաջադրանքներ	Ռեսուրսներ	Մեթոդ
Դաս 1: Լավ օրենք - վատ օրենք	Իրազեկ լինել և հասկանալ այն գործոնները, որոնցով պայմանավորված է լավ իրավունքը:	Քննարկել դպրոցի կանոնները և սահմանել, թե ինչն է կանոնը դարձնում լավ դպրոցական կանոն: Քննարկել օրենքները և սահմանել, թե ինչն է օրենքը դարձնում լավը: Քննադատաբար ուսումնասիրել իրավունքի որևէ ոլորտ իրենց երկրում, օրինակ՝ ալկոհոլի մասին օրենքները: Առաջարկել և հիմնավորել իրենց դպրոցում նոր կանոն կամ օրենք:	Երկու քարտ յուրաքանչյուր աշակերտին՝ մեկի վրա գրված «Ա» տառը (կանաչ գույնի), մյուսի վրա՝ «Բ» տառը (կարմիր գույնի): Ուսումնական նյութեր. մեր երկրում ալկոհոլի մասին օրենքները Գծանշիչներ և մեծ թղթեր՝ յուրաքանչյուր 4-6 հոգանոց խմբի համար: Թղթե գրատախտակ կամ մեծ թուղթ՝ դասարանում ցուցադրելու համար:	Խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:
Դաս 2. Ո՞ր տարիքում:	Ուսումնասիրել, թե ինչպես է իրավունքը կիրառվում երիտասարդների նկատմամբ:	Սահմանել չափահասության տարիքը, որի դեպքում երիտասարդը իրավունք է ստանում զբաղվելու գործունեության տարբեր ձևերով, որոնցով մեծահասակներն են զբաղվում: Մտածել, թե որքանով է ներկայիս իրավունքը պատշաճ երիտասարդների համար:	Երեք մեծ ցուցանակ «Ա», «Բ» և «Գ» տառերով, որոնք կդրվեն դասասենյակի տարբեր պատերին: Աշակերտական նյութերի օրինակներ 8.1՝ մեկական յուրաքանչյուր երկու աշակերտի համար: Գծանշիչ գրիչներ և մեծ թուղթ՝ 4-6 աշակերտից բաղկացած յուրաքանչյուր խմբի համար:	Զույգերով աշխատանք, խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:
Դաս 3: Դուք օրենք եք ստեղծում	Ուսումնասիրել այն հարցը, թե այն երիտասարդները, որոնք օրենք են խախտել, ընդհանրապես պետք է պատժվեն, թե ոչ, և եթե այո, ինչպես:	Մտածել այն տարբեր գործոնների մասին, որոնք առկա են որոշելիս, թե որն է արդար պատիժը հանցագործության համար:	Պատմության օրինակ և լրացուցիչ տեղեկություններ ուսուցչի համար	Խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:
Դաս 4: Ապացույցների վերաբերյալ կանոններ	Ըմբռնել ապացույցների վերաբերյալ կանոնները ընդհանուր իրավասության դատարանում:	Մտածել, թե ինչ ապացույցներ կարելի է հաշվի առնել ընդհանուր իրավասության դատարանում և ինչ կանոններ սխալ կլինի կիրառել:	Քննարկման քարտեր (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 8.2) 4-6 աշակերտներից բաղկացած յուրաքանչյուր խմբին	Խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:

Դաս 1.
Լավ օրենք - վատ օրենք
Ի՞նչն է օրենքը դարձնում լավ օրենք:

Ուսուցման նպատակը	Իրազեկ լինել և հասկանալ այն գործոնները, որոնցով պայմանավորված է լավ իրավունքը:
Աշակերտական առաջադրանքներ	Քննարկել դպրոցի կանոնները և սահմանել, թե ինչն է կանոնը դարձնում լավ դպրոցական կանոն: Քննարկել օրենքները և սահմանել, թե ինչն է օրենքը դարձնում ավելի լավը: Քննադատաբար ուսումնասիրել իրավունքի որևէ ոլորտ իրենց երկրում, օրինակ՝ ալկոհոլային խմիչքների մասին օրենքները: Առաջարկել և հիմնավորել իրենց դպրոցում նոր կանոն կամ օրենք:
Ռեսուրսներ	Երկու քարտ յուրաքանչյուր աշակերտին՝ մեկի վրա գրված «Ա» տառը (կանաչ գույնի), մյուսի վրա՝ «Բ» տառը (կարմիր գույնի): Ուսումնական նյութեր. մեր երկրում ալկոհոլի մասին օրենքները Գծանշիչ գրիչներ և մեծ թուղթ՝ 4-6 աշակերտից բաղկացած յուրաքանչյուր խմբի համար: Թղթե գրատախտակ կամ մեծ թուղթ՝ դասարանում ցուցադրելու համար:
Մեթոդ	Դասարանային քննարկում և խմբային աշխատանք փոքր խմբերով:

Տեղեկատվական անկյուն

Այս դասի ժամանակ օգտագործվող մեթոդը հայտնի է որպես «ինդուկտիվ ուսուցում»: Այս մեթոդի դեպքում ուսուցիչը օգնում է աշակերտներին հասկանալ վերացական սկզբունքներ՝ դրանք հիմնելով կոնկրետ օրինակների վրա: Դասը սկսվում է նման օրինակներով, այս դեպքում՝ կանոնների կամ օրենքների մասին օրինակներով, և ուսուցիչը աշակերտներին խրախուսում է հանգել ընդհանուր սկզբունքների այդ օրինակներից: Տվյալ դեպքում սկզբունքները հանդիսանում են չափանիշներ, որոնք կարելի է կիրառել կանոնների կամ օրենքների նկատմամբ՝ դատողություն կատարելու համար, թե արդյոք դրանք լավ, թե վատ օրենքներ են. Դրանք արդարացի՞ են: Դրանք օգտակա՞ր են: Դրանք բոլորի բարեկեցության համա՞ր են: Ոստիկանությունը կարո՞ղ է կիրարկել դրանք: Դրանք հե՞շտ են հասկանալու և հետևելու համար:

Եթե անհրաժեշտ են հատուկ նյութեր, օրինակ, տվյալ երկրում կիրառվող ալկոհոլային խմիչքների օգտագործման մասին օրենքները, ապա ուսուցիչը կամ աշակերտները պետք է բերեն այդ նյութերը դասի ժամին:

Դասի ընթացքը

Ուսուցիչը դասը սկսում է աշակերտներին տալով երկու քարտ՝ մեկի վրա գրված մեծատառ «Ա» տառը (կանաչ գույնի), մյուսի վրա՝ մեծատառ «Բ» տառը (կարմիր գույնի):

Ուսուցիչը բացատրում է աշակերտներին, որ նրանք կլսեն մտացածին դպրոցական կանոններ և պետք է որոշեն, թե դրանք լավ, թե վատ կանոններ կլինեին: Լավ կանոնի դեպքում նրանք պետք է բարձրացնեն «Ա» տառը, և վատ կանոնի դեպքում՝ «Բ» տառը:

Ուսուցիչը կարդում է մտացածին դպրոցական կանոնները մեկ առ մեկ: Ամեն անգամ աշակերտները պետք է բարձրացնեն իրենց քարտերը՝ կախված, թե ինչ են մտածում կանոնի մասին: Կիրառվող կանոնները կարող են ներառել հետևյալը.

- տնային աշխատանքը պետք է վերացվի,
- ահաբեկումը արգելվում է,
- աշակերտները պետք է վճարեն դպրոց հաճախելու համար,
- դպրոց մաստակ չի կարելի բերել,
- աշակերտները պետք է սիրեն իրենց բոլոր ուսուցիչներին,
- աշակերտները պետք է կարողանան ընտրել դասավանդվող առարկաները,
- ավելի տարիքով ուսուցիչները պետք է ավելի հարմար աշխատանքային գրաֆիկ ունենան,
- դպրոց չի կարելի բջջային հեռախոս բերել:

Յուրաքանչյուր դեպքում ուսուցիչը պետք է խնդրի երկու կամ երեք աշակերտի հիմնավորել իրենց որոշումները.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է դա լավ կամ վատ կանոն:

Աշակերտների մտքերը չպետք է լրացուցիչ քննարկել կամ մեկնաբանել այս փուլում:

Այնուհետև ուսուցիչը պետք է դասարանը բաժանի 4-6 հոգանոց խմբերի և խնդրի աշակերտներին փորձել նշել այն գործոնները, որոնք դպրոցական կանոնը դարձնում են լավը.

- Ի՞նչն է դպրոցի կանոնը դարձնում լավը:

Խմբերը պետք է ներկայացնեն իրենց գաղափարները ամբողջ դասարանին:

Այնուհետև ուսուցիչը կրկնում է ամբողջ վարժությունը դասարանի հետ՝ կարդում է ձևակերպումները, աշակերտները բարձրացնում են քարտերը և հիմնավորում իրենց որոշումները և այլն: Բայց այս անգամ քննարկվում է մտացածին օրենք, և ոչ թե դպրոցական կանոններ: Կիրառվող օրենքները կարող են ներառել.

- բոլոր քաղաքացիները պարտավոր են դավանել նույն կրոնին,
- մարդասպանությունը սխալ է,
- սուտ ասել չի կարելի,
- արագ սնունդը պետք է արգելվի վաճառել,
- քաղաքացիները պետք է իրենք որոշեն, թե ճանապարհի որ հատվածով վարեն մեքենան,
- կանայք պետք է վարձատրվեն տղամարդկանց հավասար:

Այնուհետև ուսուցիչը պետք է խնդրի աշակերտներին վերադառնալ խմբեր և փորձել նշել այն գործոնները, որոնք օրենքը դարձնում են լավ օրենք.

- Ի՞նչն է օրենքը դարձնում լավը:

Խմբերը պետք է ներկայացնեն իրենց գաղափարները ամբողջ դասարանին: Այս ընթացքում ուսուցիչը պետք է փորձի խրախուսել աշակերտներին մտածել մի շարք չափանիշների ուղղությամբ, որոնք կարող են կիրառվել օրենքներում և որոնք օրենքը դարձնում են լավը: Դրանք ներառում են՝

- Ազնվություն, արդարություն և հավասարություն, ինչպես օրինակ՝ կանանց և տղամարդկանց վարձատրության հավասարությունն է,
- Օգտակարություն, հասարակությունը պետք է սահուն գործի, օրինակ՝ օրենքները մեքենա վարելու մասին, որոնք ճանապարհները ապահով են դարձնում,
- ընդհանուր բարիք, չպետք է պաշտպանել որոշակի խմբերի շահերը, օրինակ՝ միայն հարուստներինը,
- կիրարկելի, մեծամասնությունը պետք է ցանկանա հետևել դրանց, ոստիկանությունը պետք է կարողանա բռնել նրանց, ովքեր խախտում են օրենքը,
- պարզ, պետք է հեշտ լինի հասկանալու և հետևելու համար:

Երբ դասարանը համաձայնում է այս չափանիշների վերաբերյալ, դրանք պետք է ցուցադրվեն դասարանում, որպեսզի բոլոր կարողանան տեսնել դրանք: Ներկայացվող նյութի վերնագիրը պետք է լինի «Ի՞նչն է օրենքը դարձնում լավը»:

Հետո ուսուցիչը պետք է հարցնի աշակերտներին ուսումնասիրել իրենց խմբերում իրենց երկրից մի օրենք կամ իրավունքի ոլորտ (օրինակ՝ ալկոհոլի վաճառքի և օգատգործման մասին օրենքները): Ուսումնական նյութը պետք է տրամադրվի: Եթե ժամանակ կա, աշակերտները կարող են ձեռք բերել այլ նյութեր, որոնք հետաքրքրում են իրենց, օրինակ՝ երեխաների և դեռահասների իրավունքների և պարտականությունների մասին: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է գծանշիչ գրիչներ և մեծ թուղթ և նրանց խնդրվում է դասարանի համար պրեզենտացիա նախապատրաստել այն մասին, թե ընտրված օրենքը (ները) լավ օրենք (ներ) է (են), թե ոչ՝ օգտագործելով այն սկզբունքները, որոնք նախօրոք սահմանել էին և որոնք ցուցադրված են դասարանի պատին:

Խմբերը իրենց պրեզենտացիաները ներկայացնում են դասարանին:

Որպես վերջին հանձնարարություն կամ տնային աշխատանք, աշակերտներին կարելի է խնդրել նոր օրենք կամ դպրոցական նոր կանոն առաջարկել իրենց ընտրած թեմայով, ինչպես օրինակ՝ շրջակա միջավայրը և բերել փաստարկներ դրա ներկայացման համար՝ ըստ այն հիմնական սկզբունքների, որոնք նախապես սահմանել էին:

Դաս 2.
Ո՞ր տարիքում:
Ինչպես պետք է իրավունքը կիրառվի երիտասարդների նկատմամբ:

Ուսուցման նպատակը	Ուսումնասիրել, թե ինչպես է իրավունքը կիրառվում երիտասարդների նկատմամբ:
Աշակերտական առաջադրանքներ	Սահմանել չափահասության տարիքը, որի դեպքում երիտասարդը իրավունք է ստանում զբաղվելու գործունեության տարբեր ձևերով, որոնցով մեծահասակներն են զբաղվում: Մտածել, թե որքանով է Ձեր երկրի ներկայիս իրավունքը պատշաճ երիտասարդների համար:
Ռեսուրսներ	Երեք մեծ ցուցանակ «Ա», «Բ» և «Գ» տառերով, որոնք կփակցվեն դասասենյակի տարբեր պատերին: Աշակերտական բաշխման նյութերի օրինակներ 8.1՝ մեկական յուրաքանչյուր երկու աշակերտի համար: Գծանշիչ գրիչներ և մեծ թուղթ՝ 4-6 աշակերտից բաղկացած յուրաքանչյուր խմբի համար:
Մեթոդ	Զույգերով աշխատանք, խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:

Տեղեկատվական անկյուն

Այս դասը ներառում է շատ ֆիզիկական վարժություններ: Եթե Դուք գտնում եք, որ այս վարժությունները հարմար չեն Ձեր աշակերտների համար, ապա հիմնական վարժությունը կարելի է փոփոխել այնպես, որ աշակերտները նստած մնան իրենց նստարաններին, օրինակ՝տեղաշարժվելու փոխարեն քվեարկություն արվի ձեռք բարձրացնելով, կամ «Ա», «Բ», «Գ» քարտերը բարձրացնելով:

Դասի ընթացքը

Ուսուցիչը սկսում է դասը հարց ուղղելով դասարանին, թե արդյոք արդար է երեխաներին դպրոց հաճախել պարտադրելու մասին օրենք ունենալը, երբ նման օրենք չկա մեծահասակների համար:

– Ձեր կարծիքով արդա՞ր է օրենք ունենալը, որը պարտադրում է երեխաներին հաճախել դպրոց: Ինչո՞ւ կամ եթե ոչ, ապա ինչո՞ւ:

Ուսուցիչը այնուհետև բաժանում է աշակերտներին զույգերի և նրանց հարցաշար է տալիս (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 8.1) լրացնելու համար: Հարցաշարը վերաբերում է չափահասության տարիքին, որի դեպքում երիտասարդը իր երկրում իրավունք է ստանում զբաղվելու գործունեության տարբեր ձևերով, ինչով մեծահասակներն են զբաղվում:

Ուսուցիչը խնդրում է մի քանի կամավորի կարդալ իրենց պատասխաններից մեկը: Յուրաքանչյուր պատասխանից հետո ուսուցիչը դադար է տալիս, և, անհրաժեշտության դեպքում՝ ուղղում է աշակերտների պատասխանը: Աշակերտները այնուհետև գրում են ճիշտ պատասխանը հարցաթերթիկների վրա:

Յուրաքանչյուր պատասխանի դեպքում ուսուցիչը պետք է զույգերին հարցնի.

– Ի՞նչ եք մտածում: Այս տարիքը՝

ա/ չափից փոքր տարիք է

բ/ չափից մեծ տարիք է

գ/ ճիշտ տարիքն է:

Ուսուցիչը զույգերին մի որոշ ժամանակ է տալիս մտածելու և որոշում ընդունելու, հետո խնդրում է նրանց տեղափոխվել սենյակի տարբեր մասեր՝ ելնելով իրենց պատասխանից: (Ուսուցիչը արդեն մեծ ցուցանակներ է կախել «Ա», «Բ» և «Գ» տառերով՝ ցույց տալու համար, թե որտեղ պետք է կանգնել):

Ուսուցիչը այնուհետև պատահական ընտրությամբ ընտրված զույգերի խնդրում է բացատրել դասարանին իրենց մտածելակերպը և հիմնավորել իրենց կարծիքները: Ուսուցիչը նաև աշակերտներին հնարավորություն է տալիս վիճարկել նրանց որոշումը:

Դասի այս բաժինը ավարտելու համար ուսուցիչը հարցնում է.

– Ձեր կարծիքով, արդա՞ր է, որ օրենքը երիտասարդների վրա տարածվում է այլ կերպ, քան մեծահասակներին: Ինչո՞ւ:

Ուսուցիչը այնուհետև բաժանում է դասարանը 4-6 աշակերտից բաղկացած խմբերի և յուրաքանչյուր խմբի տալիս է գրիչներ և մեծ թուղթ: Ուսուցիչը խնդրում է խմբերին մտածել իրենց երկրի օրենքում փոփոխություն կատարելու մասին, որից երիտասարդները կշահեն: Նրանք կարող առաջարկել միանգամայն նոր օրենք, օրինակ՝ որ յուրաքանչյուր դպրոց պետք է ունենա դպրոցական խորհրդարան կամ օրենք՝ աշխատող երիտասարների նվազագույն աշխատավարձի մասին, կամ կարող են փոփոխություն առաջարկել գործող օրենքում, օրինակ՝ ընտրելու տարիքի վերաբերյալ, կամ վարորդական իրավունք ստանալու տարիքի վերաբերյալ: Յուրաքանչյուր խումբ պետք է պրեզենտացիայով հանդես գա դասարանի առջև՝ ներկայացնելով իրենց փաստարկները և թե իրենց կարծքիով, կոնկրետ ինչպես կարող է այդ օրենքից երիտասարդը օգտվել: Պրեզենտացիայից հետո դասարանը կարող է քվեարկել, թե որ խմբի առաջարկն էր ամենալավը:

Վերջնական հանձնարարությունից կամ տնային աշխատանքից հետո աշակերտները պետք է մտածեն այն քայլերի մասին, որ իրենք, որպես երիտասարդներ, կամ որպես դպրոցական խումբ, կարող են ձեռնարկել համոզելու կառավարությանը ընդունել օրենքում իրենց փոփոխությունը(ները), որն իրենք առաջարկում են:

Դաս 3.
Դուք օրենք եք ընդունում
Ինչպե՞ս եք վերաբերվում երիտասարդ իրավախախտներին:

Ուսուցման նպատակը	Ուսումնասիրել այն հարցը, թե այն երիտասարդները, որոնք օրենք են խախտել, ընդհանրապես պետք է պատժվեն, թե ոչ, և եթե այո, ինչպես:
Աշակերտական առաջադրանքներ	Մտածել տարբեր սկզբունքների՝ հատուցման, կանխարգելման, իրավունքների վերականգնման մասին, որոնք կիրառվում են արդար պատժի մասին որոշում ընդունելիս այն հանցագործությունների դեպքում, որոնք գործել են երիտասարդները:
Ռեսուրսներ	Պատմության օրինակ և լրացուցիչ տեղեկություններ ուսուցչի համար
Մեթոդ	Խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում. պատժի նպատակի երեք հիմնական սկզբունքներ

Մինչև 2-րդ դասը կենտրոնացած էր քաղաքացիական իրավունքի շուրջ, այս դասի ընթացքում կդիտարկենք քրեական իրավունքը՝ կենտրոնանալով երիտասարդ իրավախախտներին պատժելու կամ չպատժելու և եթե պատժելու՝ ապա ինչպես հարցերի շուրջ: Պատժի տեսության հիմնարար հարցն է «ինչո՞ւ պատժել»: Այս հարցին պատասխան է տրվել տարբեր ձևերով պատմության և գիտափիլիսոփայական մտքի փոփոխությունների ընթացքում: Առաջ են եկել պատժի նպատակին վերաբերող երեք սկզբունքներ:

1. **Հատուցում:** Պատիժը առնչվում է մեղքի և պատասխանատվության հետ: Հանցագործն արժանի է պատժի և հասարակությունն իր դժգոհությունն է արտահայտում հանցագործության նկատմամբ: Այս հասկացությունը նախատեսում է համամասնության չափանիշը, որը պաշտպանում է հանցագործին չափից խիստ պատժից: Նպատակն է վերականգնել արդարությունը:
2. **Կանխարգելում:** Պատիժը հաղորդագրություն է ուղղված հասարակության պոտենցիալ հանցագործներին՝ հետ պահելով նրանց հանցանք կատարելուց, քանի որ պատժի «ցավը» ստացվող օգուտից ավելին է: Նպատակն է կանխարգելել այլ անձանց կողմից հանցագործություն կատարելը:
3. **Վերականգնում:** Հանցագործությունը ընկալվում է որպես օգնություն խնդրելու ճիչ: Հանցագործին բուժում է պետք, ոչ թե պատիժ, և նպատակն է օգնել նրան այլևս հանցագործություն չգործել ապագայում՝ ինտեգրվելով հասարակության մեջ:

Աշխարհում քրեական համակարգերը էականորեն տարբերվում են այն բանով, թե ինչպես են հավասարակշռում այս երեք սկզբունքները՝ թե չափահաս և թե երիտասարդ իրավախատների համար: Ընդհանուր առմամբ, շատ երկրներ նախապատվությունը տվել են վերականգնմանը՝ ի համեմատության հատուցման և կանխարգելման սկզբունքների: Բայց ոչ բոլոր երկրներն են շարժվում այս ուղղությամբ: Վերականգնման հարցի հետ սերտ առնչվում է այն հարցը, թե ինչպես պետք է տարանջատել պատանի և չափահաս իրավախախտներին: Եվրոպայի խորհուրդը կոչ է արել 18 տարեկանը համարել տարիքային շեմ և հորդորել է կատարել 1989 թվականի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիային՝ հիմնավորելու դա (տե՛ս լրացուցիչ տեղեկություններ ուսուցիչների համար):

Այս դասի ընթացքում ներկայացվում է վերևում նշված պատժի երեք հասկացությունների մասին ներածական մասը: Կրկին կիրառվում է ինդուկտիվ մոտեցում: Աշակերտները կքննարկեն երիտասարդ իրավախախտների մասին դեպքի ուսումնասիրությունը և կիմանան պատժի տարբեր սկզբունքների, դրանց հետևանքների և այդ սկզբունքները հավասարակշռելու անհրաժեշտության մասին: Ուսուցիչը կարող է ամփոփել հասկացությունները հակիրճ դասախոսության ընթացքում՝ դասարանային քննարկման ընթացքում կամ դրանից հետո:

Այս դասը հնարավորություն կստեղծի ևս մեկ ծրագրի համար, որի համար անհրաժեշտ կլինեն ևս երկու դաս: Աշակերտները կարող են օգտագործել այն հասկացությունները, որոնք իրենք սովորել են այս դասի ընթացքում՝ գտնելու համար հավասարակշռություն իրենց երկրում երիտասարդ իրավախախտների առնչությամբ քրեական օրենսդրության վերաբերյալ:

Դասի ընթացքը

Ուսուցիչը սկսում է դաս՝ աշակերտներին բաժանելով 4-6 խմբերի: Ուսուցիչը բացատրում է, որ օրենքի գերակայությունը ներառում է սկզբունքներ այն մասին, որ դատավորները պետք է գործեն օրենքի շրջանակում՝ հանցագործի կամ իրավախախտի նկատմամբ պատիժ նշանակելիս: Այս դասի ընթացքում աշակերտները պետք է ուսումնասիրեն, թե ինչպես պետք է մշակվեն նման օրենքները, երբ դրանք վերաբերում են երիտասարդ իրավախախտներին: Նրանք լսելու են պատմություն հանցագործության վերաբերյալ, և յուրաքանչյուր խումբ պետք է պատկերացնի, որ իրենք խորհրդարանի անդամներ են և պետք է օրենք ընդունեն, որով պատիժ է սահմանվում հանցանքը կատարած հանցագործի նկատմամբ:

Ուսուցիչը պատմում է աշակերտներին հիմնական պատմությունը և նրանց հնարավորություն է տալիս խմբով որոշելու, թե իրենց կարծիքով արդար պատիժը Թոմի համար որը կլինի: Խմբերը պետք է ներկայացնեն իրենց տեսակետները:

Այնուհետև ուսուցիչը խմբերին լրացուցիչ տեղեկություններ է տալիս: Յուրաքանչյուր նոր տեղեկությունից հետո խմբերին հնարավորություն է տրվում փոխել իրենց միտքը պատժի վերաբերյալ, որի մասին նախապես մտածել էին:

Առաջադրանքից հետո ուսուցիչը խնդրում է յուրաքանչյուր խմբերին իրենց մտքերը ներկայացնել դասարանին.

– Ձեր կարծիքով, ի՞նչ պատիժ պետք է ստանան Y-ը: Ինչու՞:
– Լրացուցիչ տեղեկություններն օգնեցի՞ն Ձեզ փոխելու Ձեր կարծիքը նախապես որոշածի վերաբերյալ: Եթե այո, ապա ինչպե՞ս:

Ուսուցիչը այնուհետև աշակերտներին հավաքում է պլենար քննարկման և հարցնում.

– Ի՞նչ գործոններ պետք է հաշվի առնվի օրենքում իրավախախտման մեջ դատապարտված անձի նկատմամբ պատիժ սահմանելու մասին որոշում ընդունելիս:
– Ձեր կարծիքով, արդա՞ր է, որ օրենքը երիտասարդներին վերաբերում է այլ կերպ, քան մեծահասակներին: Ինչո՞ւ:

Որպես վերջին հանձնարարություն կամ տնային աշխատանք՝ ուսուցիչը խնդրում է աշակերտներին մտածել որևէ իրավիճակի մասին, որի մասին լսել են հեռուստատեսությունից, թերթերից կամ որը տեղի է ունեցել իրենց բնակության վայրում, երբ երիտասարդը, որը խախտել է օրենքը, ստացել է պատիժ, որն իրենց կարծիքով՝

ա/ շատ խիստ է

բ/ շատ մեղմ է:

Աշակերտները պետք է կարճ տեքստ գրեն իրենց ընտրած օրինակի մասին և ներկայացնեն այն հաջորդ դասին՝ ամփոփելով այն գործոնները, որոնց պատճառով հանգել են այդ հարցի շուրջ իրենց կարծիքին: Օրինակ կարող է հանդիսանալ մի իրավիճակ, որը վերաբերում է ալկոհոլի ազդեցության տակ գտնված վարորդին:

Դուք օրենք եք ընդունում

«Լեոնարդը և Թոմը երկուսն է 15 տարեկան էին և դպրոց էին հաճախում: Նրանք ճանաչել են միմյանց երկար տարիներ, բայց երբեք հաշտ չեն եղել:

Մի օր Թոմի բջջային հեռախոսը կորավ և նա մեղադրեց Լեոնարդին այն գողանալու մեջ: Լեոնարդը հերքեց, որ ինքը գողացել է, բայց ասաց, որ Թոմը նախանձում է իրեն, որովհետև ինքը շատ ընկերներ ունի, իսկ Թոմը ընկերներ չունի:

Այդ օրը դասերից հետո կռիվ տեղի ունեցավ: Թոմը դանակ ուներ, չնայած Լեոնարդը զինված չէր: Կռվի ժամանակ Թոմը կտրեց Լեոնարդի դեմքը այնպես, որ այն ամբողջ կյանքի ընթացքում սպի թողեց»:

Առաջադրանք.

Ձեր կարծիքով, Թոմի համար արդարացի պատիժը ո՞րը կլինի: Քննարկեք այս հարցը Ձեր խմբում և հետո գրեք ինչ պատիժ պետք է օրենքը նախատեսի նման իրավախախտման համար:

Լրացուցիչ տեղեկատվություն

1. Թոմը շատ խիստ դաստիարակություն է ստացել և պարբերաբար ծեծի է ենթարկվել իր հոր կողմից:

Սա փոխո՞ւմ է Ձեր տեսակետը Թոմի պատժի մասին: Եթե այո, ինչպե՞ս: Փոխեք Ձեր օրենքի նախագիծը, եթե անհրաժեշտ է:

2. Թոմը մեկուսացված է դասարանում և ոչ մեկ չկար, որ լսեր նրա խնդիրների մասին:

Սա փոխո՞ւմ է Ձեր տեսակետը Թոմի պատժի մասին: Եթե այո, ինչպե՞ս: Փոխեք Ձեր օրենքի նախագիծը, եթե անհրաժեշտ է:

3. Լեոնարդը իրոք գողացել էր Թոմի բջջային հեռախոսը և նա էր եղել կռիվը սկսողը, որովհետև Թոմը բջջային հեռախոսի գողության մասին տեղեկացրել էր ոստիկանությանը:

Սա փոխո՞ւմ է Ձեր տեսակետը Թոմի պատժի մասին: Եթե այո, ինչպե՞ս: Փոխեք Ձեր օրենքի նախագիծը, եթե անհրաժեշտ է:

4. Լեոնարդը բանդայի առաջնորդ էր, որը ամիսներ շարունակ ահաբեկել էր Թոմին: Բանդան մեկից ավելի անգամ ծեծել էր Թոմին՝ խփելով նրան փայտերով, շղթաներով և մետաղական ձողով: Սա մղձավանջ էր դարձրել Թոմի կյանքը, և նա վախենում էր դպրոց գնալ:

Սա փոխո՞ւմ է Ձեր տեսակետը Թոմի պատժի մասին: Եթե այո, ինչպե՞ս: Փոխեք Ձեր օրենքի նախագիծը, եթե անհրաժեշտ է:

5. Թոմի հայրը տանջել էր Թոմին մշտապես ասելով, որ նա շատ թույլ է և որ պետք է կարողանա իրեն պաշտպանել այնպիսի խուլիգանների մոտ, ինչպիսին Լեոնարդն է:

Սա փոխո՞ւմ է Ձեր տեսակետը Թոմի պատժի մասին: Եթե այո, ինչպե՞ս: Փոխեք Ձեր օրենքի նախագիծը, եթե անհրաժեշտ է:

6. Թոմ դանակը հանել է միայն վախեցնելու համար խուլիգաններին: Նա չէր ցանկացել օգտագործել այն: Այդ ժամանակ քսան այլ մարդ կանգնած է եղել, և բոլորը քաջալերել են տղաներին կռվել:

Սա փոխո՞ւմ է Ձեր տեսակետը Թոմի պատժի մասին: Եթե այո, ինչպե՞ս: Փոխեք Ձեր օրենքի նախագիծը, եթե անհրաժեշտ է:

7. Ուսուցիչը տեսել է, որ Թոմը դանակ է բերել դպրոց երկու օր առաջ, բայց այդ մասին լռել է:

Սա փոխո՞ւմ է Ձեր տեսակետը Թոմի պատժի մասին: Եթե այո, ինչպե՞ս: Փոխեք Ձեր օրենքի նախագիծը, եթե անհրաժեշտ է:

Աշակերտները ընտրում են խոսնակ իրենց խմբերի համար, որոնք հետո ներկայացնում են իրենց օրենքի նախագծերը դասարանին: Կարելի է սպասել, որ նրանք բոլորն է իրազեկ են այնպիսի երկընտրանքների մասին, որոնք առկա են արդարադատության հակասական նպատակների և սկզբունքների դեպքում, ինչպես հետևյալում:

– Ինչպե՞ս ցույց տալ, որ հասարակությունը չի խրախուսում նման վարքագիծը:
– Ինչպե՞ս ապահովել, որ դպրոցը լինի մի վայր, որտեղ բռնություններն արգելվում են:
– Ի՞նչ խստությամբ պետք է պատժել Թոմի նման մարդկանց, որպեսզի մյուսները, ինչպես օրինակ Լեոնադրի բանդան, նույնպես դանակներ չօգտագործի:
– Թոմի վարքագիծը օգնության ճիչ է, և նա չէր կարող ընտրել այն ընտանիքը, որտեղ դաստիարակվել էր: Ինչպե՞ս կարող ենք օգնել Թոմին, որպեսզի նա իրեն ավելի երջանիկ զգա և հետագայում դանակով կռվելու անհրաժեշտություն չունենա:

Ուսուցիչը կարող է ամփոփել այս քննարկումը՝ հարցերը կապելով հատուցման, կանխարգելման և վերականգնման երեք սկզբունքների հետ: Հղում կատարելով Երեխայի իրավունքների վերաբերյալ կոնվենցիային՝ ուսուցիչը կարող է առաջարկել առաջնությունը տալ վերականգնմանը:

Եթե ժամանակ կա, և աշակերտները հետաքրքրված են, այս հարցը կարելի է ավելի առաջ տանել: Եթե նրանք համաձայնություն ձեռք չեն բերում, թե ինչպես հավասարակշռել պատժի երեք սկզբունքները, ապա այս բանավեճը կարող է շարունակվել: Եթե նրանք համաձայնում են վերականգնման սկզբունքի շուրջ, նրանք կարող են ուսումնասիրել, թե իրենց երկրում հատուցման, կանխարգելման և վերականգնման երեք սկզբունքները ինչպես են հաշվի առնվում:

Դաս 4.
Ապացույցների վերաբերյալ կանոններ
Ո՞ր ապացույցները պետք է ուժ ունենան ընդհանուր իրավասության դատարանում:

Ուսուցման նպատակը	Ըմբռնել ապացույցների վերաբերյալ կանոնները ընդհանուր իրավասության դատարանում:
Աշակերտական առաջադրանքներ	Մտածել, թե ինչ ապացույցներ կարելի է հաշվի առնել ընդհանուր իրավասության դատարանում և ինչ կանոններ սխալ կլինի կիրառել:
Ռեսուրսներ	Քննարկման քարտեր (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 8.2) 4-6 աշակերտների յուրաքանչյուր խմբի համար
Մեթոդ	աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:

Տեղեկատվական անկյուն

Քրեական արդարադատության ցանկացած համակարգում հիմնական տարրերից մեկը հանդիսանում է մի շարք կանոնները, որը սահմանում է, թե ինչ տիպի ապացույցներ պետք է կամ պետք չէ հաշվի առնել ընդհանուր իրավասության դատարանում, որպեսզի դատավարությունն արդար լինի: Օրինակ, արդա՞ր է օգտագործել «լսած» ապացույցները (այսինքն ապացույցներ, որոնք վկան անձամբ չի հանդիպել, այլ նրան մեկ այլ անձ է պատմել), կտտանքների կամ բռնության սպառնալիքի հետևանքով ստացած ապացույցները, կամ «առաջնորդող հարցերով» ստացված ապացույցները, այսինքն, հարցեր, որոնք բառերը դնում են վկայի բերանում:

Դասի թնթացքը

Ուսուցիչը դասը սկսում է բանավոր և գրատախտակին գրավոր ձևով ներկայացնելով ՄԻԵԿ-ից (1950թ.) հետևյալ դրույթը՝

> «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:
>
> *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (1950 թ.), հոդված 6, թիվ 2*

Ուսուցիչը հրավիրում է աշակերտներին բացատրելու այս դրույթը: Ուսուցիչը կարող է ավելացնել նախնական անմեղության կանխավարկածի կատեգորիան: Աշակերտները պետք է հասկանան այս սկզբունքի կարևորությունը արդար դատավարության համար և պետք է սովորեն, որ մեղադրվող անձը կարող է դատապարտվել, միայն եթե բավարար ապացույցներ կան, որոնք ապացուցում են նրա մեղքը: Այս դասի ընթացքում աշակերտները կուսումնասիրեն ապացույցների վերաբերյալ կանոնները ընդհանուր իրավասության դատարանում:

Աշակերտները պետք է կազմեն 4-6 հոգանոց խմբեր:

Այնուհետև ուսուցիչը պատմում է խմբերին քրեական մի դատավարության մասին, որը տեղի է ունենում: Այն Մանվել անունով մի երիտասարդի մասին է, որը մեղադրվում է պարոն Քեյին պատկանող մեքենան գողանալու մեջ: Մեքենան անհետացել է պարող Քեյի տան բակից մի ուշ երեկո և գտնվել է լքված գյուղից դուրս վայրում հաջորդ առավոտյան: Դրա վրա բենզին էին լցրել և վառել: Մանվելին ոստիկանությունը ձերբակալել է և մեղադրանք է ներկայացրել գողության և վնաս հասցնելու մեղադրանքով:

Ուսուցիչը այնուհետև յուրաքանչյուր խմբին քննարկման քարտեր է տալիս: Քարտերից յուրաքանչյուր վրա գրված է որևէ ապացույց, որը հետաքննությունը օգտագործում է դատարանում ապացուցելու համար Մանվելի մեղքը:

Ուսուցիչը խմբերին խնդրում է.

- ապացույցները հերթականությամբ շարել ամենաուժեղից՝ ամենաթույլը,
- որոշել, թե պետք է արդյոք բացառել որևէ ապացույց ընդհանրապես, որովհետև կամ այն տեղին չէ, կամ անարդար է:

Խմբերը ներկայացնում են իրենց գաղափարները դասարանին և փորձում են համաձայնության գալ ապացույցների շուրջ, որոնք պետք է ընդունել և պետք է ընդհանրապես բացառել:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին վերադառնալ խմբեր և որոշել.

- Ո՞ր հարցերը կցանկանայիք, որ դատարանը առաջադրեր վկաներին և Մանվելին: Ինչու՞:
- Կա՞ն արդյոք հարցեր, որոնք անարդար կլիներ դատարանի կողմից հարցնել նրանց: Եթե այո, ինչպիսի՞ և ինչո՞ւ:

Խմբերը ներկայացնում են իրենց գաղափարները և դասարանը, համատեղ աշխատելով, փորձում է կազմել ապացույցների ցանկ և հարցեր, որոնք, իրենց կարծիքով, սխալ կլիներ կիրառել ընդհանուր իրավասության դատարանում:

Ժամանակի առկայության դեպքում այս դասից հետո կարելի է հանձնարարել հետազոտական աշխատանք: Որպես տնային աշխատանք՝ աշակերտներին խնդրում են հետազոտել ապացույցների վերաբերյալ կանոնները, որոնք կիրառելի են քրեական գործերով դատավարությունների ժամանակ իրենց երկրում և ներկայացնել իրենց հետազոտական արդյունքները դասարանին հաջորդ դասի ընթացքում:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 8.1
Հարցաշար. ո՞ր տարիքում:

Ո՞ր տարիքում է օրենքը Ձեր երկրում թույլ տալիս երիտասարդներին.

1. ստանալ վարորդական իրավունք,
2. ամուսնանալ,
3. քվեարկել ընտրությունների ժամանակ,
4. գնալ բանակ,
5. վճարել հարկեր,
6. քաղաքական պաշտոն զբաղեցնել,
7. ազատազրկվել,
8. ավարտել դպրոցը,
9. երեխա որդեգրել:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 8.2
Քննարկման քարտեր

Մի ոստիկան ասել է դատարանին, որ Մանվելը խոստովանել է, որ ինքն է գողացել մեքենան, երբ նրան հարցաքննել են ոստիկանությունում:

Մի երիտասարդ աղջիկ ասել է դատարանին, որ ինքը լսել է, թե ինչպես իր ընկերներից մեկը խոսել է Մանվելի հետ բջջային հեռախոսով: Նրա ընկերը խոսել է Մանվելի հետ պարոն Քեյի մեքենան գողանալու մասին:

Մանվելի ուսուցիչներից մեկը պատմել է դատարանին, որ ինքը բռնացրել է Ստեֆանին դպրոցից մի քանի անգամ գողություն անելիս, երբ նա դպրոց էր հաճախում:

Երբ մեղադրող կողմը հարցրեց. «Դուք տեսե՞լ եք Մանվելի նման երիտասարդի, որն այդ երեկո քշել է մեքենան», Քեյի հարևաններից մեկը պատասխանեց. «Այո, տեսել եմ»:

Մի երիտասարդ ասել է, որ Մանվելը միշտ պարծեցել է մեքենաներ գողանալու մասին:

Պարոն Քեյը ասել է դատարանին, որ իր կարծիքով գլխավոր կասկածյալը պետք է լինի Մանվելը, քանի որ նա չարակամորեն էր տրամադրվել Քեյի ընտանիքի դեմ ինչ պարոն Քեյը արգելել էր Ստեֆանին հանդիպել իր աղջկան:

Մանվելի ալիբին պաշտպանող ոչ մեկ չկար, որ ինքը տանը մենակ է եղել այն երեկո, երբ մեքենան գողացել են:

Լրացուցիչ տեղեկություն ուսուցիչների համար 8.1
Ինտեգրում, ոչ թե քրեականացում

Թոմաս Համարբերգ, Մարդու իրավունքների հանձնակատար, Եվրոպայի խորհուրդ

Եվրոպական շատ երկրներում դեռահասների մասին շատ տեղեկություններ չկան հանցագործությունների մասին ընդհանուր վիճակագրության մեջ: Նաև, անչափահասների հանցագործության մակարդակը ըստ տարիների քիչ թե շատ կայուն է մեր մայրցամաքում:

Սա չի նշանակում, որ խնդիրը կարևոր չէ: Որոշ երկրներից ստացվել են ահազանգող տվյալներ այն մասին, որ երիտասարդ իրավախախտների կողմից կատարված հանցագործությունները ուղեկցվում են ավելի շատ բռնություններով, կամ դարձել են ավելի լուրջ: Սա ինքնին ահազանգող ազդանշան է: (...):

Ներկայումս Եվրոպայում կան երկու տարբեր միտումներ: Միտումներից մեկը քրեական պատասխանատվության տարիքը նվազեցնելն է և ավելի շատ երեխաների բանտարկելը, երբ նրանք փոքր են: Մյուս միտումն այն է, որ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ոգով պետք է խուսափել քրեականացումից և գտնել ընտանեկան կամ այլ սոցիալական այլընտրանքներ բանտարկությանը:

Ես կպաշտպանեմ երկրորդ մոտեցումը: Իմ օգտին է խոսում ոչ միայն ՄԱԿ-ի կոնվենցիան, այլև Երեխաների պաշտպանների եվրոպական ցանցը: 2003 թվականի հայտարարության մեջ ավելի քան 21 մարդու իրավունքների պաշտպաններ շեշտեցին, որ օրենքի հետ խնդիր ունեցող երեխաները նաև և առաջ երեխաներ են, որոնք, անկախ ամեն ինչից, մարդու իրավունքներ ունեն:

Նրանք առաջարկեցին, որ քրեական պատասխանատվության տարիքը ոչ թե պետք է նվազեցնել, այլ բարձրացնել՝ կամաց-կամաց այն հասցնելով 18 տարեկանի, և որ պետք է փորձել կիրառել այդ տարիքից ցածր անչափահաս իրավախախտների հետ վարվելու նորարարական համակարգեր՝ կարևորելով կրթությունը, վերահինտեգրում և վերականգնումը:

Բոլոր եվրոպական պետությունների կողմից վավերացրած Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան պահանջում է կառավարություններից սահմանել նվազագույն տարիք, որից ցածր պետք է համարվի այն, որ իրավունակություն չունեն քրեական իրավունքը խախտելու համար: Պայմանագիրը չի որոշակիացնում, թե կոնկրետ որ տարիքը պետք է լինի շեմային: Այնուամենայնիվ, կոնվենցիայի իրագործումը մշտադիտարկող կոմիտեն մտահոգություն է արտահայտել որոշ երկրներում սահմանված ցածր տարիքի առնչությամբ: Եվրոպական շատ երկրներում երեխաները քրեական պատասխանատվության են ենթարկվում 12-ից 15 կամ 16 տարեկան հասակում, բայց կան օրինակներ այպիսի տարիքային շեմերի, ինչպիսին յոթ, ութ կամ 10 տարեկանն է:

Չնայած Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ուղերձն այն է, որ երեխաների քրեականացումից պետք է խուսափել, այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ երիտասարդ իրավախախտների հետ պետք է վարվել այնպես, ասես նրանք պատասխանատվություն չունեն: Ընդհակառակը, կարևոր է, որ երիտասարդ իրավախախտները պատասխանատու լինեն իրենց գործողությունների համար, և օրինակ՝ մասնակցեն իրենց կողմից հասցրած վնասի փոխհատուցման միջոցառումներին:

Հարցն այն է, թե նման դեպքերում ինչ մեխանիզմ պետք է փոխարինի սովորական քրեական արդարադատության համակարգին: Այս ընթացակարգերի ժամանակ պետք է հաշվի առնվի տուժողներին հասցված վնասը, և իրավախախտը պետք է հասկանա, որ իր արարքը անընդունելի է: Անչափահասների համար նախատեսված առանձին մեխանիզմի նպատակը պետք է լինի ճանաչել մեղքը և կիրառել այնպիսի պատժամիջոցներ, որոնք ուղղված են վերականգնմանը:

Պատժամիջոցների պրոցեսը տարբերվում է սովորական քրեական ընթացակարգից: Անչափահասների արդարադատության համակարգում չպետք է լինի հատուցում: Պետք է սահմանվի պատասխանատվություն, և, միևնույն ժամանակ՝ խթանվի վերահինտեգրումը: Երիտասարդ իրավախախտը դասեր պետք է քաղի և երբեք չկրկնի սխալ արարքը:

Իրականության մեջ սա անելը հեշտ չէ: Դա պահանջում է նորարարությունը և արդյունավետ համայնքային պատժամիջոցների կիրառում: Սկզբունքորեն, պետք է ներգրավել իրավախախտի ծնողներին կամ այլ օրինական խնամակալների, բացառությամբ: Ինչպիսին էլ լինի գործընթացը, պետք է երեխան հնարավորություն ունենա վիճարկել մեղանդրանքները և նույնիսկ բողոքարկել դրանք:

«Հաշտության» հետաքրքիր ընթացակարգ է ներմուծվել Սլովենիայում: Այստեղ, մեղադրվող անչափահասի գործը կարող է հղվել հաշտարարին, եթե մեղադրող կողմը, տուժողը և մեղադրյալը նման համաձայնություն են տվել: Հաշտարարը այնուհետև փորձում է վեճը այնպես կարգավորել, որ այն բավարարի թե տուժողին և թե մեղադրյալին, և որ հնարավոր լինի խուսափել դատավարությունից:

Պետք է շեշտել մեկ հայեցակետ. կարևոր է արագ արձագանքել իրավախախտմանը: Ուշացած ընթացակարգերը, որոնք այսօր խնդիր են մի քանի եվրոպական երկրներում, հատկապես վատ հետևանքներ են ունենում, երբ խոսքը վերաբերում է երիտասարդ իրավախախտներին, որոնց վատ արարքները պետք է դիտել որպես շտապ օգնության ճիչ:

Թոմաս Համարբերգ, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար, հատված «Անչափահասների արդարադատության մարդու իրավունքների ուղղվածությունը», Եվրոպայի գլխավոր դատախազների համաժողովում ներկայացված պրեզենտացիա, Մոսկվա, հուլիսի 5-6, 2006 թվական: Աղբյուր՝ http://www.coe.int/t/commissioner/

Լրացուցիչ տեղեկություն ուսուցիչների համար 8.2

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա

Ընդունված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1989 թվականի նոյեմբերի 20-ին

«Հոդված 37

Մասնակից պետությունները ապահովում են, որ

ա/ Ոչ մի երեխա չենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան անմարդկային, կամ արժանապատվությունը վիրավորող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մահապատիժ, ոչ ցմահ բանտարկություն, որն ազատման հնարավորություն չի նախատեսում, չի սահմանվում տասնութ տարին չլրացած անձանց կողմից կատարված հանցագործությունների համար,

բ/ Ոչ մի երեխա չզրկվի ազատությունից անօրինական կամ կամայական կերպով: Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ բանտարկությունը իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում միայն որպես ծայրահեղ միջոց՝ որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցում,

գ/ Ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա օգտվի մարդասիրական վերաբերմունքից և իր անձի անկապտելի արժանապատվության նկատմամբ հարգանքից, հաշվի առնելով նրա տարիքային պահանջմունքները: Մասնավորապես, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն չի համարվում, որ, երեխայի շահերից ելնելով, հարկավոր չէ այդ անել, և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր ընտանիքի հետ՝ նամակագրության և տեսակցությունների միջոցով, բացառությամբ հատուկ հանգամանքների,

դ/ Ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա իրավունք ունենա անհապաղ օգտվելու համապատասխան իրավական և այլ օգնությունից, ինչպես նաև դատարանի կամ իրավասու, անկախ և անկողմնակալ այլ մարմնի առաջ վիճարկել իրեն ազատությունից զրկելու օրինականությունը և իրավունք ունենա նրանց կողմից անհապաղ որոշում ակնկալել այդպիսի ցանկացած դատավարական գործողության ժամանակ»:

«Հոդված 40

(...) 3. Մասնակից պետությունները ձգտում են նպաստել քրեական օրենսդրությունը խախտած համարվող, մեղադրվող կամ մեղավոր ճանաչված երեխաներին անմիջականորեն վերաբերող օրենքների, ընթացակարգերի, մարմինների և հիմնարկների սահմանմանը, մասնավորապես,

ե/ այն նվազագույն տարիքի սահմանմանը, որից ցածր երեխաները համարվում են անընդունակ խախտելու քրեական օրենսդրությունը,

զ/ Անհրաժեշտության և ցանկալիության դեպքում այդպիսի երեխաների հետ առանց դատաքննության վարվելու նպատակով միջոցներ ձեռնարկելուն՝ մարդու իրավունքների լիակատար պաշտպանության և իրավական երաշխիքների պահպանման պայմանով:

4. Անհրաժեշտ է այնպիսի բազմազան միջոցառումների առկայությունը, ինչպիսիք են խնամքը, խնամակալության և հսկողության մասին կանոնակարգը, խորհրդատվական ծառայությունները, փորձաշրջանի նշանակումը, դաստիարակությունը, ուսուցման և մասնագիտական պատրաստության ծրագրերը և խնամքի այլ ձևեր, որոնք փոխարինում են հիմնարկներում ցուցաբերվող հոգածությանը, նպատակ ունենալով երեխայի նկատմամբ ապահովել նրա բարեկեցությունը, ինչպես նաև նրա դրությանն ու հանցագործության բնույթի համապատասխանող վերաբերմունք»:

Աղբյուր՝ Ռոլֆ Գոլոբ/Փիթեր Քռափֆ՝ Երեխաների իրավունքների ուսումնասիրություն: Դասերի շարք տարրական դասարանների համար:

ԺՔԿ/ՄԻԿ, հատոր V, Ստրասբուրգ, 2007թ., էջ 77ff:

Լրացուցիչ գրականություն. Սինդի Բանկս, *Քրեական արդարադատության էթիկա*, Թաուզենդ Օքս, 2004 թ.: 5-րդ գլխի ՓԴՖ տարբերակը՝ Քրական պատժի նպատակը, կարելի է գտնել հետևյալ կայքէջքում՝ http://www.sagepub.com:

ԳԼՈՒԽ 9.
Կառավարություն և քաղաքականություն

Ինչպե՞ս պետք է կառավարվի հասարակությունը:

9.1. Ո՞վ է պատասխանատու:

Ո՞րն է երկիրը կառավարելու ամենալավ ձևը:

9.2. Եթե դու նախագահ լինեիր

Ինչի՞ համար է կառավարությունը:

9.3. Ես և իմ դերը

Ի՞նչ պետք է պետությունը ակնկալի իր քաղաքացիներից:

9.4. Աշակերտական խորհրդարան

Ինչպե՞ս պետք է կառավարվեն դպրոցները:

ԳԼՈՒԽ 9. Կառավարություն և քաղաքականություն Ինչպե՞ս պետք է կառավարվի հասարակությունը:

Քաղաքականությունը մի գործընթաց է, որով տարբեր կարծիքներ և շահեր ունեցող քաղաքացիները կոլեկտիվ որոշումներ են ընդունում այն մասին, թե ինչպես պետք է համատեղ կյանքը կազմակերպվի: Այն ներառում է համոզելը, բանակցությունը և մեխանիզմը՝ վերջնական որոշում ընդունելու համար, օրինակ՝ քվեարկության միջոցով: Այն ներառում է իշխանություն, իրավասություն և որոշակի հարկադրանքի տարր, ապահովելու համար այն, որ կոլեկտիվ որոշումները պարտադիր բնույթ ունենան ամբողջ խմբի համար:

Ուստի, քաղաքականությունն սահմանվում է պետական հաստատությունների և քաղաքացիների միջև: Հարաբերությունները իրականացվում են տարբեր ձևերով քաղաքական տարբեր համակարգերում, օրինակ՝ միապետություններում, ժողովրդավարություններում և ամբողջատիրական ռեժիմներում:

Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիները ունեն քաղաքական հավասարություն: Կոլեկտիվ որոշումները ընդունվում են մեծամասնական քվերակության որևէ ձևով՝ կամ քաղաքացիների կողմից անմիջապես, կամ նրանց կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով: Բայց ժողովրդավարական քաղաքականությունը պարզապես քվեարկության մասին չէ: Այն նաև քննարկման և բանավեճի ու քաղաքացիների կողմից հանրային կարևորության հարցերի շուրջ իրենց ձայնը լսելի դարձնելու հնարավորությունների մասին է:

Ժողովրդավարության ժամանակ կարևոր խնդիր է հանդիսանում պետության հաստատությունների պատշաճ գործառույթը և քաղաքացիների համապատասխան պարտավորությունները: Մեկ այլ խնդիր է, թե ժողովրդավարական հասարակությունում առանձին հաստատություններն որքանով պետք է կառավարվեն ժողովրդավար մեթոդներով (օրինակ՝ դպրոցները):

Ուսուցում ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության թեմայով

Դասերի արդյունքում աշակերտները.

- գիտելիք ձեռք կբերեն կառավարման տարբեր ձևերի և քաղաքացիների համար դրանց հետևանքների մասին,
- գիտելիքներ ձեռք կբերեն կառավարության պարտականությունների և գործառույթների, ինչպես նաև քաղաքացիների համապատասխան պարտականությունների մասին,
- կծանոթանան ժողովրդավարական գործընթացներին,
- ավելի շատ բան կիմանան իրենց երկրում քաղաքական համակարգի մասին:

Ընթերցողը կնկատի, որ հաջորդիվ ներկայացվող դասերի պլաններում առաջարկվում է հանձնարարել տնային աշխատանք, որը կխթանի աշակերտների ուսումնառության պրոցեսը և ընկալումը: Լավագույն դեպքում, հաջորդիվ ներկայացվող դասերը պետք է սկսեն աշակերտների կողմից ներդրումով: Սա ժամանակ է պահանջում և հաճախ դասարանում բարձրացվում են հարցեր, ինչը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է կրկնել կամ բացատրել, ինչես նաև խրախուսել հանպատրաստից քննարկում: Եթե ժամանակը սուղ է, ուսուցիչը կարող է հավաքել բոլոր գրավոր աշխատանքները կամ դրանց մի մասը և հետադարձ կապ տրամադրել դրանց շուրջ, որոշ դեպքերում՝ նաև գնահատելով աշակերտների աշխատանքը: Աշակերտները նաև կարող են իրենց աշխատանքը կամավոր հանձնել: Ի վերջո, տնային աշխատանքը կարող է լինել կրկնություն կամ լրացուցիչ վարժություններ՝ թեստին նախապատրաստվելու համար: Որպես սկզբունքային հարց՝ ուսուցիչը պետք է միշտ հաշվի առնի աշակերտների տնային աշխատանքի դերը և պետք է որոշի, թե արդյոք անհրաժեշտ է դրանք ներառել իր հետագա դասերի պլաններում և եթե այո, ապա ինչպես:

Նման պլանավորման օրինակ քննարկվում է չորրորդ դասի նկարագրության մեջ:

ԳԼՈՒԽ 9. Կառավարություն և քաղաքականություն Ինչպե՞ս պետք է կառավարվի հասարակությունը:

Դասի վերնագիրը	Նպատակները	Աշակերտական առաջադրանքներ	Ռեսուրսներ	Մեթոդ
Դաս 1. Ո՞վ է պատասխանատու:	Աշակերտները սովորում են կառավարման տարբեր ձևերի, օրինակ՝ ժողովրդավարության և դիկտատուրային մասին:	Աշակերտները անդրադարձ են կատարում կառավարման համակարգի արդարացիության վերաբերյալ, որը գոյություն ունի իրականում կամ երևակայական հասարակության մեջ:	Այս նպատակով աշակերտներին տրվում է աշակերտների համար նախատեսված 9.1 բաշխման նյութերի օրինակները, թուղթ և գրիչներ:	Իրավիճակ, զույգերով աշխատանք, դասարանային քննարկում, ֆորմալ բանավեճ:
Դաս 2. Եթե դու նախագահ լինեիր	Աշակերտները կարողանում են բացատրել կառավարության գործառույթները և պարտականությունները:	Աշակերտները պատկերացնում են, որ իրենք ձևավորում են կառավարություն և պետք է որոշեն, թե ինչպես պետք է ծախսվեն պետական փողերը: Նրանք քննարկում են, թե ինչ սոցիալական իդեալներ կցանկանային ձեռք բերել:	Մեծ թուղթ, գծանշիչ գրիչներ և հուշումների համար նախատեսված թուղթ՝ 4-6 աշակերտից բաղկացած յուրաքանչյուր խմբի համար:	Պաստառներ, պրեզենտացիաներ, խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:
Դաս 3. Ես և իմ դերը	Աշակերտները սովորում են քաղաքացիների պարտականությունների մասին ժողովրդավարական հասարակությունում:	Աշակերտները քննարկում են, թե ինչ պարտականությունները պետք է քաղաքացիները ունենան և ինչպես կարելի է խրախուսել նրանց՝ իրենց պարտականություններին ավելի լուրջ վերաբերվել:	Քննարկման քարտերի հավաքածու (աշակերտների համար նախատեսված նյութեր 9.2), մեծ թուղթ և գծանշիչ գրիչներ՝ 4-6 աշակերտից բաղկացած յուրաքանչյուր խմբի համար:	Պրեզենտացիաներ, խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:
Դաս 4. Աշակերտ խորհրդարան	Աշակերտները կարող են սահմանել չափանիշներ, որոնք վերաբերում են դպրոցի կառավարմանը և այդ գործընթացում աշակերտական մարմնի դերին:	Աշակերտները քննարկում են, թե ինչպես պետք է աշխատի երևակայական աշակերտական խորհրդարանը:	Հարցաշար յուրաքանչյուր աշակերտի համար (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 9.3), մեծ թուղթ և գծանշիչ գրիչներ՝ 4-6 աշակերտից բաղկացած յուրաքանչյուր խմբի համար:	Պրեզենտացիաներ, անհատական, խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:

Դաս 1.
Ո՞վ է պատասխանատու:
Ո՞րն է երկիրը կառավարելու ամենալավ ձևը:

Ուսուցման նպատակը	Աշակերտները սովորում են կառավարման տարբեր ձևերի, օրինակ՝ ժողովրդավարության և դիկտատուրայի մասին:
Առաջադրանքներ	Աշակերտները անդրադարձ են կատարում կառավարման համակարգի արդարացիության վերաբերյալ, որը գոյություն ունի իրականում կամ երևակայական հասարակության մեջ:
Ռեսուրսներ	Այս նպատակով աշակերտներին տրվում է աշակերտների համար նախատեսված 9.1 բաշխման նյութերի օրինակները, թուղթ և գրիչներ:
Մեթոդ	Պատմություն, զույգերով աշխատանք, դասարանական քննարկում, ֆորմալ բանավեճ:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Կառավարման ձևերը կարող են դասակարգվել տարբեր եղանակներով, օրինակ՝ թե ում է պատկանում իշխանությունը, ինչպես է իշխանությունը փոխանցվում ժողովրդին, որտեղ է սուվերենության սահմանը և ինչպես են կանոնները կիրարկվում: Գործնականում գոյություն ունեցող հիմնական տեսակները հետևյալն են՝ ժողովրդավարություն, միապետություն, թեոկրատիա և բռնապետություն կամ դիկտատուրա: Դրանց մասին պետք է մտածել որպես «կատարյալ տեսակներ», որովհետև իրականության մեջ դրանք կարող են միաժամանակ գոյություն ունենալ միևնույն երկրում: Օրինակ՝ խորհրդարանական ժողովրդավարությունը կարող է պարունակել դիկտատուրայի տարրեր կամ կարող գոյություն ունենալ կառավարող թագավորական ընտանիքի հետ համատեղ:

Դասի ընթացքը

Ուսուցիչը դասը սկսում է կարդալով «Սիկալի թագավորությունը» պատմությունը (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 9.1)։ Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ունենա պատմության մի օրինակ, որպեսզի կարողանան հետևել, երբ ուսուցիչը կարդում է։

Ուսուցիչը կեսից պետք է դադարեցնի պատմությունը կարդալը և հարցնի.

– Ի՞նչ եք մտածում Սիկալում կյանքի մասին։

Պատմության վերջում ուսուցիչը պետք է հարցնի.

– Ի՞նչ եք մտածում Սիկալում կյանքի մասին այժմ։

Ուսուցիչը բաժանում է աշակերտներին զույգերի և խնդրում է նրանց անդրադարձ կատարել Սիկալում կյանքի որակի մասին։ Աշակերտներին տրվում է թուղթ, որի վրա պետք է գրեն, թե իրենց կարծիքով, որոնք են Սիկալում ապրելու առավելությունները և թերությունները։

Ուսուցիչը խնդրում է զույգերին ներկայացնել իրենց գաղափարները դասարանին և հիմնական կետերը գրում է, որպեսզի բոլոր կարողանան տեսնել դրանք։

Այնուհետև ուսուցիչը խնդրում է ամբողջ դասարանին անդրադարձ կատարել, թե ինչպես է կառավարումը տեղի ունենում Սիկալում.

– Ձեր կարծիքով, Սիկալը արդա՞ր է կառավարվում։ Ինչո՞ւ։

– Եթե, Ձեր կարծիքով, այն կարելի էր ավելի արդար կառավարել, ի՞նչը կփոխեիք, որպեսզի այն ավելի արդար լիներ։

Այնուհետև ուսուցիչը խնդրում է դասարանին պատկերացնել, որ իրենք Սիկալի բնակիչներն են։ Դասարանը բաժանվում է երկու մեծ խմբերի՝ բանավեճ անցկացնելու համար։ Մի խմբին հանձնարարվում է պնդել, որ երկիրը պետք է շարունակվի կառավարվել թագավորի կողմից։ Մյուս խմբին հանձնարարվում է պնդել, որ բոլոր բնակիչները, ոչ թե միայն թագավորը, պետք է մասնակցություն ունենան երկրի կառավարման գործընթացին։ Ուսուցիչը խմբերին մի քանի րոպե ժամանակ է տալիս մտածելու և գրի առնելու փաստարկները, որոնք պետք է օգտագործեն բանավեճի ժամանակ։ Երկու խումբ նստում են դեմ դիմաց դասարանի հակառակ մասերում և բանավեճը սկսում է։ Յուրաքանչյուր կողմից հնչում են տեսակետներ։

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին իրենց տեսակետները արտահայտել, թե երկու կողմերից որ մեկն էր ամենալավ փաստարկները ներկայացրել։

Աշակերտները կարող են հակիրճ բացատրություններ տալ (ինդուկտիվ մոտեցում)։ Ուսուցիչը գրում է հինգ տեսակի կառավարման համակարգի անուններ և բացատրում է, թե ինչով են դրանք տարբեր՝ հնարավորության դեպքում հղում կատարելով աշակերտների մեջբերումներին.

– միապետություն,

– Ժողովրդավարություն,

– դիկտատուրա,

– թեոկրատիա,

– անարխիա։

Դասը ավարտվում է հարցով իրենց երկրում կառավարման համակարգի մասին։ Որպես տնային աշխատանք՝ աշակերտներին հանձնարարվում է ավելի շատ տեղեկություններ գտնել և կազմել 5-10 հարցից բաղկացած թեստ՝ դասարանի մյուս աշակերտներին գիտելիքները հաջորդ դասի ժամանակ ստուգելու համար։

Դաս 2.
Եթե դու նախագահ լիներիր
Ինչի՞ համար է կառավարությունը:

Ուսուցման նպատակը	Աշակերտները կարողանում են բացատրել կառավարության գործառույթները և պարտականությունները:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները պատկերացնում են, որ իրենք ձևավորում են կառավարություն և պետք է որոշեն, թե ինչպես պետք է ծախսվեն պետական փողերը: Նրանք քննարկում են, թե ինչ սոցիալական իդեալներ կցանկանային ձեռք բերել:
Ռեսուրսներ	Մեծ թուղթ, գծանշիչ գրիչներ և հուշումների համար նախատեսված թուղթ:
Մեթոդ	Պաստառներ, պրեզենտացիաներ, խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:

Հասկացութային (կոնցեպտուալ) ուսուցում

Ժողովրդավարական հասարակությունում կառավարությունը ունի ընդհանուր բարիքը խթանելու պարտականություն: Դա վերաբերում է ոչ միայն մեծամասնության բարիքին: Դա պետք է լինի ի շահ հասարակության բոլոր անդամների: Թե դա գործնականում ինչ է նշանակում բանավեճի առարկա է: Առաջարկվել են մի շաքր տարբեր, երբեմն իրարամերժ սոցիալական իդեալներ, ինչպես օրինակ՝ սոցիալական ապահովությունը, անվտանգությունը, արդարությունը, սոցիալական ներդաշնակությունը, մարդու իրավունքները: Դժվար կարող է լինել այս ամենը դասավորել ըստ ծախսերի առաջնահերթության, հատկապես, երբ կառավարությանը հասանելի ռեսուրսները մշտապես սահմանափակ են:

Դասի ընթացքը

Ուսուցիչը դասը սկսում է բաժանելով դասարանը 4-6 աշակերտից բաղկացած խմբերի և յուրաքանչյուր խմբին տալիս է մեծ թուղթ և գծանշիչ գիրչներ:

Ուսուցիչը հանձնարարում է խմբերին պատկերացնել, որ իրենք ապրում են ապագայում և պատասխանատու են երկիրը կառավարելու համար, այլ բառերով ասած՝ նրանք կառավարությունն են: Որպես կառավարություն՝ նրանք ունեն 6 միլիարդ դոլար ծախսելու համար: Ուսուցիչը կարող է հարմարեցնել այս թիվը տվյալ երկրի կառավարության տարեկան բյուջեին համապատասխան:

Խմբերի առաջադրանքն է որոշել, թե ինչպես են ծախսելու այդ գումարը մյուս տարվա ընթացքում: Օգտագործելով թուղթը և գծանշիչ գրիչները՝ յուրաքանչյուր խումբ պաստառ է կազմում, բացատրելով, թե, որպես կառավարություն, ինչպես է ծախսելու այդ գումարը: Դրանից հետո խումբը պրեզենտացիա է ներկայացնում դասարանին: Յուրաքանչյուր պրեզենտացիայի վերջում մյուս աշակերտները հնարավորություն են ստանում հարցեր ուղղել խմբին ծախսերի պլանների վերաբերյալ:

Ուսուցիչը նաև հարցեր է ուղղում խմբերին, որպես նոր տեղեկություններ հայտնելու ձև տնտեսության և կառավարության գործունեության եղանակների մասին, օրինակ.

- Դուք մտածե՞լ եք այդ գումարի մի մասը արտաքին պարտքը մարելու վրա ծախսելու մասին:
- Պե՞տք է արդյոք այդ գումարի մի մասը օգտագործել նոր աշխատատեղեր բացելու համար:
- Որքանո՞վ է կարևոր, որ կառավարությունը գումար ծախսի կրթության ոլորտում:

Այնուհետև ուսուցիչը աշխատում է ամբողջ դասարանի հետ կազմելու համար այն բոլոր բաների ցանկը, որի վրա կառավարությունը պետք է փող ծախսի: Ցանկը պետք է տեսանելի լինի բոլորին:

Այնուհետև, ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին վերադառնալ խմբեր և յուրաքանչյուրին տալիս է հուշաթուղթ՝ սոցիալական իդեալների ցանկով, որոնց կառավարությունը և ժողովրդավարական հասարակությունը կարող է ձգտել, օրինակ՝

- սոցիալական ապահովություն,
- անվտանգություն,
- արդարություն,
- սոցիալական ներդաշնակություն,
- մարդու իրավունքներ,
- առաջընթաց:

Խմբերը պետք է փորձեն ցանկի իդեալները համապատասխանեցնել իրենց ծախսերի ոլորտներին, որոնք իրենք նախագծել են՝ որոշելով, թե իդեալներից յուրաքանչյուրը որ ծախսի տողի տակ է գնում:

Ուսուցիչը հանձնարարում է խմբերին ներկայացնել իրենց գաղափարները ամբողջ դասարանին և ավարտում է դասը՝ հերթով հարցնելով աշակերտներին.

- Ի՞նչ եք կարծում, որն է ամենակարևոր պատասխանատվությունը, որը կառավարությունը պետք է կրի:

Որպես տնային աշխատանք ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին իմանալ, թե ինչ ձևով է կառավարությունը գումարը ծախսում իրենց երկրում: Աշակերտները կարող են դա անել հեռուստացույց դիտելով կամ թերթեր ընթերցելով: Աշակերտները ներկայացնում են իրենց սովորածը հաջորդ դասի սկզբին և քննարկում են, թե արդյոք իրենց առաջնահերթությունները նույնը կլինեին:

Դաս 3.
Ես և իմ դերը
Ի՞նչ պետք է ակնկալի պետությունը իր քաղաքացիներից:

Ուսուցման նպատակը	Աշակերտները սովորում են քաղաքացիրների պարտականությունների մասին ժողովրդավարական հասարակությունում:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները քննարկում են, թե ինչ պարտականությունները պետք է քաղաքացիները ունենան և ինչպես կարելի է խրախուսել նրանց՝ իրենց պարտականություններին ավելի լուրջ վերաբերվել:
Ռեսուրսներ	Քննարկման քարտերի հավաքածու (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 9.2), մեծ թուղթ և գծանշիչ գրիչներ՝ 4-6 աշակերտից բաղկացած յուրաքանչյուր խմբի համար:
Մեթոդ	Պրեզենտացիաներ, խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:

Տեղեկատվական անկյուն

Ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիները ակնկալում են ստանալ որոշակի իրավունքներ, ինչպես օրինակ՝ քաղաքացիական իրավունքներ, քաղաքական իրավունքներ, սոցիալական իրավունքներ, մշակութային իրավունքներ և շրջակա միջավայրի պաշտպանության իրավունքներ: Թե ինչպիսին պետք է լինեն այս իրավունքները վիճահարույց է: Վիճահարույց է նաև, թե ինչ պարտականություններ պետք է ուղեկցեն այս իրավունքներին: Որոշ մարդիկ կարծում են, որ քաղաքացիները պետք է միայն մեկ պարտականության ունենան, այն է՝ ենթարկվել օրենքին: Մյուսները կարծում են, որ հասարակության մեջ քաղաքացիները պետք է ավելի շատ ունենան շատ պարտականություններ:

Դասի ընթացքը

Ուսուցիչը դասը սկսում է բաժանելով դասարանը 4-6 աշակերտից բաղկացած խմբերի և յուրաքանչյուր խմբի տալիս է քննարկման քարտեր (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 9.2): Քարտերից յուրաքանչյուրը ներառում է քաղաքացու առաջարկվող մի պարտականություն:

Ուսուցիչը հանձնարարում է խմբերին դասավորել քարտերը երեք դասակարգերով՝ կախված այն բանից, թե առաջարկվող պարտականությունը վերաբերում է.

1. ԲՈԼՈՐ քաղաքացիներին,
2. ՈՐՈՇ քաղաքացիների,
3. ՈՉ մի քաղաքացու:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին ներկայացնել իրենց որոշումները և բացատրել դրանց տրամաբանությունը:

Աշակերտները վերադառնում են խմբեր և նրանց տրվում է մեծ թուղթ և գծանշիչ գրիչներ: Ուսուցիչը ասում է խմբերին, որ իրենց առաջադրանքն է կազմել «քաղաքացիների կանոնադրություն»: Նրանք պետք է բաժանեն իրենց մեծ թուղթը երկու սյունակների: Առաջին սյունակում նրանք պետք է գրեն, թե իրենց կարծիքով իրենց երկրի յուրաքանչյուր քաղաքացի ինչ պետք է ակնկալի իր երկրից («ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ» վերնագրի տակ), իսկ երկրորդ սյունակում՝ ինչ է ակնկալվում քաղաքացիներից անել դրա դիմաց («ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ» վերնագրի տակ):

Ավարտելուց հետո խմբերը պետք է ներկայացնեն իրենց գաղափարները մնացած դասարանին և մյուս աշակերտներին հնարավորություն տան իրենց հարցեր ուղղել կատարված աշխատանքի մասին:

Վերջում ուսուցիչը ամբողջ դասարանին պետք է հարցնի.

– Ձեր կարծիքով Ձեր երկրի քաղաքացիները ինչպես հարկն է մշտապես կատարո՞ւմ են որպես քաղաքացի իրենց պատրականությունները: Ինչո՞ւ:
– Ձեր կարծիքով, ի՞նչ պետք է անել խրախուսելու համար մարդկանց որպես քաղաքացի ավելի լուրջ պատասխանատվություն ստանձնելու համար:
– Կարծո՞ւմ եք, որ քաղաքացիներից պետք է հետ վերցնել իրավունքները, եթե նրանք որպես քաղաքացի իրենց պատրականությունները պատշաճ չեն կատարում: Ինչու՞:

Որպես տնային աշխատանք աշակերտները պետք է հարցում անցկացնեն ընտանիքի և ընկերների շրջանում՝ նրանց հարցնելով, թե քաղաքացու պարտականությունները իրենց կարծիքով ինչպիսին պետք է լինեն: Նրանք պետք է ներկայացնեն հարցման արդյունքները հաջորդ դասի սկզբին:

Դաս 4.
Աշակերտական խորհրդարան
Ինչպե՞ս պետք է կառավարվեն դպրոցները:

Ուսուցման նպատակը	Աշակերտները կարող են սահմանել չափանիշներ, որոնք վերաբերում են դպրոցի կառավարմանը և այդ գործընթացում աշակերտական մարմնի դերին:
Աշակերտական առաջադրանքներ	Աշակերտները քննարկում են, թե ինչպես պետք է աշխատի երևակայական աշակերտական խորհրդարանը:
Ռեսուրսներ	Հարցաշար յուրաքանչյուր աշակերտի համար (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 9.3), մեծ թուղթ և գծանշիչ գրիչներ՝ 4-6 աշակերտից բաղկացած յուրաքանչյուր խմբի համար:
Մեթոդ	Պրեզենտացիաներ, անհատական, խմբային աշխատանք փոքր խմբերով և դասարանային քննարկում:

Տեղեկատվական անկյուն

Սովորողները նույնպես քաղաքացիներ են: Նրանք իրավունք ունեն իրենց խոսքն ասել այն հարցերի շուրջ, որոնք ազդում են իրենց և իրենց համայնքների վրա: Այս շարքում ներառվում է իրենց դպրոցը: Աշակերտներին դպրոցի կառավարման մեջ մասնակցություն ունենալ թույլ տվող մեխանիզմները ոչ միայն օգնում են ապահովել, որ երիտասարդներն օգտվեն այս իրավունքից, այլև օգնում են նրանց սովորել ժողովրդավարական գործընթացների մասին: Թե ինչպիսին պետք է լինեն այս մեխանիզմները բանավեճի խնդիր է, այնուամենայնիվ: Որոշ մարդիկ կարծում են, որ կարևոր է, որպեսզի դպրոցում առանձին խորհրդարան գործի, մյուսներն ասում են, որ դա անհրաժեշտ չէ, և կան այլ եղանակներ աշակերտներին հնարավորություն տալու դպրոցի կառավարման մեջ իրենց ներդրումը ցուցաբերելու համար:

Դասը պետք է սկսել աշակերտների մուտքով, որը որպես տնային աշխատանք նրանք նախապատրաստել են: Կախված նրանց նյութի հարստությունից և քննարկման անհրաժեշտությունից՝ կարելի է ժամանակ ավելացնել լրացուցիչ դաս անցկացնելու համար: Քանի որ այս տարբերակը ունի իր սահմանափակումները, ուսուցիչը կարող է նաև հավաքել աշակերտների աշխատանքը և գրավոր կերպով հետադարձ կապ ապահովել դրանց շուրջ: Այնուամենայնիվ, կարևոր է, որ աշակերտների աշխատանքին ուշադրություն դարձվի:

Դասի ընթացքը

Աշակերտները սկսում են դասը՝ ներկայացնելով իրենց հարցման արդյունքները՝ ցույց տալով, թե իրենց ընտանիքները և ընկերները ինչ են մտածում քաղաքացու պարտականությունների մասին: Աշակերտները քննարկում են իրենց արդյունքները:

Ուսուցիչը նոր թեմա է ներկայացնում՝ հղում կատարելով աշակերտների բաշխման նյութերին, ըստ անհրաժեշտության, և հարցնելով աշակերտներին, թե, իրենց կարծիքով, ինչքանով է լավ աշխատում իրենց դպրոցական խորհուրդը և դպրոցական խորհրդարանը:

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին պատկերացնել երևակայական աշակերտական խորհրդարան, այսինքն ժողովրդավարական հիմունքներով ընտրված աշակերտների խումբ, որը ներկայացնում է աշակերտների շահերը ամբողջ դպրոցում:

Այնուհետև ուսուցիչը հարցաշար է բաժանում (աշակերտների համար նախատեսված բաշխման նյութ 9.3), որը աշակերտները ինքնուրույն լրացնում են:

Ուսուցիչը այնուհետև բաժանում է աշակերտներին 4-6 աշակերտներից բաղկացած խմբերի: Խմբերի աշակերտները որոշ ժամանակ են անցկացնում հարցաշարի իրենց պատասխանները համեմատելու և միմյանց լրացուցիչ հարցեր ուղղելու համար: Այնուհետև, ուսուցիչը յուրաքանչյուր խմբին մեծ թուղթ է տալիս և մի քանի գծանշիչ գրիչներ: Խմբերի առաջադրանքն է կազմել իրենց երևակայական աշակերտական խորհրդարանի համար սահմանադրություն: Ուսուցիչը պետք է բացատրի, թե ինչ է սահմանադրությունը և բերի օրինակներ, թե ինչ տեսակի կանոններ կարելի է գտնել աշակերտական խորհրդարանի սահմանադրության մեջ:

Ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը մնացած դասարանին և քննարկում են բարձրացված հարցերը, օրինակ՝

- Ի՞նչ իշխանություն պետք է աշակերտները ունենան և ինչ իշխանություն պետք է ունենա դպրոցի տնօրենը և ուսուցիչները:
- Ո՞ւմ պետք է պատկանի վերջին խոսքի իրավունքը այն որոշումների կայացման հարցում, որոնք վերաբերում են դպրոցի կառավարմանը:
- Դպրոցը կարո՞ղ է լինել ժողովրդավարության մոդել:

Վերջում աշակերտները պետք է դասարանային պրեզենտացիա ներկայացնեն դպրոցի տնօրենի համար, և, եթե ցանկանում են, կոնկրետ առաջարկներ պետք է ներկայացնեն դպրոցական խորհրդարանի համար:

Որպես տնային աշխատանք՝ աշակերտները պետք է հարցում անցկացնեն ընտանիքի անդամների և ընկերների շրջանում՝ նրանց հարցնելով.

- Ձեր կարծիքով, երկրում յուրաքանչյուր դպրոց պե՞տք է ունենա աշակերտական խորհրդարան: Ինչու՞:

Աշակերտները պետք է ներկայացնեն իրենց հարցման արդյունքները հաջորդ դասի սկզբին:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 9.1
Սիկալի թագավորությունը

Սիկալը բարձր լեռնային գոտում տեղեկայված երկիր է: Դարեր շարունակ այն քիչ կապեր է ունեցել մնացած աշխարհի հետ:

Չնայած Սիկալը ընդամենը փոքր թագավորություն է, վերջերս դրա նկատմամբ հետաքրքրությունը աճել է: Սրա պատճառն այն է, որ հասարակությունը անսովոր ձևով է կազմակերպված այնտեղ:

Նախ և առաջ, Սիկալում ոչ ոք սոված չի մնում: Սիկալի ժողովուրդը իրենց սեփական սնունդն են արտադրում և կիսում են բոլոր նրանց հետ, ովքեր դրա կարիքը ունեն: Անվճար տուն է տրամադրվում յուրաքանչյուր ընտանիքի: Տան չափերը պայմանավորված են ընտանիքում անդամների թվով: Տունը տաքացնելու և ճաշ պատրաստելու համար վառելիքը անվճար է տրամադրվում: Անվճար են նաև վերանորոգման աշխատանքները: Եթե որևէ մեկը հիվանդանում է, բժիշկ միշտ կա: Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ բոլորն անցնում են անվճար բժշկական ստուգում և սոցիալական աշխատողները կանոնավոր կերպով այցելում են ծեր մարդկանց, երեխա ունեցող ընտանիքներին և ցանկացած այլ մեկի, որը լրացուցիչ ուշադրության կարիք ունի:

Սիկալում կյանքի բարիքները հասանելի են բոլորին: Յուրաքանչյուր ընտանիքի տրվում են վաուչերներ, որոնք նրանք տարվա ընթացքում փոխանակում են տարբեր պերճանքի առարկաներով, օրինակ՝ օծանելիք, կահույք կամ համեմունքներ: Վաուչերներով կարելի է առևտուր անել միանգամից, կամ պահել դրանք որոշ ժամանակ՝ որևէ հատուկ բան գնելու համար:

Ինչպե՞ս են կարողացել Սիկալի ժողովուրդը կազմակերպել այս ամենը: Սիկալը հին ժամանակներից կառավարվել է թագավորական ընտանիքի կողմից: Ներկայիս թագավորը Թագավոր Սիկ III է: Նա է որոշում, թե յուրաքանչյուր աշխատանքի համար որքան աշխատող է անհրաժեշտ, օրինակ՝ սնունդ աճեցնելու, տուն սարքելու կամ բժշկության: Այն մարդիկ, որոնք պետք է անեն այդ աշխատանքները, ընտրվում են հինգ տարեկան հասակում և ուղարկվում են հատուկ դպրոցներ՝ վերապատրաստում ստանալու համար: Ֆերմերներին ուղարկում են գյուղատնտեսական դպրոց, շինարարներին՝ տեխնիկական դպրոց, առողջապահության աշխատակիցներին՝ բժկական դպրոց, և այլն: Գործունակ տարիքի յուրաքանչյուր մարդու աշխատանքի է ընդունում Թագավոր Սիկը՝ իր թագավորական պալատներից մեկում:

Ամենազարմանալին Սիկալում այն է, որ այնտեղ փող չկա: Ոչ մեկին պետք չէ վճարել, որովհետև յուրաքանչյուրը արդեն ունի այն, ինչ պետք է:

Կարող եք հարց տալ, թե արդյո՞ք Սիկալում որևէ մեկը դժգոհ է նման կարգից: Իրականում դա հազվադեպ է լինում: Այն քիչ թվով մարդիկ, որոնք բողոքում են, խնամք են ստանում ապահով հոգեբուժարաններում: Ի վերջո, պետք է գիժ լինել բողոքելու համար նման հասարակությունում ապրելուց, այդպես չէ՞:

Աշակերտների համար նախատեսված բաշխման նյութեր 9.2
Քննարկման քարտեր

Վճարել հարկեր	**Քաղաքական կուսակցության անդամակցել**
Կռվել՝ երկիրը պաշտպանելու համար	**Քվեարկել ընտրությունների ժամանակ**
Ոստիկանությանը հանցագործության մասին տեղեկացնել	**Աջակցել ընտանիքին**
Հետևել օրենքին	**Օգնել հարևաններին**
Պաշտպանել երկիրը, երբ այն քննադատվում է	**Որևէ այլ բան...**

Ձեր երևակայական աշակերտական խորհրդարանում.

1. Քանի՞ ներկայացուցիչ կլիներ:
2. Ինչպե՞ս կընտրվեին ներկայացուցիչները:
3. Ի՞նչ հաճախականությամբ կգումարվեին աշակերտական խորհրդարանի նիստերը:
4. Որտե՞ղ կգումարվեին աշակերտական խորհրդարանի նիստերը:
5. Ինչպե՞ս կներգրավվեն ուսուցիչները և ծնողները, եթե ընդհանրապես պետք է ներգրավել:
6. Ի՞նչ հարցեր կթույլատրվեր աշակերտական խորհրդարանին քննարկել և ի՞նչ հարցեր չէր թույլատրվի քննարկել:
7. Ի՞նչ որոշումներ կթույլատրվեր աշակերտական խորհրդարանին ընդունել, և ի՞նչ որոշումներ չէր թույլատրվի ընդունել:

Եվրոպայի խորհրդի հրատարակությունների առևտրային գործակալներ
Agents de vente des publications du Conseil de I'Europe

ԲԵԼԳԻԱ/BELGIQUE
La Librairie Europeenne*
Եվրոպական գրախանութ
Roe de I'Orme, 1
B-1040 BRUXELLES
Հեռ.՝ +32 (0)2 231 04 35
Ֆաքս՝ +32 (0)2 735 08 60
Էլեկտրոնային փոստ՝ order@libeurop.be
http://www.libeurop.be

Jean De Lannoy
Avenue du Roi 202 Koningslaan
B-1190 BRUXELLES
Հեռ.՝ +32 (0)2 538 43 06
Ֆաքս՝ +32 (0)2 538 08 41
Էլեկտրոնային փոստ՝
jean.de.lannoy@dl-servi.com
http://www.jean-de-lannoy.be

ԿԱՆԱԴԱ
Renouf Publishing Co, Ltd.
1-5369 Canotek Road
CA-OTTAWA, Ontario K1J 9J3
Հեռ.՝+1 613 745 2665
Ֆաքս՝ +1 613 745 7660
Անվճար հեռախոս՝ (866) 767-6766
Էլեկտրոնային փոստ՝
order.dept@renoufbooks.com
http://www.renouibooks.com

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ/
REPUBLIQUE TCHEQUE
Suweco CZ, s.r.o. Klecakova 347 CZ-180 21
PRAHA 9
Հեռ.՝+420 2 424 59 204
Ֆաքս՝ +420 2 848 21 646
Էլեկտրոնային փոստ՝
import@suweco.ci http://www.su.weco.cz

ԴԱՆԻԱ/DANEMARK
CAD
Vimmelskaftet 32
DK-1161 KOBENHAVN K
Հեռ.՝ +45 77 66 60 00
Ֆաքս՝ +45 77 66 60 01
Էլեկտրոնային փոստ՝ gad@gad.dk
http://www.gad.dk

ՖԻՆԼԱՆԴԻԱ/FINLANDE
Akateeminen Kirjakauppa
PO Box 128
Keskuskatu 1
FI-00100 HELSINKI
Հեռ.՝ +353 (0)9 121 4430
Ֆաքս՝ +358 (0)9 121 4242
Էլեկտրոնային փոստ՝
akatilaus@akateeminen.com
http://www.akateeminen.com

ՖՐԱՆՍԻԱ
La Documentation frangaise
(diffusion/distribution France entire)
124, rue Henri Barbusse
r-93308 AUBERVILLIERS CEDEX
Հեռ.՝ +33 (0)1 4015 70 00
Ֆաքս՝ +33 (0)1 40 15 68 00
Էլեկտրոնային փոստ՝
commande@ladocumentationfranc3ise.fr
http://www.ladocumentationfrancaise.fr

ՆՈՐՎԵԳԻԱ/NORVEGE
Akademika
Postboks 84 Blindern
N-0314 OSLO
Հեռ.՝ :+472 2188100
Ֆաքս՝+47 2 218 8103
Էլեկտրոնային փոստ՝
support@akademika.no
http://www.akademika.no

Librairie Kleber
1 rue des Francs Bourgeois
F-67000 STRASBOURG
Հեռ.՝ +33 (0)3 8815 78 88
Ֆաքս՝ +33 (0)3 88 15 78 80
էլեկտրոնային փոստ՝
francois.woifermann@librairie-kieber.fr
http://www.librairie-kleber.com

ԳԵՐՄԱՆԻԱ/ALLEMAGNE
ԱՎՍՏՐԻԱ/AUTRICHE
UNOVerlag GmbH
August-Bebel-Allee 6
D-53175 BONN
Հեռ.՝ +49 (0)228 94 90 20
Ֆաքս՝ +49 (0)228 94 90 222
Էլեկտրոնային փոստ՝
bestellung@uno-verlag.de
http://www.uno-verlag.de

ՀՈՒՆԱՍՏԱՆ/GRÈCE
Librairie Kauffmann s.a.
Stadiou 28
GR-105 64 ATHINAI
Հեռ.՝ +30210 32 55 321
Ֆաքս՝ +30 21032 30 320
Էլեկտրոնային փոստ՝
ord@otenet.gr
http://www.kauffrnarn.gr

ՀՈՒՆԳԱՐԻԱ/HONGRIE
Euro Info Service kft.
1137 Bp Szent Istvan krt. 12
H-1137 BUDAPEST
Հեռ.՝+36 (06)1 329 2170
Ֆաքս՝ +36 (06)1 349 2053
Էլեկտրոնային փոստ՝
euroinfo@euroinfo.hu
http://www.euroinfo.hu

ԻՏԱԼԻԱ/ıTALIE
Licosa SpA
Via Duca di Calabria, 1/1
1-50125 FIRENZE
Հեռ.՝ +39 0556 483215
Ֆաքս՝ +39 0556 41257
Էլեկտրոնային փոստ՝
licosa@licosa.com
http://www.liCDsa.com

ՄԵՔՍԻԿԱ/MEXIQUE
Mundi-Prensa Mexico, S.A De C.V
Rio Panuco, 141 Delegacion Cuauhtemoc
06500 MEXICO, D.F.
Հեռ.՝ +52 (01)55 55 3.3 56 58
Ֆաքս՝ +52 (01) 55 55 14 67 99
Էլեկտրոնային փոստ՝
mundiprensa@mundiprensa.com.mx
http://www.mundiprensa.com.mx

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ/PAYS-BAS
De Lindeboom Internationale Publicaties b v.
M .A, de Ruyterstraat 20 A
NL-7482 BZ HAAKSBERGEN
Հեռ.՝+31 (0)53 5740004
Ֆաքս՝ +31 (0)53 5729296
Էլեկտրոնային փոստ՝
books@detindeboom.corn
http://www.delindeboom.com

ԼԵՀԱՍՏԱՆ/POLOGNE
Ars Pol on a ISC
25 Obroncow Street
PL-03-933 WARSZAWA
Հեռ.՝ +48 (0)22 509 86 00
Ֆաքս՝ +48 (0)22 509 8610
Էլեկտրոնային փոստ՝ arspolona@arspolona.com.pl
http://www.arspolona.com.pl

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ
Llvraria Portugal
(Dias & Andrade, Lda.)
Rua do Carmo, 70
P-1200-094 LI560A
Հեռ.՝ +351 21 347 42 82 / 85
Ֆաքս՝ +351 21 347 02 64
Էլեկտրոնային փոստ՝ info@livrariaportugal.pt
http://www.livrariaportugal.pt

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ/
FEDERATION DE RUSSIE
Ves Mir
9a, Kolpacnhyi per
RU-101000 MOSCOW
Հեռ.:՝ +7 (8)495 623 6839
Ֆաքս՝ +7 (8)495 625 4269
Էլեկտրոնային փոստ՝ orders@vesmirbooks.ru
http://www.vesmirbooks.ru

ԻՍՊԱՆԻԱ/ESPAGNE
Mundi-Prensa Libras, s.a.
Castello, 37 E-28001 MADRID
Հեռ.՝ +34 914 36 37 00
Ֆաքս՝ +34 91575 39 98
Էլեկտրոնային փոստ՝ libreria@mundiprensa.es
http://www.mundiprensa.com

ՇՎԵՅԱՐԻԱ/SUISSE
Van Diermen Editions - AD ECO
Chemin du Lacuez 41
CH-1B07 BLONAY
Հեռ.՝ +41 (0)21 943 26 73
Ֆաքս՝ +41 (0)21 943 36 05
Էլեկտրոնային փոստ՝ info@adeco.org
http://www.adeco.org

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ/ROYAUME-UNI
The Stationery Office Ltd
PO Box 29
G8-NORWICH NR3 1CN
Հեռ.՝ +44 (0)870 600 5522
Ֆաքս՝ +44 (0)870 600 5533
Էլեկտրոնային փոստ՝ book.enquiries@tso.co.uk
http://www.tsoshop.co.uk

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ և ԿԱՆԱԴԱ/
ETATS-UNIS et CANADA
Manhattan Publishing Company
468 Albany Post Road
CROTTON-ON-HUDSON, NY 10520, USA
Հեռ.՝ +1 914 271 5194
Ֆաքս՝ +1 914 271 5856
Էլեկտրոնային փոստ՝
lnto@manhattanpubli5hing.com
http://www.manhattanpublishing.com

Եվրոպայի խորհրդի հրատարակչություն/Éditions du Conseil de l'Europe

F-67075 Strasbourg Cedex

Հեռ.՝ +33 (0)3 88 41 25 81 - Ֆաքս՝ +33 (0)3 88 41 39 10 - Էլեկտրոնային փոստ՝ publishing@coe.int - Կայքէջ՝ http://book.coe.int

Prems 145717

Այս ձեռնարկը նախատեսված է ժողովրդավարական քաղաքացիության կրթություն առարկան դասավանդող ուսուցիչների (ԺՔԿ) և մարդու իրավունքների կրթության (ՄԻԿ), ԺՔԿ/ՄԻԿ դասագրքի խմբագիրների և ուսումնական պլան մշակողների համար: Մոտավորապես չորս դասերից բաղկացած ինը ուսումնական բաժիններից յուրաքանչյուրի հիմնական թեման ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացություններն են: Դասապլաններում տրված են քայլ առ քայլ հրահանգներ և ներառված են աշակերտների համար նախատեսված նյութեր և լրացուցիչ տեղեկություններ ուսուցիչների համար: Ձեռնարկը օգտակար է վերապատրաստողների կամ դասավանդման մասնագիտության մեջ սկսնակների համար և այն ուսուցիչների, որոնք վերապատրաստում են ստանում առանց աշխատանքի ընդհատման՝ ԺՔԿ/ՄԻԿ թեմաներով:

Փորձառու ուսուցիչները կարող են հարստացնել գաղափարները և նյութերը: Ամբողջական ձեռնարկում ակադեմիական ամբողջ տարվա ուսումնական ծրագրի համար նյութեր կան հիմնական դպրոցում սովորողների համար, բայց քանի որ յուրաքանչյուր գլուխ ինքնին ամբողջական է, ուստի ձեռնարկն օգտագործելը կարող է բավականին ճկուն լինել:

ԺՔԿ/ՄԻԿ-ի նպատակն է դաստիարակել ակտիվ քաղաքացիներ, որոնք ցանկանում են և ունակ են ապրել ժողովրդավարական համայնքում: Ուստի, ԺՔԿ/ՄԻԿ-ը խիստ շեշտադրում է գործողությունների և առաջադրանքների վրա հիմնված ուսուցումը: Դպրոցական համայնքը ընկալվում է որպես իրական փորձառության ոլորտ, որտեղ սովորողները կարող են իմանալ, թե ինչպես մասնակցել ժողովրդավարական որոշումների կայացման գործընթացին և պատասխանատվություն վերցնել վաղ տարիքից: ԺՔԿ/ՄԻԿ-ի հիմնական հասկացությունները դասավանդվում են որպես ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման գործիքներ:

Սա վեց հատորներից III հատորն է.

ԺՔԿ/ՄԻԿ Հատոր I.	Ուսուցում ժողովրդավարության համար. ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության մասին լրացուցիչ նյութեր
ԺՔԿ/ՄԻԿ Հատոր II.	Դաստիարակվել ժողովրդավարության պայմաններում. Դասապլաններ նախնական մակարդակի համար՝ ժողովրդավարական քաղաքացիություն և մարդու իրավունքներ թեմաներով
ԺՔԿ/ՄԻԿ Հատոր III.	Ապրել ժողովրդավարությամբ՝ ԺՔԿ/ՄԻԿ դասապլաններ՝ նախատեսված կրտսեր միջնակարգ դպրոցի մակարդակի համար
ԺՔԿ/ՄԻԿ Հատոր IV.	Մասնակցությունը ժողովրդավարությանը. Դասապլաններ հիմնական դպրոցում սովորողների համար՝ ժողովրդավարական քաղաքացիություն և մարդու իրավունքներ թեմաներով
ԺՔԿ/ՄԻԿ Հատոր V.	Երեխաների իրավունքների ուսումնասիրություն. նախնական մակարդակի ինը կարճ ծրագրեր
ԺՔԿ/ՄԻԿ Հատոր VI.	Ժողովրդավարություն ուսուցանելը. ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության մոդելների հավաքածու

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն ունի 47 անդամ պետություններ՝ ներառելով զրեթե ամբողջ եվրոպական մայրցամաքը: Այն ձգտում է զարգացնել համընդհանուր ժողովրդավարական արժեքներ և իրավական սկզբունքներ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և անձի պաշտպանության հետ առնչվող այլ տեքստերի հիման վրա: 1949 թվականին իր հիմնադրումից ի վեր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայի խորհուրդը եղել է հաշտության խորհրդանիշ:

ISBN 978-92-871-8526-6

9 789287 185266

http://book.coe.int

Եվրոպայի խորհրդի հրատարակություն

€11/ABŞ$17